ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԻՆ ՇԵՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ ՓԱԹՎԵՅՁ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ

International Labour Organization

UN WOMEN

Հրապարակումը պատրաստել է Դևելոփմենթ Փաթվեյզը ՄԱԿ Կանայք կազմակերպության աջակցությամբ՝ «Կանանց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) և Ավստրիական զարգացման համագործակցության (ADC) կողմից, և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Արժանապատիվ աշխատանքի հարցերով տեխնիկական աջակցության թիմի և ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի աջակցությամբ և ուղղորդմամբ: Այս հրապարակման բովանդակությունը չի արտացոլում ՄԱԿ Կանայք, ԱՄԿ, SDC կամ ADC կազմակերպությունների պաշտոնական կարծիքը: Այստեղ արտահայտված տեղեկությունների և տեսակետների համար պատասխանատվությունն ամբողջությամբ պատկանում է հեղինակներին:

© 2022 ՄԱԿ Կանայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԻՆ ՇԵՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դևելոփմենթ Փաթվեյզ
2022 թվականի օգոստոս

Դևելոփմենթ Փաթվեյզ
Մարլեսֆիլդ Հաուս, 1-ին հարկ
DA14 6NG Սիդքափ,
Մեյն Ռոուդ 114-116
Միացյալ Թագավորություն

International Labour Organization

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Swiss Agency for Development and Cooperation SDC

With funding from
Austrian Development Cooperation

UN WOMEN
United Nations Entity for Gender Equality and the Empowerment of Women

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ 5

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ 6

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ 7

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 19

2. ԵՐԿՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 23
- 2.1 Ժողովրդագրական իրավիճակը 25
- 2.2 Տնտեսական համատեքստը 28
- 2.3 Աղքատության դինամիկան 30
- 2.4 Աշխատաշուկայի դինամիկան 36
- 2.5 Գենդերային դինամիկան 41
- 2.6 Ամփոփում 43

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԿԵՆՍԱՓՈՒԼԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 44
- 3.1 Կենսափուլային և բազմաստիճան մոտեցում սոցիալական պաշտպանությանը 45
- 3.2 Հայաստանի սոցիալական ապահովության համակարգի ընդհանուր նկարագիրը 51
  - 3.2.1 Համակարգի համապարփակ բնույթը միջազգային ստանդարտների տեսանկյունից 53
  - 3.2.2 Հարկաբյուջետային քաղաքականությունը 55
  - 3.2.3 Կառավարումը 63
- 3.3 Ամփոփում 69

4. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 71
- 4.1 Իրավական ծածկույթը 72
- 4.2 Փաստացի ծածկույթը 75
  - 4.2.1 Ծառայությունների ծածկույթը 75
  - 4.2.2 Ֆինանսական ծածկույթը 77
- 4.3 Ամփոփում 81

5. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՎԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 82
- 5.1 Երեխաների համար նպաստների համատեքստը և համառոտ ակնարկ 83
  - 5.1.1 Շեշտադրում տնային տնտեսություններին կատարվող դրամական հատկացումներին և աղքատության թիրախավորմանը 83
  - 5.1.2 Երեխաների համար նախատեսված սոցիալական պաշտպանության առանցքային սխեմաները 90
- 5.2 Երեխաների իրավական ծածկույթը 93
- 5.3 Երեխաների փաստացի ծածկույթը 98
  - 5.3.1 Հորիզոնական ծածկույթ 98
  - 5.3.2 Ուղղահայաց ծածկույթ (համարժեքություն) 102
- 5.4 Ամփոփում 106

6. ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ԲԱԶՄԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ԾԱԾԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 108
6.1 Աշխատունակ տարիքի անձանց նպաստների համատեքստը և համառոտ ակնարկը 110
6.1.1 Տնտեսական ցածր ակտիվություն, գենդերային մեծ խզվածք 110
6.1.2 Աշխատունակ տարիքի անձանց համար նախատեսված սոցիալական պաշտպանության առանցքային սխեմաները 114
6.2 Մայրության պաշտպանությունը 120
6.2.1 Իրավական ծածկույթ 120
6.2.2 Փաստացի ծածկույթ 123
6.3 Աշխատավայրում առաջացած վնասվածք 132
6.3.1 Իրավական ծածկույթ 133
6.3.2 Փաստացի ծածկույթ 136
6.4 Հիվանդություն 137
6.4.1 Իրավական ծածկույթ 138
6.4.2 Փաստացի ծածկույթ 140
6.5 Հաշմանդամություն 142
6.5.1 Իրավական ծածկույթ 144
6.5.2 Փաստացի ծածկույթ 145
6.6 Գործազրկության պաշտպանությունը 150
6.6.1 Կառուցվածքային գործազրկությունը 150
6.6.2 Գործազրկության պաշտպանությունը 151
6.7 Ամփոփում 154

7. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԲԱԶՄԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 160
7.1 Տարեցների նպաստների համատեքստը և ակնարկը 161
7.1.1 Խոցելիության բնութագիրը 161
7.1.2 Տարեցների սոցիալական պաշտպանության հիմնական սխեմաները 162
7.2 Ծերության կենսաթոշակները և նպաստները 163
7.2.1 Իրավական ծածկույթը 165
7.2.2 Փաստացի ծածկույթը 166
7.3 Կերակրողին կորցնելու դեպքում նպաստները 174
7.3.1 Իրավական ծածկույթը 174
7.3.2 Փաստացի ծածկույթը 178
7.4 Ամփոփում 180

8. ԱՆՑՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ 183
8.1 Գործող համակարգի ընդհանուր կատարողականը 184
8.2 Հայաստանի սոցիալական պաշտպանության ստորին շեմի բացերի շտկումը 188
8.3 Լրացուցիչ միջոցառումներ, որոնք պետք է հաշվի առնել ավելի արդար համակարգի համար 198
8.4 Ամփոփում 202

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 204

Հավելված 1. Սոցիալական պաշտպանության համակարգը սահմանող և կարգավորող հիմնական օրենսդրությունը 209
Հավելված 2. Հայաստանի կենսաթոշակային համակարգի վերաբերյալ պատմական ակնարկ 215
Հավելված 3. ՀԾՓ ծածկույթը. աղքատ, խոցելի և հատուկ կատեգորիաների ցանկ 219

ՀՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 220

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

ԱԱԱ	Աշխատանքի անվտանգություն և առողջություն
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԱՔ-ներ	Աշխատաշուկայի ակտիվ քաղաքականություններ
ԱԲՕ	Առաջնային բժշկական օգնություն
ԱԵՀ	Ազգային եռակողմ հանձնաժողով
ԱԵՀ	Անձնական եկամտային հարկ
ԱԶՀ	Ավստրիական զարգացման համագործակցություն
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՀ	Աշխատուժի հետազոտություն
ԱՐՄՍՏԱՏ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄԿՍՏԱՏ	ԱՄԿ Վիճակագրական դեպարտամենտ
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՀ	Բաշխողական համակարգ
ԲՍՓԳ	Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն
ԲՍՓՀ	Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով
ԳՀ	Գնողունակության համարժեք
ԵԿԱ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ԶՊԳ	Զբաղվածության պետական գործակալություն
ԸԿԲՆ	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ
ԸՆ	Ընտանեկան նպաստ
ԸՍԳՀ	Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգ
ԻՍԾ	Ինտեգրված սոցիալական ծառայություններ
ԻՍԾԿ	Ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոն
ԿՀԿՓԿ	ԱՄԿ-ի՝ Կոնվենցիաների և հանձնարարականների կիրառման հարցերով զբաղվող փորձագետների կոմիտե
ԿՆԽՎԿ	«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա
ԿՏՀՀԿ	Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում
ՀԱԿ	Հաշմանդամ անձանց հարցերով կազմակերպություն
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀԾՓ	Հիմնական ծառայությունների փաթեթ
ՀԿ-ներ	Հասարակական կազմակերպություններ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՀՕ	Հրատապ օգնություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ Կանայք	Միավորված ազգերի կազմակերպության Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց
ՄԱԿ ՏՍԴ	Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ
ՄԱԿԲՀ	Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամ
ՄԳ	Մշտադիտարկում և գնահատում
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՅՈՒՆԵՍԿՕ	Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՇԶՀԳ	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
ՉՉ	Չաշխատող, չսովորող
ՊՀԾ	Պարենի համաշխարհային ծրագիր
ՍԱԾ	Սոցիալական ապահովության ծառայություն
ՍԱՀ	Սոցիալական ապահովագրության հիմնադրամ
ՍԱՄԱ	Սոցիալական ապահովության միջազգային ասոցիացիա
ՍՄ	Սեփական միջոցներ
ՍԾՏԿ	Սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ
ՍՆ	Սահմանված նպաստ
ՍՆ	Սոցիալական նպաստ
ՍՎ	Սահմանված վճար
ՍՎՊՀ	Սահմանված վճարներով պայմանական համակարգ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՔՈՎԻԴ-19	Կորոնավիրուսային հիվանդություն

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Զեկույցը պատրաստվել է ՄԱԿ Կանայք կազմակերպության համար՝ որպես «Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում» (ԿՏՀՀԿ) տարածաշրջանային ծրագրի մաս, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՁՀԳ) և Ավստրիական զարգացման համագործակցության (ԱԶՀ) ֆինանսավորմամբ: Զեկույցի պատրաստման աշխատանքները համակարգել է Վրաստանի ՄԱԿ Կանայք կազմակերպության ծրագրի վերլուծաբան Նինո Գաչեչիլաձեն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Արժանապատիվ աշխատանքի հարցերով տեխնիկական աջակցության թիմի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով երկրի գրասենյակի սոցիալական պաշտպանության մասնագետ Ժասմինա Պապայի լրացուցիչ տեխնիկական աջակցությամբ: Զեկույցը հեղինակել են Բետինա Ռամիրես Լոպեսը և Մաղլեն Քրեթնին Շեա ՄքՔլեննեհենի ուղղորդմամբ և ներդրմամբ (Դևելոփմենթ Փաթվեյզ): Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության և Աշխատուժի հետազոտության վերլուծություններն իրականացրել են Անտոնիո Բուբբիկոն և Անքա Փոփին (Դևելոփմենթ Փաթվեյզ): Սուսաննա Կարապետյանը (սոցիալական պաշտպանության ազգային փորձագետ) և Հեղինե Մանասյանը (Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան) ապահովել են մասնագիտական ու տեխնիկական աջակցությունը և հանդես են եկել որպես ազգային կազմակերպությունների և փորձագետների հետ կոնտակտային անձինք: Վերջինս նաև խմբագրել է հայերեն թարգմանությունը: Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում Վրաստանի ՄԱԿ Կանայք կազմակերպության գրասենյակին և ԱՄԿ-ի Արժանապատիվ աշխատանքի հարցերով տեխնիկական աջակցության թիմին ու Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով երկրի գրասենյակին զեկույցի բազմաթիվ աշխատանքային տարբերակների վերաբերյալ արժեքավոր տեխնիկական դիտողությունների համար:

ՄԱԿ Կանայք կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարությանը, Հայաստանի գործատուների հանրապետական միությանը, Հայաստանի վիճակագրական կոմիտեին, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամին, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակին, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանին, ՊՀԾ Հայաստանին և «Լիարժեք կյանք» ՀԿ-ին. այս գնահատման ընթացքում նրանց համագործակցությունն անգնահատելի էր: Լիահույս ենք, որ սոցիալական պաշտպանության ազգային ստորին շեմի ամրապնդման վերաբերյալ սույն զեկույցի առաջարկությունները համատեղ կզարգացվեն և կյանքի կկոչվեն տարբեր միջամտությունների, քաղաքականությունների և օրենսդրության միջոցով:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընդհանուր առմամբ, Հայաստանի բնակչության շուրջ 40 տոկոսն օգտվում է սոցիալական պաշտպանության առնվազն մեկ նպաստից: Այնուամենայնիվ, կան մեծ տարբերություններ տարիքային խմբերի միջև և աննշան տարբերություններ կանանց ու տղամարդկանց միջև: Թեև Հայաստանում գրեթե բոլոր տարեցներն ընդգրկված են սոցիալական պաշտպանության ծրագրերում, այնուամենայնիվ, շատ ավելի քիչ է նպաստ ստացող երեխաների և աշխատունակ տարիքի անձանց մասնաբաժինը՝ համապատասխանաբար 39 և 24 տոկոս: Սա վերաբերում է ինչպես ընտանեկան նպաստի համակարգին, որի հիմնական նպատակն է աղքատության թիրախավորումը՝ բացառումների բարձր ցուցանիշներով, այնպես էլ աշխատունակ տարիքի անձանց շրջանում հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստների համակարգում ընդգրկվածության ցածր ցուցանիշներին (կամ հարկային համակարգի հասանելիությանը):

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը, որը բաղկացած է հարկերով ֆինանսավորվող և հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստների տրամադրման ծրագրերի համակցությունից, ֆինանսավորման տարբեր մոդելների՝ տասնամյակների ընթացքում փորձարկման արդյունք է: Ներկայումս այն բաղկացած է կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված և կյանքի փուլերի հետ չկապված նպաստների տրամադրման ծրագրերի համակցությունից (տե՛ս Գծապատկեր 0.1), այդ թվում՝ կյանքի որոշակի առանցքային փուլերի համար նախատեսված նպաստների (օրինակ՝ ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ) համընդհանուր տրամադրման ծրագրերից, այլ նպաստներ (օրինակ՝ մայրության նպաստներ և աշխատանքային կենսաթոշակներ) տրամադրելու համար զբաղվածության կարգավիճակը հավաստող մի շարք գործիքներից, աղքատության թիրախավորման ծրագրերից՝ փորձելով (օրինակ՝ ԸԿԲՆ-ի միջոցով) ընդգրկել աղքատ համարվողներին: Սոցիալական պաշտպանության համակարգով նախատեսված չեն ԱՄԿ-ի Սոցիալական ապահովության (նվազագույն ստանդարտների) 1952 թվականի կոնվենցիայով (թիվ 102) պահանջվող՝ կյանքի տարբեր փուլերում ի հայտ եկող իրավիճակները կարգավորող առանցքային դրույթներ, չկան զբաղվածության նպաստներ և երեխայի խնամքի կամ ընտանեկան նպաստներ ստանալու համընդհանուր արտոնություններ: Ավելին՝ երեխայի խնամքի արձակուրդի ընթացքում եկամտային ապահովությունը սահմանափակ է, իսկ աշխատավայրում առաջացած փասվածքների դեպքերը կարգավորող դրույթները՝ թույլ: Բոլոր ոլորտներում առկա են համարժեք նպաստների և ծառայությունների տրամադրման, ինչպես նաև արդարության ապահովման իրավական սահմանափակումներ:

Գծապատկեր 0.1.

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի համապարփակ բնույթը ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայով նախատեսված՝ կյանքի տարբեր փուլերի ռիսկերի տեսանկյունից



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների:

2008 թվականից ի վեր սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր պետական ծախսերը (բացառությամբ առողջապահության ոլորտի) ավելի քան կրկնապատկվել են (2019 թվականին հասնելով 28 տոկոսի): Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս հանգամանքը համընկնում է ծախսերի տարբեր աղբյուրներից (օրինակ՝ սոցիալական ապահովագրությունից) հատկացումների համախմբման կառուցվածքային տեղաշարժի՝ սոցիալական պաշտպանության բոլոր ծրագրերի՝ ամբողջությամբ պետական բյուջեից ֆինանսավորման անցնելու հետ: Իրականում այդ ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ տոկոսային արտահայտությամբ, դեռևս գրեթե անփոփոխ է՝ 6-7 տոկոս:

Բացի այդ՝ Հայաստանի բյուջեն իր տնտեսության չափի համեմատ փոքր է, ինչը, ընդհանուր առմամբ, կարող է պայմանավորված լինել պետական եկամուտներ ապահովելու սահմանափակ կարողությամբ: Սահմանափակ բյուջեն և հարկման նվազող բազան մտահոգության տեղիք են տալիս սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր ծախսերն ու պարտավորությունները պետական բյուջեում ներառելու վերաբերյալ որոշման պատճառով: Սա կապված է նաև սոցիալական ապահովագրության համակարգը վերացնելու որոշումը, երբ հիմնադրամը, առնվազն տեսականորեն, ուներ հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներն ինքնաֆինանսավորելու կարողություն, և հատկապես կարևոր էր ծերության կենսաթոշակների դեպքում, որոնք ներկայումս պետության սոցիալական ծախսերի հիմնական մասն են և դեռ կավելանան: Թեև առաջարկվում է իրականացնել պետական ծախսերի առավել մանրամասն ուսումնասիրություն, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ համակարգն այժմ գործում է բացառապես բաշխողական հիմունքով՝ առանց հանկարծահաս ցնցումներին, այն է՝ համաշխարհային համավարակներին դիմագրավելու պահուստների: Երկարաժամկետ

կտրվածքով նպաստների վրա հետագայում կատարվելիք ծախսերի ապահովումը կենսական նշանակություն ունի ֆինանսավորման գործող մոդելի կայունությունն ապահովելու առումով: Ավելին, քանի որ սոցիալական պաշտպանության շատ նպաստների իրավունքը պայմանավորված է հարկերի վճարմամբ կամ աշխատանքային ստաժով, հարկային համակարգի սահմանափակ հասանելիությունը հանգեցնում է այդ նպաստների սահմանափակ հասանելիության: Եկամտային հարկի վերջին բարեփոխումներին համահունչ՝ եկամտի շեմերը վերացնելը տեսականորեն ապահովում է ավելի ցածր եկամուտ ունեցող խմբերի մասնակցությունը: Այնուամենայնիվ, իրականում այդ խմբերի բարեկեցության զուտ ցուցանիշները կարող են նվազել հատկապես այն պատճառով, որ նոր հարկային համակարգում եկամտահարկը հաստատուն դրույքաչափ ունի: Առաջարկվում է իրականացնել այս խնդրի առավել խոր վերլուծություն:

Հարկ է նաև նշել, որ թեև հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստների՝ հարկային համակարգին միաձուլելն ունի վարչական առավելություններ, սակայն կան նաև սոցիալական պաշտպանության իրավունքները եկամտային հարկի վճարումների հետ միացնելու պոտենցիալ խնդիրներ, քանի որ եկամտային հարկ չվճարող անձինք, այնուամենայնիվ, այս կամ այն կերպ իրենց ներդրումն ունենում են տնտեսության մեջ: Դրա ցայտուն օրինակ են գյուղատնտեսության ոլորտում աշխատողների կողմից մատուցվող հիմնական ծառայությունները կամ նույնիսկ ԱԱՀ վճարումները՝ անկախ տարիքից կամ զբաղվածության կարգավիճակից: Տնտեսության մեջ ներդրումն այդքան էլ ակնհայտ չէ գործունեության մյուս տեսակների դեպքում, ինչպես, օրինակ՝ այն աշխատանքի, որ կատարում են աշխատուժից դուրս մնացած անձինք՝ երեխաների, ծերերի և հաշմանդամություն ունեցող անձանց խնամող կանայք:

Հայաստանը կարող է հենվել կառավարման համար բարենպաստ շրջանակի վրա՝ քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու մեկ նախարարությամբ: Սա առավել հետևողական և համապարփակ համակարգ ստեղծելու համար էական առավելություն է: Այնուամենայնիվ, վերը նկարագրված քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման հրն-թացս բնույթը հանգեցրել է իրավական դաշտի տրոհվածության (տե՛ս Գծապատկեր 0.2): Թեև հատկացումների կատարմամբ պայմանավորված և հատկացումների կատարմամբ չպայմանավորված նպաստներն այնպես են փոխկապված, որ լիարժեքորեն ապահովեն թիրախային խմբի ընդգրկվածությունը, սակայն դրանք օրենսդրության մեջ առանձնացված են: Սա պետք է վերանայվի, քանի որ իրավական դաշտի տրոհվածությամբ աչքի ընկնող այլ երկրներում դա ի վերջո հանգեցնում է կարգավորումներում համընկնումների և անհամապատասխանությունների: ԻՄԾԿ-ի ներդնումն այս առումով խոստումնալից է և կարող է լուծել որոշ վարչական խնդիրներ, որոնք ամենաշատն են ազդում օգտվողների վրա:

Գծապատկեր 0.2.

Գործող իրավական դաշտի ամփոփ նկարագիրը



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների:

Բժշկական օգնության և սպասարկման հիմնական ծառայությունների հասանելիությունը

Երկրի առողջապահության համակարգը կանգնած է մի շարք մարտահրավերների առջև: Համընդհանուր բժշկական օգնության և սպասարկման ապահովումը ենթադրում է որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիություն ամբողջ բնակչության համար՝ առանց այդ գործընթացում բնակչությանն անհարկի ֆինանսական խնդիրների առջև կանգնեցնելու, այն է՝ բարելավումներ ինչպես ծառայությունների, այնպես էլ ֆինանսական ապահովման հարցերում: Վերջինս առումով Հայաստանն արձանագրել է ցածր ցուցանիշներ: Վերջին բարեփոխումների շնորհիվ ստեղծվել է մի համակարգ, որտեղ առողջապահության ոլորտի՝ ընդհանուր պետական եկամուտներից ապահովվող հատկացումները հիմնական առողջապահական ծառայությունների փաթեթի միջոցով հիմնական առողջապահական ծառայությունների ընդգրկուն հասանելիություն են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի առողջապահության ոլորտի պետական ֆինանսավորումը ամենացածրն է տարածաշրջանում: Հիմնական ծառայությունների փաթեթի (ՀԾՓ) շրջանակում տրամադրվող ծառայությունների դիմաց համավճարները, առողջապահական թանկ ծառայությունների, մասնավորապես հիվանդանոցային բուժօգնության և սպասարկման, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից տրամադրվող դեղամիջոցների անհասանելիությունը հանգեցրել են նրան, որ տնային տնտեսությունների սեփական միջոցներից (ՍՄ) վճարումները դարձել են երկրում առողջապահության ոլորտի ֆինանսավորման գլխավոր աղբյուրը: ՍՄ-ից

վճարումների բարձր ցուցանիշները թե՛ մեծացնում են տնային տնտեսությունների աղքատության մեջ հայտնվելու ռիսկը, երբ վերջիններս կանգնում են առողջապահական զգալի ծախսերի առջև, և թե՛ նվազեցնում են առողջապահության ոլորտի ֆինանսավորման համակարգի պոտենցիալ վերաբաշխման կարողությունները:

Երեխաների բազային եկամտի ապահովությունը Հայաստանում

Երեխաների՝ աղքատության պայմաններում ապրելու հավանականությունն այլ տարիքային խմբերի համեմատ ավելի մեծ է. ըստ ՏՏԿԱՀ 2019-ի տվյալների՝ աղքատության պարենային գծից ցածր է երեխաների 2.5 տոկոսը՝ ի տարբերություն աշխատունակ տարիքի անձանց միայն 1.3 տոկոսի և կենսաթոշակի ու ավելի բարձր տարիքի անձանց 0.8 տոկոսի: Աղքատության վերին գծից ցածր և «աղքատ» են գնահատվել ավելի շատ երեխաներ՝ գրեթե 51.7 տոկոսը: Ուստի սոցիալական պաշտպանության միջոցով նրանց բարեկեցությունն ապահովելը պետք է համարվի գերխնդիր: Թեև Հայաստանում ընդհանուր առմամբ բոլոր երեխաների գրեթե երկու հինգերորդը (39 տոկոսը) ստանում է սոցիալական պաշտպանության նպաստ, միայն մեկ քառորդը (24 տոկոսը), այդ թվում՝ եկամուտների ամենաաղքատ դեցիլային խմբում ընդգրկվածների կեսից պակասն է ապրում այնպիսի տնային տնտեսություններում, որոնք ստանում են աղքատության թիրախավորմանն ուղղված ԸԿԲՆ (տե՛ս Գծապատկեր 0.3): Հետևաբար, չնայած Կառավարության՝ թիրախավորման համակարգը բարելավելու հանձնառությանը, երեխաներ ունեցող աղքատ ընտանիքներին ուղղված ԸՆ-ի համակարգում դեռևս ընդգրկված չեն այլ կերպ սոցիալապես անապահով համարվող զգալի թվով երեխաներ:

Գծապատկեր 0.3.

ԸԿԲՆ ստացող 0-14 տարեկան երեխաների տոկոսը՝ ըստ սպառման դեցիլի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Միևնույն ժամանակ, կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված մյուս նպաստները (ինչպես, օրինակ՝ հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստները և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը) թեև թվում է արդյունավետորեն հասանելի են դրանց համար դիմող անձանց (նաև հաշմանդամության նպաստների դեպքում հաշմանդամ ճանաչված անձանց), հաշմանդամություն ունեցող երեխաների կամ կերակրողին կորցրած երեխաների իրական թվի մասին տեղեկությունների բացակայությունը թույլ չի տալիս պարզել, թե այդ նպաստները ստանալու իրավունք ունեցող քանի երեխա ընդգրկված չէ համակարգում իր իրավունքների չիմացության կամ դրանցից օգտվելու այլ խոչընդոտների պատճառով:

Ժամանակի ընթացքում ԸՆ-ին հավելման արժեքը գնահատելիս պարզվել է, որ նպաստը 1998 թվականին ներդրվելու պահից կտրուկ արժեզրկվել է: Սա կասկածի տակ է առնում նպաստի սկզբնական նպատակի իրագործելիությունը: Կարելի է եզրակացնել, որ չնայած Կառավարության կողմից պարբերաբար իրականացվող ճշգրտումներին՝ դրամական հատկացումների արժեքը Հայաստանի տնտեսության աճի տեմպին համընթաց չէ:

Աշխատունակ տարիքի անձանց բազային եկամտի ապահովությունը Հայաստանում

Հայաստանում աշխատունակ տարիքի անձանց շրջանում առկա են տնտեսական ցածր ակտիվություն և գենդերային լուրջ բացեր: 2019 թվականին աշխատունակ տարիքի բնակչության կեսից պակասն ուներ զբաղվածություն, և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության երկու երրորդից ավելին կանայք էին: Կանանց ցածր ակտիվության այս ցուցանիշները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ նրանց վրա դրված են երեխաների, ծերերի խնամքի և տնային տնտեսության վարման պարտականությունները: Սա առավել տարածված է 25-39 տարիքային խմբի շրջանում, երբ կանայք առավել հավանական է, որ ունենեն փոքր երեխաներ: Խնամքի պարտականությունների կատարման պատճառով աշխատուժից դուրս մնալը, կարծես, մի խնդիր է, որը բացառապես ազդում է կանանց վրա՝ մատնանշելով սոցիալական և մշակութային այն նորմերը, որոնք ձևավորում են գենդերային դերերը:

Հայաստանում հատկացումների կատարմամբ պայմանավորված՝ աշխատունակ տարիքի անձանց համար նախատեսված նպաստի իրավունքը հաճախ պայմանավորված է զբաղվածության կարգավիճակով, աշխատան- քային հետագծով, կատարած վճարումներով և եկամուտներով: Սա նշանակում է, որ սոցիալական պաշտպանության ստորին շեմերը կարող են դեռևս դերակատարություն ունենալ ո՛չ միայն կյանքի այս փուլում, դրանք առավել կարևոր են հատկացումներով պայմանավորված համակարգից չօգտվող աշխատողների համար: Դրանք ներառում են ոչ միայն կանանց, այլև ոչ ֆորմալ տնտեսության մեջ ներգրավված ցանկացած աշխատողի՝ կին, թե տղամարդ: Ընդգրկվածության առումով ամենահաջողված բնագավառներում (օրինակ՝ մայրության դրամական օգնություն, հաշմանդամության սոցիալական նպաստներ և աշխատանքային կենսաթոշակներ, ինչպես նաև կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ և աշխատանքային կենսաթոշակներ) առկա է բազմաստիճան համակարգ:

Հայաստանում մայրության պաշտպանությունն ունի բարդ կառուցվածք: Թեև կարելի է ասել, որ առկա է մայրության նպաստների մասով համընդհանուր իրավական ապահովում, սակայն ակնհայտ է, որ դրա դրույթները գործում են հօգուտ աշխատող կանանց (տե՛ս Գծապատկեր 0.4): Թեև տեսականորեն Հայաստանում դրամական աջակցություն տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, այնուամենայնիվ, մայրական և հայրական խնամքի արձակուրդների միջև իրավական տարանջատումը քողարկում է այն փաստը, որ դրամական աջակցությունը տրվում է այդ ժամանակի մի փոքր մասի համար, որի ընթացքում երեխայի խնամքի պարտականություններն անհամատեղելի են աշխատաշուկայում

լրիվ դրույքով մասնակցության հետ: Ինչպես արձակուրդի տևողությունը, այնպես էլ աշխատավարձի փոխարինման դրամական արժեքը փոփոխվում են Հայաստանում աշխատող, ինքնազբաղված և չաշխատող կանանց շրջանում կրկին հօգուտ աշխատող կանանց: Թեև դժվար է գնահատել չաշխատող կանանց նպաստների համարժեքության աստիճանը, քանի որ, ըստ էության, նրանք նախկինում եկամուտ չեն ունեցել, սակայն նվազագույն աշխատավարձի 50 տոկոսին համարժեք միանվագ վճարի տրամադրումը դրական քայլ է, որը փաստորեն ցույց է տալիս Հայաստանում մայրության սոցիալական պաշտպանության ստորին շեմի առկայությունը: Այնուամենայնիվ, դրա դրամական արժեքը խիստ ցածր է՝ Հայաստանի ռազմավարական նպատակներին հասնելու համար, որն է՝ խթանել կանանց տնտեսական հնարավորությունները և ստեղծել ընտանիք-աշխատանք այնպիսի հավասարակշռություն, որը կարող է նպաստել ծնելիության բարձրացմանը: Այստեղից էլ առաջանում է զբաղվածությունը խթանող ծրագրերի անհրաժեշտությունը:

Գծապատկեր 0.4.

Երեխայի խնամքի արձակուրդի ընթացքում եկամտային ապահովությունը Հայաստանում



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների:

Հարկ է նշել, որ ընտանիք-աշխատանք հավասարակշռությունն ապահովող ներառական արձակուրդի ուղղությամբ գրանցվող արագ առաջընթացը կարող է բավարար չլինել աշխատուժում կանանց մասնակցությունը բարելավելու համար: Խտրականություն առաջացնող սոցիալական արժեքները և գենդերային կարծրատիպերը կարող են շարունակել խոչընդոտել կանանց մուտքը աշխատաշուկաներ՝ բարձրացնելով նրանց տնտեսական խոցելիության աստիճանը: Կանանց խոցելիությունը պետք է մեղմվի սոցիալական պաշտպանության քաղաքականություններով, սակայն անհրաժեշտ է ունենալ նաև այդ խոցելիության աղբյուրները վերացնող առավել ընդգրկուն քաղաքականություններ՝ աշխատուժում կանանց մասնակցությունն ընդլայնելու և բարելավելու համար: Պետք է նաև ընդունել, որ եթե վճարովի արձակուրդ տրամադրվի միայն կանանց, դա կարող է ամրապնդել այն միտքը, որ կանայք երեխայի խնամքի հիմնական պատասխանատուներն են, իսկ տղամարդիկ՝ հիմնական գումար վաստակողները:

Եթե Հայաստանում չներդրվի աշխատանքի անվտանգության և առողջության ոլորտի հատուկ օրենսդրություն, ապա աշխատունակ տարիքի բնակչության համար այս հարցերին համակարգված մոտեցում ցուցաբերել հնարավոր չի լինի: Թեև «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով (2010) նախատեսվում է մասնագիտական հաշմանդամության կենսաթոշակ, որը պայմանավորված է ֆորմալ զբաղվածությամբ և աշխատանքային ստաժի տարիներով, այնուամենայնիվ, դրանով Հայաստանի աշխատաշուկայի մոտավորապես կեսը դուրս է մնում համակարգից: Թույլ իրավական դաշտը դժվարացնում է պարզել համակարգից օգտվելու իրավասություն ունեցող բնակչության թվաքանակը և փոխհատուցման համարժեքությունը: Ավելին՝ աշխատավայրում առաջացած փասվածքների կամ մասնագիտական հիվանդությունների համար գրանցամատյան չունենալը դժվարացնում է ինչպես այդ դեպքերի հաճախության գնահատումը, այնպես էլ կարգավորող շրջանակը երկրի տնտեսական զարգացման տեմպին համընթաց պահելը:

Հիվանդության կամ «ժամանակավոր անաշխատունակության» նպաստներից օգտվում են միայն պաշտոնապես գրանցված (բացառելով ընտանեկան բիզնեսներում աշխատողներին) և ինքնազբաղված աշխատողները, որոնք վճարել են եկամտային հարկ: Գոյություն չունի հատկացումների կատարմամբ չպայմանավորված նպաստ՝ այս իրավական դաշտից դուրս մնացած անձանց տրամադրելու համար, ինչը նշանակում է, որ զբաղված բնակչության կեսից մի փոքր ավելին իրավասու է օգտվելու այդ նպաստներից: Նպաստների համակարգում ընդգրկվածության առկա բացը նոր իմաստ է ձեռք բերում համավարակի պայմաններում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գործող համակարգը կարելի է համարել բավականին շռայլ այն իմաստով, որ այն ընդգրկում է ոչ միայն հիվանդության դեպքում, այլև ընտանիքի հիվանդ անդամի խնամքի համար տրամադրվող վճարովի արձակուրդը: Միջին ամսական աշխատավարձի 80 տոկոսի հատկացման չափը կարելի է նույնպես համարել համեմատաբար բարձր. այն համապատասխանում է ԱՄԿ-ի ստանդարտներին:

Ինչ վերաբերում է հաշմանդամության նպաստներին, այստեղ իրավիճակը համեմատաբար բարվոք է: Բազմաստիճան համակարգն ապահովում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց գերակշիռ մեծամասնությունը կարողանա ունենալ երաշխավորված եկամուտ՝ իր կյանքի որակը բարելավելու համար: Նպաստների համակարգում ընդգրկվածությունն ավելանում է տարիքին զուգընթաց, ինչն ամենայն հավանականությամբ արտացոլում է այն հանգամանքը, որ չափահասները կարող են հավակնել թե՛ հատկացումների կատարմամբ պայմանավորված հաշմանդամության պետական կենսաթոշակի, թե՛ հատկացումների կատարմամբ չպայմանավորված հաշմանդամության նպաստի: Աշխատանքային հաշմանդամության կենսաթոշակի հավակնելու հավանականությունը նույնպես ավելանում է տարիքին զուգընթաց, ինչն

արտացոլում է այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում ավելի մեծ թվով մարդիկ բավարարած կլինեն աշխատանքային ստաժի տարիների նվազագույն պահանջները (տե՛ս Գծապատկեր 0.5): Համարժեքության տեսանկյունից հաշմանդամության՝ ամրագրված դրույքաչափով սոցիալական նպաստի չափը կազմում է նվազագույն աշխատավարձի ընդամենը 39 տոկոսը, ինչը եկամտի ոչ բավարար փոխարինում է այն անձի համար, ով լավ վարձատրվող աշխատանք ունենալու հնարավորություն չունի: Այնուամենայնիվ, քանի որ Հայաստանում հաշմանդամությունը պայմանավորված չէ անաշխատունակությամբ, լավ կլիներ դրամական հատկացումների արժեքը գնահատել որպես հաշմանդամության լրացուցիչ ծախսերի մասնաբաժին (հաշվարկված միջին եկամտի 35 տոկոսի չափով): Սոցիալական նպաստի դեպքում իրավիճակը մի փոքր բարվոք է. այն հասնում է միջին զուտ աշխատավարձի 69.5 տոկոսին և գերազանցում է նվազագույն աշխատավարձը: Հաշմանդամության աշխատանքային միջին կենսաթոշակի արժեքը նույնպես գերազանցում է ինչպես միջին զուտ աշխատավարձը, այնպես էլ նվազագույն աշխատավարձը:

Գծապատկեր 0.5.

Սոցիալական ապահովության տարբեր նպաստներ ստացող հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված աշխատունակ տարիքի անձանց ցուցանիշները՝ ըստ տարիքային խմբերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Գործազուրկների կեսից ավելին ունի երկարատև գործազրկություն, այսինքն՝ աշխատանք է փնտրում մեկ տարուց ավելի: Կառուցվածքային գործազրկությունը եղել է մշտական խնդիր դեռևս ՔՈՎԻԴ-19-ի և ֆինանսական ճգնաժամերից առաջ: Հայաստանում աշխատանք փնտրողները նշում են, որ աշխատանք գտնելու հիմնական խոչընդոտը աշխատատեղերի բացակայությունն է: Կառուցվածքային գործազրկությունը Հայաստանում առաջանում է

հմտությունների առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունից: Այսպիսով՝ կարճաժամկետ հեռանկարում գործազրկությունը կշարունակի բացասական ազդեցություն ունենալ մեծ թվով աշխատողների, մասնավորապես երիտասարդների վրա: Այս հարցերից շատերը պետք է լուծվեն զբաղվածության քաղաքականությունների՝ մասնագիտական ուսուցման և այլ ԱԱՔ-ների միջոցով: Սակայն սա չի նշանակում, որ սոցիալական պաշտպանությունը չպետք է դերակատարություն ունենա: ԱԱՔ-ները և գործազրկության նպաստները փաստացի միմյանց չեն բացառում և ըստ էության լավագույնս գործում են միմյանց հետ համադրության մեջ: Հայաստանի համատեքստում գործազրկության դրամական նպաստները կապահովեն կարճաժամկետ հեռանկարում երաշխավորված եկամուտ, մինչդեռ երկարաժամկետ հեռանկարում ԱԱՔ-ները կհավասարակշռեն աշխատաշուկան:

Տարեցների բազային եկամտի ապահովությունը Հայաստանում

Ընդհանուր առմամբ, ծերության պաշտպանության արդյունավետ ծածկույթը Հայաստանում շատ բարձր է՝ արտացոլելով իրավունքների համընդհանուր բնույթը (տե՛ս Գծապատկեր 0.6): Հայաստանում հատկացումների կատարմամբ պայմանավորված կենսաթոշակները հիմնված են ոչ թե սոցիալական ապահովագրության հիմնադրամ համամասնորեն կատարվող վճարումների, այլ ավելի շուտ հարկային համակարգում մասնակցության տարիների վրա: Նշված աշխատանքային ստաժի տարիները միակ հիմքն են 1974 թվականից առաջ ծնված անձանց կենսաթոշակները հաշվարկելու համար: 1974 թվականից հետո ծնվածների համար վերջերս ներդրվեց վճարումների նոր՝ անհատական, ամբողջությամբ ֆինանսավորվող հաշիվների համակարգ:

Գծապատկեր 0.6.

Հայաստանում աշխատանքային և հաշմանդամության կենսաթոշակ, տարիքային կամ հաշմանդամության նպաստ ստացող տարեցները՝ ըստ տարիքային խմբերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Կենսաթոշակային համակարգի 0 աստիճանից վճարվում են այն անձինք, որոնց 65 տարեկանը լրացել է, և որոնք չունեն աշխատանքային կենսաթոշակի իրավունք, այս աստիճանը փաստացի ծառայում է տարեցների համար որպես սոցիալական պաշտպանության ստորին շեմ: Համարժեքության տեսանկյունից ծերության նպաստը չի համապատասխանում ԱՄԿ-ի ստանդարտներին: Ավելին՝ ինդեքսավորման ռիսկերի անտեսումն արժեզրկում է նպաստի իրական չափը: Հարկերով ֆինանսավորվող ծերության նպաստների համակարգ ունեցող այլ երկրների հետ համեմատելիս տեսնում ենք, որ Հայաստանում կենսաթոշակի չափը նույնն է, ինչ ԵԿԱ երկրներում է: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ ծերության կենսաթոշակը կազմում է մոտ 12 տոկոս, ինչն ավելի բարձր է, քան Ռուսաստանի Դաշնությունում (9 տոկոս), և ավելի ցածր, քան Վրաստանում (20 տոկոս):

Հատկացումների կատարմամբ պայմանավորված համակարգն առավել բարդ է: Կենսաթոշակային համակարգի 1-ին աստիճանից վճարվում են մինչև 1974 թվականը ծնվածները, որոնք ունեն առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ. կենսաթոշակը բաղկացած է բազային կենսաթոշակից և աշխատանքային ստաժի տարիների համար տրվող հավելումից: Այդ հավելումն առնչություն չունի նախկին եկամուտների հետ, ուստի կենսաթոշակային համակարգի 1-ին աստիճանի ներքո դասակարգվող տարիքային կենսաթոշակները չեն վերարտադրում աշխատաշուկայում նկատվող՝ վարձատրության գենդերային մեծ խզվածքը: Սա այս աստիճանի եզակի և դրական հատկությունն է: Այնուամենայնիվ, հավանական է, որ կանայք կունենան ավելի քիչ աշխատանքային ստաժ, քան տղամարդիկ: Հայաստանում «Պետական նպաստների մասին» օրենքով (2013) երեխայի խնամքի մինչև վեց տարի արձակուրդը դիտվում է որպես աշխատանքային ստաժ: Սա համակարգի մեկ այլ դրական հատկությունն է, որը հնարավորություն է տալիս ծեր տարիքում նվազագույնի հասցնելու նրանց՝ կյանքի ավելի վաղ շրջանում մայրանալու հետևանք հանդիսացող տնտեսական ռիսկերը: Ընդհանուր առմամբ եկամտից նպաստներն առանձնացնելը և խնամքի ժամանակահատվածներն աշխատանքային ստաժ համարելը ծեր տարիքում տղամարդկանց և կանանց միջև եկամտի վերաբաշխման հզոր փաթեթ են ստեղծում:

Կենսաթոշակային համակարգի 2-րդ աստիճանը պարտադիր է և ներառում է անհատական հաշիվներ 1974 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո ծնվածների համար: Դրամական հատկացումների արժեքները ձևավորվում են նախկինում կատարված վճարումների հիման վրա, ինչը նշանակում է, որ կանանց կենսաթոշակների չափի մեջ կարտացոլվեն ոչ միայն նրանց աշխատանքային ստաժի քիչ տարիները, այլև ցածր եկամուտները: Ավելին, քանի որ կանայք հակված են ավելի շուտ կենսաթոշակի անցնելու, սակայն ավելի երկար են ապրում, քան տղամարդիկ, սա նշանակում է, որ նրանք կենսաթոշակի ավելի երկար ժամանակահատվածներ ֆինանսավորելու համար ավելի քիչ խնայողություններ են ունենալու, ինչը սպառնալիք է անուիտետների և ամսական վճարումների բազային համարժեքության տեսանկյունից: Սա իրականում նման համակարգի առանցքային հատկություններից է, երբ սահմանվում է անհատական վճարումների, այլ ոչ թե վերջնական նպաստների չափը: Այս համատեքստում կենսաթոշակի համարժեքությունը կդառնա շատ ավելի կարևոր:

Անցում Հայաստանում ըստ կյանքի փուլերի սոցիալական պաշտպանության ներառական համակարգի

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգն ունի շատ ուժեղ կողմեր: Մասնավորապես ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և ներկայումս մայրության նպաստների բազմաստիճան մոդելի կիրառումը կարող է օրինակ լինել նման տնտեսություն ունեցող այլ երկրների համար: Այնուամենայնիվ, այս մոդելը դեռևս չի կիրառվել համակարգի բոլոր ոլորտների նկատմամբ, և, անկասկած, Հայաստանի սոցիալական

պաշտպանության ստորին շեմի առնչությամբ կան նաև այլ բացեր, մասնավորապես երեխաների և աշխատունակ տարիքի անձանց համար:

Այս բացերը վերացնելու պարզագույն եղանակը կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված հետևյալ երեք՝ բացակայող կամ չափազանց անհամարժեք նպաստների վրա կենտրոնանալն է. 1) ամբողջական ՀԾՓ Հայաստանի բոլոր բնակիչների համար՝ կյանքի բոլոր փուլերում բժշկական օգնության և սպասարկման համընդհանուր հասանելիություն ապահովելու համար, 2) երեխայի համընդհանուր նպաստ՝ 0-18 տարեկան բոլոր երեխաների ծախսերը հոգալու համար, և 3) գործազրկության մշտական համակարգ՝ ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայի նվազագույն ստանդարտներին համահունչ գործազրկության նվազագույն համարժեք ժամանակահատվածն ընդգրկելու համար:

Ավելին՝ այդ փոփոխությունները շատ ծախսատար չեն լինի: Երեխաների համընդհանուր նպաստի և գործազրկության ամսական նվազագույն նպաստի ծրագրերի ներդրումը 2021 թվականին կարժենար ՀՆԱ-ի 1.89-ից մինչև 4.38 տոկոսը, սակայն, հաշվի առնելով տնտեսական և ժողովրդագրական կանխատեսումները, նույնիսկ եթե դրանք ինդեքսավորվեն գնաճի հաշվառմամբ, ծախսը ժամանակի ընթացքում կնվազի:

Լրացուցիչ միջոցառումները, որոնք պետք է դիտարկել առավել արդար համակարգ ստեղծելու համար, կարող են ներառել. 1) մայրության աջակցության և ընտանիքի եկամուտների ապահովման համակարգի կոնֆիգուրացիայի վերանայումը, 2) սոցիալական պաշտպանության համակարգի, մասնավորապես կենսաթոշակային համակարգի ամբողջական ակտուարական գնահատման իրականացումը և 3) մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) գործընթացների ամրապնդումն ու պաշտոնականացումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս աշխատության հիմնական նպատակը Հայաստանում սոցիալական պաշտպանության ստորին շեմերի գնահատումն է՝ վերհանելու համար այն ոլորտները, որոնք անհրաժեշտ է հետագայում ուժեղացնել՝ հատկապես ուշադրություն դարձնելով գենդերային հավասարությանը: «Սոցիալական պաշտպանության ստորին շեմ» հասկացությունն ամրագրված է ԱՄԿ-ի Սոցիալական պաշտպանության շեմերի վերաբերյալ 2012 թվականի հանձնարարականում (թիվ 202): Սոցիալական պաշտպանության ստորին շեմերը ներպետական մակարդակով սահմանված սոցիալական ապահովության բազային երաշխիքներն են, որոնք պետք է (նվազագույնը) ապահովեն, որ յուրաքանչյուր ոք կյանքի տարբեր փուլերում կարողանա օգտվել բժշկական օգնության և սպասարկման հիմնական ծառայություններից և ունենա բազային եկամտի ապահովություն, որոնք միասին ապահովում են ապրանքների և ծառայությունների արդյունավետ մատչելիությունը: Ուստի այս աշխատության շրջանակը մեծապես պայմանավորված է սույն հանձնարարականով, ինչպես նաև հարակից՝ ԱՄԿ-ի Սոցիալական ապահովության (նվազագույն ստանդարտների) 1952 թվականի կոնվենցիայով (թիվ 102) սահմանված չնախատեսված իրավիճակներով:

Կարևոր է հասկանալ, թե ինչպես կարող է այս հասկացությունը համատեղվել սոցիալական պաշտպանության ոլորտում ներպետական մակարդակով կիրառվող տերմինաբանության հետ, որը կարող է տարբեր երկրներում տարբեր լինել: Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգը դասակարգվում է հինգ ուղղություններով[1], որոնցից միայն մի քանիսն են համընկնում միջազգային համընդհանուր կիրառմանը.

- **Սոցիալական աջակցության ծրագրերի** նպատակը բնակչության սոցիալապես անապահով խմբերի նվազագույն կենսամակարդակի ապահովումն է: Հայաստանի սոցիալական աջակցության ծրագրերը, որոնք հայտնի են նաև որպես սոցիալական նպաստներ, ներառում են ընտանեկան նպաստները, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և ծերության նպաստները, հղիության և ծննդաբերության միանվագ նպաստները, երեխայի խնամքի նպաստները, ինչպես նաև դրամական և ոչ դրամական սոցիալական այլ ծառայությունները:
- **Սոցիալական ապահովության ծրագրերը** վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական կոնկրետ միջամտություններին, ինչպես նաև սոցիալական ծրագրերին, որոնք ուղղված են մասնագիտացված հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց, վետերաններին և երեխաներին աջակցելուն:
- **Սոցիալական պաշտպանության ծրագրերի** շրջանակներում ծառայություններ են տրամադրվում մասնագիտացված հաստատություններում գտնվող երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց և վետերաններին, մասնավորապես նրանց համար իրականացվում են բժշկասոցիալական վերականգնողական ծրագրեր:
- **Սոցիալական ապահովագրության ծրագրերը** բաղկացած են ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակներից, ինչպես նաև աշխատող այն անձանց տրվող հիվանդության և մայրության նպաստներից, որոնք իրենց աշխատանքային կյանքի ընթացքում համակարգին հատկացումներ են կատարել:
- **Զբաղվածության ծրագրերը,** որոնք նախքան վերջերս չեղարկումը հիմնականում ներառում էին գործազրկության նպաստները, ինչպես նաև աշխատաշուկայի ակտիվ քաղաքականությունները (ԱԱՔ-ներ), որոնք նույնպես համարվում են սոցիալական պաշտպանության համակարգի բաղկացուցիչ մաս՝ զբաղվածությանն առնչվող սոցիալական ռիսկերը կառավարելու համար:

[1] Karapetyan et al. (2011):

Հարկ է նշել, որ սոցիալական ապահովության և սոցիալական պաշտպանության ներպետական մակարդակով կիրառվող սահմանումները հատուկ են Հայաստանին: Ներկայումս կիրառվող «սոցիալական պաշտպանություն» տերմինն օգտագործվում է սոցիալական ապահովություն իմաստով, և, ընդհանուր առմամբ, երկու տերմիններն էլ փոխնիփոխ կիրառվում են ԱՄԿ-ի և ՄԱԿ-ի այլ գործակալությունների կողմից[2]: Սոցիալական ապահովությունն ընդունված է որպես մարդու իրավունք և սահմանված է միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են ԱՄԿ-ի 1952 թվականի թիվ 102 կոնվենցիան, որը ներառում է ինը հիմնական ոլորտներ՝ երեխայի և ընտանեկան նպաստներ, մայրության պաշտպանություն, գործազրկության դեպքում աջակցություն, աշխատավայրում առաջացած վնասվածքների դեպքում նպաստներ, հիվանդության նպաստներ, առողջության պաշտպանության, ծերության նպաստներ, անաշխատունակության/հաշմանդամության նպաստներ և կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ: Դեռ վերջերս ԱՄԿ-ի 2012 թվականի թիվ 202 հանձնարարականում նշված էին այդ չնախատեսված իրավիճակները, և դրանով կոչ էր արվում ապահովելու բազային եկամուտ և առողջության ապահովություն՝ սոցիալական պաշտպանության ստորին շեմ մանկության, աշխատունակ և ծեր տարիքում: Այս շրջանակում զբաղվածության քաղաքականությունը, այդ թվում՝ ԱԱՔ-ները, համարվում է սոցիալական և աշխատանքային քաղաքականության հարակից, սակայն առանձին ոլորտ:

Սոցիալական պաշտպանության ստորին շեմերը որպես վերլուծական հիմք օգտագործելը նշանակում է, որ վերլուծությունը պետք է իրականացվի նշված ոլորտներից երկուսի ուղղությամբ: Առաջինը՝ դրանով դիտարկվում է, թե ներպետական մակարդակով ինչն է սահմանված որպես **սոցիալական աջակցություն,** որը ներառում է թե՛ աղքատությունը հաղթահարելուն ուղղված նպաստները կամ նյութական վիճակի ստուգման հիման վրա տրվող նպաստները և թե՛ համընդհանուր նպաստները: Սույն զեկույցում նշվածները համարվում են **հատկացումների կատարմամբ** չպայմանավորված նպաստներ[3]: Երկրորդ՝ դրանով դիտարկվում է **սոցիալական ապահովագրությունը,** որը տարեցների պաշտպանության դեպքում ներառում է թե՛ հին սոցիալական ապահովագրության համակարգը (սահմանված նպաստ) և թե՛ նոր, լիովին ֆինանսավորվող համակարգը (սահմանված վճար): Երկուսն էլ համարվում են **հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներ:** Այս իմաստով 1.1 աղյուսակում նկարագրված են այս գնահատման մեջ ներառված համակարգերը՝ մանրամասնության տարբեր մակարդակներով:

---

[2] Տերմինների մանրամասն նկարագրության համար տե՛ս ԱՄԿ-ի բառարանը (2017):

[3] Հեղինակներն ընդունում են, որ «հատկացումների կատարմամբ չպայմանավորված» տերմինը վիճարկվում է որոշ շրջանակներում, քանի որ դրա մեջ, ըստ էության, չեն երևում այն ներդրումները, որ յուրաքանչյուր ոք, անկախ ֆորմալ աշխատաշուկայի հետ ունեցած իր կապից, կատարում է հասարակության և տնտեսության մեջ իր ողջ կյանքի ընթացքում (ՄքՔլենեհեն, 2019): Այս քննադատությունը հատկապես կարևոր է գլխավորապես ամբողջ աշխարհի կանանց կողմից անվճար իրականացվող խնամքի գործընթացում «անտեսանելի» ներդրումներ ունենալու դեպքերը դիտարկելիս: Այնուամենայնիվ, այլընտրանքային տերմինների, այդ թվում՝ «հարկերով ֆինանսավորվող» կամ «սոցիալական աջակցություն» տերմինների կիրառումը նպատակահարմար չէր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս Հայաստանում բոլոր նպաստները (այդ թվում՝ եկամտին առնչվող նպաստները) ֆինանսավորվում են հարկերից (տե՛ս 3.2.2 բաժինը՝ համապարփակ քննարկման համար), մինչդեռ «սոցիալական աջակցություն» տերմինը սովորաբար ավելի սերտորեն փոխկապված է անապահովության գնահատման հիման վրա տրվող նպաստների հետ:

Աղյուսակ 1.1.

Վերլուծության շրջանակը

Հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներ	Հատկացումների կատարմամբ չպայմանավորված՝ սոցիալական աջակցության նպաստներ
• պետական կենսաթոշակներ ○ տարիքային ○ հաշմանդամության ○ կերակրողին կորցնելու դեպքում • ժամանակավոր անաշխատունակության նպաստներ ○ մայրության ○ հիվանդության ○ աշխատավայրում առաջացած փասվածքի	• ծերության նպաստ • հաշմանդամության նպաստ • կերակրողին կորցնելու դեպքում նպաստ • երեխայի ծննդյան համընդհանուր նպաստ (միանվագ) • մայրության նպաստ չաշխատող մայրերի համար (միանվագ) • ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ (ԸԿԲՆ) ○ ընտանեկան նպաստ (ԸՆ) ○ սոցիալական նպաստ (ՍՆ) ○ հրատապ օգնություն (ՀՕ)

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամանակի սղությունը և մատնանշված մի շարք նպաստների տեսակները՝ հանգամանալից վերլուծության հիմքում գլխավորապես կլինեն այն նպաստներն ու բացերը, որոնք վերհանվել են նախնական վերլուծության մեջ որպես գերակա ուղղություն-ներ՝ գենդերի փաստի հաշվառմամբ: Սա ներառում է, օրինակ, շեշտադրում կյանքի հետևյալ փուլերի և չնախատեսված հանգամանքների վրա՝ մանկություն, աշխատունակ տարիքի անձանց (մասնավորապես՝ մայրություն և գործազրկություն) և տարեցներին առնչվող հիմնական ռիսկեր: Հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստներին, հիվանդության դրամական նպաստներին և աշխատավայրում առաջացած փասվածքների դեպքում նպաստներին միայն թռուցիկ անդրադարձ է արվում:

Զեկույցն ունի հետևյալ կառուցվածքը. 2-րդ գլխում ներկայացված են Հայաստանում ժողովրդագրա-կան և տնտեսական ներկա իրավիճակը, աղ-քատության, աշխատաշուկայի և գենդերային դինամիկայի նկարագրությունը, 3-րդ գլխում՝ Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի ընդհանուր նկարագիրը կյանքի տարբեր փուլերի տեսանկյունից և միջազգային նորմերի ու սահմանումների հաշվառմամբ, 4-րդ գլխում՝ բժշկական օգնությունը և սպասարկումը կարգավորող դրույթները՝ իրավական և արդյունավետ ծածկույթի տեսանկյունից, 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխներում՝ համապատասխանաբար երեխաների, աշխատունակ տարիքի կանանց ու տղամարդկանց և տարեցների սոցիալական պաշտպանության ծածկույթի գնահատումը՝ իրա-վական և արդյունավետ ծածկույթի (այդ թվում՝ համարժեքության) տեսանկյունից՝ շեշտադրելով գենդերային տարբերությունները, 8-րդ գլխում՝ գործող համակարգն ընդլայնելու սցենարները և դրանց առնչվող հնարավոր ծախսերի ուսումնասիրությունը, և 9-րդ գլխում՝ եզրափակիչ դիտարկումները:

ԵՐԿՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Խորհրդային իշխանությունից ձգձգված անցումը խոր վերափոխման միջոցով Հայաստանի զարգացումը ձևավորեց դեպի շուկայական տնտեսություն և ժողովրդավարական ինստիտուտների ստեղծում: Երկրի զարգացման տեսլականն արտացոլված է 2014-2025 թվականների Հայաստանի զարգացման ռազմավարության (ՀԶՌ) մեջ, որտեղ աշխատատեղերի ստեղծումը շեշտադրված է որպես կենսամակարդակի բարելավման և աղքատության նվազեցման շարժիչ ուժ գալիք տասնամյակի համար: Առանցքային գերակայություններն են՝ զբաղվածության ավելացում, մարդկային կապիտալի զարգացում և բարելավված սոցիալական պաշտպանություն ու արդիականացված պետական կառավարում՝ նշված նպատակներին հասնելու համար դրամավարկային, հարկաբյուջետային և սոցիալական գործիքների կիրառմամբ[4]: Ինչ վերաբերում է սոցիալական պաշտպանությանը, ՀԶՌ-ի նպատակը սոցիալական ապահովագրության և սոցիալական աջակցության ուղղություններով պետական ծախսերի ավելացումը, ինչպես նաև թիրախավորման համակարգի բարելավումն են: Սա համակարգի ընդլայնման և կատարելագործման մտադրության մասին բարձր մակարդակի հայտարարություն է: Սոցիալական պաշտպանության նկատմամբ իրավունքների վրա հիմնված կենսափուլային մոտեցումը կարող է օգնել Կառավարությանը՝ այդ ջանքերի շնորհիվ ստեղծելու համապարփակ համակարգ, որը կխթանի **ներառական աճը:**

Կարճաժամկետ ռազմավարական պլանավորումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Կառավարության ծրագրի և Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) միջոցով: Քանի որ երկուսն էլ բխում են ՀԶՌ-ից, դրանք ներպետական մակարդակում ծառայում են որպես զարգացման առանցքային շրջանակներ: ՄԺԾԾ-ն, որը հիմք է հանդիսանում տարեկան բյուջեի կազմման համար, սահմանում է սոցիալական պաշտպանության ոլորտի նպատակները, գերակայություններն ու ծախսային պարտավորությունները յուրաքանչյուր եռամյա շրջափուլի համար: 2020-2022 թվականների Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) քաղաքականության հովանու ներքո սահմանում է Կառավարության հետևյալ հիմնական թիրախները.

- բարձրացնել նվազագույն ամսական աշխատավարձը,
- վերացնել ծայրահեղ աղքատությունը մինչև 2023 թվականը՝ 1) ներդնելով ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ՝ սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, 2) խրախուսելով մասնավոր կազմակերպությունների մուտքը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտ՝ առավել մրցակցային և բազմազան միջավայր ստեղծելու նպատակով, և 3) տրամադրելով երկարաժամկետ հասցեական ֆինանսական աջակցություն սոցիալապես խոցելի ընտանիքներին և խմբերին,
- մշակել և իրականացնել նոր ծրագրեր և վերանայել գործող ծրագրերը՝ երիտասարդ ընտանիքներում ծնելիությունը խթանելու նպատակով,
- պարբերաբար բարձրացնել բազային, աշխատանքային և զինվորական կենսաթոշակների չափը,
- մշակել և իրականացնել նոր ծրագրեր և վերանայել գործող ծրագրերը՝ խթանելու կրթությունն ու աշխատանքն աղքատ բնակչության շրջանում (ստեղծելով «կրթական աշխատաշուկա»)՝ թիրախավորելով կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և երիտասարդներին,
- ամրապնդել օրենսդրական դաշտը՝ համայնքային ծառայությունների մատուցման շրջանակը պետական միջոցների հաշվին ընդլայնելու համար՝ խրախուսելով մրցակցային միջավայրը հասարակական

[4] Հայաստան (2014):

կազմակերպությունների համար (ՀԿ-ներ),

- բարելավել հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների որակը՝ 1) կազմակերպելով հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի ծառայություններ տնային/ընտանեկան միջավայրում, 2) կանխելով հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը ցերեկային խնամքի հաստատություններ, և 3) դեինստիտուցիոնալացնելով խնամքը հաշմանդամություն ունեցող տարեցների համար և մշակելով խնամքի կազմակերպման այլընտրանքային համայնքային ծառայություններ:

Այս թիրախներին հասնելու համար ՄԺԾԾ-ն Կառավարությանն առաջարկում էր ստանձնել հետևյալ ծախսային ծրագրերն իրականացնելու պարտավորությունը. 2020 թվականի համար՝ 486.9 միլիարդ ՀՀ դրամ (1.0 միլիարդ ԱՄՆ դոլար), 2021 թվականի համար՝ 489.7 միլիարդ ՀՀ դրամ (0.9 միլիարդ ԱՄՆ դոլար) և 2022 թվականի համար՝ 496.3 միլիարդ ՀՀ դրամ (0.9 միլիարդ ԱՄՆ դոլար)[5]:

2.1
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2020 թվականի դրությամբ Հայաստանի բնակչությունը շուրջ 3 միլիոն էր, որից գրեթե երկու երրորդն (63 տոկոսը) ապրում է քաղաքային բնակավայրերում[6]: Հայաստանը կանգնած է ժողովրդագրական խոշոր վերափոխման առջև, այդ թվում՝ բնակչության ծերացման և աստիճանական նվազման, որի արդյունքում կճնավորվեն սոցիալական պաշտպանության համակարգի գերակայությունները և զարգացումը: 2000-2011 թվականների ընթացքում բնակչությունը նվազել է՝ 3.07 միլիոնից հասնելով 2.88 միլիոնի՝ հիմնականում պայմանավորված ծնելիության նվազմամբ և արտագաղթի ավելացմամբ[7]: Ինչպես երևում է 2.1 գծապատկերից, 2011 թվականից ի վեր աննշան աճի միտում է նկատվում: Այնուամենայնիվ, ՄԱԿ ՏՍՀԴ-ի՝ բնակչությանը վերաբերող կանխատեսումների համաձայն՝ սա չի լինի կայուն երևույթ, և բնակչության ընդհանուր թիվը մինչև 2050 թվականը կնվազի՝ հասնելով մոտավորապես 2.7 միլիոնի:

---

[5] Հայաստան (2019): Հայկական դրամը ԱՄՆ դոլարի վերածելու համար կիրառվել է OANDA արժույթի փոխարկիչը (տե՛ս https://www1.oanda.com/currency/converter/)

[6] ՄԱԿ ՏՍՀԴ (2018, 2019ա):

[7] ՄԱԿ ՏՍՀԴ (2019գ), Համաշխարհային բանկ (2020բ): Մեկ կնոջ հաշվով երկրում ծնելիության մակարդակը 1985 թվականի մոտ 2.6 երեխայից նվազել է՝ 2019 թվականին հասնելով 1.8 երեխայի, ինչը վերարտադրության գործակցից բավականին ցածր է: ՄԱԿ ՏՍՀԴ-ի համաձայն՝ նախատեսվում է, որ մինչև 2050 թվականը ծնելիության գործակիցը կմնա 1.76-1.78-ի սահմաններում: Թեև 1000 բնակչի հաշվով զուտ միգրացիայի մակարդակը 1990-ականներից սկսած նվազել է (1995-2000 թվականների միջև ընկած ժամանակահատվածում տարեկան կազմելով -14,2), սակայն շարունակում է մնալ բացասական (2015-2020 թվականների միջև ընկած ժամանակահատվածում՝ -1.7), և ակնկալվում է, որ այն աննշան կնվազի (2045-2050 թվականների միջև ընկած ժամանակահատվածում՝ -1.8):

Գծապատկեր 2.1.

Հայաստանի բնակչության դինամիկան. 2000-2020 թթ.



Աղբյուրը. ՄԱԿ ՏՍՀԴ (2019ա):

Հայաստանում կյանքի միջին սպասվող տևողությունը 75 տարի է, ինչը նույնն է թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերի համար, սակայն կանանց կյանքի միջին սպասվող տևողությունն ավելի երկար է (78 տարի), քան տղամարդկանցը (71 տարի)[8]: Կենսաթոշակի անցնելիս կանանց կյանքի միջին սպասվող տևողությունը ևս (20 տարի կենսաթոշակի անցնելուց հետո) ավելի երկար է (21 տարի), քան տղամարդկանցը (17 տարի)[9]:

2020 թվականին 0-18 տարեկան երեխաները կազմում էին բնակչության 26.6 տոկոսը, 19-64 տարեկան չափահասները՝ 61.6 տոկոսը, մինչդեռ տարեցները (65 և բարձր տարիքի)՝ 11.8 տոկոսը[10]: ՄԱԿ ՏՍՀԴ-ի՝ բնակչությանը վերաբերող կանխատեսումների համաձայն՝ ակնկալվում է, որ մինչև 2050 թվականը բաշխվածությունը կփոխվի. երեխաները՝ 21.4 տոկոս, աշխատունակ տարիքի չափահասները՝ 57.2 տոկոս, և տարեցները՝ 21.4 տոկոս: Ինչպես երևում է 2.2 գծապատկերում, ներկայումս միջին տարիքի չափահասները բնակչության հիմնական մասն են: Ընդհանուր առմամբ, աշխատունակ տարիքի անձանց թիվը չի աճում և շուտով կնվազի: Սա լուրջ ճնշում կստեղծի երկրի՝ հարկային եկամուտները պահպանելու կարողության և պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվող բոլոր պետական ծրագրերի, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության համակարգի վրա: Քանի որ զուգահեռաբար մեծանում է տարեցների թիվը, մեծանալու է նաև խնամքի ծառայությունների պահանջարկը, ինչն, ամենայն հավանականությամբ, գլխավորապես կընկնի կանանց ուսերին՝ հետագայում սահմանափակելով աշխատուժին մասնակցելու, հարկեր վճարելու և տնտեսությունը զարգացնելու նրանց կարողությունը:

---

[8] ՄԱԿ ՏՍՀԴ (2019ա):

[9] «Կենսաթոշակի անցնելիս կյանքի միջին սպասվող տևողությունը» հաշվարկելու համար ՄԱԿ ՏՍՀԴ-ն հիմք է ընդունում կենսաթոշակային տարիքը՝ 60 տարեկանը:

[10] ՄԱԿ ՏՍՀԴ (2019ա):

Գծապատկեր 2.2.

Բնակչության տարիքային կազմը Հայաստանում. 2020 և 2050 թթ. (կանխատեսում)



Աղբյուրը. ՄԱԿ ՏՍՀԴ (2019ա):

Ավելին՝ Հայաստանում արտագաղթի ցուցանիշները ամենաբարձրերից են աշխարհում. բնակչության շուրջ 30 տոկոսն ապրում է երկրից դուրս[11]: Համաձայն 2019 թվականի Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ)՝ մշտական բնակության վայրը լքած և հետազոտվող ժամանակահատվածում չվերադարձած տնային տնտեսությունների անդամների 5.1 տոկոսի շրջանում 69.6 տոկոսը ներգրավված է եղել արտաքին միգրացիայի հոսքերում (որից 90 տոկոսը՝ դեպի Ռուսաստանի Դաշնություն)[12]: Թեև արտագաղթի դրդապատճառները ժամանակի ընթացքում փոխվել են, սակայն արժանապատիվ աշխատատեղերի բացակայությունը և գործազրկությունը միշտ եղել և մնում են առանցքային մղիչ գործոններ: Արտերկրից դրամական փոխանցումների ծավալը՝ աշխատանքային միգրացիայի ուղղակի հետևանքը, բարձր է (2019 թվականին կազմել է ՀՆԱ-ի 11.2 տոկոսը)[13], սակայն տատանվում է: Դրամական փոխանցումների ներհոսքը ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ, 2019 թվականին Հայաստանում ավելի բարձր էր, քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) տարածաշրջանի միջինից բարձր եկամուտ ունեցող շատ այլ երկրներում (տե՛ս Գծապատկեր 2.3):

[11] ՏՀԶԿ և ՀՌԿԿ Հայաստան (2017):
[12] ԱՐՄՍՏԱՏ (2020բ):
[13] Համաշխարհային բանկ (2020ա):

Գծապատկեր 2.3.

Դրամական փոխանցումների ներհոսքը ԵԿԱ տարածաշրջանի միջինից բարձր եկամուտ ունեցող որոշ երկրներում ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ. 2019 թ.



Աղբյուրը. Համաշխարհային բանկ (2020ա):
**Նշում. Կոսովոյին վերաբերող հղումները պետք է ընկալվեն Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1244 որոշման (1999) համատեքստում:*

2.2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Վերջին տարիներին Հայաստանում տնտեսական աճի տեմպերը բավական բարձր են եղել՝ 2008-2020 թվականների ընթացքում տարեկան միջինում 3 տոկոս՝ չնայած մի շարք ցնցումներին[14], և նախքան ՔՈՎԻԴ-19 գլոբալ համավարակը ԱՄՀ-ն ակնկալում էր, որ աճի հետագիծը կշարունակվի[15]: 2.4 գծապատկերում ներկայացված է Հայաստանի ՀՆԱ-ի աճի տեմպի տատանումը նշված ժամանակահատվածի համար: Հետագայում, հաշվի առնելով ՔՈՎԻԴ-19-ի ճգնաժամի տնտեսական հետևանքները, ԱՄՀ-ն վերանայել է աճի իր կանխատեսումները՝ 2020 թվականի համար կանխատեսելով ՀՆԱ-ի 7.6 տոկոսի նվազում, իսկ 2021 թվականի համար՝ դրական աճի միտում[16]:

[14] ԱՄՀ (տ.բ-բ), վերջին անգամ թարմացվել է 2021 թվականի ապրիլին: Հայաստանն անցել է բազմաթիվ ցնցումների միջով, այդ թվում՝ 2007-2008 թվականների համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, 2014 թվականին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև աշխարհաքաղաքական լարվածության տարածումը, 2014 թվականից ի վեր ապրանքների գների անկումը՝ ազդելով առանցքային առևտրային գործընկերների վրա, և վերջերս՝ ՔՈՎԻԴ-19 գլոբալ համավարակը:
[15] ԱՄՀ (2020ա):
[16] ԱՄԿ (տ.բ-բ), վերջին անգամ թարմացվել է 2021 թվականի ապրիլին:

Գծապատկեր 2.4.

ՀՆԱ-ի աճի տեմպը. 2008-2020 թթ.



Աղբյուրը. ՀՀ կենտրոնական բանկ (www.cba.am):

ՔՈՎԻԴ-19-ի ճգնաժամը բացասաբար է անդրադարձել ամբողջ տնտեսության վրա, թեև որոշ ոլորտներ ավելի շատ են տուժել: Հայաստանի տնտեսությանը էական վնաս հասցրած 2008-2009 թվականների համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցություններից անհամեմատ ավելի մեծ են ՔՈՎԻԴ-19 համավարակի հետևանքները: 2020 թվականի մարտի վերջին սահմանված արտակարգ դրությունը, տեղաշարժի սահմանափակումները, հասարակական տրանսպորտի, խանութների, ռեստորանների և այլ ծառայությունների փակվելն անմիջական և ուղղակի ազդեցություն են թողել այդ ոլորտների վրա: Սա ուղեկցվեց ներքին սպառման, ներքին ներդրումների, զբոսաշրջության և հարակից բիզնեսների ծավալների, օտարերկրյա ուղղակի ներդրումների և դրամական փոխանցումների ներհոսքերի կրճատմամբ[17]:

Տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ֆիզիկական սահմանափակումները և դրանց ծավալների հետագա կրճատումը[18] մարդկանց որոշակի խմբերի վրա ավելի շատ են ազդել: Թեև ՔՈՎԻԴ-19-ի ճգնաժամի հարուցած ազդեցություննն առավել խորությամբ կրող տնտեսական և զբաղվածության ոլորտներում ավելի շատ տղամարդիկ, քան կանայք են զբաղված (աշխատող տղամարդկանց 44 տոկոսը և աշխատող կանանց 29 տոկոսը), ևս 157 000 անձ (որից երկու երրորդը՝ կանայք) աշխատում է այն ոլորտներում, որտեղ ակնկալվում էր չափավոր ազդեցություն[19]: Ավելին՝ այդ բոլոր աշխատողների գրեթե մեկ երրորդը զբաղված է այն ոլորտներում, որտեղ վարակման ռիսկը մեծ է: Վարակման ռիսկի գոտում են հատկապես առողջապահության ոլորտի աշխատողները, որոնց 84 տոկոսը կանայք են[20]: Արդեն իսկ զբաղվածությանը կամ առողջությանը առնչվող տնտեսական ռիսկի գոտում են գործազուրկները, չաշխատող, չսովորող երիտասարդները (15-

---

[17] ԱՄՀ (2020բ):
[18] ԱՄԿ (2020ա): 2020 թվականի մարտին տնտեսական ակտիվության մակարդակը նվազել էր 4.6 տոկոսով, իսկ 2020 թվականի ապրիլին՝ 17 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ: Այս անկումը պետք է դիտարկել այն լույսի ներքո, որ նախքան համավարակի բռնկվելը տնտեսությունն արագ տեմպերով աճում էր:
[19] ԱՀ (2018):
[20] ԱՄԿ (2020ա):

29 տարեկան, որոնք 2019 թվականին կազմում էին Հայաստանի երիտասարդ բնակչության 28.4 տոկոսը), վերջերս աշխատաշուկա մուտք գործած անձինք, արտերկրում աշխատանք փնտրող անձինք և միգրանտ աշխատողները: Կարճ ասած՝ կանխատեսվում է, որ նրանք, ովքեր նախքան համավարակն արդեն իսկ սոցիալապես անապահով վիճակում էին, տնտեսական բարեկեցության տեսանկյունից ամենաշատն են տուժել:

Շատ երկրներում սահմանափակումների մեղմացումը թույլ է տվել աստիճանաբար վերաբացել տնտեսական գործունեության ճյուղերը, սակայն սա բավարար չի լինելու համավարակի սոցիալ-տնտեսական անցանկալի հետևանքները վերացնելու համար: ԵԿԱ տարածաշրջանում ԱՄԿ-ն 2020 թվականի երկրորդ եռամսյակի համար կանխատեսել էր աշխատանքային ժամերի կրճատում 11.8 տոկոսով, կանխատեսել էր նաև ճգնաժամի չորս ամիսներին ԱՀԿ (Առողջապահության համաշխարհային կազմակերպության) եվրոպական տարածաշրջանում ոչ ֆորմալ ոլորտի աշխատողների հարաբերական աղքատության ցուցանիշների աճ՝ նախաճգնաժամային 34 տոկոսից 80 տոկոսի[21]:

ՔՈՎԻԴ-19 համավարակի տնտեսական հետևանքները զգալի բացասական ազդեցություն կունենան նաև դրամական փոխանցումների միջոցով սնվող տնտեսությունների վրա: Կանխատեսվում է, որ դրամական փոխանցումների հոսքերը կտրուկ կնվազեն՝ 2019 թվականին արձանագրված ցուցանիշներից ավելի քան 30 տոկոսով[22]: Կանխատեսվում է, որ այդ ազդեցությունը հատկապես սուր կզգացվի Հայաստանում, որտեղ դրամական փոխանցումների ծավալը 2020 թվականին կրճատվել էր՝ կազմելով ՀՆԱ-ի 8.9 տոկոսը[23]:

2.3

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Տնտեսական աճի և սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրումների շնորհիվ աղքատության հաղթահարման գործում Հայաստանը որոշակի առաջընթաց է արձանագրել: Ազգային վիճակագրական տվյալների համաձայն՝ 2009-2018 թվականների ընթացքում աղքատությունը, որը սահմանվում է աղքատության վերին գծով (հիմք ընդունելով, որ տնային տնտեսության սպառման մեջ նվազագույն պարենային զամբյուղի մասնաբաժինը կազմում է 57 տոկոս), նվազել է 31 տոկոսով՝ 31.4-ից հասնելով 23.5 տոկոսի[24]: 2019 թվականին աղքատության մակարդակը կազմում էր 43.8 տոկոս՝ արտացոլելով 2019 թվականի ՏՏԿԱՀ-ում ներդրված՝ աղքատ և սոցիալապես անապահով տնային տնտեսությունների սահմանման մեթոդաբանության մեջ տեղ գտած վերջին փոփոխությունները (տե՛ս Ներդիր 2.1)[25]: 2.5 գծապատկերում ներկայացված է Հայաստանում աղքատության մակարդակի դինամիկան վերջին տասնամյակի ընթացքում՝ կիրառելով աղքատության երեք ազգային գծերը: Հայաստանում ՔՈՎԻԴ-19 համավարակի ճգնաժամի բոլոր հետևանքներն աղքատության վրա դեռևս անհայտ են, սակայն, ամենայն հավանականությամբ, ինչպես այլ երկրներում, դրանք զգալի կլինեն:

---

[21] Madureira Lima et al. (2020):
[22] Համաշխարհային բանկ (2020բ):
[23] ԱՄԿ (2020ա): 2019 թվականին Հայաստան կատարված դրամական փոխանցումների 54 տոկոսը եղել է Ռուսաստանի Դաշնությունից:
[24] ԱՐՄՍՏԱՏ (2020ա):
[25] Նույն տեղում: Այս վերջին փոփոխությունների բացատրության և Հայաստանի աղքատության ազգային գծերի վերաբերյալ հակիրճ մեթոդական պարզաբանումների համար տե՛ս 2.1 ներդիրը:

Գծապատկեր 2.5.

Աղքատության մեջ ապրող բնակչության մասնաբաժինը տոկոսային արտահայտությամբ՝ ըստ աղքատության տարբեր ազգային գծերի. 2009-2019 թթ.



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏ (2020ա):
Ծանոթագրություն. Աղքատության վերին գծի նկատմամբ աղքատության միտման փոփոխությունը պայմանավորված է ՏՏԿԱՀ 2019-ում ներդրված մեթոդաբանության և տվյալների հավաքման գործընթացի փոփոխություններով (տե՛ս Ներդիր 2.1): Եթե մեթոդաբանությունը 2019 թվականին չփոխվեր, ապա աղքատության մակարդակը (աղքատության վերին գծի նկատմամբ) կկազմեր 24.9 տոկոս, ինչը մի փոքր աճ էր նախորդ տարվա համեմատ:

Ներդիր 2.1.

Աղքատության գնահատման մոտեցումը Հայաստանում

1996 թվականից ի վեր Հայաստանում աղքատության չափման համար կիրառվել է սպառման վրա հիմնված «բացարձակ աղքատություն» մոտեցումը: 2009 թվականին Կառավարությունը ներդրեց դրամական արտահայտմամբ աղքատ և սոցիալապես անապահով տնային տնտեսությունները բացահայտելու վերանայված մեթոդը՝ օգտագործելով սպառողական գների ինդեքսը: Սահմանվեցին բացարձակ աղքատության հետևյալ երեք գծերը, որոնք թույլ են տալիս տարբերակել աղքատ, չափավոր (կամ շատ) աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները.

- աղքատության պարենային գիծը պարենային նվազագույն զամբյուղի արժեքն է,
- աղքատության ստորին գիծը հիմնված է այն ենթադրության վրա, որ պարենային նվազագույն զամբյուղի մասնաբաժինը կազմում է տնային տնտեսության ընդհանուր սպառման մոտավորապես 70 տոկոսը, ուստի համապատասխան ոչ պարենային սպառումն ավելացվում է պարենային նվազագույն զամբյուղին, այն է՝ աղքատության պարենային գծին,
- աղքատության վերին գիծը հիմնված է այն ենթադրության վրա, որ պարենային նվազագույն զամբյուղի մասնաբաժինը կազմում է տնային տնտեսության ընդհանուր սպառման մոտավորապես 57 տոկոսը,
- երբեմն օգտագործվում է աղքատության միջին գիծը, որն աղքատության ստորին և վերին գծերի միջինն է:

Որպես այդպիսին՝ «աղքատ» են գնահատվել նրանք, որոնց համարժեք սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից, «չափավոր» (կամ շատ) աղքատ են գնահատվել նրանք, որոնց համարժեք սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին գծից, և «ծայրահեղ» աղքատ են գնահատվել նրանք, որոնց համարժեք սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

2019 թվականից ի վեր երկրում կիրառվել է նոր վերանայված մեթոդաբանություն, որը գնահատում է կենսաապահովման նվազագույն սպառողական զամբյուղը[26] (պարենային նվազագույն զամբյուղը՝ գումարած ոչ պարենային ապրանքների գնահատված մասնաբաժինը)՝ հիմք ընդունելով ՏՏԿԱՀ 2019-ի տվյալները: Աղքատության գծերը 2019 թվականին ճշգրտվել են՝ արտացոլելու համար ի թիվս այլ փոփոխությունների հայ հասարակության մեջ սպառման դինամիկան, ծախսային սովորույթները և ժողովրդագրական կառուցվածքը[27]: 2.6 գծապատկերում ներկայացված է Հայաստանի աղքատության մակարդակը՝ ըստ 2019 թվականի ազգային գնահատումների:

---

[26] Համաձայն «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենքի (2004)՝ կենսաապահովման նվազագույն բյուջեի մեծությունը հիմք է նվազագույն աշխատավարձերի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի սահմանման համար (7-րդ հոդված): Այնուամենայնիվ, գործնականում միշտ չէ, որ պատահում է այնպես, ինչպես նշված է ստորև բերված բաժիններում ներկայացված՝ նպաստների արժեքների նկարագրության մեջ:

[27] Հարկ է նշել, որ աղքատության վերին գծի դրամական արժեքը կտրուկ փոխվել է այս մեթոդաբանական վերանայումների արդյունքում՝ 2018 թվականի 42.621 (անվանական) ՀՀ դրամից 2019 թվականին դառնալով 53.043 (անվանական) ՀՀ դրամ: Եթե նախորդ մեթոդաբանության համաձայն՝ 2018 թվականի աղքատության գծերը պարզապես ճշգրտվեին սպառողական գների ինդեքսով, ապա 2019 թվականի աղքատության վերին գիծը կկազմեր 43,289 (անվանական) ՀՀ դրամ:

Գծապատկեր 2.6.

Աղքատության մեջ ապրող բնակչության ցուցանիշները՝ ըստ տարբեր ազգային գնահատումների. 2019 թ.



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏ (2020ա):

ՏՏԿԱՀ 2019 տվյալների համաձայն՝ աղքատության վերին գծով սահմանված աղքատության ցուցանիշները զգալիորեն ամենաբարձրն են 0-15 տարեկան երեխաների շրջանում, ինչպես ներկայացված է 2.7 գծապատկերում: Աղքատության ցուցանիշները, քաղաքային բնակավայրերի համեմատ (39.2 տոկոս), գյուղական բնակավայրերում զգալիորեն ավելի բարձր են (51.3 տոկոս) և փոփոխվում են ըստ աշխարհագրական շրջանների[28]:

[28] ՏՏԿԱՀ 2019: Աղքատության մակարդակն ամենաբարձրն է Արագածոտնում (51.4 տոկոս) և ամենացածրը՝ Սյունիքում (12.1 տոկոս): 2019 թվականին մայրաքաղաք Երևանում աղքատության մակարդակը 14.1 տոկոս էր:

Գծապատկեր 2.7.

Աղքատության մակարդակը՝ ըստ տարիքային խմբերի. 2019 թ. (կիրառելով աղքատության վերին ազգային գիծը)



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Թեև աղքատության ցուցանիշները քիչ են տարբերվում տղամարդկանց (44.0 տոկոս) ու կանանց (43.6 տոկոս) և տղամարդու կամ կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների շրջանում (համապատասխանաբար 34.7 տոկոս և 38.4 տոկոս), այնուամենայնիվ, մեծապես պայմանավորված են կրթական մակարդակով (տե՛ս Գծապատկեր 2.8)[29]: Տարրական և բարձրագույն կրթություն ստացած անձանց մասնաբաժնում առկա տարբերությունը կազմում է 22.8 տոկոսային կետ:

[29] ՏՏԿԱՀ 2019:

Գծապատկեր 2.8.

Աղքատության ցուցանիշները՝ ըստ կրթական մակարդակի. 2019 թ. (կիրառելով աղքատության վերին ազգային գիծը)



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Վերջին տասնամյակում աղքատության մակարդակի ընդհանուր կրճատումը կարելի է մեծապես բացատրել իրական եկամուտների, զբաղվածության, դրամական փոխանցումների և կենսաթոշակների չափերի ընդհանուր ավելացմամբ: Այնուամենայնիվ, եկամուտները հավասար բաշխված չեն եղել: Ընդհանուր առմամբ, Ջինիի ինդեքսով գնահատված հարաբերական անհավասարության ցուցանիշները մնում են ցածր՝ ըստ տարածաշրջանային ստանդարտների, սակայն դրանք վերջին տարիներին բարձրացել են[30]: Հետաքրքրական է, որ երկրների տվյալների միջև համեմատությունը ցույց է տալիս, որ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում, օրինակ՝ Վրաստանում և Ադրբեջանում, Ջինիի գործակիցը նվազել է: Թեև միջին վիճակագրական հայը 2019 թվականին ամսական ստանում էր 108,976 ՀՀ դրամ (223 ԱՄՆ դոլար) զուտ աշխատավարձ՝ 2018 թվականի 100,359 ՀՀ դրամի (205 ԱՄՆ դոլար) փոխարեն, 2019 թվականին կանանց միջին եկամուտները կազմում էին տղամարդկանց եկամուտների միայն 69 տոկոսը, և ընդհանուր առմամբ, տղամարդիկ ավելի շատ են օգտվել աշխատավարձերի բարձրացումից, քան կանայք[31]:

[30] Ջինիի գործակիցը կտրուկ աճել է 2009-2018 թվականների միջև ընկած ժամանակահատվածում՝ 28.0-ից դառնալով 34.4: Սակայն 2019 թվականին գործակիցը նվազել է՝ դառնալով 29.9: Տե՛ս Համաշխարհային բանկի բաց տվյալները՝ https://data.worldbank.org/indicator/SI.POV.GINI?locations=AM
[31] ԱՐՄՍՏԱՏ (2020գ):

2.4

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Բացարձակ արտահայտությամբ, վերջին տասնամյակում տնտեսապես ակտիվ բնակչության թիվը աստիճանաբար նվազել է՝ 2010 թվականի 1.46 միլիոնից 2019 թվականին հասնելով 1.32 միլիոնի (տե՛ս Գծապատկեր 2.9)[32]: Նշված երևույթին նպաստող վճռորոշ գործոնները կրկին երկրի բնակչության թվի ընդհանուր նվազումը, արտագաղթը և ժողովրդագրական ծերացումն են: Հարաբերական արտահայտությամբ, 2019 թվականին տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմում էր աշխատունակ տարիքի բնակչության 59.9 տոկոսը, ինչը նման է հարևան Վրաստանի ցուցանիշներին (62.9 տոկոս):

Գծապատկեր 2.9.

Տնտեսապես ակտիվ բնակչությունը. 2010-2019 թթ.



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏ:

Կանայք տղամարդկանց համեմատ ունեն տնտեսական ակտիվության զգալիորեն ցածր մակարդակ, ինչպես ներկայացված է 2.10 գծապատկերում, որը ցույց է տալիս տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվը Հայաստանում: 2019 թվականին կանանց՝ աշխատուժին մասնակցության ցուցանիշը կազմել է 49.6 տոկոս՝ տղամարդկանց 71.7 տոկոսի համեմատ: Նշված ցուցանիշները ցածր են՝ համեմատած հարևան Վրաստանի ցուցանիշների հետ (54.5 տոկոս՝ կանանց դեպքում): Տնտեսապես ակտիվ բնակչության մասնաբաժինը մի փոքր բարձր է նաև Հայաստանի գյուղական բնակավայրերում, որտեղ մարդիկ մեծ մասամբ զբաղվում են գյուղատնտեսությամբ, այսինքն՝ համարվում են ինքնազբաղված[33]: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գյուղատնտեսական աշխատանքները մեծ մասամբ կրում են սեզոնային բնույթ, ուստի աշխատանքային դինամիկան համապատասխանաբար փոփոխվում է ամբողջ տարվա ընթացքում:

[32] Նույն տեղում:

[33] Նույն տեղում: 2019 թվականին գյուղական աշխատուժի մասնակցության ցուցանիշը կազմում էր 60.4 տոկոս՝ քաղաքային բնակավայրերում արձանագրված 59.6 տոկոսի համեմատ:

Գծապատկեր 2.10.

Աշխատուժի ցածր ակտիվության մակարդակը՝ ըստ բնակավայրի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019։

Պարզվում է, որ վերջին տասնամյակում Հայաստանի աշխատուժի մասնակցության նվազող ցուցանիշները բացասաբար չեն անդրադարձել աղքատության ցուցանիշների վրա (տե՛ս Գծապատկեր 2.11)։ Այնուամենայնիվ, 2016 թվականից ի վեր աշխատուժի մասնակցության մակարդակն աննշան աճել է, սակայն ամենայն հավանականությամբ Քովիդ-19 համավարակի հետևանքով այն կանգ կառնի կամ կնվազի առնվազն կարճաժամկետ հեռանկարում։ Հարկ է նշել, որ 2019 թվականի աղքատության հատկապես բարձր մակարդակն արտացոլում է ճշգրտված աղքատության վերին գիծը՝ ՏՏԿԱՀ 2019-ի համաձայն։

Գծապատկեր 2.11.

Աշխատուժի մասնակցության և աղքատության ցուցանիշները (կիրառելով աղքատության ազգային վերին գիծը)



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019։

2.12 գծապատկերում ներկայացված է Հայաստանի աշխատաշուկայի պատկերը 2019 թվականին։ Առաջինը, որ պետք է նշել, աշխատունակ տարիքի տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեծ մասնաբաժինն է։ Աշխատունակ տարիքի հինգ անձանցից մոտ երկուսը աշխատուժից դուրս էին, որոնց 68 տոկոսը կանայք էին։ Այս երևույթի հիմքում ընկած պատճառներն ավելի մանրամասն ներկայացված են ստորև։ Վերջապես, 2019 թվականին տնտեսապես ակտիվ բնակչության միայն 82 տոկոսն էր զբաղված։

Գծապատկեր 2.12.

Հայաստանի աշխատուժի կառուցվածքը 2019 թ.



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների. բստ ԱՀ 2019-ի տվյալների:

Հայաստանում գործազրկության մակարդակը 2013 թվականից (16.2 տոկոս) ի վեր աստիճանաբար աճում էր և 2019 թվականին զգալիորեն բարձր էր՝ 18.3 տոկոս: Թեև կանանց դեպքում այն մի փոքր ավելի բարձր է (19.3 տոկոս՝ տղամարդկանց 17.5 տոկոսի համեմատ), սակայն ավելի մեծ տարբերություն կարելի է նկատել գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև, ինչպես ներկայացված է 2.13 գծապատկերում: Քաղաքային բնակավայրերում, տղամարդկանց համեմատ (21.4 տոկոս), կանանց գործազրկության մակարդակն ավելի բարձր է (24 տոկոս), մինչդեռ գյուղական բնակավայրերում էական տարբերություն չկա: Սա հավանաբար պայմանավորված է գյուղական բնակչության՝ գյուղատնտեսության ոլորտում ներգրավվածության բարձր աստիճանով:

Գծապատկեր 2.13.

Գործազրկության մակարդակը. 2019 թ.



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏ:

Վերջին տարիներին գրանցվել է իրական եկամուտների ընդհանուր աճ, ինչպես ներ-կայացված է 2.14 գծապատկերում: Միջին ամսական զուտ աշխատավարձը 2008-2019 թվականների ընթացքում աճել է 78.6 տոկոսով (2019-ին 2018-ի համեմատ՝ 8.6 տոկոսով): Նվազագույն ամսական աշխատավարձը 2020 թվականին կազմել է 68000 ՀՀ դրամ (141 ԱՄՆ դոլար) նախորդ տարվա 55000 ՀՀ դրամի (112 ԱՄՆ դոլար) փոխարեն. 2008 թվականից ի վեր դա ամենաբարձր ցուցանիշն է եղել: 2019 թվականին նվազագույն աշխատավարձը եղել է միջին զուտ աշխատավարձի 50.5 տոկոսը:

Գծապատկեր 2.14.

Միջին ամսական զուտ աշխատավարձի և նվազագույն ամսական աշխատավարձի արժեքները (ՀՀ դրամ). 2008-2020 թթ.



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏ:
Ծանոթագրություն. Զուտ աշխատավարձերի վերաբերյալ ներկայացված տվյալները վերաբերում են զբաղված անձանց հիմնական (առաջնային) գործունեությունից ստացված զուտ եկամուտներին (օրենքով սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները զանձելուց հետո):

Ինչպես երևում է 2.15 գծապատկերից, վերջին տասնամյակում Հայաստանի աղքատության ազգային գծերի դրամական արժեքը նույնպես աստիճանաբար ավելացել է: 2013 թվականից ի վեր նվազագույն ամսական աշխատավարձը մացել է աղքատության վերին գծից բարձր: Տեսականորեն այս երևույթը պետք է շարունակվի, քանի որ կենսաապահովման նվազագույն զամբյուղը դրված է թե՛ աղքատության չափման վերանայված մեթոդաբանության և թե՛ նվազագույն աշխատավարձի, ինչպես նաև կենսաթոշակների, կրթաթոշակների և այլ սոցիալական նպաստների չափերի որոշման հիմքում:

[34] Հայաստան (2004):

Գծապատկեր 2.15.

Աղքատության ազգային գծի և նվազագույն ամսական աշխատավարձի արժեքները (ՀՀ դրամ). 2009-2020 թթ.



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏ:
Ծանոթագրություն. 2019 թվականի արժեքներն արտացոլում են կենսաապահովման նվազագույն զամբյուղի (պարենային նվազագույն զամբյուղ՝ գումարած գնահատված ոչ պարենային ապրանքների մասնաբաժին) հաշվարկման մեթոդաբանության փոփոխությունները՝ ըստ ՏՏԿԱՀ 2019-ի տվյալների:

2.5

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ՀՀ Կառավարությունը Սահմանադրությամբ (1995) և հետագա օրենքներով, այդ թվում՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով (2004) ու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքով (2013) պարտավորություն է ստանձնել արգելել գենդերային հիմքով խտրականությունը, ապահովել կանանց իրավունքների պաշտպանությունը և խթանել կանանց իրավունքների ընդլայնումը[35]: Այդ առանցքային օրենսդրությունը և մյուս ենթաօրենսդրական ակտերը[36] ցույց են տալիս

[35] 2017 թվականին ՀՀ Կառավարությունն ընդունել է նաև ընտանիքում բռնության կանխարգելման մասին առաջին օրենքը՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը (որը փոփոխվել է 2021 թվականին):
[36] ՀՀ Կառավարությունը հաստատել է գենդերային հավասարության վերաբերյալ տարբեր ազգային ռազմավարություններ և գործողությունների ծրագրեր, ինչպիսիք են՝ Կանանց կարգավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման գործողությունների ազգային ծրագիրը (2004-2010), ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգը (2010) և Գենդերային քաղաքականության ռազմավարության իրականացման գործողությունների ծրագիրը (2011-2015): Ամենավերջինը, որն ընդունվել է ՀՀ Կառավարության որոշմամբ (N 1334-Լ 19 սեպտեմբերի 2019 թվականի), 2019-2023 թվականների Գենդերային հավասարության ազգային ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրն են:

այն որոշակի քայլերը, որ ձեռնարկվել են Հայաստանի ներպետական իրավական դաշտը ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիային (ԿՆԽՎԿ) ներդաշնակեցնելու ուղղությամբ, որին Հայաստանը միացել է 1993 թվականի սեպտեմբերի 13-ին՝ առանց վերապահումների։

Չնայած օրենսդրական մակարդակով ստանձնած՝ համեմատաբար խիստ հանձնառությանը՝ Հայաստանը, ըստ Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի Գենդերային անհավասարության համաթվի (ԳԱՀ), զբաղեցնում է 54-րդ տեղը, մինչդեռ ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի 2021 թվականի Գլոբալ գենդերային ճեղքվածքի համաթվի՝ 114-րդ տեղը (156 երկրների մեջ)[37]։ Հայաստանը՝ 0.673 միավորով, ԵԿԱ տարածաշրջանում ամենացածր վարկանիշ ունեցողների թվում է։ Ըստ 2021 թվականի Գլոբալ գենդերային ճեղքվածքի համաթվի բաղադրիչների՝ Հայաստանում լրջագույն մարտահրավերներ են ներկայացնում հետևյալ ցուցիչները՝ կանանց քաղաքական հզորացումը, գնահատված եկամուտների ճեղքվածքը, կանանց մասնակցությունը աշխատուժին և ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում[38]։ Գենդերային հիմքով բռնության տարածվածությունը (ԳՀԲ) նույնպես շարունակում է լուրջ մարտահրավեր լինել երկրում։

Հայաստանում գենդերային հավասարության լիարժեք իրականացումը խոչընդոտող վերը նշված բոլոր մարտահրավերների հիմքում ընկած են գենդերային նորմերը և դրանցից բխող գենդերային կարծրատիպերը։ Ընտանիքների և համայնքների, ինչպես նաև քաղաքականության, կրթության, մասնավոր հատվածի և լրատվամիջոցների կողմից խրախուսվող այդ նորմերով կինը շարունակում է նախևառաջ լինել կին և մայր[39]։ Աշխատանք գտնելու նպատակով ուսումը թողնելու համար աղջիկներն ավելի քիչ են ճնշումների ենթարկվում, քան տղաները, ինչով էլ բացատրվում է այն հանգամանքը, թե ինչու են աղջիկները շարունակում գերազանցել տղաներին ուսումնական հաստատություններ ընդունվելու և գիտելիքներ ձեռք բերելու առումով։ Այնուամենայնիվ, աղջիկները, հատկապես նրանք, որոնք ապրում են գյուղական տնային տնտեսություններում և տնտեսական անապահովության պայմաններում, ավելի շատ են ճնշումների ենթարկվում, քան տղաները, որպեսզի թողնեն ուսումը և անվճար զբաղվեն ընտանիքի անդամների խնամքով կամ տնային աշխատանքներով, իսկ որոշ դեպքերում վաղ ամուսնանան և երեխաներ ունենան[40]։ Կանանց տնտեսական անապահովության մարտահրավերները հետագայում խորանում են գենդերային նորմերով, որոնք թույլ չեն տալիս նրանց հող ձեռք բերել, կամ որոնց հետևանքով աղջիկները ներգրավվում են ավանդական կրթության և թերի գնահատված կամ ոչ մրցակցային աշխատանքային ոլորտներում[41]։

Հայաստանում գենդերային դինամիկային վերաբերող այս և մյուս հարցերը, այն է՝ ինչպես են դրանք փոխգործակցում (արտացոլվում կամ մեղմվում և/կամ վերարտադրվում) սոցիալական պաշտպանության համակարգի հետ, վերցված են ամբողջ զեկույցում որպես համընդգրկուն թեմա՝ տեղեկացնելով երեխաների, աշխատունակ տարիքի անձանց և տարեցների սոցիալական պաշտպանության մասին։

[37] Համաշխարհային տնտեսական ֆորում (2021)։
[38] Նույն տեղում։
[39] ՄԱԿ Կանայք (2019)։
[40] Նույն տեղում։
[41] Ասիական զարգացման բանկ (2015)։

2.6

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի զարգացման տեսլականի մեջ կարևորվում է աշխատատեղերի ստեղծումը՝ որպես կենսամակարդակի բարելավման և աղքատության նվազեցման միջոց։ Կառավարությունը հանձնառել է նաև սոցիալական ապահովագրության և սոցիալական աջակցության ուղղություններով պետական ծախսերի ավելացման միջոցով ընդլայնել և բարելավել սոցիալական պաշտպանության համակարգը, ինչպես նաև բարելավել թիրախավորման համակարգը։ Այնուամենայնիվ, Կառավարության առջև ծառացած են մի շարք մարտահրավերներ.

- Հայաստանը կանգնած է ժողովրդագրական խոշոր վերափոխման, այդ թվում՝ բնակչության ծերացման և աստիճանական նվազման, ինչպես նաև շարունակական բարձր տեմպերով արտագաղթի առջև, ինչը լուրջ բացասական ազդեցություն կունենա երկրի՝ հարկային եկամուտները պահպանելու կարողության և պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվող բոլոր պետական ծրագրերի, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության համակարգի վրա։
- ՔՈՎԻԴ-19 համավարակը մեծապես ազդել է տնտեսության վրա՝ ընդհատելով կայուն աճի ժամանակաշրջանը, թեև կանխատեսվում է, որ 2021 թվականին կարձանագրվի ՀՆԱ-ի դրական աճ։ Տնտեսական վնասակար հետևանքները որոշակի ոլորտների և խմբերի վրա ավելի շատ են ազդել՝ հատկապես հարված հասցնելով նրանց, որոնք նախքան համավարակն արդեն իսկ սոցիալապես անապահով վիճակում էին։
- Թեև վերջին տարիներին Հայաստանը որոշակի առաջընթաց արձանագրել է աղքատության հաղթահարման գործում, ինչը մեծապես պայմանավորված էր իրական եկամուտների, զբաղվածության, դրամական փոխանցումների և կենսաթոշակների չափի ընդհանուր բարձրացմամբ, այնուամենայնիվ, 2019 թվականին բնակչության գրեթե կեսը (43.8 տոկոս) ապրում էր աղքատության ազգային վերին գծից ցածր, ուստի համարվում էր «աղքատ»։ Աղքատության մակարդակը զգալիորեն ավելի բարձր է երեխաների շրջանում և գյուղական բնակավայրերում։ Անհավասարությունը նույնպես աճում է։
- Ժողովրդագրական վերափոխման հետևանքով տնտեսապես ակտիվ բնակչության թիվը նվազում է. 2019 թվականին աշխատունակ տարիքի անձանց մեկ երրորդից ավելին (37 տոկոսը) դուրս է մնացել աշխատուժից։ Ակտիվության մակարդակը զգալիորեն ցածր է կանանց շրջանում և մի փոքր բարձր՝ գյուղական բնակավայրերում։ Միևնույն ժամանակ գործազրկության մակարդակն աճում է և զգալիորեն բարձր էր 2019 թվականին՝ կազմելով 18.3 տոկոս։ Զբաղվածներից միայն երկու երրորդն է վարձու աշխատող և, այսպիսով, կայուն կերպով մասնակցում հարկային համակարգին՝ կուտակելով աշխատանքային ստաժ։
- Թեև Կառավարությունն օրենսդրական մակարդակով հանձն է առել արգելել գենդերային հիմքով խտրականությունը, պաշտպանել կանանց ու աղջիկների իրավունքները և խթանել կանանց իրավունքների ընդլայնումը, այնուամենայնիվ, Հայաստանը շարունակում է բախվել համատարած գենդերային անհավասարությանը, որն արմատացած է վնասակար գենդերային նորմերում և դրանցից բխող գենդերային կարծրատիպերում։ Հատկապես 2019 թվականին կանանց կեսը (50.4 տոկոսը) դուրս էր մնացել աշխատուժից, իսկ աշխատավարձերի գենդերային խզվածքը հասել էր 28.4 տոկոսի։

3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԿԵՆՍԱՓՈՒԼԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Երբ սոցիալական պաշտպանության քաղաքականությունը լավ մշակված է, այն նպաստում է սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք նպատակների իրականացմանը. կարող է կրճատել աղքատությունն ու անհավասարությունը, աջակցել համընդհանուր տնտեսական աճին, խթանել արժանապատիվ աշխատանքը և նպաստել սոցիալական համախմբվածությանն ու կայունությանը[42]:

Վերջին տարիներին ՀՀ Կառավարությունը աշխատատեղերի ստեղծումը սահմանել է որպես գերակա նպատակ, ինչը նկատելի է Հայաստանում սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակման ոլորտում: Դա առավել ակնհայտ երևում է 2015 թվականին գործազրկության նպաստների վերացման և աշխատաշուկայի ակտիվ քաղաքականություններին (ԱԱՔ-ներ) անցում կատարելու գործընթացից, ինչպես նաև շատ այլ՝ ֆորմալ զբաղվածությամբ մեծապես պայմանավորված նպաստների բնույթից: Ի լրումն, կենսաթոշակային համակարգի վերջին բարեփոխումները շեղեցին ուշադրությունը այլ կարևոր ծրագրերից և, ընդհանուր առմամբ, սոցիալական պաշտպանության **համակարգից**[43]: Սույն ուսումնասիրության նպատակը անհավասարակշռությունը վերացնելը և Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի համապարփակ գնահատումը ներկայացնելն է՝ կիրառելով կենսափուլային մոտեցումը: Սույն զեկույցում հիմնական շեշտը դրված է դրամական հատկացումների վրա, սակայն անտեսված չեն նաև բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները՝ որպես կյանքի տարբեր փուլերում սոցիալական պաշտպանություն ապահովելու միջոց՝ ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիային և թիվ 202 հանձնարարականին համապատասխան:

3.1

ԿԵՆՍԱՓՈՒԼԱՅԻՆ ԵՎ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Սոցիալական պաշտպանությունը ենթադրում է կանոնավոր, կանխատեսելի հատկացումների ապահովում (դրամական կամ բնաիրային տեսքով) և կարող է ներառել նաև սոցիալական խնամքի, սոցիալական ծառայությունների մատուցում և ԱԱՔ-ներ: Սոցիալական պաշտպանության համակարգերը կարող են լուծել մի շարք ռիսկեր: Նշված ռիսկերից ամենատարածվածները կապված են 3.1 գծապատկերում ներկայացված կենսափուլերի հետ:

[42] Տե՛ս, օրինակ՝ Kidd & Tran, 2017; Mathers & Slater (2014):
[43] Անանյան (2012 թ.), Ասատրյան (2014 թ.,) Ուեննինգ Հանդայանի և Բաբաջանյան (2012 թ., էջ 269-271):

Գծապատկեր 3.1.

Առանցքային ռիսկերը կյանքի տարբեր փուլերում



Աղբյուրը. Գծապատկերը՝ Դևելոփմենթ Փաթվեյզի:

Դրամական հատկացումները, որոնք կարող են լինել կա՛մ կատարված հատկացումներից, կա՛մ հարկերից ֆինանսավորվող, որպես կանոն, համարվում են սոցիալական պաշտպանություն կամ սոցիալական ապահովություն տրամադրելու կենտրոնական մեխանիզմներ[44]: Օրինակ՝ ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայով[45] ամրագրված են սոցիալական ապահովության նվազագույն ստանդարտները՝ հասցեագրելու կյանքի տարբեր փուլերում առաջացող ինը չնախատեսված իրավիճակները՝ տարիքային կենսաթոշակներ, հաշմանդամության նպաստներ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ, հիվանդության և մայրության դրամական նպաստներ, գործազրկության, աշխատավայրում առաջացող փասվածքների համար նպաստներ, ընտանիքի նպաստներ սահմանելու միջոցով (տե՛ս Գծապատկեր 3.2): Նշված «հիմնական» նպաստների տրամադրումը վերահաստատված է թիվ 202 հանձնարարականով: Առավել զարգացած սոցիալական պաշտպանության համակարգերում, ինչպիսիք են Եվրոպայի և բարձր եկամուտ ունեցող շատ երկրների համակարգերը, այս հատկացումներն ապահովում են ինչպես բազային, այնպես էլ առավել համապարփակ եկամուտ բոլորի համար՝ որպես սոցիալական անապահովության, այդ թվում՝ մանկության, աշխատունակ տարիքի և ծերության սահմանված ժամանակահատվածներում որոշակի և անհատական իրավունք:

[44] «Սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական ապահովություն» տերմինները հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ, սակայն դրանց միջև առկա են զգալի տարբերություններ: Տե՛ս ԱՄԿ (2017):
[45] McClanahan et al. (2021):

Գծապատկեր 3.2.

ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայով և թիվ 202 հանձնարարականով նշված՝ կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված նպաստները



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների՝ հիմք ընդունելով թիվ 102 կոնվենցիան և թիվ 202 հանձնարարականը:

Ավելին՝ սոցիալական պաշտպանության ազգային համակարգերի մեծ մասը նախատեսում է նաև ավելի փոքր չափով նպաստներ՝ ուղղված որոշակի ռիսկերի վերացմանը կամ հատկապես սոցիալապես անապահով համարվող՝ բնակչության հատուկ խմբերի աջակցմանը: Հաջողված համակարգերում նշված մյուս նպաստները նախատեսված են հիմնական ծրագրերը լրացնելու կամ փոխլրացնելու և ոչ թե դրանք փոխարինելու համար: Եթե հիմնական հատկացումներն ապահովում են համարժեք և կանխատեսելի եկամուտ բնակչության լայն զանգվածների համար, ապա փոքր, վերջին միջոց հանդիսացող «սոցիալական ապահովության ցանցի» քաղաքականությունների անհրաժեշտությունը նվազում է: Հաճախ ցածր և միջին եկամուտ ունեցող շատ երկրներ առաջնահերթություն են տալիս այդպիսի ծրագրերին՝ կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված հիմնական սխեմաների ամրապնդման ուղղությամբ ներդրումներ կատարելու հաշվին (տե՛ս Ներդիր 3.1)[46]:

Դա ճիշտ է նույնիսկ կյանքի փուլերի հետ չկապված հանկարծահաս ցնցումների պարագայում: Օրինակ՝ սոցիալական պաշտպանության համակարգերի՝ ճգնաժամերին արձագանքելու կարողության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն երկրները, որոնք նախքան հանկարծահաս

[46] McClanahan et al., Forthcoming.

ցնցումները (լինի դա ֆինանսական, բնական աղետ կամ հանրային առողջության առնչվող) ներդրումներ են կատարել ներառական սոցիալական պաշտպանության համակարգերում՝ համընդգրկուն, կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված հիմնական հատկացումների շեշտադրմամբ, ավելի լավ են կարողացել արձագանքել ճգնաժամային պայմաններում, քան այն երկրները, որոնք անտեսել էին այդ համակարգերը և/կամ կենտրոնացել էին փոքր, աղքատության թիրախավորմանն ուղղված ծրագրերի վրա:

Ներդիր 3.1.

Սոցիալական նպաստները (ՍՆ) Հայաստանում

Հայաստանում ՍՆ-ն՝ ԸԿԲՆ երեք նպաստներից մեկը, վերջին միջոց հանդիսացող «սոցիալական ապահովության ցանցի» ծրագրերից է: Դա հերթական՝ ընտանիքի անապահովության գնահատման վրա հիմնված, հատկացումների կատարմամբ չպայմանավորված դրամական հատկացում է, որն ունի թե՛ պաշտպանական և թե՛ կանխարգելիչ բնույթ. դրա նպատակը տնական աղքատության մեջ ապրող ընտանիքների հոգսը մեղմացնելը և նրանց հետագա զրկանքները կանխելն է: Այն դիտարկվում է որպես Կառավարության երկարաժամկետ նպատակի (ՀԶՌ-ով սահմանված*) մասնակի լուծում, այն է՝ ապահովել աղքատության ստորին ազգային գծից ցածր գտնվող և խոցելի համարվող երեխաներ չունեցող բոլոր ընտանիքներին[47]:

Ըստ ՏՏԿԱՀ-ի տվյալների՝ 2019 թվականին սոցիալական պաշտպանության հատկացումները միջինում կազմել են առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների ընդհանուր եկամտի 26.3 տոկոսը, մինչդեռ վերին դեցիլային խմբի տնային տնտեսությունների համար դրանք կազմել են 16.3 տոկոս: Սոցիալական հատկացումները, ինչպես, օրինակ՝ ՍՆ-ն, համարվում են աղքատության հաղթահարման կարևոր գործիք: Հայաստանում սոցիալական պաշտպանության հատկացումների և ընտանիքների ստացած եկամուտների՝ աղքատության ցուցանիշների կրճատման վրա ազդեցության մասին մանրամասն տե՛ս 7.1 բաժնում:

*ՀԶՌ-ում որպես ռազմավարության գերակա նպատակ նշված է «նյութական աղքատության կրճատումը մինչև այն աստիճանը, որ աղքատությունը դադարի երկրի տնտեսական զարգացման հիմնախնդիր լինելուց, իսկ ծայրահեղ աղքատությունն ընդհանրապես վերացվի որպես սոցիալապես նշանակալի երևույթ»:

Ավելին՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով սոցիալական ապահովությունը սահմանվում է որպես անհատական իրավունք, որը լավագույնս իրականացվում է անհատական (ոչ տնային տնտեսությունների) հատկացումների միջոցով[48]: Տնային տնտեսությունների հատկացումները չեն երաշխավորում, որ բոլոր անձինք անուղղակիորեն կօգտվեն, և կարող են հանգեցնել ռեսուրսների անհավասար բաշխման: ԱՄԿ-ի և ՄԱԿ Կանայք կազմակերպության վերջերս իրականացրած ուսումնասիրությամբ ներկայացվել է անհատական և տնային տնտեսությունների մակարդակով տրամադրվող դրամական օգնությունների գենդերային զգայունության հարցը[49]:

[47] Համաձայն 2016-2018 թվականների ՄԺԾԾ-ի՝ այս շեմս իջեցվել է մինչև 94.5 տոկոսի: Ուստի առկա է կա՛մ անհամապատասխանություն Կառավարության միջնաժամկետ և երկարաժամկետ թիրախների միջև, կա՛մ Կառավարության ռազմավարությունների և (կամ) ծրագրերի իրականացման մեջ:
[48] Barrantes (2020):
[49] ԱՄԿ և ՄԱԿ Կանայք (2020):

Հարկ է նշել, որ կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված հիմնական նպաստները կարող են գոյանալ ինչպես հատկացումների կատարումից, այնպես էլ հարկերից ֆինանսավորվող միջոցներից, և ֆինանսավորման կոնկրետ գործիքը կամ եղանակն արտացոլում է սոցիալական ապահովության հետևյալ տարբեր, սակայն փոխլրացնող գործառույթները.

1. ապահովել նվազագույն և պատշաճ երաշխավորված եկամուտ, որին հաճախ հնարավոր է հասնել հարկերից ֆինանսավորվող սխեմաների միջոցով, և
2. ապահովել սպառման համահարթեցում, որին հաճախ կարելի է հասնել սոցիալական ապահովագրության համակարգերի միջոցով, որոնք հատկացումներ կատարողներին թույլ են տալիս ռեսուրսներ կուտակել՝ չնախատեսված իրավիճակներում ապրուստը ֆինանսավորելու համար, ինչը համադրելի է (թեև համարժեք չէ) նախկինում ստացած իրենց եկամտի և (կամ) աշխատաշուկայում իրենց տարեկիցների եկամտի հետ:

Իսկապես, շատ երկրներում գործում է հարկերով ֆինանսավորվող և հատկացումների կատարմամբ պայմանավորված սխեմաների համակցությունը: Երբ կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված հիմնական սխեմաները զուգակցվում են բազմաստիճան եղանակով այնպես, որ հարկերով ֆինանսավորվող և հատկացումների կատարմամբ պայմանավորված ծրագրերով ապահովվի համընդհանուր ընդգրկվածություն, համակարգն ավելի շատ է հարմար ինչպես սոցիալական ապահովության հիմնական գործառույթները կատարելու, այնպես էլ զարգացման առավել լայն նպատակները խթանելու համար: Օրինակ՝ համապարփակ, բազմաստիճան կենսաթոշակային համակարգերն ապահովում են համարժեք, երաշխավորված եկամտի ապահովություն հարկերով ֆինանսավորվող կենսաթոշակների միջոցով, որը կարող է իր ձևով լինել համընդհանուր կամ կենսաթոշակային իրավունք տվող (այսինքն՝ վճարվում է միայն նրանց, ովքեր իրավունք ունեն ստանալու սոցիալական ապահովագրության կենսաթոշակ): Ավելին՝ դրանք սովորաբար ապահովում են պարտադիր սոցիալական ապահովագրության բարձր կենսաթոշակ նրանց համար, ովքեր ի վիճակի են և պարտավոր են կատարելու սոցիալական ապահովագրության վճարներ, ինչպես ներկայացված է 3.3 գծապատկերում: Կենսաթոշակային շատ համակարգեր առաջարկում են նաև կամավոր կամ փոխլրացնող կուտակային կենսաթոշակային համակարգ, որի դեպքում կենսաթոշակները սովորաբար տրամադրվում են մասնավոր հիմնադրամների կողմից՝ ապահովելով էլ ավելի մեծ եկամտային ապահովություն նրանց համար, ովքեր կարող են իրենց թույլ տալ աշխատունակ տարիքում կուտակել լրացուցիչ եկամուտ:

Գծապատկեր 3.3.

Իդեալական բազմաստիճան կենսաթոշակային համակարգերի նկարագիրը՝ ըստ համընդհանուր (ձախ կողմում) կամ կենսաթոշակի իրավունք տվող (աջ կողմում) սոցիալական կենսաթոշակի



Աղբյուրը. Դևելոփմենթ Փաթվեյզ:

Կենսաթոշակային նպաստների՝ արդեն իսկ նկարագրված բազմաստիճան համակարգն ապահովում է կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող տարեց բնակչության համընդհանուր ընդգրկվածությունը՝ բացառելով ոչ ֆորմալ զբաղվածության մեջ ներգրավված կամ ցածր եկամուտ ունեցող անձանց (հորիզոնական հարթություն) կենսաթոշակ չստանալու ռիսկերը՝ միևնույն ժամանակ ապահովելով նաև, որ նրանք, ովքեր ի վիճակի են կատարելու վճարներ, իրավունք ունենան կենսաթոշակի անցնելիս ստանալու ավելի բարձր կենսաթոշակ (ուղղահայաց հարթություն)՝ դրանով իսկ խրախուսել միանալու սոցիալական ապահովագրության համակարգին և համապատասխանաբար խթանել արժանապատիվ աշխատանքը:

3.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընդհանուր առմամբ, Հայաստանի բնակչության շուրջ 40 տոկոսն օգտվում է սոցիալական պաշտպանության առնվազն մեկ նպաստից: Տղամարդկանց մոտ 42 տոկոսը ստանում է սոցիալական պաշտպանության առնվազն մեկ նպաստ՝ կանանց 38 տոկոսի համեմատ: Տղամարդկանց և կանանց ընդգրկվածության միջև այս տարբերությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստները հասանելի են միայն այն անձանց, որոնք բավարարում են նպաստ ստանալու իրավունք տվող նվազագույն պայմանները հարկեր վճարելու տարիների տեսքով: Կանայք, որոնք ընդհանուր առմամբ ունեն զբաղվածության ցածր մակարդակ և, այդպիսով, հարկային համակարգին ցածր մասնակցություն, ավելի քիչ են օգտվում նպաստներից:

Այնուամենայնիվ, ինչպես երևում է 3.4 գծապատկերից, տարիքային խմբերի միջև առկա են մեծ տարբերություններ: Թեև Հայաստանում գրեթե բոլոր տարեցներն ընդգրկված են սոցիալական պաշտպանության ծրագրերում, այնուամենայնիվ, շատ ավելի քիչ են նպաստ ստացող երեխաները և աշխատունակ տարիքի անձինք՝ համապատասխանաբար 38.8 տոկոս և 24.0 տոկոս:

Գծապատկեր 3.4.

Սոցիալական պաշտպանության առնվազն մեկ նպաստ ստացող բնակչության ցուցանիշները՝ ըստ ժողովրդագրական տարիքային խմբի և սեռի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Այս տարբերությունններն արտացոլում են երեք հիմնական միտումները. առաջինը՝ կենսաթոշակային համակարգում գրեթե համընդհանուր ընդգրկվածությունը, որն ապահովվում է հատկացումների կատարմամբ չպայմանավորված՝ համընդհանուր սոցիալական կենսաթոշակի և ֆորմալ զբաղվածություն ունեցողների աշխատանքային կենսաթոշակների «բազմաստիճան» համակարգի համակցությամբ, երկրորդ՝ ընտանեկան նպաստների համակարգը, որի հիմքում մեծապես ընկած է աղքատության թիրախավորումը՝ բացառումների բարձր ցուցանիշներով, և երրորդ՝ աշխատունակ տարիքի անձանց՝ հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստների համակարգում ընդգրկվածության ցածր մակարդակը՝ հաշվի առնելով ոչ ֆորմալ զբաղվածության բարձր ցուցանիշները, և ընդհանուր ցածր հավանականությունը, որ աշխատունակ տարիքի անձինք ցանկացած պահի կունենան սոցիալական պաշտպանության կարիք:

3.2.1
Համակարգի համապարփակ բնույթը միջազգային ստանդարտների տեսանկյունից

Կյանքի տարբեր փուլերի համատեքստում համակարգի համապարփակ բնույթը գնահատվում է նրանով, թե որքանով է այն ապահովում պաշտպանություն կյանքի առանցքային փուլերի չնախատեսված իրավիճակներում: Ներպետական քաղաքականության համակարգերի՝ միջազգային համակարգերի հետ համեմատությունը կարող է օգնել վերհանելու ազգային քաղաքականության այն բացերը, որոնք հակառակ դեպքում հնարավոր է անտեսված լինեին: 3.5 գծապատկերում ամփոփ ներկայացված է Հայաստանում սոցիալական պաշտպանության ապահովման ընդհանուր համապարփակ բնույթը՝ ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայում նկարագրված՝ կյանքի տարբեր փուլերում ինը հնարավոր իրավիճակների համար:

Գծապատկեր 3.5.

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի համապարփակ բնույթը ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայում նկարագրված՝ կյանքի տարբեր փուլերում առաջացող ռիսկերի համար



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների:

Ինչպես երևում է 3.5 գծապատկերից, Հայաստանում մեծապես կիրառվում է ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և մայրության նպաստների բազմաստիճան համակարգը: Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստները տրամադրվում են հատկացումների կատարմամբ չպայմանավորված համընդհանուր համակարգի միջոցով, զբաղվածության վրա հիմնված բարձր դրույթքաչափով նպաստների հետ միասին: Մայրության նպաստները նույնպես բազմաստիճան են, սակայն տրամադրվում են

զբաղվածության կարգավիճակի վրա հիմնված գործիքների առավել բարդ համակցության միջոցով: Բժշկական օգնության և սպասարկման հիմնական ծառայությունները տրամադրվում են համընդհանուր հիմունքով: Հետևաբար, ընդհանուր առմամբ, հնարավոր ռիսկային իրավիճակների դեպքում համակարգն առաջարկում է ամուր իրավական հիմք՝ համընդհանուր ընդգրկվածության հասնելու համար:

Այնուամենայնիվ, կան կոնկրետ իրավական բացեր, որոնք ևս ներկայացված են 3.5 գծապատկերում.

- Հայաստանում չկան (հատկացումների կատարմամբ պայմանավորված կամ այլ) գործազրկության նպաստներ, ինչի հետևանքով շուրջ 250,000 գործազուրկ ստիպված է եղել աշխատանք փնտրելուն զուգահեռ հոգալ իր կարիքները[50]:
- Երեխայի խնամքի արձակուրդի ընթացքում եկամտային ապահովությունը սահմանափակ է: Ներկայումս մայրության նպաստ տրամադրվում է նաև բոլոր չաշխատող մայրերին, ինչը փաստացի թույլ է տվել ստեղծել սոցիալական պաշտպանության ստորին շեմ մայրության պաշտպանության համար: Սակայն ծնողական խնամքի համար տրամադրվող լրացուցիչ նպաստները և երեխայի խնամքի համար այլ սուբսիդիաները շարունակում են հասանելի լինել միայն քիչ թվով ծնողների, մինչդեռ երեխաների խնամքի լայնորեն հասանելի ու մատչելի ծառայությունների սակավությունը նշանակում է, որ մայրության համակարգը չի կատարում իր գործառույթը՝ կանանց մայրության և աշխատանքի համատեղումը:
- Երեխայի կամ ընտանեկան նպաստներ ստանալու համընդհանուր իրավունք գոյություն չունի: Երեխայի նպաստները տրամադրվում են միայն աղքատության հաղթահարմանն ուղղված ԸԿԲՆ-ի շրջանակում ընդգրկված ընտանիքներին:
- Աշխատավայրում առաջացած փասավածքների դեպքերը կարգավորող դրույթները թույլ են: «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով նախատեսված աշխատանքային կենսաթոշակներից բացի՝ գոյություն ունեն սահմանափակ թվով սոցիալական պաշտպանության տեսակներ, այդ թվում՝ պաշտոնապես գրանցված աշխատողների և բուժման ու առողջության վերականգնման ծախսերի համար, արտադրական դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքում:
- Բոլոր ուղղություններով էլ կան համարժեք նպաստների և ծառայությունների մատուցման և արդարության ապահովման իրավական սահմանափակումներ:

Այս բնութագրերը մասամբ արտացոլում են Հայաստանի որդեգրած զարգացման տեսլականի ուղղությունը: Օրինակ՝ տրամադրվում է երեխայի խնամքի երաշխավորված, երկարատև արձակուրդ, սակայն եկամտային ապահովություն տրամադրվում է միայն սկզբնական կարճ ժամանակահատվածի համար: Մեծ ուշադրություն է դարձվում նաև զբաղվածության խթանմանը, սակայն գործազրկության նպաստ չի տրամադրվում: Սրանք, ի թիվս այլ օրինակների, ցույց են տալիս զբաղվածությունն ավելացնելու ցանկության, բայց նաև այդ նպատակին հասնելուն նպաստող սոցիալական պաշտպանության քաղաքականության մեջ ներդրումների սակավության մասին:

[50] ԱՐՄՍԱՏ (2020գ): Գործազուրկ բնակչություն՝ 15-74 տարեկան անձինք, որոնք նախորդ չորս շաբաթվա ընթացքում աշխատանք չեն ունեցել կամ չեն զբաղվել որևէ եկամուտ ապահովող գործունեությամբ. ակտիվորեն փնտրել են ցանկացած տեսակի աշխատանք և պատրաստ են եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում) անցնելու աշխատանքի:

3.2.2
Հարկաբյուջետային քաղաքականությունը

Հատկացումների և ընդգրկվածության զգալի փոփոխությունները մասամբ արտացոլում են Հայաստանի սոցիալական պաշտպանության ֆինանսական համակարգի պատմական ուրույն զարգացումը, ինչպես նաև այն ճանապարհը, որով կենսաթոշակային բարեփոխումներն արտացոլել են երկրի՝ խորհրդային համակարգից ձգձգված անցումը շուկայական տնտեսության՝ լայնածավալ բարեփոխումների միջոցով: Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի համախմբումը, այնպես, ինչպես ներկայումս այն գոյություն ունի, կենսաթոշակների ֆինանսավորման տարբեր մոդելների՝ տասնամյակների ընթացքում փորձարկման արդյունք է:

Ներդիր 3.2.

Հայաստանի կենսաթոշակային համակարգի պատմական զարգացումը[51]

1991 թվականին Խորհրդային Միությունից անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը գնաց հետխորհրդային շատ երկրների ճանապարհով՝ կտրուկ կրճատելով պետական ծախսերը, այդ թվում՝ սոցիալական ծախսերը, և պահպանելով հատկացումների կատարմամբ պայմանավորված սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական կառուցվածքը: Սոցիալապես ամենաանապահով խմբերի աջակցմանն ուղղված կոնկրետ ծրագրեր իրականացնելու գաղափարը նույնպես ժառանգություն էր նախորդ համակարգից, թեև անապահովության սահմանումը շարունակում է զարգանալ:

- 1992 թվականին ԽՍՀՄ կենսաթոշակային հիմնադրամը վերափոխվեց ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի, որի գործառույթը՝ որպես կանոնավոր սահմանված կենսաթոշակների (ՍԿ) սոցիալական ապահովագրության հիմնադրամ, գործատուներից և աշխատողներից պարտադիր հատկացումների հավաքումն էր՝ ֆինանսավորելու համար պետական կենսաթոշակները և զբաղվածության ծրագրերը:
- 1997 թվականին սոցիալական ապահովագրության վճարները վերանվանվեցին «սոցիալական վճարներ»: Աշխատողները սոցիալական վճարները կատարում էին իրենց աշխատավարձի և այլ նվազեցվող եկամուտների 3 տոկոսի չափով: Գործատուները սոցիալական վճարները կատարում էին սահմանված դրույքաչափերին համապատասխան (տե՛ս Հավելված 1):
- 2000 թվականին ստեղծվեց Սոցիալական ապահովագրության հիմնադրամը (ՍԱՀ), որի գործառույթը՝ որպես կանոնավոր սահմանված կենսաթոշակների (ՍԿ) սոցիալական ապահովագրության հիմնադրամ, գործատուներից և աշխատողներից պարտադիր հատկացումների հավաքումն էր՝ ֆինանսավորելու համար, այսպես կոչված, պետական կենսաթոշակները:
- 2006 թվականին Կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկի ենթակայության ներքո ստեղծեց միջգերատեսչական՝ Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների աշխատանքային խումբ (ԿՀԲԱԽ), որի առջև խնդիր դրվեց մշակել կենսաթոշակային համակարգի բարեփոխումների առաջարկություն՝ հիմնվելով միջազգային գործելակերպերի և ներկա միտումների ուսումնասիրության վրա: Զեկույցի վերջում ներկայացվել էին հետագայում շուկայական մոդելին անցնելու առաջարկություններ: Սա սոցիալական պաշտպանության համակարգի համար նշանակում էր պետական սոցիալական ապահովագրության կենսաթոշակային բաշխողական համակարգից լրիվ վերափոխում մասնավոր կարգով կառավարվող, լրիվ ֆինանսավորվող անհատական հաշիվների կամ սահմանված կենսաթոշակային վճարների (ՍԿՎ) սխեմայի:

---

[51] Հայաստանի կենսաթոշակային համակարգի պատմական զարգացման առավել մանրամասն նկարագրության համար տե՛ս 2-րդ հավելվածը:

- 2007 թվականին փոփոխություններ կատարվեցին «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքում (1997), որով ՍԱՀ-ն վերակազմավորվեց Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ), և այդ պահից սոցիալական վճարներն անմիջականորեն ուղղվում էին պետական բյուջե:
- Կենսաթոշակային համակարգը բարեփոխելու նպատակով 2010 թվականին ներկայացվեց օրենսդրական նոր փաթեթ, որը ներառում էր «Եկամտային հարկի մասին օրենքը», «Կուտակային կենսաթոշակների մասին օրենքը» և «Պետական կենսաթոշակների մասին օրենքը»:

Գծապատկեր 3.6.

Կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման շրջափուլային մոդելները Հայաստանում



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր ծախսերը

Ինչպես ներկայացված է 3.7 գծապատկերում, սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը (բացառությամբ առողջապահության ոլորտի) կազմում են Հայաստանի բյուջեի մեկ քառորդից ավելին (27.9 տոկոս) և կենտրոնական պետական մարմինների ծախսերի ամենամեծ մասն են: Առողջապահության ոլորտի ներառման դեպքում սոցիալական ծախսերի մասնաբաժինը (այսինքն՝ սոցիալական պաշտպանությունը և առողջապահությունը միասին) ավելանում է ևս 6.1 տոկոսով՝ կազմելով պետության ընդհանուր բյուջեի մեկ երրորդից ավելին (34 տոկոս):

Գծապատկեր 3.7.

Կենտրոնական պետական մարմինների ծախսերի բաշխվածությունն ըստ գործառույթի. 2019 թ.



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏԲԱՆԿ:

Պարզ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2008 թվականից ի վեր սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր պետական ծախսերը (բացառությամբ առողջապահության ոլորտի) ավելի քան երկու անգամ ավելացել են: Այս հանգամանքը համընկնում է ծախսերի աղբյուրներից, ինչպես, օրինակ՝ սոցիալական ապահովագրությու-նից, սոցիալական պաշտպանության բոլոր ծրագրերի՝ ամբողջությամբ պետական բյուջեից ֆինանսավորման անցնելու հետ (մանրամասների համար տե՛ս ստորև): Իրականում սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ տոկոսային արտահայտությամբ, որոշ չափով դեռևս կայուն է՝ 6-7 տոկոս (տե՛ս Գծապատկեր 3.8):

Գծապատկեր 3.8.

Պետական բյուջեից՝ սոցիալական պաշտպանության (բացառությամբ առողջապահության ոլորտի) ոլորտի ծախսերի դինամիկան՝ ըստ ընդհանուր ծախսերի (միլիարդ ՀՀ դրամ) և ՀՆԱ-ում՝ տոկոսային արտահայտությամբ. 2008-2019 թթ.



Աղբյուրը. Տարբեր վարչական տվյալների վերլուծություն:

Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի զգալի բաժինը (2019 թվականին՝ 48.5 տոկոս) հատկացված է աշխատանքային (պետական) կենսաթոշակների ֆինանսավորմանը[52]: Այնուամենայնիվ, այս մասնաբաժինը, կարծես, աստիճանաբար նվազում է (տե՛ս Գծապատկեր 3.9): 2019 թվականին աշխատանքային կենսաթոշակների ծախսերի 30.9 տոկոսը հատկացվել է պետության կողմից կուտակային կենսաթոշակային վճարների (2-րդ աստիճան համաֆինանսավորմանը (սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր ծախսերի 15.0 տոկոսը): 2019 թվականին աղքատության հաղթահարմանն ուղղված ԸԿԲՆ ծրագիրը կազմել է սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի 6.9 տոկոսը, մինչդեռ ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում (սոցիալական) նպաստները՝ շուրջ 4.6 տոկոսը[53]:

[52] Աղբյուրը. Տարբեր վարչական տվյալներ:
[53] Աղբյուրը. Առկա վարչական տվյալներ:

Գծապատկեր 3.9.

Պետական բյուջեի՝ աշխատանքային (պետական) կենսաթոշակների վրա ծախսերի դինամիկան, ընդհանուր ծախսերը (միլիարդ ՀՀ դրամ) և մասնաբաժինը սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերում տոկոսային արտահայտությամբ. 2008-2019 թթ. (հասանելի տարիներ)



Աղբյուրը. Gassmann, Timar, and Röth (2018), տարբեր վարչական տվյալների վերլուծություն։

Եկամուտների մոբիլիզացումը

Կարևոր է նշված թվերը դիտարկել համատեքստում։ Թեև սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կազմում են պետության ընթացիկ ծախսերի մեծ մասնաբաժինը, այնուամենայնիվ, Հայաստանի բյուջեն, իր տնտեսության չափի համեմատ, փոքր է։ Հայաստանում Կառավարության ընդհանուր ծախսերն ավելի փոքր են, քան ԵԿԱ տարածաշրջանի միջինից բարձր եկամուտ ունեցող շատ երկրներում՝ 2019 թվականին կազմելով ՀՆԱ-ի 21.7 տոկոսը (թեև ավելի բարձր է, քան հարևան Վրաստանում, որտեղ այն կազմում էր ՀՆԱ-ի 20.3 տոկոսը)։ Ծախսերի փոքր ծավալը, ընդհանուր առմամբ, կարող է պայմանավորված լինել պետական ցածր եկամուտներով, որոնք 2019 թվականին կազմել են ՀՆԱ-ի 22.2 տոկոսը[54]։ Հայաստանի հարկային համակարգը գլխավորապես բաղկացած է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), շահութահարկից (ՇՀ), ակցիզային հարկից ու մաքսատուրքից և անձնական եկամտային հարկից (ԱԵՀ)։ Ընդունելով ուղղակի հարկման միջոցով հարկային եկամուտների ավելացման կարևորությունը՝ Կառավարությունը 2016 թվականին ընդունեց նոր հարկային օրենսգիրք, որն ակնկալվում էր, որ կհանգեցնի եկամուտների ավելացմանը միջնաժամկետ հեռանկարում։

Պետական եկամուտներ հայթայթելու Հայաստանի սահմանափակ կարողությունը մտահոգիչ է երկու առումով։ Առաջինը՝ այն մտահոգության տեղիք է տալիս մակրոտնտեսական մակարդակում, քանի որ սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր ծախսերն ու պարտավորությունները պետական բյուջեում ներառելու մասին որոշումը, երբ բյուջեն արդեն իսկ փոքր է, կարող է իրական սահմանափակումներ դնել համարժեք

[54] Համաշխարհային բանկ (տ.բ.)։ Հայաստանի հարկային եկամուտները 2000-ականների սկզբից ավելացել են շուրջ 14 տոկոսով՝ 2016 թվականին հասնելով 22 տոկոսի, և մոտավորապես այդ ժամանակից ի վեր այն չի փոփոխվել։

սոցիալական ծախսերի վրա: Իսկապես, սոցիալական ծախսերի ծավալը՝ որպես ՀՆԱ-ի մասնաբաժին, մեկ տասնամյակի ընթացքում շատ չի ավելացել (տե՛ս Գծապատկեր 3.8): Ավելի լայն առումով այն կարող է դուրս մղել նաև պետական ծախսերի այլ կարևոր ոլորտները: Սա հարցեր է առաջացնում սոցիալական ապահովագրության համակարգը վերացնելու որոշման վերաբերյալ, երբ հիմնադրամը, առնվազն տեսականորեն, ուներ հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներն ինքնաֆինանսավորելու կարողություն: Սա հատկապես կարևոր է ծերության կենսաթոշակների դեպքում, որոնք ներկայումս կազմում են պետության սոցիալական ծախսերի հիմնական մասը:

Հարկային քաղաքականություններ իրականացնելու պետության սահմանափակ կարողությունն առնչվում է նաև սոցիալական պաշտպանության համակարգին գործնական և անհատական մակարդակներում: 2010 թվականին կենսաթոշակային համակարգը կարգավորելու համար ներդրվեց օրենսդրական փաթեթ, սակայն այն փաստացի փոխեց սոցիալական պաշտպանության՝ հատկացումների կատարմամբ պայմանավորված բոլոր նպաստների ընդհանուր ֆինանսական կառուցվածքը (տե՛ս Հավելված 2, որտեղ մանրամասն նկարագրված է, թե ինչպես է կենսաթոշակային համակարգի բարեփոխումը հանգեցրել այդ փոփոխություններին): Դրանք ներառում էին երկարաժամկետ նպաստները, ինչպիսիք են ծերության, կերակրողին կորցնելու դեպքում և հաշմանդամության կենսաթոշակները, ինչպես նաև կարճաժամկետ ապահովագրությունն այն ռիսկերից, ինչպիսիք են հղիությունն ու ծննդաբերությունը, աշխատավայրում առաջացած փասավածքները և հիվանդությունները: Օրենսդրական այս փաթեթում ներառված «Եկամտային հարկի մասին» օրենքով[55] պարտադիր սոցիալական վճարների համակարգը փոխարինվեց հարկերից ֆինանսավորվող համակարգով: Ֆինանսավորման նոր համակարգի համաձայն՝ հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներ ստանալու իրավունքը ձեռք է բերվում մշտապես ԱԵԿ վճարելու կամ, այսպես կոչված, աշխատանքային ստաժի միջոցով: Այնուամենայնիվ, հարկային համակարգն ի զորու չէ ընդգրկելու բոլորին սահմանափակ կարողության պատճառով, և դա կարող է թույլ չտալ մարդկանց մասնակցել նպաստներ ստանալու համակարգին և այդպիսով սահմանափակել նրանց՝ նպաստներից օգտվելու իրավունքը:

Սա հատկապես դրսևորվում է պրոգրեսիվ հարկումից համահարթ հարկման անցում կատարելուց հետո: ՀՀ հարկային օրենսգիրքը եկամտային հարկի մասով նախկինում սահմանում էր հարկման բազայի երեք մեծություն: Ամենացածր աստիճանը ներառում էր այն անձանց, որոնց աշխատավարձը չէր գերազանցում 150,000 ՀՀ դրամը, և որոնց համար հարկի դրույքաչափը կազմում էր իրենց աշխատավարձի 23 տոկոսը: Նրանք, որոնց աշխատավարձը տատանվում էր 150,000 ՀՀ դրամից մինչև 2 միլիոն ՀՀ դրամի միջակայքում, վճարել են եկամտային հարկ իրենց եկամտի 28 տոկոսի չափով: Նրանց համար, որոնց աշխատավարձը կազմել է 2 միլիոն ՀՀ դրամից ավելի, հարկի դրույքաչափը եղել է ամենաբարձրը՝ 36 տոկոս: Նոր կարգավորումների համաձայն՝ մինչև 2023 թվականը եկամտային հարկի դրույքաչափը բոլորի համար կդառնա 20 տոկոս: Անհրաժեշտ է իրականացնել առավել խոր վերլուծություն՝ որոշելու համար այս բարեփոխման ազդեցությունը ամենացածր եկամուտը ստացող շերտերի վրա:

2019 թվականին միջին անվանական աշխատավարձը կազմել է 182,673 ՀՀ դրամ (145,198 ՀՀ դրամ՝ կանանց և 222,510 ՀՀ դրամ՝ տղամարդկանց դեպքում): Դա նշանակում է, որ միջին վիճակագրական կինը հարկային համակարգին ավելի քիչ մասնակցություն է ունեցել՝ չհաղթահարելով պետական (կուտակային) կենսաթոշակային իրավունքի սահմանային

[55] Ընդունվել է 2010 թվականին, ուժի մեջ է մտել 2013 թվականին:

շեմը: Ավելին, ինչպես ներկայացված է 3.10 գծապատկերում, այս շեմը գրեթե երեք անգամ գերազանցում էր նվազագույն աշխատավարձի չափը, ուստի հնարավոր է, որ ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների հիմնական մասը դուրս է մնացել համակարգից:

Գծապատկեր 3.10.

Միջին ամսական անվանական աշխատավարձի և նվազագույն ամսական աշխատավարձի համեմատությունը (ՀՀ դրամ)՝ ըստ գենդերի (2008-2019 թթ.)



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏ:

2020 թվականի սկզբի դրությամբ այս շեմը վերացվել է: Երկրի նոր հարկային համակարգով կսահմանվի հարկման համահարթ տոկոսադրույք՝ 23 տոկոսի չափով՝ փաստացի ընդգրկելով միայն հարկման նախկին՝ երկրորդ և երրորդ աստիճանները: Այս դրույքաչափը կնվազի յուրաքանչյուր տարի մեկ տոկոսով և մինչև 2023 թվականը կհասնի վերջնական դրույքաչափի՝ դառնալով 20 տոկոս: Եթե եկամտի շեմ չկիրառվի, դա կնշանակի, որ ավելի շատ աշխատողներ և, մասնավորապես, ավելի շատ կանայք կկարողանան հարկային համակարգում իրենց մասնակցության միջոցով կուտակել աշխատանքային ստաժ և դրանով իսկ ձեռք բերել հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներ ստանալու իրավունքներ: Թեև տեսականորեն շատ մարդիկ կկարողանան օգտվել համակարգից (հաշվի առնելով հասանելիության վերը նշված սահմանափակումները), սա կարող է նշանակել այս խմբերի բարեկեցության մակարդակի զուտ նվազում: Անհրաժեշտ է իրականացնել առավել խոր վերլուծություն՝ որոշելու համար այս բարեփոխման ազդեցությունն ամենացածր եկամուտը ստացող շերտերի վրա:

Վերջին դիտարկումը, որ կարելի է անել այս կապակցությամբ, այն է, որ թեև հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստների համակարգը հարկային համակարգի հետ միաձուլելն ունի վարչական առավելություններ, այնուամենայնիվ, կան նաև պոտենցիալ խնդիրներ՝ պայմանավորված աշխատանքային ստաժի հիմքով պետական կենսաթոշակի իրավունքի ձևավորումը բացառապես եկամտային

հարկի վճարման հետ կապելու հանգամանքով։ Եկամտային հարկ չվճարողներն, այդուհանդերձ, նպաստում են տնտեսությանը և ծառայում են այլ եղանակներով։ Դրանցից մի քանիսը տեսանելի են, օրինակ՝ ԱՄՀ վճարումները կամ նույնիսկ գյուղատնտեսության ոլորտում աշխատողների կողմից մատուցվող հիմնական ծառայությունները։ Մյուսները տեսանելի չեն և ներառում են նաև աշխատումից դուրս անձանց կողմից իրականացվող աշխատանքները, ինչպես, օրինակ՝ բոլոր հայ կանայք, որոնք հոգ են տանում երեխաների և ընտանիքի այլ անդամների մասին, որպեսզի հայրերը կարողանան գնալ աշխատանքի, և որ այդ երեխաները ապագայում դառնան արդյունավետ քաղաքացիներ։

Բացառությամբ կուտակային կենսաթոշակների՝ ֆինանսավորման ներկայիս մոդելը եկամտային հարկի դրույքաչափի մեջ ամբողջությամբ միաձուլել է պետական կենսաթոշակների համար սոցիալական պաշտպանության վճարները, հատկացումների կատարմամբ պայմանավորված՝ հիվանդության և մայրության դրամական նպաստները և աշխատավայրում առաջացած փասվածքի համար տրվող նպաստները։ Օրենսդրությամբ մանրամասնեցված չէ, թե ինչպես է այդ ֆինանսական համակարգը կազմակերպված, որպեսզի ֆինանսավորի տարբեր նպաստներ, լինեն դրանք հատկացումների կատարմամբ պայմանավորված թե հատկացումների կատարմամբ չպայմանավորված։ Հատկացումների կատարմամբ պայմանավորված համակարգի շրջանակում (այսինքն՝ հիվանդության, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև աշխատավայրում առաջացած փասվածքի) կարճաժամկետ, դրամական նպաստներն ապահովում են պաշտպանություն ապահովագրված անձանց աշխատանքային կյանքի ընթացքում։ Բժշկական օգնությունը և սպասարկումը, ինչպես նաև ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակները պաշտպանություն են ապահովում իրենց և կերակրողին կորցրածներին ողջ կյանքի ընթացքում։ Այս սխեմաների ժամանակահատվածները տարբեր են, և տարբեր նպաստների ֆինանսավորման համար օգտագործվող մեթոդների դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այս հանգամանքը։ Թեև այդ համակարգերն առավել լավ հասկանալու համար ցանկալի կլիներ իրականացնել սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի առավել մանրամասն ուսումնասիրություն և պետական ծախսերի հետագծելիություն, ամենայն հավանականությամբ համակարգը ներկայումս գործում է բաշխողական հիմունքով՝ առանց պահուստների։ Թեև դա կարող էր բավարար լինել կարճաժամկետ նպաստների, այդ թվում՝ սոցիալական աջակցության նպաստների ծախսերը ծածկելու համար, այնուամենայնիվ, դա չի գործում երկարաժամկետ նպաստների դեպքում։

Ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակների ու նպաստների վրա հետագայում կատարվելիք ծախսերը հաշվարկելը կենսական նշանակություն ունի ֆինանսավորման գործող մոդելի կայունությունն ապահովելու առումով։ Սա հատկապես կարևոր է հետևյալ պատճառներով.

- յուրաքանչյուր տարի նոր և ավելի մեծ թվով անձինք են ձեռք բերում կենսաթոշակներ և նպաստներ ստանալու իրավունք,
- 1-ին աստիճանը դեռևս զարգացման փուլում է, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր տարի կենսաթոշակառուները կստանան ավելի բարձր կենսաթոշակ,
- ժամանակի ընթացքում 2-րդ աստիճանը կընդլայնվի՝ պահանջելով առավել շատ պետական միջոցներ համապատասխան վճարների համար,
- կենսաթոշակներն ինդեքսավորելու մասով ճնշումները կմեծանան,
- նոր կենսաթոշակառուների և կերակրողին նոր կորցրածների (այսինքն՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ ստացողների) կյանքի միջին տևողությունը մեծանում է,
- այս ամենի հիմքում ընկած է այն փաստը, որ բնակչությունը, հետևաբար նաև հարկային բազան նվազում են։

Թեև լրիվ կուտակային համակարգի անցնելու համար կառուցվածքային բարեփոխումը գուցե նպատակ ուներ լուծելու այդ խնդիրները՝ վերացնելով նպաստ ստանալու երաշխիքները, այնուամենայնիվ, անցումային շրջանը երկար և թանկ է լինելու, քանի դեռ երկու համակարգերն էլ գործում են: Հասկանալի չէ, թե որքան է առաջիկա տասնամյակներում Կառավարությունը պատրաստ ֆինանսավորելու այս կրկնակի բեռը: Ավելին՝ հատկանշական է, որ բարեփոխումների շրջանակներում չի նշվել որևէ օրենսդրություն, որով կգնահատվեին կատարված փոփոխությունների ֆինանսական հետևանքները: Ֆինանսական կառավարման և պլանավորման գործիքներ են ակտուարային գնահատումները, որոնք օգնում են քաղաքականություն մշակողներին՝ ապահովելու սոցիալական պաշտպանության համակարգի երկարաժամկետ կենսունակությունը: Ակտուարային գնահատումներն իրականացվում են սխեմայի ներկա ֆինանսական կարգավիճակը և հավանական հետագա ֆինանսական զարգացումը, նպաստների տրամադրման և ընդունված ֆինանսական համակարգի առնչությամբ դրա ֆինանսական կայունությունը գնահատելու համար, ինչպես նաև սխեմայով նախատեսված հատկացումների և ֆինանսավորման մեխանիզմների մասով հնարավոր փոփոխություններ առաջարկելու համար: Միջազգային փորձը սովորաբար պահանջում է, որ սոցիալական ապահովության համակարգի ակտուարային գնահատում իրականացվի յուրաքանչյուր երեք կամ հինգ տարին մեկ: Ցանկալի է ֆինանսական կառավարման այս և մյուս հարցերն ուսումնասիրել առավել մանրամասն:

3.2.3
Կառավարումը

Հաջորդ բաժնում ամփոփ ներկայացված է Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման կառուցվածքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով գործող օրենսդրական, ինստիտուցիոնալ և քաղաքականության շրջանակներին:

Իրավական դաշտը

Անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը շարունակաբար ընդլայնվում է, և այդ ուղղությամբ զգալի առաջընթաց է արձանագրվել: Այնուամենայնիվ, ակնհայտ է նաև, որ արմատական և հաճախակի բնույթ կրող մի շարք բարեփոխումները հանգեցրել են բարդ ու տրոհված օրենսդրական շրջանակի, որը գագաթնակետին է հասել՝ կենսաթոշակային համակարգի ամենավերջին բարեփոխումն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ առնվազն վեց օրենքների ներկայացմամբ (բոլոր մանրամասների համար տե՛ս 2-րդ հավելվածը): Սոցիալական պաշտպանության ոլորտի ռիսկերը և նպաստներին առնչվող հարցերը կարգավորվում են մի շարք օրենսդրական ակտերով, ինչպես ներկայացված է 3.11 գծապատկերում: Հետևաբար համակարգի հիմնական մարտահրավերներից մեկն այն է, որ կարգավորումները մասնատված են տարատեսակ իրավական փաստաթղթերում:

Գծապատկեր 3.11.

Գործող իրավական դաշտի ամփոփ նկարագիրը



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների:

Հատկացումների կատարմամբ պայմանավորված և հատկացումների կատարմամբ չպայմանավորված համակարգերն իրավական համակարգում դիտարկվում են որպես երկու առանձին շրջանակներ, ինչպես «Պետական կենսաթոշակների մասին» (2010) և «Պետական նպաստների մասին» օրենքների (2013) դեպքում է. երկու օրենքներում էլ առկա են կարգավորումներ՝ պայմանավորված հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և ծեր տարիքում առաջացող չնախատեսված իրավիճակներով. առաջին համակարգով կարգավորվում են վճարների վրա հիմնված նպաստները, մինչդեռ երկրորդ համակարգով՝ մյուս բոլոր նպաստները: Եվ այստեղ է տրոհվածության պարադոքսը. գործնականում նպաստների այս երկու աստիճանները կառուցված են միմյանց շուրջ՝ բնակչության յուրաքանչյուր խմբի լիարժեք ընդգրկվածությունն ապահովելու համար, սակայն դրանք առանձնացված են օրենսդրության մեջ: Սա արդարացված չէ և պետք է համապատասխանաբար վերանայվի, քանի որ այլ երկրներում, որտեղ առկա է իրավական դաշտի տրոհվածություն, այն ի վերջո հանգեցնում է կարգավորումներում համընկնումների և անհամապատասխանությունների:

Ավելին՝ այս տրոհվածությունը հետևողական չէ ըստ ռիսկի ոլորտների: Հատկացումների կատարմամբ պայմանավորված համակարգի շրջանակում երկարաժամկետ ռիսկերը կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով (2010), մինչդեռ կարճաժամկետ ռիսկերը՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով (2010): Նկատենք, որ նախկինում նշված «Պետական նպաստների մասին» օրենքով (2013) կարգավորվում է հատկացումների կատարմամբ չպայմանավորված նպաստների ամբողջական շրջանակը նույն ռիսկերի համար: Որոշ

անհամապատասխանություններ ակնհայտ են, ինչպես, օրինակ՝ այն փաստը, որ երեխաների խնամքի նպաստը կարգավորվում է «Պետական նպաստների մասին» օրենքով, չնայած այն հանգամանքին, որ նպաստը տրամադրվում է «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով կարգավորվող հատկացումների կատարմամբ պայմանավորված՝ մայրության նպաստ ստացողներին: Երեխայի խնամքի և ընտանեկան նպաստները կարգավորող իրավական դաշտում կան այլ անհամապատասխանություններ, որոնք, ի լրումն «Պետական նպաստների մասին» օրենքի (2013), կարգավորվում են նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքով (2014):

Վերջապես, այդ փաստաթղթերը կարող են պատշաճ կերպով չհամաձայնեցվել աշխատանքային իրավունքի դրույթների հետ, օրինակ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով (2004) նախատեսված՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի տևողության և մայրության վճարովի նպաստների տրամադրման տևողության միջև անհամապատասխանությունը: Ուստի անհրաժեշտ է ունենալ համապատասխան իրավական դաշտ՝ հնարավորության դեպքում համախմբված օրենքի տեսքով: Այս առաջնային իրավական դաշտով հնարավորության դեպքում պետք է նշվեն հատկապես ընդգրկվածության նյութական և անձնական շրջանակները, նպաստների տեսակն ու բնույթը կամ չափը և դրանց վճարման տևողությունը, նպաստների մակարդակը, նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու պայմանները, ինստիտուցիոնալ և վարչական ցանկացած մեխանիզմ, այդ թվում՝ բողոքներ ներկայացնելու և փաստերի հատուցման եղանակները:

Առաջարկվում է կատարել իրավական դաշտի քարտեզագրում, ինչպես նաև պարբերաբար քարտեզագրել նորմատիվ իրավական փաստաթղթերի բնօրինակ հայերեն տեքստերը՝ որոշելու համար, թե արդյոք առանցքային հասկացությունների համար տարբեր տերմինների և իրավական սահմանումների կիրառումը անհատական մակարդակում ազդեցություն է ունենում:

Գոյություն ունեն կարևոր պատճառներ, թե ինչու սոցիալական պաշտպանությունը, այդ թվում՝ արդյունավետ վերահսկողությունը, անհրաժեշտ պետական ֆինանսական միջոցների հատկացումը, որոշակիությունն ու կանխատեսելիությունը, կայունությունը, հաշվետվողականությունը և կամայական որոշումների ընդունումից պաշտպանությունը պետք է ներառված լինեն ողջամիտ ազգային օրենսդրության մեջ: Սակայն կարող է նաև հատուկ քաղաքականության շրջանակի անհրաժեշտություն առաջանալ, որը շարունակաբար կապահովի սոցիալական պաշտպանության, այդ թվում՝ իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումների համար համապարփակ շրջանակ և ռազմավարական ուղղություն, որը Հայաստանի քաղաքականության շրջանակը կմոտարկի միջազգային ստանդարտներին և լավագույն գործելակերպերին:

Ինստիտուցիոնալ շրջանակը

Ինստիտուցիոնալ շրջանակի կապակցությամբ հարկ է նշել, որ Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի ուղղության, շրջանակի և մակարդակի, մասնավորապես դրա բարեփոխման նպատակների մասին տեղեկություն տրամադրող որևէ համապարփակ փաստաթուղթ գոյություն չունի: Սոցիալական պաշտպանության համապարփակ ռազմավարության կամ հովանի քաղաքականության բացակայությունը հանգեցրել է չհամակարգված բարեփոխումներ իրականացնելու միտմանը, ինչը խաթարել է համակարգի՝ իր գերնպատակների ուղղությամբ ռազմավարորեն շարժվելու կարողությունները: Աղքատության կրճատմանը, անհավասարության մեղմմանը, արժանավայել ծերության ապահովմանը, բնակչության խոցելի խավերի հնարավորությունների ընդլայնմանն ու երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված սոցիալական պաշտպանության քաղաքականությունը Հայաստանի 2014-

2025 թվականների ՀԶՌ-ի չորս գերակա ուղղություններից է: Այնուամենայնիվ, հատուկ շրջանակ, որով կնախանշվի քաղաքականության այն հատուկ ուղղությունը, որով սոցիալական պաշտպանությունը պետք է ընթանա, գոյություն չունի, ուստի չկա հատուկ հարթակ, որով հնարավոր կլինի անդրադառնալ համակարգի հիմքում ընկած սկզբունքներին: Այս սկզբունքներից մեկը, օրինակ, գենդերային հավասարությունն է, որը թեև հստակ նշված չէ ՀԶՌ-ում որպես սկզբունք, այդուհանդերձ, կարևոր դերակատարություն ունի սոցիալական պաշտպանության համակարգը բոլորին հավասարապես ծառայեցնելու գործում:

Եվ սա՝ չնայած նրան, որ միջավայրն ընդհանուր առմամբ բարենպաստ է. բոլոր նպաստները կենտրոնացված կերպով ֆինանսավորվում են պետական եկամուտներից, և սոցիալական պաշտպանության ամբողջ քաղաքականությունը ղեկավարում է ԱՍՀՆ-ն: Բոլոր կենսաթոշակները, սոցիալական աջակցության ծրագրերը և աշխատաշուկային առնչվող ծրագրերը կառավարվում են ԱՍՀՆ-ի կողմից՝ ազգային մակարդակով պետական այլ գերատեսչությունների հետ համագործակցությամբ (տե՛ս Գծապատկեր 3.12): Սոցիալական պաշտպանության ծրագրերն իրականացվում և կառավարվում են մարզային և տեղական մակարդակներում ԱՍՀՆ-ի ենթակայությամբ գործող պետական գերատեսչությունների, այն է՝ Սոցիալական ապահովության ծառայության (ՍԱԾ), Զբաղվածության պետական գործակալության (ԶՊԳ) և Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (ԲՍՓԳ) կամ պետության կողմից ֆինանսավորվող ոչ առևտրային կազմակերպությունների, այն է՝ մանկատների և տուն-ինտերնատների միջոցով: ԸԿԲՆ-ն՝ որպես հատկացումների կատարմամբ չպայմանավորված համակարգի մաս կազմող՝ սոցիալական հատկացումների ամենամեծ ծրագիր, 2000-ականների սկզբից իրականացվել է մարզային մակարդակում և կառավարվում է Սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (ՍԾՏԿ) միջոցով՝ մարզային իշխանությունների (մարզպետարան և Երևանի քաղաքապետարան) վերահսկողության ներքո:

Գծապատկեր 3.12.

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը (ներպետական մակարդակ)



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների՝ հիմք ընդունելով Ghukasyan et al. (2020):

2012 թվականին ՀՀ Կառավարությունը հավանություն տվեց ԱՍՀՆ-ի նախաձեռնած՝ Հայաստանում Ինտեգրված սոցիալական ծառայությունների (ԻՍԾ) համակարգի ներդրմանը: ԻՍԾ-ն վերաբերում է «ծառայություններ մեկ պատուհանից» սկզբունքի կիրառման միջոցով համապարփակ սոցիալական ծառայությունների տրամադրմանը, ինչը նշանակում է, որ սոցիալական ծառայություններ տրամադրող բոլոր առանցքային գրասենյակները մեկ «հարկի» տակ են՝ այդպիսով բարելավելով ինչպես նշված ծառայությունների հասանելիությունը, այնպես էլ դրանց կառավարումը: Զուգահեռաբար, հանրապետության ողջ տարածքում աստիճանաբար ստեղծվում են ԻՍԾ կենտրոններ (ԻՍԾԿ), որտեղ տեղակայվելու են ՍԱԾ-ի և ԶՊԳ-ի տարածքային բաժինները, ինչպես նաև ԲՍՓԳ-ի մարզային հանձնաժողովները: Նշված ԻՍԾԿ-ներից մի քանիսը 2019 թվականի դեկտեմբերի դրությամբ արդեն իսկ գործարկվել էին, և նախատեսվում է, որ 48-ը կգործարկվի մինչև 2022 թվականի վերջը[56]: Այնուամենայնիվ, նշված թիվը կարող է դեռևս փոփոխվել, քանի դեռ չեն կայացվել ԻՍԾԿ-ի վերջնական ստեղծման և գործառույթների վերաբերյալ իրավական որոշումներ:

Քաղաքականության համաձայնեցվածությունը

Քանի որ Կառավարությունը և մյուս շահագրգիռ կողմերը շարժվում են ԻՍԾ համակարգի ուղղությամբ, անհրաժեշտ է ինչպես խթանել փոխլրացումները, այնպես էլ նվազեցնել մեկ ոլորտը մյուսով փոխարինելու գործելակերպերը: Քաղաքականության համաձայնեցվածությունը կարևոր է ինտեգրումն առաջ մղելու համար երեք հիմնական պատճառներով. 1) ապահովել, որ ռազմավարական ցանկացած գերակայության շրջանակում (սոցիալական, տնտեսական, աշխատաշուկայի կամ ժողովրդագրական) իրականացվող գործողություններն ամրապնդեն այլ գերակայությունների առաջընթացը, 2) խուսափել որևէ նպատակի հաշվին մյուս նպատակի մասով առաջընթացը վտանգելուց (օրինակ՝ Y նպատակին հասնելու համար X նպատակում թերացումը կարող է խաթարել բնակչության կրճատումը կասեցնելու ջանքերը), և 3) ապահովել ներպետական մակարդակով և երկարաժամկետ առաջընթաց: Քաղաքականության համաձայնեցվածությունը քաղաքականություն մշակողներին կարող է օգնել ավելի լավ հասկանալու, թե քաղաքականության ուղղության՝ իրենց այսօրվա ընտրությունն ինչպես կազդի ապագա բնակչության, ինչպես նաև բարեկեցության և կառավարման այլ ոլորտներում կայուն զարգացման վրա:

Հայաստանի դեպքում վերջին տասնամյակում ավելի մեծ ուշադրություն է դարձվել փոխլրացումների ապահովմանը: Ինչպես նշվեց վերը, գործող ՄԺԾԾ-ի նպատակը սոցիալական պաշտպանության ոլորտի առավել արդյունավետ կառավարման համար ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի արմատավորումն է: Ավելին՝ այս նախաձեռնությունը նպատակ ունի նաև նպաստելու զբաղվածության պասիվ և ակտիվ քաղաքականությունների միջև կապերի սերտացմանը: Այնուամենայնիվ, շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցները ցույց են տվել, որ ընթացիկ բարեփոխումները միտված են դրանց ակտիվացմանը: Ըստ էության, տվյալ պահին հստակ չէ՝ ՍԱԾ-ում պատասխանատվությունը կստանձնի Սոցիալական ծառայությունների վարչությունը, թե Զբաղվածության վարչությունը, և թե գործնականում ինչպես կհամագործակցեն այս երկու գերատեսչությունները[57]: Համապատասխան շահագրգիռ կողմերը պետք է ապահովեն, որ գործերի վարման հարցում վարչությունների լիազորությունները հստակ լինեն: Հասանելիության խոչընդոտներ ստեղծելուց խուսափելու համար գործընթացները պետք է լինեն հստակ և պարզ այն օգտվողների տեսանկյունից, որոնք կարիք

[56] Ghukasyan et al. (2020):

[57] Ազգային եռակողմ սոցիալական երկխոսությունը համախմբում է Կառավարությանը, աշխատողներին և գործատուներին, մինչդեռ Ազգային եռակողմ հանձնաժողովը (ԱԵՀ) խորհրդատվություն է տրամադրում ՀՀ Կառավարությանը աշխատանքային և դրան առնչվող օրենսդրության, ինչպես նաև զբաղվածության քաղաքականության վերաբերյալ: Այնուամենայնիվ, ԱԵՀ-ն ունի կարողությունների մի շարք սահմանափակումներ, մասնավորապես համաձայնության վրա հիմնված որոշումներ կիրառելու հարցում:

ունեն թե՛ սոցիալական աջակցության և թե՛ զբաղվածության ծրագրերի:

Սա արտացոլում է Հայաստանում սոցիալական պաշտպանության քաղաքականությունների մշակման առկա միտումները, մասնավորապես այն, որ սոցիալական պաշտպանության քաղաքականությունները սերտորեն փոխկապված են այլ ոլորտների, հատկապես բնակչության և զբաղվածության ոլորտների քաղաքականության նպատակների հետ, այնքանով, որ այդ նպատակները դառնում են երկրորդային: Ինտեգրելու ձգտման գործում կարևոր է, որ քաղաքականություն մշակողները և այլ դերակատարներ նույնպես հաշվի առնեն հնարավոր բացասական կողմերը: Մասնավորապես սա նշանակում է, որ անհրաժեշտ է քաղաքականության յուրաքանչյուր ոլորտում ունենալ հստակ առաջնային և երկրորդային նպատակներ, ինչպես նաև վերհանել քաղաքականությունների չնախատեսված բացասական հետևանքները և արդյունավետորեն կառավարել առավելություններն ու համակշռումը: Քաղաքականության այս ոլորտների միջև համաձայնեցվածության ապահովումը կարևոր է ՀԶՌ-ով սահմանված գերակայությունների ուղղությամբ կայուն առաջընթացի հասնելու համար (տե՛ս Ներդիր 3.3): Այնուամենայնիվ, այդ գործում կարևոր է նաև հստակ պատկերացնել նշված յուրաքանչյուր ոլորտի ուրույն դերակատարությունը և արժեքը:

Ներդիր 3.3:

Համաձայնեցված քաղաքականության իրականացման կառուցվածքային տարրերը[58]

- Քաղաքական հանձնառություն և առաջնորդություն՝ ուղղորդելու համար համապետական գործողությունները և ռազմավարական գերակայությունների մասով հանձնառությունը վերածելու կոնկրետ և համաձայնեցված գործողությունների՝ բոլոր մակարդակներում:
- Քաղաքականության ինտեգրում՝ համակարգված դիտարկելու համար տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական քաղաքականության ոլորտների միջև փոխկապվածությունները, ինչպես նաև ապահովելու համար միջազգային ստանդարտներին համապատասխանությունը:
- Միջսերնդային շրջանակ՝ կատարելու համար կայուն զարգացման վերաբերյալ իրազեկված ընտրություններ՝ ապագա սերունդների բարեկեցության վրա քաղաքականության որոշումների երկարաժամկետ ազդեցության հաշվառմամբ:
- Քաղաքականության հնարավոր հետևանքների վերլուծություններ և գնահատումներ՝ տրամադրելու համար ապացույցներ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, երիտասարդների և ծերերի, գյուղական և քաղաքային համայնքներում բնակվողների բարեկեցության վրա հնարավոր բացասական կամ դրական ազդեցությունների վերաբերյալ, ինչպես նաև ապահովելու տեղեկացված որոշումների կայացումը:
- Քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգում՝ լուծելու համար գերակայությունների և քաղաքականությունների միջև հակասությունները կամ անհամապատասխանությունները:
- Տեղական և մարզային ներգրավվածություն՝ իրականացնելու երկրի ռազմավարական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական և բնապահպանական վերափոխումներ, ինչպես նաև ապահովելու, որ ոչ ոք ուշադրությունից դուրս չմնա:
- Շահագրգիռ կողմերի ներգրավում՝ վստահանալու, որ ԿԶՆ-ները վերաբերում են անձանց, տարատեսակ գործողությունները համահունչ են, և կայուն զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսները և գիտելիքները մոբիլիզացված են:
- Մշտադիտարկում և հաշվետվողականություն՝ առավել լավ հասկանալու համար, թե որտեղ է գրանցվել կամ չի գրանցվել առաջընթաց և ինչու, և որտեղ է անհրաժեշտ հետագա գործողություններ իրականացնել:

[58] ՏՀԶԿ (2018):

3.3

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը բաղկացած է կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված և կյանքի փուլերի հետ չկապված նպաստների համակցությունից (տե՛ս Գծապատկեր 3.5), այդ թվում՝ կյանքի կոնկրետ առանցքային փուլերի համար նախատեսված համընդհանուր տրամադրման նպաստներից (օրինակ՝ ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում), այլ նպաստներ (օրինակ՝ մայրության նպաստներ և աշխատանքային կենսաթոշակներ) տրամադրելու համար զբաղվածության կարգավիճակը հավաստող գործիքներից և աղքատության թիրախավորմանն ուղղված նպաստներից՝ փորձելով ընդգրկել աղքատ համարվողներին (օրինակ՝ ԸԿԲՆ-ի միջոցով): Համակարգը չի նախատեսում ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայով պահանջվող՝ կյանքի տարբեր փուլերում ի հայտ եկող իրավիճակները կարգավորող առանցքային դրույթներ. չկան զբաղվածության նպաստներ և երեխայի խնամքի կամ ընտանեկան նպաստներ ստանալու համընդհանուր իրավունք: Ավելին՝ երեխայի խնամքի արձակուրդի ընթացքում եկամտային ապահովությունը սահմանափակ է, իսկ աշխատավայրում առաջացած փասվածքների դեպքերը կարգավորող դրույթները՝ թույլ: Բոլոր ոլորտներում առկա են համարժեք նպաստների և ծառայությունների տրամադրման, ինչպես նաև արդարության ապահովման իրավական սահմանափակումներ:

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը ֆինանսավորման տարբեր մոդելների՝ տասնամյակների ընթացքում փորձարկման արդյունք է: 2008 թվականից ի վեր սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր պետական ծախսերը (բացառությամբ առողջապահության ոլորտի) ավելի քան երկու անգամ ավելացել են (2019 թվականին հասնելով 28 տոկոսի): Սակայն հարկ է նշել, որ այդ աճը համընկնում է կառուցվածքային փոփոխության՝ տարբեր ծախսային աղբյուրներից, ինչպես, օրինակ՝ սոցիալական ապահովագրությունից, սոցիալական պաշտպանության բոլոր ծրագրերի՝ ամբողջությամբ պետական բյուջեից ֆինանսավորման անցնելու հետ: Իրականում, այդ ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը՝ տոկոսային արտահայտությամբ, դեռևս գրեթե անփոփոխ է՝ 6-7 տոկոս:

Բացի այդ՝ Հայաստանի բյուջեն իր տնտեսության չափի համեմատ փոքր է, ինչը, ընդհանուր առմամբ, նշանակում է պետական եկամուտներ ապահովելու սահմանափակ կարողություն: Սահմանափակ բյուջեն և հարկման նվազող բազան մտահոգության տեղիք են տալիս սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր ծախսերն ու պարտավորությունները պետական բյուջեում ներառելու որոշման պատճառով: Սա կասկածի տակ է առնում սոցիալական ապահովագրության համակարգը վերացնելու որոշումը, երբ հիմնադրամը, առնվազն տեսականորեն, ուներ հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներն ինքնաֆինանսավորելու կարողություն: Դա հատկապես կարևոր է ծերության կենսաթոշակների դեպքում, որոնք ներկայումս կազմում են պետության սոցիալական ծախսերի հիմնական մասը և դեռ կավելանան: Թեև առաջարկվում է իրականացնել պետական ծախսերի առավել մանրամասն ուսումնասիրություն, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ համակարգն այժմ գործում է բացառապես բաշխողական հիմունքով՝ առանց հանկարծահաս ցնցումներին, այն է՝ համաշխարհային համավարակներին դիմագրավելու պահուստների: Երկարաժամկետ կտրվածքով նպաստների վրա

հետագայում կատարվելիք ծախսերն ապահովելը կենսական նշանակություն ունի ֆինանսավորման գործող մոդելի կայունությունն ապահովելու առումով:

Ավելին, քանի որ սոցիալական պաշտպանության շատ նպաստներից օգտվելու իրավունքը պայմանավորված է հարկերի վճարմամբ կամ աշխատանքային ստաժով, հարկային համակարգի սահմանափակ հասանելիությունը հանգեցնում է այդ նպաստների սահմանափակ հասանելիության: Ըստ նախկին հարկային համակարգի՝ ամսական 150,000 ՀՀ դրամից պակաս աշխատավարձ ստացող անձինք փաստացի զրկված էին աշխատանքային ստաժ կուտակելու հնարավորությունից: Վարձատրության գենդերային խզվածքի պատճառով Հայաստանում միջին վիճակագրական կինը փաստացի դուրս էր մնում համակարգից, ինչպես դուրս էին մնում նվազագույն աշխատավարձ ստացող բոլոր աշխատողները: Եկամտային հարկի վերջին բարեփոխումներին համահունչ՝ եկամտի շեմերը վերացնելը տեսականորեն ապահովում է ավելի ցածր եկամուտ ունեցող խմբերի մասնակցությունը: Այնուամենայնիվ, իրականում, հատկապես այն պատճառով, որ նոր հարկային համակարգում հարկը ամրագրված է հաստատուն դրույքաչափով, այդ խմբերի զուտ բարեկեցությունը կարող է նվազել: Առաջարկվում է իրականացնել այս խնդրի առավել խոր վերլուծություն:

Հարկ է նաև նշել, որ թեև հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստների՝ հարկային համակարգին միաձուլելն ունի վարչական առավելություններ, սակայն կան նաև սոցիալական պաշտպանության իրավունքները եկամտային հարկի վճարումների հետ միացնելու պոտենցիալ խնդիրներ, քանի որ եկամտային հարկ չվճարող անձինք, այնուամենայնիվ, այս կամ այն կերպ իրենց ներդրումն ունենում են տնտեսության մեջ: Դրա ցայտուն օրինակ են գյուղատնտեսության ոլորտում աշխատողների կողմից մատուցվող հիմնական ծառայությունները կամ նույնիսկ ԱԱՀ վճարումները՝ անկախ տարիքից կամ զբաղվածության կարգավիճակից: Տնտեսության մեջ ներդրումն այդքան էլ ակնհայտ չէ գործունեության մյուս տեսակների դեպքում, ինչպես, օրինակ՝ այն աշխատանքի, որը կատարում են աշխատուժից դուրս մնացած անձինք՝ երեխաների, ծերերի ու հաշմանդամություն ունեցող անձանց խնամող կանայք:

Հայաստանը կարող է անցում կատարել կառավարման բարենպաստ շրջանակի, այն է՝ ունենալ մեկ նախարարություն, որը պատասխանատու կլինի քաղաքականության մշակման և իրականացման համար: Սա առավել հետևողական և համապարփակ համակարգի ստեղծման հիմնական առավելությունն է: Սակայն վերը նկարագրված քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման հանպատրաստից բնույթը հանգեցրել է իրավական դաշտի տրոհման (տե՛ս Գծապատկեր 3.11): Տարօրինակորեն, հատկացումների կատարմամբ պայմանավորված և հատկացումների կատարմամբ չպայմանավորված նպաստներն այնպես են փոխկապված, որ լիարժեքորեն ապահովեն թիրախային խմբի ընդգրկվածությունը, մինչդեռ օրենսդրության մեջ դրանք առանձնացված են: Սա պետք է վերանայվի, քանի որ իրավական դաշտի տրոհմամբ աչքի ընկնող այլ երկրներում դա ի վերջո հանգեցնում է կարգավորումներում համընկնումների և անհամապատասխանությունների: ԻՍԾԿ-ի ներդնումն այս առումով խոստումնալից է և կարող է լուծել որոշ վարչական խնդիրներ, որոնք ամենաշատն են ազդում օգտվողների վրա:

Հաջորդ գլուխներում առավել մանրամասն անդրադարձ է արվում համակարգի հատուկ ոլորտներին՝ նկարագրելով, թե քաղաքականություններն ինչպես են իրականացվում, և որքանով են դրանք փոխհամաձայնեցված և միջազգային ստանդարտներին համապատասխան:

4

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Կառավարությունը հստակ ամրագրել է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրավունքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում (1996) և հետագայում ընդունված՝ առողջապահական ծրագրերի հիմք հանդիսացող օրենքներում: Այնուամենայնիվ, Հայաստանը դեռ երկար ճանապարհ պետք է անցնի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների համընդհանուր հասանելիություն ապահովելու համար, ինչը ենթադրում է որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիություն ամբողջ բնակչության համար՝ առանց այդ գործընթացում բնակչությանն անհարկի ֆինանսական խնդիրների առջև կանգնեցնելու: 2019 թվականին բնակչության ընդամենը 10.9 տոկոսն էր օգտվում Կառավարության հիմնական ծառայությունների փաթեթից (ՀԾՓ), և միայն 5.0 տոկոսը՝ առողջության կամավոր մասնավոր ապահովագրությունից[59]:

4.1

ԻՐԱՎԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԸ

Խորհրդային Միության փլուզումից հետո ՀՀ Կառավարությունը հրաժարվեց գործող Սեմաշկոյի մոդելով կազմակերպվող առողջապահական համակարգից, որը երաշխավորում էր անվճար առաջնային, երկրորդային և երրորդային մակարդակի բժշկական ծառայությունների տրամադրում ամբողջ բնակչությանը, այն հիմնավորմամբ, որ այն ֆինանսապես կայուն չէ[60]: 1999 թվականին ներդրվեց Հիմնական ծառայությունների փաթեթը (ՀԾՓ)՝ որպես բյուջետային ռեսուրսների հատկացման միջոց՝ ուղղված սոցիալապես անապահով բնակչության շրջանում, այսպես կոչված, «սոցիալական նշանակություն ունեցող հիվանդությունների» թիրախավորմանը: ՀԾՓ-ի շրջանակում պետական ռեսուրսներն օգտագործվում են Հայաստանի բոլոր քաղաքացիներին տրամադրվող առաջնային բժշկական օգնության (ԱԲՕ) և անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունները ֆինանսավորելու համար, մինչդեռ ընդհանուր բնակչությունը (բացառությամբ աղքատ, սոցիալապես անապահով և հատուկ խմբերի) վճարում է համավճար այլ ծառայությունների մեծ մասի համար՝ առողջապահության նախարարության (ԱՆ) հաստատած գնացուցակի համաձայն:

Իրականում ՀԾՓ-ն բաղկացած է երկու բաղադրիչներից (տե՛ս Գծապատկեր 4.1). 1) Հայաստանի բոլոր քաղաքացիներն օգտվում են ԱԲՕ-ից և անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններից, և 2) ընդգրկված են միայն աղքատները, սոցիալապես անապահովները և այն սոցիալական խմբերը (այդ թվում՝ մինչև 7 տարեկան բոլոր երեխաները)[61], որոնք ազատված են գերակա հիվանդությունների բուժման, այդ թվում՝ հակատուբերկուլյոզային, ինֆեկցիոն, ինքնաբուխ հեշտոցային ծննդաբերական, հոգեբուժական, ուռուցքաբանական, արյունաբանական, քիմիա-թերապևտիկ, նախածննդյան խնամքի և ծննդաբերության ծառայությունների համար համավճարից: Ավելին՝ նշված խմբերին կոնկրետ հիվանդանոցային ծառայությունները մատուցվում են անվճար: ՀԾՓ-ի շրջանակում տրամադրվող

[59] ՏՏԿԱՀ 2019:
[60] Սեմաշկոյի մոդելը նախկին Խորհրդային Միության կենտրոնացված առողջապահական համակարգն էր: Այն ստեղծվել էր որպես բժշկական օգնության բազմաստիճան համակարգ՝ ծառայություններ մատուցողների խիստ տարբերակված ցանցով, որոնք միմյանց հետ սերտորեն կապված էին ուղեգրման համակարգով: Այն, ըստ էության, համընդհանուր էր, և դրա շրջանակում ծառայությունները բոլորին մատուցվում էին անվճար:
[61] Սոցիալապես անապահով բոլոր խմբերի ցանկը կարելի է գտնել 3-րդ հավելվածում:

ծառայությունները, որոնք հասանելի են ամբողջ բնակչության համար, հիմնականում ամբուլատոր ծառայություններն են, որոնք ներառում են առաջնային օղակում բուժօգնությունը, հղիության վարման և սանիտարահամաճարակաբանական ծառայությունները: «Բարձր տեխնոլոգիաների և թանկարժեք մեթոդների վրա հիմնված ծառայությունների» տրամադրում պահանջող հիվանդությունների դեպքում բոլորից պահանջվում է կատարել վճարումներ սեփական միջոցներից (ՍՄ):

Գծապատկեր 4.1.

ՀԾՓ-ի նկարագրությունը



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակների:

Այլուսակում ամփոփ ներկայացված է ՀԾՓ-ի իրավական ապահովումը: Ծրագիրը պարբերաբար վերանայվում է, և ընդգրկված ծառայությունների և (կամ) բնակչության խմբերի շրջանակն ավելացվում կամ կրճատվում է՝ պայմանավորված առկա ֆինանսավորման մակարդակով:

Աղյուսակ 4.1.

Կյանքի տարբեր փուլերում տրամադրվող առողջապահական ծառայությունները Հայաստանում

ՀԾՓ-ի օրենքով սահմանված առանձնահատկությունները							
Սխեմա	Սխեմայի տեսակ	Կարգավորող շրջանակ	Շահառուներ	Ֆինանսավորման մեխանիզմ	Իրավունք տվող նվազագույն պայմաններ	Ծառայությունների նկարագրություն	Պատասխանատու գերատեսչություն
Հիմնական ծառայությունների փաթեթ (ՀԾՓ)	Անապահովության գնահատման վրա հիմնված, հատկացումների կատարմամբ չպայմանավորված	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենք (1996) Առողջապահական պետական նպատակային ծրագիր (ԱԼ-139) (2000)	Հայաստանի քաղաքացիներ, Հայաստանում բնակվող օտարերկրյա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք	Պետական բյուջե և համավճարներ	Իրավունքներից օգտվելու նվազագույն ժամկետ գոյություն չունի «Աղքատ», սոցիալապես անապահով և հատուկ խմբերին ներկայացվող պայմանների նկարագրությունը կարելի է գտնել 3-րդ հավելվածում	Պետության կողմից մատուցվող ԱԲՕ-ն և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները ֆինանսավորվում են պետական միջոցների ու համավճարների հաշվին, որոնցից ազատված են աղքատները, սոցիալապես անապահովները, այդ թվում՝ երեխաները: Աղքատ, սոցիալապես անապահով և այլ հատուկ կատեգորիաներին կոնկրետ ստացիոնար ծառայությունները մատուցվում են անվճար[62]	ԱՍՀՆ/ԱՆ Պետական առողջապահական գործակալություն (ՊԱԳ)

[62] Շահառուների կատեգորիաների նկարագրությունը կարելի է գտնել 3-րդ հավելվածում:

4.2

ՓԱՍՏԱՑԻ ԾԱԾԿՈՒՅԹԸ

Բժշկական ապահովագրության ծածկույթի ընդլայնումը նախևառաջ կապված է առողջապահության ոլորտի ֆինանսավորման պատշաճ մեխանիզմների միջոցով ֆինանսական խոչընդոտների վերացման հետ՝ կրճատելու համար ՍՄ վճարումները: Մյուս կողմից՝ դրանցից օգտվելու հանգամանքը պայմանավորված է սոցիալական տարբեր որոշիչ գործոններով և առողջապահական համակարգի գործոններով, այն է՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող բավարար թվով կենտրոնների, դեղորայքի ու սարքավորումների առկայությունը, ինչպես նաև առաջնային, երկրորդային և երրորդային մակարդակի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների և վերապատրաստված բուժանձնակազմի հասանելիությունը: Հասանելիությունն ու օգտագործումը թե՛ առաջարկի (օրինակ՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների հասանելիությունը գյուղական բնակավայրերում) և թե՛ պահանջարկի արդյունք են: Պահանջարկի տեսանկյունից հաճախ կանանց և տղամարդկանց համար տարբեր հասանելիության քողարկված որոշիչ գործոններ են սեռը, տարիքը, բնակավայրը և հաշմանդամությունը:

4.2.1
Ծառայությունների ծածկույթը

Տեսականորեն, ՀԾՓ-ով առաջնային բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ տրամադրվում են բնակչության 100 տոկոսին: Այնուամենայնիվ, նույնիսկ որոշակի ֆինանսական ապահովման պարագայում շահառուներից շատերը դեռևս ստիպված են հոգալ բժշկական օգնության դիմելու առնչվող ուղղակի (օրինակ՝ դեղորայքի գնման կամ տրանսպորտային) և անուղղակի (օրինակ՝ եկամտի կորուստը ծածկելու համար) ծախսերը: Հավանական է, որ շատերը հրաժարվում են բժշկական օգնության և սպասարկման հիմնական ծառայություններից, քանի որ ի վիճակի չեն համավճարելու, ինչով էլ բացատրվում են 4.2 գծապատկերում ներկայացված՝ ՀԾՓ-ից օգտվողների ցածր ցուցանիշները: Նույնիսկ «սոցիալապես անապահով խմբերի» շրջանում ՀԾՓ-ից օգտվողների ցուցանիշն է համեմատաբար ցածր (0-4 տարեկան երեխաների 28.6 տոկոսը, ԸԿԲՆ շահառուների 21.9 տոկոսը, ամենացածր սպառման դեցիլային խմբում գտնվող անձանց 11.8 տոկոսը և հաշմանդամ ճանաչված անձանց 52.3 տոկոսը):

Ծախսերն անհավասարաչափ են բաշխված Հայաստանի բնակչության տարբեր խմբերի միջև որոշ ծառայությունների անհավասարաչափ ապահովման պատճառով: Օրինակ՝ սեռական և վերարտադրողական առողջության (ՍՎԱ) ծառայությունների ծախսերը կանայք ավելի շատ են կատարում իրենց ՍՄ վճարումների հաշվին, քան տղամարդիկ: Ավելին՝ հակաբեղմնավորիչ միջոցներն անվճար են միայն աղքատության կարգավիճակով սոցիալապես անապահով ճանաչվածների համար: Որպես արդյունք՝ «դուրս մնացած միջինը դասը», որը թեև «աղքատ» չի համարվում, բայց կարող է չունենալ բավարար տնօրինվող եկամուտ՝ դեղորայք գնելու համար, դուրս կմնա համակարգից: Արգանդի վզիկի և կրծքագեղձի քաղցկեղի ամբողջական բուժումը նույնպես ներառված չէ ՀԾՓ-ում: Թեև կանանց

տրամադրվում է նախածննդյան և հետծննդյան բուժօգնություն, և ծննդօգնության պետական հավաստագրերը կարող են նույնիսկ ներկայացվել մասնավոր բժշկական հաստատություններ, այնուամենայնիվ, վերարտադրողական ծառայությունները հասանելի են միայն հատուկ խմբերին, ինչպիսիք են զինծառայողները և գյուղական ու հեռավոր բնակավայրերի բնակիչները: Վարվող քաղաքականության հիմնավորումը հասկանալի չէ՝ մասնավորապես հաշվի առնելով երկրի ժողովրդագրական մարտահրավերները:

Գծապատկեր 4.2.

Առողջապահական ծառայությունների ծածկույթը. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Թեև ՀԾՓ-ից օգտվողների ցուցանիշը ցածր է բոլոր տարիքային խմբերի շրջանում (տե՛ս Գծապատկեր 4.2), այնուամենայնիվ, երեխաների շրջանում այն ամենաբարձրն է (17.5 տոկոս), ըստ էության՝ այն պատճառով, որ մինչև 7 տարեկան բոլոր երեխաները և այս ժողովրդագրական խմբում մի շարք այլ խմբեր համարվում են «սոցիալապես անապահով» և ազատված են ՀԾՓ-ի համավճարներից[63]: ՀԾՓ-ից օգտվողների ցուցանիշն աշխատունակ տարիքի անձանց շրջանում ամենացածրն է (8.3 տոկոս) և աննշան բարձր է տարեցների շրջանում (9.5 տոկոս): Այս հանգամանքը կարելի է վերագրել նաև այն փաստին, որ գործազուրկ կենսաթոշակառուները ՀԾՓ-ով համարվում են «հատուկ խումբ»: Վերջապես ՀԾՓ-ից օգտվում են ավելի շատ տղամարդիկ (11.3 տոկոս), քան կանայք (9.8 տոկոս, տե՛ս Գծապատկեր 4.3): Սա՝ չնայած նրան, որ վերարտադրողական տարիքի բոլոր կանայք համարվում են «հատուկ խումբ»:

[63] Շահառուների կատեգորիաների նկարագրությունը կարելի է գտնել 3-րդ հավելվածում:

Գծապատկեր 4.3.

ՀԾՓ-ից օգտվող բնակչության ցուցանիշները՝ ըստ տարիքային խմբերի և սեռի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

4.2.2 Ֆինանսական ծանկույթը

Թեև վերջին տարիներին առողջապահական ոլորտի ծախսերն ավելացել են՝ 2019 թվականին կազմելով ՀՆԱ-ի 1.5 տոկոսը, հանրային առողջապահության ֆինանսավորումը ամենա-ցածրն է տարածաշրջանում (տե՛ս Գծապատկեր 4.4) և աշխարհում, նույնիսկ ավելի ցածր, քան ցածր եկամուտ ունեցող տնտեսությունների միջինը[64]: Առողջապահության ոլորտի ընդհանուր ծախսերը մեկ շնչի հաշվով 2019 թվականին կազմել են մոտավորապես 33,600 ՀՀ դրամ (68 ԱՄՆ դոլար) կամ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 1.5 տոկոսը: 2019 թվականին պետական ծախսերում առողջապահության ոլորտի ծախ-սերի մասնաբաժինը կազմել է մոտ 7 տոկոս՝ համաշխարհային միջինից էլ ցածր:

[64] Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏԲԱՆԿ: 2018 թվականին առողջապահության ոլորտի ընդհանուր ծախսերը 79.6 ՀՀ միլիարդ դրամից (ՀՆԱ-ի 1.3 տոկոսը) ավելացել են՝ 2019 թվականին հասնելով 99.3 միլիարդ ՀՀ դրամի (ՀՆԱ-ի 1.5 տոկոս):

Գծապատկեր 4.4.

Առողջապահության ոլորտի ընթացիկ ծախսերը ԵԿԱ տարածաշրջանի միջինից բարձր եկամուտ ունեցող որոշ երկրներում ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ, հասանելի վերջին տվյալը



Աղբյուրը. Համաշխարհային բանկ (տ.բ.):
Ծանոթագրություն. Հայաստանի ցուցանիշը 2019 թվականի ցուցանիշն է:

Դժբախտաբար, հանրային առողջապահության ոլորտի ծախսերի ցածր ցուցանիշները և պահանջարկի տեսանկյունից առողջապահության ոլորտի ֆինանսավորման բարեփոխումներն ավարտին չհասցնելը ֆինանսական ռիսկերից պաշտպանության արդյունքներում հանգեցրել են լուրջ խնդիրների: ՀԾՓ ծառայությունների բարձր համավճարները (սովորաբար ծառայության արժեքի 50 տոկոսը՝ տատանվելով մինչև 137 տոկոս), սոցիալապես ոչ խոցելի բնակչության հիվանդանոցային բուժօգնության, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից բոլորին հատկացման ենթակա դեղամիջոցների անհասանելիությունը հանգեցրել են նրան, որ տնային տնտեսությունների կողմից ՍՄ վճարումները դարձել են երկրում առողջապահության ոլորտի ֆինանսավորման գլխավոր աղբյուրը (2018 թվականին առողջապահության ոլորտի ընդհանուր ծախսերի 84 տոկոսը)[65]: 2018 թվականին տնային տնտեսությունների առողջապահական միջին ծախսերը կազմել են վիճակագրական հայի նվազագույն աշխատավարձի գրեթե 30 տոկոսը (տե՛ս Գծապատկեր 4.5):

[65] Lavado, Hayrapetyan, and Kharazyan (2018); World Bank (n.d.):

Գծապատկեր 4.5.

Տնային տնտեսությունների առողջապահական միջին տարեկան ծախսերը՝ նվազագույն տարեկան աշխատավարձի նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ. 2018 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2018:

ՍՄ-ից վճարումները բաղկացած են ՀԾՓ-ի շրջանակում տրամադրվող ծառայությունների պաշտոնական համավճարներից, ՀԾՓ-ի շրջանակից դուրս տրամադրվող ծառայությունների (մասնավորապես սոցիալապես ոչ խոցելի բնակչության հիվանդանոցային բուժօգնության և սպասարկման, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից բոլորին հատկացման ենթակա դեղամիջոցների) ուղղակի վճարներից և ոչ պաշտոնական վճարներից: Թեև ենթադրվում էր, որ ՀԾՓ ծառայություններ մատուցողների փոխհատուցումները պետք է ծածկեին տրամադրված բուժօգնության և սպասարկման ամբողջ ծախսերը, այնուամենայնիվ, վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրականում դրանք ծածկում են ծառայությունների մեծ մասի ծախսերի գրեթե կեսը[66]: Մյուս կողմից՝ դեղորայքի ձեռքբերման ծախսերը կազմում են տնային տնտեսությունների առողջապահական՝ ընդհանուր ՍՄ ծախսերի մոտավորապես երեք քառորդը: ՀԾՓ-ի շրջանակում շատ քիչ թվով դեղորայք է տրամադրվում, և թեև Հատուկ դեղերի ծրագրով նախատեսվում է ծածկել առաջին անհրաժեշտության դեղերի ծախսը, դրա բյուջեն սահմանափակ է, և շահառուները վատ են թիրախավորված: Օրինակ՝ ԸՆ-ի շահառուները նշված դեղորայքից օգտվելու իրավունք չունեն: Ավելին՝ դեղագործական արտադրանքը ենթակա է 20 տոկոս ԱԱՀ-ով հարկման:

Այսպիսով, ՍՄ վճարումների կրճատումներ հազիվ թե լինեն, եթե տեղի չունենա ֆինանսավորման այլ աղբյուրների, հատկապես պետական միջոցների էական ավելացում՝ առողջապահական հիմնական ծառայությունների ծախսերը ֆինանսավորելու համար: Սա հատկապես կարևոր է առողջապահական ծառայություններից օգտվելու առավել շատ կարիք ունեցող ծերացող բնակչության համատեքստում: Հարկաբյուջետային սահմանափակ տարածության պատճառով Հայաստանը պետք է դիտարկի պարտադիր բժշկական ապահովագրության սխեմայի ներդրման հարցը՝ ՍՄ ծախսերը կրճատելու համար: Սա թույլ կտա երկրին միավորել միջոցները ոչ խոցելի խմբերից և նրանց գործատուներից՝ ապահովագրավճարները վճարելու համար: Պետական առողջապահական գործակալության (ՊԱԳ) ստեղծումը՝ նախ ՀԾՓ-ն ղեկավարելու համար, համարվում էր առաջին քայլը՝ ուղղված Առողջապահության սոցիալական պարտադիր ապահովագրության հիմնադրամի ներդրմանը, սակայն այն դեռևս կարող է դառնալ ռազմավարական գնորդ «մեկ միասնական գնորդ և վճարող» համակարգում:

[66] Lavado et al. (2018):

Ներդիր 4.1.

Մայրության պաշտպանությունը և դրա ազդեցությունը առողջության վրա

Մայրության պաշտպանությունը կարող է լուծել կանանց և նրանց երեխաների առջև ծառացած՝ առողջության և սնուցման որոշ խնդիրներ՝ պայմանավորված այն կարգավորող դրույթներով: Մի շարք ուսումնասիրություններ անդրադարձել են երեխայի խնամքի արձակուրդի ընթացքում եկամտային ապահովության կամ մասնավորապես դրա բացակայության հետևանքներին առողջության վրա: Ամբողջ աշխարհում կան լուրջ ապացույցներ առ այն, որ երեխայի խնամքի վճարովի արձակուրդը կապված է մանկական մահացության ցուցանիշների նվազեցման[67] և երեխաների առողջության բարելավման հետ[68]: Ցածր և միջին եկամուտ ունեցող 20 երկրներում անցկացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վճարովի արձակուրդի յուրաքանչյուր հավելյալ ամիսն ապահովել է մանկական մահացության ցուցանիշի համեմատական նվազեցում 13 տոկոսի չափով, որն առավել ուժեղ ազդեցություն է ունեցել հետծննդյան շրջանում[69]: Այս արդյունքները հաստատվել են 121 զարգացող երկրներում անցկացված ուսումնասիրություններով, որոնք պարզել են, որ փոխհատուցման չափը կարևոր է, և որ ամենամեծ ազդեցությունը ՀՆԱ-ի ցածր մակարդակ ունեցող երկրներում է[70]:

Գոյություն ունի երկու եղանակ, որով երեխայի խնամքի վճարովի արձակուրդը կարող է զգալի դրական ազդեցություն ունենալ երեխաների առողջության վրա: Առաջին՝ առավել հավանական է, որ դրամական նպաստ ստացող մայրերը կկերակրեն իրենց երեխաներին կրծքով և ավելի երկար ժամանակ և ավելի հաճախ կայցելեն բժշկի[71]: Կրծքով կերակրումը համարվում է նորածնի առողջության ամենաարդյունավետ միջամտություններից մեկը: Երկրորդ՝ այն օգնում է, որպեսզի ծնողներն օգտվեն պատվաստումներ և հետծննդյան խնամք ստանալու հնարավորությունից[72]: Վերջապես, վճարովի արձակուրդը կանանց հնարավորություն է տալիս ֆիզիկապես վերականգնվելու ծննդաբերությունից հետո՝ նախքան աշխատանքի վերադառնալը[73]: Երեխայի խնամքի վճարովի արձակուրդը կարող է նաև նպաստել կանանց հոգեկան առողջության վերականգնմանը, մասնավորապես հետծննդաբերական ընկճախտի հաղթահարմանը[74]:

Աղբյուրը. ԱՄԿ և ԱՍՋԿ (2019):

Այս մարտահրավերների պայմաններում ամբողջ աշխարհը գնում է պահանջարկի ֆինանսավորման համակարգի առավել լայն կիրառման ճանապարհով: Սրա լավագույն ապացույցն այն է, որ առավել մեծ ուշադրություն է դարձվում մի խումբ ծառայությունները բնակչության որոշակի խմբերի համար հասանելի դարձնելու անհրաժեշտությանը: Շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցները ցույց տվեցին, որ այդ աշխատանքների մեծ մասն առաջ են մղել զարգացման գործընկերները, և դրանք մասնավորապես ուղղված են եղել երեխաների թերսնուցման հաղթահարմանը «Կարևոր է առաջին 1000 օրը» արշավների միջոցով: Ծրագրերն ուղղված են եղել կրծքով կերակրման կարևորության մասին իրազեկվածության բարձրացմանը Կառավարությունն ընդունեց «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» օրենքը

[67] Heymann et al. (2011); Tanaka (2005):
[68] Haeck (2011), Heymann et al. (2017):
[69] Nandi et al. (2016):
[70] Fallon et al. (2017):
[71] Staehelin et al. (2007):
[72] Hajizadeh et al. (2015):
[73] Aitken et al. (2015):
[74] Avendano et al. (2015):

(2014)։ Սակայն այս նախաձեռնությունները չեն լուծում այն ֆինանսական մարտահրավերները, այն է՝ աշխատանքի վերադառնալու անհրաժեշտությունը, որոնք կարող են կանանց խանգարել իրենց երեխաներին առաջարկվող ժամանակահատվածում կրծքով կերակրելու։

Ավելին՝ պետք է ուշադիր լինել, որ նման արշավները չամրապնդեն գենդերային այն կարծրատիպերը, որ երեխաների բարեկեցության ապահովումը և կերակրումը բացառապես կնոջ պարտականությունն են։ Անհրաժեշտ է որդեգրել գենդերային առումով զգայուն մոտեցում, որով հաշվի կառնվեն կանանց՝ կենցաղային պարտականությունների և եկամուտ ստեղծելու վերաբերյալ սահմանափակումները։ Կյանքի առաջին 1000 օրը հատկապես խոցելի ժամանակաշրջան է թե՛ երեխայի և թե՛ մոր համար։ Կյանքի տարբեր փուլերի սոցիալական պաշտպանության լիարժեք համակարգում մայրության և երեխայի խնամքի համարժեք նպաստներն առավել արդյունավետորեն կնպաստեն թերսնուցման կանխարգելման նպատակին։

4.3
ԱՄՓՈՓՈՒՄ

Երկրի առողջապահության համակարգը կանգնած է մի շարք մարտահրավերների առջև։ Համընդհանուր բժշկական օգնության և սպասարկման ապահովումը ենթադրում է որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիություն ամբողջ բնակչության համար՝ առանց այդ գործընթացում բնակչությանն անհարկի ֆինանսական խնդիրների առջև կանգնեցնելու, այն է՝ բարելավումներ **ինչպես ծառայությունների, այնպես էլ ֆինանսական ապահովման** հարցում։ Վերջինիս մասով Հայաստանն արձանագրել է ցածր ցուցանիշներ։ Վերջին բարեփոխումների շնորհիվ ստեղծվել է մի համակարգ, որտեղ առողջապահության ոլորտի՝ ընդհանուր պետական եկամուտներից ապահովվող պետական հատկացումները հիմնական առողջապահական ծառայությունների բազային փաթեթի միջոցով հիմնական առողջապահական ծառայությունների ընդգրկուն հասանելիություն են ապահովում։ Սակայն Հայաստանի առողջապահության ոլորտի պետական ֆինանսավորումն ամենացածրն է տարածաշրջանում։ ՀԾՓ-ի շրջանակում տրամադրվող ծառայությունների դիմաց համավճարները, առողջապահական թանկ ծառայությունների, մասնավորապես հիվանդանոցային բուժօգնության և սպասարկման, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից տրամադրվող դեղամիջոցների անհասանելիությունը հանգեցրել են նրան, որ տնային տնտեսությունների կողմից ՍՄ վճարումները դարձել են երկրում առողջապահության ոլորտի ֆինանսավորման գլխավոր աղբյուրը։ ՍՄ վճարումների բարձր ցուցանիշները ինչպես մեծացնում են տնային տնտեսությունների աղքատության մեջ հայտնվելու ռիսկը, երբ վերջիններս կանգնում են առողջապահական զգալի ծախսերի առջև, այնպես էլ նվազեցնում են առողջապահության ոլորտի ֆինանսավորման համակարգի պոտենցիալ վերաբաշխման կարողությունները։

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՐՁՐ ԵԿԱՄՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սոցիալական պաշտպանության համակարգերը և մասնավորապես սոցիալական պաշտպանության ստորին շեմերը առանցքային դերակատարում ունեն երեխաների աղքատության և սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու հարցում: Փաստական տվյալներում ակնհայտորեն արտացոլվում է սոցիալական պաշտպանության և հատկապես դրամական օգնության ձևով նպաստների ազդեցությունը աղքատության, պարենային անվտանգության, առողջության և կրթության մատչելիության վրա[75]: Երեխաների սոցիալական պաշտպանությունը կարևոր է երեխաների աղքատությունը նվազեցնելու և կանխելու, ինչպես նաև մինչև 2030 թվականը երեխաների աղքատությունը իսպառ վերացնելուն և երեխաների աղքատությունը կիսով չափ նվազեցնելուն ուղղված ԿԶՆ-ն իրագործելու համար: Երեխաներն ունեն ոչ միայն սոցիալական ապահովության հիմնարար իրավունք, այլև համարվում են ապագա աշխատուժը, ապագա հարկման բազան և ապագա խնամատարները այնպիսի ծերացող հասարակության համար, ինչպիսին Հայաստանինն է: Երեխաների նպաստները կարող են լինել հավաքական գործիք՝ ուղղված երեխաներին դաստիարակելու համար ծնողների ծախսերը թեթևացնելուն՝ այդպիսով մարդկանց ցանկության դեպքում ընտանիք կազմելու հնարավորություն ընձեռելով:

5.1

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

5.1.1

Շեշտադրում տնային տնտեսություններին կատարվող դրամական հատկացումներին և աղքատության թիրախավորմանը

Չնայած Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի բավականին համապարփակ ծածկույթին և մի շարք հիմնական չնախատեսված իրավիճակների համար սահմանված համընդհանուր իրավական դրույթներին՝ Հայաստանը երեխաների և ընտանիքների ապահովման առումով որդեգրել է այլ ուղղություն: Համընդհանուր և բազմաստիճան նախագծերը կիրառելու փոխարեն Հայաստանն ընտրել է աղքատության թիրախավորմանն ուղղված մոտեցում՝ կյանքի տարբեր փուլերին, մասնավորապես երեխաներին առնչվող դրույթներում առկա բացերը վերացնելու համար:

Երեխաներին նպաստները որպես իրավունք, երեխաներին բնորոշ խոցելի վիճակին անդրադարձ կամ հասարակության բոլոր շերտերում երեխաների դաստիարակման ծախսերը հոգալու եղանակ առաջարկելու փոխարեն աղքատության թիրախավորմանն ուղղված մոտեցման տրամաբանությամբ դրանք վճարվում են՝ հիմք ընդունելով ենթադրյալ «կարիքը»: Հայաստանում, ի տարբերություն ՀԾՓ-ի ձևով առողջապահությանը

[75] Kidd et al. (2020):

ցուցաբերված մոտեցման, ինչպես նաև ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և մայրության նպաստների, երեխաների համար նախատեսված նպաստները ամփոփված (քողարկված) են աղքատության թիրախավորմանն ուղղված ընտանեկան նպաստի կազմում՝ «Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի շրջանակում: Նպաստներ ստանում են միայն այն երեխաները, որոնք բնակվում են 10 տոկոսը կազմող այնպիսի տնային տնտեսություններում, որոնք համարվում են «աղքատ (կամ շատ աղքատ)», այսինքն՝ նրանց կենսամակարդակը աղքատության ազգային ստորին գծից ցածր է:

Այս մոտեցումն արտացոլում է միջազգային զարգացման և սոցիալական պաշտպանության շրջանակներում տեղի ունեցող՝ աղքատության թիրախավորման նպատակով տնային տնտեսություններին կատարվող հիմնական դրամական հատկացումների (ինչպես, օրինակ՝ «Փարոս» ծրագրի) և երեխաների նպաստների ընդհանուր միաձուլումը. վերջինս, որպես կանոն, վճարվում է յուրաքանչյուր երեխայի համար: Տարբերակումը կարևոր է, քանի որ փաստական տվյալների համաձայն՝ անհատական սոցիալական վճարները, ի տարբերություն տնային տնտեսություններին տրամադրվող նպաստների, առավել բարենպաստ պայմաններ են ստեղծում սոցիալական ապահովության իրավունքի իրացման համար: Սրա պատճառն այն է, որ կենսափուլային մոտեցմամբ ոչ միայն առավել հավանական են տրամադրվող անհատական նպաստների, ինչպես, օրինակ՝ ծերության կենսաթոշակների կամ երեխաների նպաստների՝ օրենսդրության մեջ ամրագրումը և սահմանումը, այլև դրանք հեշտորեն ենթարկվում են հատուցման և հաշվետվողականության համակարգերի գործողությանը՝ ի տարբերություն տնային տնտեսությունների մակարդակում վճարվող՝ աղքատության թիրախավորմանն ուղղված նպաստների, որոնց դեպքում անհատական իրավունքները, որպես կանոն, ուղղակիորեն ձևակերպված չեն, իսկ նպաստներն անորոշ ձևով բաշխվում են տնային տնտեսության բազմաթիվ անդամների միջև[76]: Տնային տնտեսությունների մակարդակում նպաստների վճարումն, անշուշտ, կարող է գենդերային հավասարության տեսանկյունից ունենալ բացասական հետևանքներ՝ հաշվի առնելով ընտանիքի ներսում տիրող անհավասար փոխհարաբերությունները:

Ավելին՝ աղքատության թիրախավորմամբ Կառավարության վրա դրվում է բավականին ծանր վարչական բեռ՝ ուղղված այն երեխաների ճշգրիտ հայտնաբերմանը, որոնք համարվում են բավականին կարիքավոր՝ աջակցության իրավունք ստանալու համար՝ հաշվի առնելով տնային տնտեսությունների բավականին փոփոխական եկամուտը: Իսկապես, ինչպես պարզաբանվում է 5.1 ներդիրում, աղքատության թիրախավորումը, մասնավորապես «ընտանիքի անապահովության գնահատման անուղղակի մեթոդի» կիրառմամբ, ինչպիսին է Հայաստանում գործածվող մեթոդը, հանգեցնում է բացառման լայնածավալ սխալների՝ շրջանցելով բազմաթիվ երեխաների և ընտանիքների, որոնք այլ պարագայում կհամարվեին աղքատ:

[76] Ayliffe et al. (2017); McClanahan et al. (2021):

Ներդիր 5.1.

Աղքատության թիրախավորումը զուգորդվում է բացառման բարձր սխալներով

Չնայած այն հանգամանքին, որ «աղքատության թիրախավորում» հասկացությունը ենթագիտակցորեն գրավիչ է սահմանափակ միջոցներ ունեցող քաղաքական և ֆինանսական միջավայրերում, թիրախավորման մեխանիզմում անճշտությունների հնարավոր բարձր գինը, այդ թվում՝ բացառումների բարձր մակարդակը, հազվադեպ է հաշվի առնվում քաղաքականության վերաբերյալ բարձր մակարդակի քննարկումների ընթացքում[77]:

Իրականում Հայաստանում սոցիալապես անապահով անձանց թիվը շատ ավելի մեծ է, քան ներկայացվում է աղքատության ազգային վիճակագրությամբ: 5.1 գծապատկերում ներկայացված են Հայաստանում աղքատության միջազգային տարբեր գծերից (այդ թվում՝ ծայրահեղ աղքատության) և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների, միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների և բարձր եկամուտ ունեցող երկրների համար սահմանված աղքատության միջին գծից ցածր եղող բնակչության մասնաբաժինը: Ըստ ազգային վիճակագրության՝ հայերի մոտ 10.2 տոկոսը 2019 թվականին եղել է աղքատության ստորին գծից ցածր և հետևաբար համարվել է ԸԿԲՆ-ի թիրախային խումբ: Մինչդեռ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համար սահմանված աղքատության միջին գիծն օգտագործելու դեպքում աղքատ կհամարվեր մարդկանց մոտ 26.7 տոկոսը, այդ թվում՝ կանանց 27.3 և տղամարդկանց 26.2 տոկոսը[78]: Բարձր եկամուտ ունեցող երկրների համար սահմանված աղքատության գիծն օգտագործելու դեպքում Հայաստանում գրեթե բոլորը (98.1 տոկոսը) կհամարվեին աղքատ:

Գծապատկեր 5.1.

Մեկ շնչի հաշվով աղքատության միջազգային գծից ցածր սպառմամբ բնակչության տոկոսը. 2019 թ.



Աղբյուրը. Հիմք է ընդունվել 2019 թվականի ՏՏԿԱՀ-ի և Համաշխարհային բանկի բաց տվյալների վերլուծությունը:
Ծանոթագրություն. Գծապատկերի աջ կողմում ներկայացված արժեքները ՀՀ դրամով

[77] Mkandawire (2005):
[78] Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համար աղքատության միջին գիծը գնողունակության համարժեքության (ԳՀ) առումով մեկ շնչի հաշվով օրական կազմում է 5.50 ԱՄՆ դոլար:

արտահայտված անվանական արժեքներ են:
Իրականում մարդկանց եկամուտը (ինչպես նաև համարժեք սպառումը) չափազանց անկայուն է այն պատճառով, որ տնային տնտեսությունները բախվում են ռիսկերի և մարտահրավերների կամ արձագանքում են ի հայտ եկած հնարավորություններին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տնային տնտեսությունների սպառման քվինտիլը, որպես կանոն, փոփոխվում է կարճ ժամանակահատվածում[79]: Հետևաբար Հայաստանում «աղքատություն» ընդհանրացված հասկացությունը՝ անկայուն եկամտի հետ զուգակցված, նշանակում է, որ փաստացի գոյություն չունի «աղքատ» անձանց կայուն խումբ: Թերևս առավել նպատակահարմար է աղքատությունը դիտարկել որպես մշտապես առկա ռիսկ, որին բախվում է ցանկացած ոք կյանքի տարբեր փուլերում, երբ փոխվում են հանգամանքները: Դա նաև ենթադրում է, որ աղքատության թիրախավորման որևէ բանաձև և մարդահամար համընթաց չեն լինի արագ և մշտապես փոփոխվող իրականությանը: Ավելին՝ ուսումնասիրությունները պարզել են, որ Հայաստանի ԸԿԲՆ-ում, որը սահմանվել է ընտանիքի անապահովության գնահատման մեթոդով (ԸԱԳՄ), առկա են 49 տոկոս կազմող բացառման սխալներ[80]:

Ինչպես երևում է 5.2 գծապատկերից, Հայաստանում երեխաները, այլ տարիքային խմբերի համեմատ, համարվում են ավելի աղքատ: Ըստ 2019 թվականի ՏՏՀԱԿ-ի տվյալների՝ աղքատության ազգային վերին գծից ցածր եղել և «աղքատ» համարվել է երեխաների մոտ 51.7 տոկոսը (աղջիկների 51.9 տոկոսը և տղաների 51.4 տոկոսը)՝ աշխատունակ տարիքի անձանց 42.3 տոկոսի (կանանց 42.8 տոկոսը և տղամարդկանց 41.8 տոկոսը) և կենսաթոշակային տարիքից բարձր անձանց 39.5 տոկոսի (կանանց 38.7 տոկոսը և տղամարդկանց 40.6 տոկոսը) համեմատ: Համանման ձևով, երեխաների 2.5 տոկոսը (աղջիկների 3.0 տոկոսը և տղաների 2.0 տոկոսը) եղել է աղքատության ազգային պարենային գծից ցածր (համարվել է «ծայրահեղ աղքատ») և զգալիորեն վատ վիճակում, քան մյուս տարիքային խմբերը: Հետևաբար սոցիալական պաշտպանության միջոցով երեխաների բարեկեցության ապահովումը լուրջ մտահոգություններ է առաջացնում:

79 Knox-Vydmanov (2014):
80 Kidd and Athias (2020):

Գծապատկեր 5.2.

Աղքատության պայմաններում ապրող բնակչության ցուցանիշները (ըստ տարբեր ազգային չափումների)՝ ըստ ժողովրդագրական տարիքային խմբերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԳԱՀ 2019:

Աղքատության ազդեցությունը երեխաների վրա անհամաչափ է՝ պայմանավորված կյանքի փուլի խոցելիության մակարդակով, քանի որ նրանք կախում ունեն տնային տնտեսության եկամտի, հնարավորությունների հասանելիության և սոցիալական ներառման բարդ համակցությունից: Երեխաները, որոնք մեծանում են աղքատ միջավայրում, հաճախ չեն ունենում սնունդ, սանիտարական պայմաններ, կացարան և կրթություն, որոնք նրանց անհրաժեշտ են գոյատևելու և բարգավաճելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկության աղքատությունն անդրադառնում է անմիջապես երեխաների վրա, դրա հետևանքներն արտացոլվում են հասարակության լայն շերտերի և տնտեսության վրա, երբ նրանք դառնում են երիտասարդ սերունդ: Մանկական աղքատությունը թողնում է ընդհանուր և երկարաժամկետ ազդեցություն. մանկական տարիքում ներուժի սահմանափակման դեպքում չափահաս տարիքում արտադրողականության մակարդակը նվազում է, և կրճատվում է ազգի տաղանդների թիվը, որի հետևանքը ցածր եկամուտները և տնտեսական աճի նվազումն են[81]: Ավելին՝ գենդերային անհավասարությունը խորապես արմատավորված է Հայաստանում և դրսևորվում է անձի ծննդյան օրվանից: Ունենալով, ըստ հաշվարկների, գրեթե 3 միլիոն բնակչություն, որի կեսից ավելին (53 տոկոս) կանայք են, Հայաստանում առկա է ցայտուն արտահայտված ժողովրդագրական անհավասարակշռություն, որը որոշ դեպքերում կարող է դիտվել որպես խոր արմատացած գենդերային անհավասարության ցուցիչ[82]: Տղամարդկանց թիվը, որպես կանոն, գերազանցում է կանանց թիվն ավելի փոքր տարիքային խմբում (0-24 տարեկան), մինչդեռ 65 և բարձր տարիքի բնակչության 60 տոկոսից ավելին կանայք են[83]: Ավելի ցածր տարիքային խմբերի միջև առկա սեռերի հարաբերակցության փոքր-

[81] ԱՄԿ և ՅՈՒՆԻՍԵՖ (2019):
[82] Sinha et al. (2016); World Bank (n.d.), last updated 19 March 2021:
[83] World Bank (2020c);

ինչ շեղումները կարող են բացատրվել ծննդյան պահից սեռերի հարաբերակցության բարձր գործակցով (որը, համաձայն ուսումնասիրության հիմնական արդյունքների, ուղղակիորեն կապված է սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության հետ, ինչը խոր արմատացած նորմերի հետևանք է, ըստ որոնց՝ նախապատվությունը տրվում է տղա երեխաներին)՝ զուգակցված ծնելիության գործակցի նվազմամբ[84]: Ավելի բարձր տարիքային խմբերի միջև առկա սեռային անհավասարակշռությունը բացատրվում է այն հանգամանքով, որ տղամարդկանց շրջանում կյանքի միջին տևողությունն ավելի կարճ է՝ զուգորդված տղամարդկանց միգրացիայի բարձր մակարդակով[85]: Այս ժողովրդագրական պատկերի հնարավոր հետևանքները հետևյալն են. կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունների մասնաբաժինն ավելանում է, կանայք տարեց հասակում ավելի խոցելի են դառնում աղքատության նկատմամբ, և վատթարանում է ծնելիության գործակիցը, քանի որ այսօր «աղջիկների չծնվելու» հետևանքը (տղա երեխաներին տրվող նախապատվության հետևանքով) ապագայում վերարտադրողական տարիքի կանանց փոքր թիվն է[86]:

Տարրական և միջին դպրոցներում համախառն ընդգրկվածության մակարդակը բարձր է թե՛ տղաների և թե՛ աղջիկների շրջանում (88.9 տոկոս՝ տարրական և 84.6՝ միջին դպրոցներում)՝ չնայած այն հանգամանքին, որ դպրոցում աշակերտների աննշան մեծամասնությունը կազմում են տղաները՝ արտացոլելով ավելի փոքր տարիքի բնակչության շրջանում առկա սեռերի անհամաչափ հարաբերակցությունը[87]: Գենդերային անհամամասնություններն առավել ակնհայտ են համալսարանական մակարդակում, որտեղ երիտասարդ կանանց ընդգրկվածության մակարդակը զգալիորեն ավելի բարձր է, քան տղամարդկանցը: Կանանց և տղամարդկանց մասնագիտացման առարկաները և ուղղությունները, որպես կանոն, տարբեր են (հասարակագիտություն, կրթություն և առողջապահություն՝ կանանց շրջանում և տեխնիկական ուղղություններ՝ տղամարդկանց շրջանում)՝ հիմք ստեղծելով աշխատաշուկայում նկատվող՝ գենդերային հիմքով ոլորտային, աշխատանքային և վարձատրության հիմնական տարբերությունների համար[88]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հայաստանում փորձ է արվել նվազեցնելու աղքատությունը սոցիալական պաշտպանության միջոցով՝ նպատակ ունենալով երեխաների համար բարելավելու հեռանկարները՝ ռեսուրսները ծայրահեղ աղքատ և սոցիալապես ամենաանապահով երեխաների վրա կենտրոնացնելու միջոցով: Սակայն համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված համապարփակ, ներառական սխեմաները աղքատության նվազեցման առումով տարօրինակ ձևով առավել արդյունավետ են, քան, այսպես կոչված, «աղքատության դեմ պայքարի» ծրագրերը: Օրինակ՝ Վրաստանում մանկական աղքատության՝ ընդհանուր առմամբ 29 տոկոսով կրճատման գրեթե 70 տոկոսը եղել է ծերության կենսաթոշակներին ուղղված սոցիալական վճարների հաշվին, իսկ թիրախավորված սոցիալական աջակցության առաջատար ծրագրի հաշվին՝ միայն 20 տոկոսը[89]: Վերջինիս պատճառն այն է, որ ծերության կենսաթոշակները, ի տարբերություն աղքատության թիրախավորմանն

[84] Abrahamian (2020), Ritchie (2019), Sinha et al. (2016): 2019 թվականին ծննդյան պահից սեռերի հարաբերակցությունը (հինգ տարվա ժամանակահատվածում ծնված տղաների և աղջիկների միջին հարաբերակցությունը) կազմել է 1.11, որը բարձր է համաշխարհային մակարդակում «ակնկալվող» 1.05 սահմանային ցուցանիշից՝ համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ):

[85] Sinha et al. (2016):

[86] Նույն տեղում: Համաձայն Հայաստանում իրականացված Ժողովրդագրության և առողջապահության հարցերի հետազոտության (2015-2016 թվական) տվյալների՝ 2016 թվականին տնային տնտեսությունների 33.2 տոկոսը գլխավորել են կանայք: 2005 և 2010 թվականների համեմատ մասնաբաժինը թվում է կայուն, սակայն շատ ավելի բարձր է, քան 2000 թվականի մասնաբաժինը (28.9 տոկոս):

[87] UNESCO (n.d.).

[88] Sinha et al. (2016).

[89] Kidd and Gelders (2015, p. 31).

ուղղված սոցիալական աջակցության, անուղղակիորեն հասանելի են դառնում շատ ավելի մեծ թվով մարդկանց: Այս երևույթը նկատելի է նաև Հայաստանում, որտեղ երեխաների ավելի քան 40 տոկոսն ապրում է ծերության կամ հաշմանդամության կենսաթոշակ ստացող անձի հետ (գրեթե մեկ երրորդը՝ ծերության կենսաթոշակ ստացողի, և 10-ից 1-ը՝ հաշմանդամության կենսաթոշակ ստացողի հետ), ինչը զգալիորեն ավելի բարձր է, քան այնպիսի տնային տնտեսությունում բնակվող երեխաների մասնաբաժինը, որի առնվազն մեկ անդամը ստանում է ԸԿԲՆ (23.9 տոկոս), ինչպես ներկայացված է 5.1 աղյուսակում: Համանման ձևով, աշխատունակ տարիքի չափահասների միայն 10.4 տոկոսն է բնակվում ԸԿԲՆ ստացող տնային տնտեսություններում, մինչդեռ մոտ 30 տոկոսը բնակվում է ծերության կենսաթոշակ ստացողի հետ:

Աղյուսակ 5.1.

Որևէ տեսակի նպաստ ստացող առնվազն մեկ անդամ ունեցող տնային տնտեսությունում ապրող բնակչության ցուցանիշները՝ ըստ տարիքային խմբերի. 2019 թ.

	Աղքատության հաղթահարմանն ուղղված ԸԿԲՆ	Տարիքային (պետական) կենսաթոշակ	Ծերության նպաստ	Հաշմանդամության (պետական) կենսաթոշակ	Հաշմանդա-մության նպաստ
0-15 տարեկան երեխաներ	23.9%	30.7%	0.9%	3.4%	6.8%
Աշխատունակ տարիքի՝ 16+ տարեկան չափահասներ	10.4%	29.8%	0.7%	3.2%	7.1%
Կենսաթոշակային տարիքից բարձր անձինք	11.3%	93.8%	1.9%	4.1%	3.8%
Ընդամենը	13.4%	41.7%	0.9%	3.4%	6.5%

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Այս առավել լայն հասանելիությունը, որպես կանոն, կենսափուլային մոտեցմամբ ստեղծված սխեմաներով կատարված և դրամական հատկացումների բարձր արժեքների հետ զուգակցված, այս սխեմաները դարձնում են աղքատության նվազեցման էլ ավելի հզոր խթանիչներ: 8.1 բաժնում առավել մանրամասն ուսումնասիրվում է Հայաստանում գործող համակարգի կատարողականը աղքատության և անհավասարության նկատմամբ:

5.1.2
Երեխաների համար նախատեսված սոցիալական պաշտպանության առանցքային սխեմաները

Կառավարությունը, ԸԿԲՆ ծրագրի շրջանակում ներդնելով երեխաների կարիքների համար նախատեսված նպաստը՝ Ընտանեկան նպաստը (ԸՆ), պատրաստակամորեն ընդունել է երեխայի շահերի վրա հիմնված սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը։

2017 թվականին Կառավարությունն ընդունել է «Երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը»։ Ծրագրի նպատակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանության ապահովումն է։ Ինչպես նշվել է ծրագրում, Հայաստանը չունի երեխայի իրավունքների պաշտպանության կենտրոնացված մարմին և մոտեցում։ Բազմաթիվ գերատեսչություններ և պետական մարմիններ տրամադրում են ծառայություններ, իրականացնում են քաղաքականության ուղղորդում առանձին-առանձին, և գերակշիռ դեպքերում ուշադրության կենտրոնում այն երեխաներն են, որոնց համար պետությունից պահանջվում է հատուկ պաշտպանության ապահովում։ Ներկա պահին գոյություն չունի որևէ իրավական կամ քաղաքական պարտավորություն, որով մասնավորապես ճանաչվում է երեխայի՝ եկամտային ապահովման համընդհանուր իրավունքը։ Այդ իսկ պատճառով շատ խոցելի երեխաներ չեն օգտվում ծածկույթից։

Սակայն Հայաստանը երեխաներին տրամադրում է հաշմանդամության համընդհանուր նպաստներ։ Ավելին՝ 2019 թվականի դրությամբ նպաստի չափը սահմանվել է ամսական 26,500 ՀՀ դրամ ամրագրված դրույքաչափով՝ անկախ երեխայի հաշմանդամության խմբից։ Այն փաստը, որ վերոնշյալը, որպես կանոն, միևնույն մակարդակի վրա է այն նպաստների հետ, ինչպիսին է՝ սոցիալական կենսաթոշակը, թույլ է տալիս ենթադրել, որ նպաստը նախատեսված է ոչ միայն երեխայի դաստիարակման հավելյալ ծախսերը փոխհատուցելու, այլև փաստացի որպես եկամտին փոխարինող միջոց ծառայելու համար։ Այս հարցը բարձրացվում է նաև ստորև՝ համարժեքության հարցի քննարկման շրջանակում։

Երեխաները նաև իրավունք ունեն ստանալու կերակրողին կորցնելու դեպքերի համար նախատեսված պաշտպանություն, եթե մահանում է կերակրողներից մեկը կամ երկուսը։ Եթե կերակրողը չի ունեցել հատկացումների կատարմամբ պայմանավորված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք, երեխաները ձեռք են բերում հատկացումների կատարմամբ չպայմանավորված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք՝ ամսական 26,500 ՀՀ դրամի չափով[90]։ Այս կառուցվածքը բազմաստիճան նախագծի օրինակ է, երբ հատկացումների կատարմամբ պայմանավորված և դրանցով չպայմանավորված նպաստները միասնաբար ապահովում են համընդհանուր իրավական պաշտպանություն. սկզբունք, որն այժմ չի տարածվում Հայաստանում գործող հիմնական երեխայակենտրոն նպաստի՝ ԸՆ-ի վրա։

Հայաստանում յուրաքանչյուր երեխայի համար տրվող սոցիալական պաշտպանության՝ եկամտի ձևով հիմնական դրամական հատկացումների թվին են դասվում՝

- երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
- ընտանիքի անապահովության գնահատման համակարգով տրվող ընտանեկան նպաստը, որը վճարվում է ԸԿԲՆ-ի շրջանակում,
- հաշմանդամության (սոցիալական) նպաստը,

[90] Գումարի այս չափը նախատեսված է մեկ կերակրողին կորցնելու դեպքի համար։ Երկու կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը կազմում է 90,000 ՀՀ դրամ։

- կերակրողին կորցնելու դեպքում (սոցիալական) նպաստը և (պետական) կենսաթոշակը:

Երեխաներին ուղղված՝ կենսափուլային մոտեցմամբ տրամադրվող նպաստների՝ օրենքով սահմանված հիմնական բնութագրիչներն ամփոփված են 5.2 աղյուսակում: Ստորև ներկայացված բաժիններում գնահատվում է, թե որքանով են երեխաներն իրավական դաշտում ապահովված, որքան արդյունավետ են գործող ծրագրերը երեխաներին հասանելիության առումով, և որքանով են դրանք համապատասխանում ազգային և միջազգային տարբեր ստանդարտներին:

Աղյուսակ 5.2.

Հայաստանում երեխաների՝ կենսափուլային մոտեցմամբ կազմված սոցիալական ապահովության սխեմաները

Երեխաների համար նախատեսված սխեմաների՝ օրենքով սահմանված հիմնական բնութագրիչները							
Սխեմա	Սխեմայի տեսակ	Նորմատիվ իրավական դաշտ	Իրավական ապահովմամբ երաշխավորված բնակչություն	Ֆինանսավորման մեխանիզմ	Իրավունք ձեռք բերելու պայմաններ	Նպաստների նկարագրություն	Վարչական պատասխանատու մարմին
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	Համընդհանուր (ընտանիքի անապահովության գնահատման համակարգով չտրվող, հատկացումների կատարմամբ չպայմանավորված)	«Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական) «Երեխայի ծննդյան նպաստի չափը սահմանելու մասին» թիվ 275-Ն որոշում (2014 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	Ծնունդը պետք պաշտոնապես գրանցված լինի	300,000 ՀՀ դրամ (560 ԱՄՆ դոլար)՝ առաջին և երկրորդ երեխաների համար 1 մլն ՀՀ դրամ (1,875 ԱՄՆ դոլար)՝ երրորդ և չորրորդ երեխաների համար 1.5 մլն ՀՀ դրամ (2,800 ԱՄՆ դոլար)՝ հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար	ԱՍՀՆ/ՍԱՎ
Ընտանեկան նպաստ (ԸՆ)	Ընտանիքի անապահովության գնահատման համակարգով տրվող, հատկացումների կատարմամբ չպայմանավորված	«Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական) «Սոցիալական աջակցության մասին» օրենք (2014 թվական) «Ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության չափերը սահմանելու մասին» թիվ 50-Ն որոշում (2019 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	Պետք է հաշվառված լինի ԸՆ-ի համակարգում, և տրված անապահովության միավորը պետք է լինի 30 սահմանային միավորից բարձր	Յուրաքանչյուր ընտանիքին ամսական 31,350 ՀՀ դրամ (միջին արժեք) Հաշվարկվում է բազային նպաստին (ամսական 18,000 ՀՀ դրամ)՝ գումարած յուրաքանչյուր երեխային տրվող հավելում[91] Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում	ԱՍՀՆ/ՄԾՏԿ

[91] Հավելման արժեքը փոփոխվում է ըստ անապահովության միավորի և բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի դեպքում: Մանրամասն նկարագրության համար տե՛ս 5.3.2 բաժինը:

Երեխաների համար նախատեսված սխեմաների՝ օրենքով սահմանված հիմնական բնութագրիչները							
Սխեմա	Սխեմայի տեսակ	Նորմատիվ իրավական դաշտ	Իրավական ապահովմամբ երաշխավորված բնակչություն	Ֆինանս-ավորման մեխանիզմ	Իրավունք ձեռք բերելու պայմաններ	Նպաստների նկարագրություն	Վարչական պատաս-խանատու մարմին
Հաշման-դամության (սոցիալական) նպաստ	Համընդհանուր (ընտանիքի անապահովության գնահատման համակարգով չտրվող, հատկացումների կատարմամբ չպայմանավորված)	«Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական) «Սոցիալական աջակցության մասին» օրենք (2014 թվական) «Սոցիալական նպաստների և թաղման նպաստի չափերը սահմանելու մասին» թիվ 1489-Ն որոշում (2013 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	0-18 տարեկան երեխաներ, որոնք պաշտոնապես ճանաչվել են հաշմանդամ (հաստատված ԲՍՓՀ-ի կողմից)	Յուրաքանչյուր երեխայի համար ամսական 26,500 ՀՀ դրամ (50 ԱՄՆ դոլար) Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում	ԱՍՀՆ/ՍԱՎ
Կերակրողին կորցնելու դեպքում (սոցիալական) նպաստ	Համընդհանուր (ընտանիքի անապահովության գնահատման համակարգով չտրվող, հատկացումների կատարմամբ չպայմանավորված)	«Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական) «Սոցիալական աջակցության մասին» օրենք (2014 թվական) «Սոցիալական նպաստների և թաղման նպաստի չափերը սահմանելու մասին» թիվ 1489-Ն որոշում (2013 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	0-18 տարեկան երեխաները կամ առկա ուսուցմամբ սովորող՝ մինչև 23 տարեկան ուսանողները, որոնք կորցրել են կերակրողին, եթե կերակրողը չի ունեցել պետական (աշխատանքային) կենսաթոշակի կամ զինվորական կենսաթոշակի իրավունք	Յուրաքանչյուր երեխայի համար ամսական 26,500 ՀՀ դրամ (50 ԱՄՆ դոլար)՝ մեկ կերակրողին կորցնելու դեպքում Յուրաքանչյուր երեխայի համար ամսական 90,000 ՀՀ դրամ (170 ԱՄՆ դոլար)՝ երկու կերակրողին կորցնելու դեպքում	ԱՍՀՆ/ՍԱՎ
Կերակրողին կորցնելու դեպքում (պետական) կենսաթոշակ	Հատկացումների կատարմամբ պայմանավորված	ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թվական) «Պետական կենսաթոշակների մասին» օրենք (2010 թվական) «Հիմնական կենսաթոշակի, նվազագույն կենսաթոշակի և թաղման նպաստի մասին» թիվ 1734-Ն որոշում (2011 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	0-18 տարեկան երեխաները, որոնք կորցրել են կերակրողին, եթե կերակրողը ունեցել է պետական (աշխատանքային) կենսաթոշակի կամ զինվորական կենսաթոշակի իրավունք	Յուրաքանչյուր երեխայի համար ամսական 28,933 ՀՀ դրամ (55 ԱՄՆ դոլար)՝ մեկ կերակրողին կորցնելու դեպքում (միջին արժեք) Յուրաքանչյուր երեխայի համար ամսական 91,178 ՀՀ դրամ (170 ԱՄՆ դոլար)՝ երկու կերակրողին կորցնելու դեպքում (միջին արժեք) Հաշվարկվում է հիմնական կենսաթոշակին գումարելով աշխատանքային ստաժի արժեքի ու անձնական գործակցի բազմապատիկը[92]	ԱՍՀՆ/ՍԱՎ

[92] Հիմնական կենսաթոշակը կազմում է 18,000 ՀՀ դրամ (35 ԱՄՆ դոլար)։ Աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը առաջին 10 տարվա համար կազմում է 950 ՀՀ դրամ (2 ԱՄՆ դոլար) և 500 ՀՀ դրամ (1 ԱՄՆ դոլար)՝ յուրաքանչյուր հաջորդ տարվա համար։ Անձնական գործակիցը 0.1 է՝ մինչև 10 տարի (ներառյալ) տևողությամբ զինվորական ծառայության դեպքում, 0.01՝ 11-ից մինչև 40 տարի տևողությամբ զինվորական ծառայության դեպքում, և 0.02՝ 40 տարվանից ավելի տևողությամբ զինվորական ծառայության դեպքում։

5.2

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԸ

Սոցիալական պաշտպանության իրավունքը տարածվում է բոլորի վրա կյանքի յուրաքանչյուր փուլում և հստակ շարադրված է ԱՄԿ-ի կոնվենցիաներում և առաջարկություններում, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, որը Հայաստանը ստորագրել է: Այնուհանդերձ, Հայաստանում գոյություն չունի երեխայի համընդհանուր նպաստ: Երեխաները կարող են ստանալ հատկացումների կատարմամբ չպայմանավորված նպաստներ, եթե նրանց ընտանիքների եկամուտը որոշակի շեմից ցածր է, կամ եթե նրանք կորցրել են ծնողներին կամ դարձել են հաշմանդամ:

Ընտանեկան նպաստ (ԸՆ)

ԸԿԲՆ-ն իր մեծությամբ երկրորդ ծրագիրն է (պետական կենսաթոշակներից հետո), որն ընդգրկված է Հայաստանի սոցիալական պաշտպանության բյուջեի կազմում, և որը համարվում է «սոցիալական ապահովության ցանցի» ֆորմալ ծրագիր: Դրա հիմքում ընկած է նախկին «Փարոս» համակարգը, որը ստեղծվել է 1994 թվականին՝ մարդասիրական օգնություն տրամադրելիս հասցեականություն և սոցիալական արդարություն ապահովելու նպատակով: Մեզ այժմ հայտնի ԸԿԲՆ-ն կյանքի է կոչվել 2014 թվականին և բաժանվում է երկու խմբի՝ նպաստներ, որոնք տրամադրվում են երեխա ունեցող ընտանիքներին (ԸՆ), և նպաստներ, որոնք տրամադրվում են երեխա չունեցող ընտանիքներին (ՄՆ): ԸՆ բաղադրիչը յուրաքանչյուր երեխայի համար ամսական տրվող 5,500-ից մինչև 8,000 ՀՀ դրամի չափով դրամական հատկացում է[93], որը վճարվում է ամսական 18,000 ՀՀ դրամ կազմող՝ տնային տնտեսությանը կատարվող բազային հատկացմանը գումարվող հավելման ձևով: 5.3 աղյուսակում ամփոփ ներկայացված են ԸԿԲՆ-ի պարամետրերը և հիմնական բնութագրիչները:

Աղյուսակ 5.3.

Աղքատության թիրախավորմանն ուղղված ԸԿԲՆ-ի ամփոփ պարամետրերը

ԸԿԲՆ նպաստ	Թիրախային բնակչություն	Նպատակ	Իրավունք ձեռք բերելու պայմաններ	Նպաստի չափը
Ընտանեկան նպաստ (ԸՆ)	Աղքատ (շատ աղքատ) և ծայրահեղ աղքատ ընտանիքներ (աղքատության ազգային ստորին գծից ցածր գտնվող ընտանիքներ), որոնք ունեն 0-18 տարեկան երեխաներ	Օժանդակել սոցիալապես անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը և կանխել կենսամակարդակի վատթարացումը (ինչպես սահմանված է «Պետական նպաստների մասին» օրենքում (2013 թվական)):	Պետք է հաշվառված լինի ԸՆ-ի համակարգում, և տրված անապահովության միավորը պետք է լինի 30 սահմանային միավորից բարձր	Յուրաքանչյուր տնային տնտեսության համար ամսական 31,350 ՀՀ դրամ (միջին արժեք) Հաշվարկվում է բազային նպաստին (ամսական 18,000 ՀՀ դրամ) գումարելով յուրաքանչյուր երեխային տրվող հավելումը[94] Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում

[93] Երեխաների համար նախատեսված դրամական հատկացումների համարժեքության հարցի քննարկման համար տե՛ս 5.3.2 բաժինը:
[94] Տե՛ս 5.3.2 բաժինը՝ լրացուցիչ հավելման պարամետրերի մանրամասն նկարագրության համար, որը տարբերվում է ըստ անապահովության միավորի և բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի դեպքում:

ԸԿԲՆ նպաստ	Թիրախային բնակչություն	Նպատակ	Իրավունք ձեռք բերելու պայմաններ	Նպաստի չափը
Սոցիալական նպաստ (ՍՆ)	Աղքատ (շատ աղքատ) և ծայրահեղ աղքատ ընտանիքներ (աղքատության ազգային ստորին գծից ցածր գտնվող ընտանիքներ), որոնք չունեն երեխաներ	Նույնն է, ինչ ԸՆ-ի դեպքում	Պետք է հաշվառված լինի ԸՆ-ի համակարգում, և տրված անապահովության միավորը պետք է լինի 30 սահմանային միավորից բարձր Տնային տնտեսությունում չպետք է լինի մինչև 18 տարեկան որևէ երեխա	Յուրաքանչյուր տնային տնտեսության համար ամսական 18,000 ՀՀ դրամ (միջին արժեք) Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում
Եռամսյակային հրատապ օգնություն (ՀՕ)	Կյանքի դժվար իրավիճակում հայտնված ընտանիքներ	Քայլեր ձեռնարկել ընտանիքի՝ անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակի ուղղությամբ	Պետք է հաշվառված լինի ԸՆ-ի համակարգում, սակայն չպետք է ունենա ԸՆ-ի կամ ՍՆ-ի իրավունք Տրված անապահովության միավորը պետք է լինի 0 սահմանային միավորից բարձր և պետք է հայտնված լինի անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում (օրինակ՝ արտակարգ իրավիճակներ և (կամ) կարճաժամկետ ֆինանսական խնդիրներ)	Յուրաքանչյուր տնային տնտեսության համար ամսական 18,000 ՀՀ դրամ (միջին արժեք) Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում

Հայաստանը տարածաշրջանում առաջին երկրներից մեկն էր, որը 1998 թվականին ներդրել է ընտանիքի անապահովության գնահատման անուղղակի մեթոդի կիրառմամբ տրվող նպաստը: ԸԿԲՆ-ն նախկինում վարած քաղաքականությունների բարելավված տարբերակն է: ԸԿԲՆ-ն կարգավորվում է «Սոցիալական աջակցության մասին» օրենքով, «Պետական բյուջեի մասին» օրենքով և, մասնավորապես, «Պետական նպաստների մասին» օրենքով (2013 թվական), որում ընդգծվում է անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելու և դրանց վատթարացումը կանխելու համար նրանց աջակցություն ցուցաբերելու նպատակը: Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգը (ԸՍԳՀ) ներառում է ընտանիքի անապահովության գնահատման և, հետևաբար, ԸԿԲՆ-ով նպաստներ ստանալու իրավունքի սահմանման կարգը: Անապահովության մակարդակը գնահատվում է՝ հաշվի առնելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամուտը, ընտանիքի կազմը և սոցիալական վիճակը և այլ բնութագրիչներ: ԸԿԲՆ-ով նախատեսվում են հետևյալ նպաստները.

- Ընտանեկան նպաստ (ԸՆ)՝ մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող անապահով տնային տնտեսությունների համար:
- Սոցիալական նպաստ (ՍՆ)՝ երեխաներ չունեցող անապահով տնային տնտեսությունների համար:
- Միանվագ հրատապ օգնություն՝ ԸՆ-ի կամ ՍՆ-ի շահառուների համար.
  - Երեխայի ծննդյան դեպքում օգնություն. վճարվում է՝ ի հավելումն վերոնշյալ նպաստների, յուրաքանչյուր երեխայի ծննդյան դեպքում:
  - Դպրոց հաճախելու դեպքում օգնություն. տրամադրվում է, երբ երեխան ընդունվում է առաջին դասարան:
  - Թաղման նպաստ. ընտանիքի անդամի մահվան դեպքում:
- Եռամսյակային ՀՕ (տրամադրվում է այն ընտանիքներին, որոնք չունեն ԸՆ-ի կամ ՍՆ-ի իրավունք, սակայն նրանց անապահովության միավորը 0-ից բարձր է)[95]:

Համաձայն «Պետական նպաստների մասին» օրենքի (2013 թվական)՝ ԸՆ ստանալու իրավական ապահովմամբ երաշխավորված տնային տնտեսությունների թվին են դասվում մինչև 18

[95] Կառավարությունն այժմ դիտարկում է այս բաղադրիչը վերացնելու հնարավորությունը:

տարեկան անդամ ունեցող այն ընտանիքները, որոնք բավարարում են ԸՍԳՀ-ի համարժեք սահմանային միավորը, որը որոշվում է ընտանիքի անապահովության գնահատման անուղղակի մեթոդի բարդ բանաձևով: Բազային ընտանեկան նպաստը վճարվում է՝ ավելացնելով յուրաքանչյուր երեխային տրվող հավելումը: ԸՆ-ի երկարաժամկետ նպատակն է հասանելի լինել բոլոր «շատ աղքատ» երեխաներին: Հետևաբար կարելի է ողջամտորեն ենթադրել, որ թիրախային շահառու են համարվում բոլոր երեխաները, որոնք աղքատության պարենային գծից վերև և աղքատության ստորին գծից ցածր են: Համաձայն 2019 թվականի ՏՏԿԱՀ-ի (Գծապատկեր 5.2)՝ սա կազմում է Հայաստանում երեխաների 11.6 տոկոսը:

Երեխայի ծննդյան (միանվագ) նպաստ

Օրենքով թույլատրվում է ԸԿԲՆ-ի՝ այլ հասանելի նպաստների, մասնավորապես երեխայի ծննդյան միանվագ նպաստի հետ համակցումը, որը համընդհանուր իրավունք է և վճարվում է նորածին ունեցող յուրաքանչյուր ընտանիքի՝ անկախ այլ նպաստների ծրագրերին նրանց մասնակցությունից:

«Պետական նպաստների մասին» օրենքով (2013 թվական) սահմանվում է բոլոր ծնողների, որդեգրողների կամ խնամակալների՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը՝ ծնված յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ նրանց աղքատության մակարդակից կամ զբաղվածության կարգավիճակից: Միանվագ նպաստի չափը տարբերվում է ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի՝ հաշվի առնելով դիմողի մյուս երեխաների թիվը: Առաջին և երկրորդ երեխաների համար նպաստի չափը կազմում է 300,000 ՀՀ դրամ: Երրորդ և չորրորդ երեխաների համար նպաստի չափը կտրուկ ավելանում է՝ դառնալով 1 միլիոն ՀՀ դրամ: Հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար նպաստի չափը կազմում է 1.5 միլիոն ՀՀ դրամ: Համեմատության համար պետք է նշել, որ սա մոտ 10, 36 և 55 անգամ գերազանցում է ծերության ամսական նպաստը (կամ ծերության նպաստի 1, 2 կամ 3.7 տարվա գումարի չափը):

Ավանդաբար երեխաների նպաստների շրջանակում ծնողներին վճարվող այս ուղղակի դրամական աջակցության առաջնային նպատակը եղել է այս կամ այն ձևով կատարված հորիզոնական վերաբաշխման միջոցով (զավակ չունեցող անձանցից դեպի ծնողներ կամ խնամատարներ) խնամատարներին հատուցել երեխաների ուղղակի ծախսերը: Այս համատեքստում երեխայի ծննդյան միանվագ նպաստը կարող է համարվել սոցիալական պաշտպանության իրական համընդհանուր նպաստ: Սակայն այս նպաստի առնչությամբ Կառավարության նշած առաջնային նպատակը ծնելիությունը խթանելն է: Այս առումով երեխայի ծննդյան միանվագ նպաստը պետք է դիտարկել որպես ժողովրդագրական քաղաքականություն: Եվ թեև երեխաների նպաստների նախագիծը կարող է նաև մշակվել այնպես, որ ապահովվի այնպիսի ժողովրդագրական քաղաքականությունների իրականացումը, ինչպիսին վերոնշյալն է, որոշ նախագծային տարրերով դրա կիրառության հնարավորությունը սահմանափակվում է երեխայի ծննդի ժամանակ հատուցում տրամադրելու շրջանակով:

Մասնավորապես, ըստ «Պետական նպաստների մասին» օրենքում սահմանված ընտանեկան դրամագլխի հասկացության, ընտանիքին արգելվում է տնօրինել նպաստի այն մասը, որը մուտքագրվել է նորածին երեխայի անվամբ բացված հաշվին: Երեխան կարող է տնօրինել այդ միջոցները 18 տարեկանը լրանալուն պես՝ հենց այն ժամանակ, երբ այլևս չկա ծնողներին երեխայի դաստիարակման համար կատարված ծախսերը հատուցելու անհրաժեշտություն: Ընտանիքներին, այնուհանդերձ, վերջերս թույլատրվել է որոշ բացառիկ դեպքերում ավելի վաղ տնօրինելու այդ միջոցները: Դրանց թվին են դասվում, օրինակ, գյուղական բնակավայրում տուն գնելը: Այս բարեփոխումների շնորհիվ ավելի ու ավելի է սահմանափակվում երեխայի ծննդյան նպաստի՝ որպես երեխաների նպաստ կիրառելու հնարավորությունը, և այն առավել ակնհայտորեն ծառայում է որպես ժողովրդագրության վարման գործիք:

Ներդիր 5.2.

Երեխաների նպաստները որպես ընտանիքին և ծնելիությանն ուղղված քաղաքականություն

Սոցիալական պաշտպանության համար որդեգրված կենսափուլային մոտեցման շրջանակում երեխաների և ընտանեկան նպաստները ամուր հիմք են այն ֆինանսական խոչընդոտները ուղղակիորեն վերացնելու համար, որոնք երեխաներին թույլ չեն տալիս իրացնել իրենց իրավունքները և ներուժը, հաղթահարել աղքատության և անապահովության արատավոր շրջանը։ Համաշխարհային մակարդակում առկա է երեխաների համար կատարվող դրամական հատկացումների ծավալների ավելացման դրական միտում[96]։ Միևնույն ժամանակ ծնելիության մակարդակի բարձրացումը վարվող քաղաքականության այն նպատակն է, որի մասին հաճախ են հայտարարություններ հնչում։ Ծնելիության ցածր մակարդակ պայմանավորող գործոններից մեկը մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքի անհամատեղելիությունն է։ Շատ կանայք վարձատրվող աշխատանքը երեխաների դաստիարակման հետ համատեղելու անկարողության հետևանքով կայացնում են քիչ թվով երեխաներ ունենալու կամ ընդհանրապես մայրանալուց հրաժարվելու որոշում։ Սա սերտորեն կապված է տնային տնտեսության վարման պարտականությունների բաշխման հարցում մշտապես առկա գենդերային անհավասարության հետ, ինչպես Հայաստանի դեպքում է։ Ծնելիության կրճատմանը նպաստող առավել արդիական գործոններից են աշխատաշուկայում տիրող անորոշությունը և անկայունությունը՝ զուգակցված բնակարանների արագ աճող գների և երեխաների դաստիարակման ավելացող ծախսերի հետ։

Այս համատեքստում աշխարհի տարբեր երկրներում և հատկապես Եվրոպայում ավելի ու ավելի մեծ ուշադրություն են դարձնում ընտանիքի քաղաքականությանը։ Բարձր եկամուտ ունեցող երկրներում, որպես կանոն, իրենց ՀՆԱ-ի 1-4 տոկոսը ներդնում են՝ աջակցելու ընտանիքներին[97]։ Համաձայն ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի իրականացրած համաշխարհային տվյալների ուսումնասիրության՝ ընտանիքի քաղաքականությունների և ծնելիության միջև կապը ներառում է հետևյալը.

- **Երեխայի լայնորեն հասանելի, մատչելի և որակյալ խնամքը,** որի մեկնարկը տրվում է երեխայի խնամքի արձակուրդի ավարտից անմիջապես հետո. խնամքի հաստատությունների բաց լինելու ժամերի համապատասխանեցումը ծնողների աշխատանքային ժամերին անփոխարինելի գործոն է ծնելիության բարձր ցուցանիշներ ապահովելու համար։
- **Երեխայի խնամքի արձակուրդն** անհրաժեշտ է երեխայի ծննդի և երեխայի ֆորմալ խնամքի փուլ մուտք գործելու միջև առկա բացը վերացնելու համար։ Առավել մեծ է հավանականությունը, որ երեխայի խնամքի արձակուրդը դրական ազդեցություն կունենա ծնելիության վրա, եթե նախատեսվի համարժեք դրամական նպաստի տրամադրում։
- **Երեխայի խնամքի պարտականությունների գենդերային հավասարության սկզբունքով բաշխումն** այն գլխավոր գործոնն է, որի ապահովումը կարող է շահագրգռել կանանց երեխաներ ունենալու՝ իրենց մասնագիտական առաջխաղացման նպատակների իրագործմանը զուգահեռ։ **Երեխայի խնամքի նպատակային արձակուրդը՝** որպես երեխայի խնամքի արձակուրդի ավելի լայն շրջանակի մաս, կարող է այս առումով արդյունավետ լինել։
- **Ընտանիքի միանվագ խրախուսումները,** ինչպես, օրինակ՝ Հայաստանում գործող երեխայի ծննդյան միանվագ նպաստն է, կարող են աննշան դրական և, որպես կանոն, կարճաժամկետ ազդեցություն ունենալ ծնելիության վրա։

[96] ԱՄԿ և ՅՈՒՆԻՍԵՖ (2019)։
[97] ՄԱԲՀ (2019)։

- **Սուբսիդավորվող և լայնորեն հասանելի արհեստական բեղմնավորման ծառայությունների տրամադրումը,** որպես կանոն, աննշան դրական ազդեցություն է ունենում ծնելիության ցուցանիշների վրա։
- Ի վերջո, դրամական հատկացումների կամ հարկային արտոնությունների ձևով **երեխաների նպաստների** տրամադրմամբ կարելի է կրճատել երեխաների դաստիարակման ուղղակի ծախսերը և, այդպիսով, բարձրացնել ծնելիության մակարդակը։

Սա նշանակում է, որ երեխաների պատշաճ նպաստները (թե՛ ծածկույթի և թե՛ արժեքի առումով) կարող են դերակատարում ունենալ ընտանիքի քաղաքականության իրականացումը խրախուսելու հարցում։ Սակայն դրանք գլուխկոտրուկի միայն մի մասնիկն են։ Քաղաքականությունները կանանց և տղամարդկանց վերարտադրողական նախապատվություններին աջակցություն ցուցաբերելու հարցում ամենաարդյունավետն են այն դեպքում, երբ դրանք բավարարում են կյանքի տարբեր փուլերում ի հայտ եկող նրանց տարբեր կարիքները։ Նախ և առաջ դրանք պետք է ապահովեն վարձատրվող աշխատանքի և երեխայի խնամքի համատեղելիությունը, սակայն դրանցով նաև անհրաժեշտ է ֆինանսական աջակցություն ցուցաբերել սահմանափակ եկամուտ ունեցող ընտանիքներին։ Պատշաճ նախագծվելու դեպքում սոցիալական պաշտպանության համակարգը կարող է ապահովել այս նպատակների իրագործումը, օրինակ՝ մշակելով երեխայի խնամքի արձակուրդի վերաբերյալ գենդերային զգայուն քաղաքականություններ և տրամադրելով երեխայի պատշաճ նպաստներ։ Վերոնշյալները, այնուամենայնիվ, պետք է կազմեն խնամքի քաղաքականությունների ավելի լայն շրջանակի մաս։ Երեխայի խնամքի հասանելիությունը միանշանակ ամենակարևոր քաղաքականությունն է՝ ուղղված ծնելիության բարձր ցուցանիշների և գենդերային հավասարությանը բնորոշ այլ նպատակների իրագործումն ապահովելուն։

Ծնելիության և ընտանիքի ոլորտում վարվող քաղաքականություններում պետք է նաև արտացոլվեն փոփոխվող ընտանիքները, ինչպես նաև ձևավորվող տնտեսական ու սոցիալական ընտանիքները։ Հայաստանում սա նշանակում է, որ պետք է արտացոլվեն տնտեսական անհավասարության աճող մակարդակը, կառուցվածքային գործազրկությունը և աշխատաշուկայում մասնակցության ցածր մակարդակը՝ փոփոխելով գենդերային նորմերը և շատ ընտանիքների համար բնակարանի ոչ մատչելի գները։ Սա ներառում է գենդերային և ընտանիքի տեսանկյունից Կառավարության քաղաքականությունների գնահատումը, օրինակ՝ վարձատրության գենդերային խզվածքի, գործազրկության նպաստների բացակայության, եկամտահարկի և գույքահարկի ռեգրեսիվ (հետադարձ) համակարգի։

Հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում (սոցիալական) նպաստ

Մուտքագրվող հարկերից ֆինանսավորվող հաշմանդամության նպաստները ևս տրամադրվում են բոլոր երեխաներին, որոնք մինչև 18 տարեկանը լրանալը ճանաչվել են հաշմանդամ՝ կազմելով բոլոր նպաստառուների մոտ 16 տոկոսը, այդ նպաստները տրամադրվում են հաշմանդամության ժամկետի ամբողջ ընթացքում։ Մեկ անձի համար (երեխա կամ չափահաս) ամսական 26,500 ՀՀ դրամ (մոտ 50 ԱՄՆ դոլար) ամրագրված դրույքաչափով նպաստը վճարվում է հաշմանդամության կարգավիճակ ունեցող յուրաքանչյուր անձի։ Հաշմանդամության կարգավիճակը հաստատում է հատուկ հանձնաժողովը՝ Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովը (ԲՍՓՀ), որը գործում է ԱՍՀՆ-ի ենթակայության ներքո։ ԲՍՓՀ-ն այն հիմնական մարմինն է, որը պատասխանատու է որոշակի ծառայություններից և նպաստներից

(ինչպես, օրինակ՝ ՀԾՓ և հաշմանդամության նպաստներ) օգտվելու իրավունքը հաստատելու, ինչպես նաև հաշմանդամ անձանց համար անհատական վերականգնողական ծրագրերի կազմման գործընթացը վերահսկելու համար: Հայաստանում հաշմանդամության կարգավիճակ շնորհվում է կենսագործունեության սահմանափակման, մասնավորապես անաշխատունակության աստիճանի գնահատմամբ: Հայաստանում երեխաների և չափահասների համար նախատեսված հաշմանդամության նպաստների իրավական և փաստացի ապահովման մանրամասն նկարագրության համար տե՛ս 6.5 բաժինը:

Մյուս նպաստները համընդհանուր հիմունքով տրամադրվում են որոշակի կատեգորիաների դասվող երեխաներին, այդ թվում՝ միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ: Երեխաները, որոնց մահացած ծնողները չեն ունեցել հատկացումների կատարմամբ պայմանավորված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք՝ համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի դրույթների, ունեն հատկացումների կատարմամբ չպայմանավորված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք՝ համաձայն «Սոցիալական աջակցության մասին» օրենքի և «Պետական նպաստների մասին» օրենքի: Հետևաբար, ինչպես վերևում նշված հաշմանդամության նպաստների դեպքում, այս խմբի իրավական ապահովումը ևս պայմանավորված է մանկահասակ բնակչության թվի համեմատ դրա չափով:

5.3

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԾԱԾԿՈՒՅԹԸ

5.3.1
Հորիզոնական ծածկույթ

Համաձայն ԱՍՀՆ/ՍԱԾ-ից ստացված վարչական տվյալների՝ 2019 թվականին ԸԿԲՆ-ով նպաստ է ստացել 91,302 ընտանիք, որոնց երկու երրորդը (61,400) ստացել է երեխաներ ունեցող ընտանիքների համար նախատեսված ԸՆ, իսկ 5,105-ը ստացել է ՄՆ: Համաձայն 2019 թվականի ՏՏԿԱՀ-ի տվյալների՝ 0-14 տարեկան բոլոր երեխաների մոտ 24 տոկոսն ապրել է այնպիսի տնային տնտեսություններում, որոնք ստացել են ԸԿԲՆ և, համապատասխանաբար, երեխայակենտրոն ԸՆ: Սակայն, ինչպես ներկայացված է 5.3 գծապատկերում, սպառման ագրեգատի ստորին դեցիլային խմբում ներառված երեխաների կեսից ավելին ներգրավված չէ ծրագրում, իսկ երկրորդ ստորին դեցիլային խմբում ներառված երեխաների գրեթե 70 տոկոսը չի ստանում այդ նպաստը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԸԿԲՆ ծրագրով ոչ միայն չի ապահովվում նախատեսված կարգով երեխաների նպաստի տրամադրումը՝ որպես քաղաքացու անկապտելի իրավունք, այլև չի իրագործվում դրա իսկ նպատակը՝ հասանելի լինել Հայաստանում սոցիալապես ամենախոցելի երեխաներին:

Գծապատկեր 5.3.

ԸԿԲՆ ծրագրով նպաստներ ստացող 0-14 տարեկան երեխաների ցուցանիշները՝ ըստ սպառման ագրեգատի դեցիլային խմբերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

2019 թվականի ՏՏԿԱՀ-ն բացահայտեց ըստ երեխաների թվի ԸԿԲՆ-ի ստացման տարբերությունները նաև Հայաստանի մարզերում՝ արտացոլելով մարզերում տիրող զգալի եկամտային անհավասարությունը, որը ներկայացված է 5.4 գծապատկերում: Օրինակ՝ Շիրակում երեխաների ավելի քան 45 տոկոսը, Լոռիում մոտ 42 տոկոսը և Գեղարքունիքում ավելի քան 39 տոկոսը ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնք ԸԿԲՆ-ի իրավունք ունենալու համար համարվում են բավականին աղքատ՝ Սյունիքում երեխաների միայն 9 տոկոսի և Երևանում միայն 11 տոկոսի համեմատ:

Գծապատկեր 5.4.

ԸԿԲՆ ստացող 0-14 տարեկան երեխաների ցուցանիշները՝ ըստ մարզերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Ավելին՝ ԸԿԲՆ ստանալու իրավունքը պայմանավորված է երեխայի տարիքով, ինչպես ներկայացված է 5.5 գծապատկերում: ԸԿԲՆ ստացող տնային տնտեսություններում բարձր տարիքի երեխաների ապրելու հավանականությունը ցածր տարիքի երեխաների համեմատ ավելի մեծ է. նպաստ ստանում է 0-4 տարեկան երեխաներ ունեցող տնտեսությունների 19.1 տոկոսը՝ 10-14 տարեկան երեխաներ ունեցող տնտեսությունների 27 տոկոսի համեմատ:

Գծապատկեր 5.5.

ԸԿԲՆ ստացող 0-14 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը՝ ըստ երեխաների տարիքային խմբերի



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

2019 թվականի ՏՏԿԱՀ-ն ցույց տվեց մի շարք այլ միտումներ՝ պայմանավորված երեխաների՝ ԸԿԲՆ-ին (և համապատասխանաբար ԸՆ-ին տրվող հավելմանը) հասանելիությամբ, այդ թվում՝

- առավել մեծ է հավանականությունը, որ նպաստ կստանան գյուղական բնակավայրերում բնակվող երեխաները. գյուղական բնակավայրերում երեխաների 31 տոկոսն է ստանում ԸԿԲՆ (և ԸՆ)՝ քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների միայն 19 տոկոսի համեմատ։
- ԸԿԲՆ ստանալու իրավունքի առումով երեխաների շրջանում առկա է աննշան գենդերային խզվածք. նպաստ ստանում է աղջիկների 22.8 տոկոսը՝ տղաների 24.9 տոկոսի համեմատ։

Բացի ԸԿԲՆ-ից՝ 2019 թվականի ՏՏԿԱՀ-ն հնարավորություն է ընձեռում ընդհանուր պատկերացում կազմելու Հայաստանում պաշտոնապես հաշմանդամ ճանաչված երեխաների փաստացի ապահովման մասին ևս։ Իրականում, չնայած երեխաների համար նախատեսված հաշմանդամության նպաստների վերաբերյալ օրենքով սահմանված համընդհանուր դրույթի առկայությանը, փաստացի ապահովման ցուցանիշները թերևս ցածր են։ Պաշտոնապես հաշմանդամ ճանաչված երեխաների միայն մոտ 60.8 տոկոսի համար է նշվել, որ ստանում են հաշմանդամության սոցիալական նպաստ, որը փոքր-ինչ բարձր է հաշմանդամ ճանաչված նպաստառու չափահասների մասնաբաժնից (51 տոկոս)։ Ինչպես երևում է 5.6 գծապատկերից, հաշմանդամության սոցիալական նպաստ ստանալու հավանականությունը պայմանավորված է երեխայի տարիքով։

Գծապատկեր 5.6.

Հաշմանդամ ճանաչված՝ հաշմանդամության սոցիալական նպաստ ստացող երեխաների ցուցանիշները՝ ըստ տարիքային խմբերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019։

5.3.2
Ուղղահայաց ծածկույթ (համարժեքություն)

Երեխաների և ընտանեկան համարժեք նպաստների սահմանման միջազգային չափորոշիչները հատկացումների արժեքների համեմատ ցածր են աշխարհի՝ դրանք իրականում տրամադրող երկրներում: Օրինակ՝ ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայում առաջարկվում է բազային դրույքաչափ՝ չափահաս անձի միջին աշխատավարձի 3 տոկոսի չափով: Սակայն միջազգային մակարդակով երեխաների նպաստների ձևով դրամական հատկացումների արժեքների ուսումնասիրությունից պարզվում է, որ երկրները սահմանում են տարբեր արժեքներ: Բարձր եկամուտ ունեցող երկրներում, որտեղ երեխաների նպաստները տրամադրվում են որպես քաղաքացու իրավունք, դրամական հատկացումները, որպես կանոն, կատարվում են յուրաքանչյուր երեխայի համար՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 3-6 տոկոսի չափով: Ավելին՝ միջին եկամուտ ունեցող երկրներում, որտեղ տրամադրվում են երեխաների՝ միջինից բարձր նպաստներ, սահմանվում են համեմատելի արժեքներ: Օրինակ՝ Մոնղոլիայում դրամական հատկացման արժեքը կազմում է 4.0 տոկոս, Հարավային Աֆրիկայում՝ 5.6 տոկոս, և Արգենտինայում՝ 6.3 տոկոս (տե՛ս Գծապատկեր 5.7):

ԸՆ-ի չափը որոշվում է հետևյալ եղանակով. բազային նպաստ վճարվում է բոլոր ընտանիքներին, որոնք նաև ստանում են հավելում ընտանիքի՝ 18 տարեկանից ցածր յուրաքանչյուր անդամի համար: Հավելման չափը կախված է ընտանիքի ընդհանուր անապահովության միավորի մեծությունից, բնակության վայրից և երեխաների թվից: Այս արժեքներն ամփոփ ներկայացված են ստորև՝ 5.4 աղյուսակում:

Աղյուսակ 5.4.

ԸՆ-ին հավելման չափը ՀՀ դրամով, 2019 թ.

	ԸՍԳՀ-ի անապահովության միավորները՝ 30.01-ից մինչև 35.00		ԸՍԳՀ-ի անապահովության միավորները՝ 35.01-ից մինչև 39.00		ԸՍԳՀ-ի անապահովության միավորները՝ 39.01 և բարձր	
	Սովորական բնակավայրեր	Բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրեր	Սովորական բնակավայրեր	Բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրեր	Սովորական բնակավայրեր	Բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրեր
Հավելում մինչև 18 տարեկան անդամի համար, ՀՀ դրամ	5,500 ՀՀ դրամ (10 ԱՄՆ դոլար)	6,000 ՀՀ դրամ (11 ԱՄՆ դոլար)	6,000 ՀՀ դրամ (11 ԱՄՆ դոլար)	6,500 ՀՀ դրամ (12 ԱՄՆ դոլար)	6,500 ՀՀ դրամ (12 ԱՄՆ դոլար)	7,000 ՀՀ դրամ (13 ԱՄՆ դոլար)
Հավելում մինչև 18 տարեկան՝ չորս և ավելի անդամի համար, ՀՀ դրամ	6,500 ՀՀ դրամ (12 ԱՄՆ դոլար)	7,000 ՀՀ դրամ (13 ԱՄՆ դոլար)	7,000 ՀՀ դրամ (13 ԱՄՆ դոլար)	7,500 ՀՀ դրամ (14 ԱՄՆ դոլար)	7,500 ՀՀ դրամ (14 ԱՄՆ դոլար)	8,000 ՀՀ դրամ (15 ԱՄՆ դոլար)

Համարժեքության առումով ԸՆ-ի ամբողջ արժեքը գնահատելու փոխարեն առավել կարևոր է գնահատել միայն հավելումների չափը, քանի որ դրանք են կազմում ԸԿԲՆ-ի սահմանմամբ տրված՝ երեխայի դաստիարակման լրացուցիչ ծախսը: Տրամադրվող նվազագույն հավելման դրամական հատկացումների արժեքը (սովորական բնակավայրի առաջին, երկրորդ և երրորդ երեխայի համար, որոնք ապրում են այնպիսի տնային տնտեսությունում, որի անապահովության միավորը կազմում է 30.01-ից մինչև 35.00) կազմում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 3.0 տոկոսը (2019 թվականին գործող գներ): Տրամադրվող առավելագույն հավելման դրամական հատկացումների արժեքը (բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի չորրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար, որոնք ապրում են այնպիսի տնային տնտեսությունում, որի անապահովության միավորը կազմում է 39.01 կամ բարձր) կազմում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 4.3 տոկոսը (2019 թվականին գործող գներ):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաների նպաստների պատշաճ արժեքի առումով գոյություն չունեն միջազգային հստակ չափորոշիչներ, նպատակահարմար է Հայաստանի փորձը համեմատել մյուս երկրների հետ, ինչպես ներկայացված է 5.7 գծապատկերում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի արդյունքները բավականին բարվոք են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հավելման նվազագույն և առավելագույն չափերը գերազանցում են բարձր եկամուտ ունեցող շատ երկրների, օրինակ՝ Նորվեգիայի (մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 1.9 տոկոսը), Շվեդիայի (1.4 տոկոս) և Միացյալ Թագավորության (3.7 տոկոս) դրամական հատկացումների արժեքները[98]: Սակայն այն զիջում է միջինից բարձր եկամուտ ունեցող որոշ երկրների, այդ թվում՝ հարևան Վրաստանին (4.6 տոկոս), Նամիբիային (5.6 տոկոս) և Ուզբեկստանին (9.2 տոկոս):

[98] Հատկանշական է, որ գենդերային և ընտանիքի բարեկեցության լավ ցուցանիշներ ապահովող՝ բարձր եկամուտ ունեցող որոշ երկրներում, ինչպիսիք են Սկանդինավյան երկրները, դրամական օգնության արժեքը համեմատաբար ցածր է և փոխհատուցվում է անվճար հանրային ծառայությունների համապարփակ փաթեթների միջոցով, որը ներառում է երեխայի խնամքը:

Գծապատկեր 5.7.

Միջին և բարձր եկամուտ ունեցող առանձին երկրներում յուրաքանչյուր երեխայի համար տրվող նպաստների արժեքների համեմատությունը, ամենավերջին տարվա հասանելի տվյալներ (մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ)



Աղբյուրը. ՏՀԶԿ-ի՝ ընտանիքի վերաբերյալ տվյալների բազա (http://www.oecd.org/els/soc/oecdfamilydatabasethefamilysupportcalculator.htm) և այլ ազգային աղբյուրներ։
Ծանոթագրություն. Հայաստանի համար արժեքները վերաբերում են 2019 թվականին։

Հատկանշական է, որ երկարաժամկետ կտրվածքով հավելումների հարաբերական արժեքները գնահատելիս պարզվում է, որ 2000 թվականին՝ ԸԿԲՆ ծրագիրը առաջին անգամ ներդնելուց ընդամենը երկու տարի անց, նպաստի չափը եղել է հարաբերականորեն ավելի մեծ (տե՛ս Գծապատկեր 5.8)։ Արդյո՞ք սա վկայում է բավականին մեծ չափով նպաստ տրամադրելու սկզբնական մտադրության մասին և արտացոլում է դրա նպատակը, դժվար է ասել։ Սակայն վերջին երկու տասնամյակում նպաստի հարաբերական արժեքի կտրուկ նվազումը կասկած է հարուցում այն առումով, թե այդպիսի ցածր արժեքը կարող էր արդյոք ապահովել այդ մտադրության իրականացումը։ Ամեն դեպքում կարող ենք եզրակացնել, որ չնայած Կառավարության կողմից պարբերաբար կատարվող փոփոխություններին՝ դրամական հատկացման ձևով երեխայի այս նպաստը համընթաց չէ տնտեսական աճին։ Որպես արդյունք՝ ավելի է կարևորվում ինդեքսավորման պատշաճ մեխանիզմների առկայությունը։

Գծապատկեր 5.8.

Ըստ սոցիալական անապահովության աստիճանի՝ ԸՆ-ին հավելումների հարաբերական արժեքի փոփոխման դինամիկան մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ. 2000-2020 թթ.



Աղբյուրը. Վարչական տվյալներ։
Ծանոթագրություն. «30.01-35.00 անապահովության միավոր՝ Բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրեր» կատեգորիան բացակայում է այն պատճառով, որ հավելման չափերը նույնն են, ինչ «35.01-39.00 անապահովության միավոր՝ Սովորական բնակավայրեր» կատեգորիայի դեպքում։ «35.01-39.00 անապահովության միավոր՝ Բարձրլեռնային և սահմանամերձ համայնքներ» կատեգորիան նույնպես բացակայում է այն պատճառով, որ հավելման չափերը նույնն են, ինչ «39.01 և բարձր» կատեգորիայի դեպքում։

5.4

ԱՄՓՈՓՈՒՄ

Երեխաների՝ աղքատության պայմաններում ապրելու հավանականությունն այլ տարիքային խմբերի համեմատ ավելի մեծ է. ըստ 2019 թվականի ՏՏԿԱՀ-ի՝ երեխաների 2.5 տոկոսը գնահատվել է աղքատության պարենային գծից ցածր՝ ի տարբերություն աշխատունակ տարիքի անձանց միայն 1.3 տոկոսի և կենսաթոշակի ու բարձր տարիքի անձանց 0.8 տոկոսի: Ընդ որում՝ «աղքատ» համարվում են ավելի շատ երեխաներ, նրանց գրեթե 51.7 տոկոսը գնահատվել է աղքատության վերին գծից ցածր: Ուստի սոցիալական պաշտպանության միջոցով նրանց բարեկեցությունն ապահովելը պետք է համարվի գերխնդիր:

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգով առաջարկվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստների համընդհանուր իրավունք, որը, սակայն, ներկայացված լինելով որպես «ընտանեկան դրամագլուխ», իրականում հասանելի չէ ընտանիքին այն ժամանակ, երբ վրա է հասնում «ցնցումը» (երեխայի ծնունդը), կամ անհրաժեշտաբար պայմանավորված չէ երեխայի ծախսերով: Երեխաների իրական նպաստները, մյուս կողմից, սահմանափակված են թիրախավորված բնակչության նեղ շրջանակով՝ ծածկույթում առաջացնելով լայն բաց: Մինչ Հայաստանում ընդհանուր առմամբ բոլոր երեխաների գրեթե երկու հինգերորդը (39 տոկոսը) ստանում է սոցիալական պաշտպանության նպաստ, միայն մոտ մեկ քառորդը (24 տոկոսը), այդ թվում՝ եկամուտների ամենաաղքատ դեցիլային խմբում ընդգրկվածների կեսից պակասն է ապրում այնպիսի տնային տնտեսությունում, որը ստանում է աղքատության թիրախավորմանն ուղղված ԸԿԲՆ: Հետևաբար երեխաներ ունեցող աղքատ ընտանիքներին ուղղված ԸՆ-ի համակարգում դեռևս ընդգրկված չեն զգալի թվով երեխաներ, որոնք այլ հանգամանքներում համարվում են խոցելի՝ ի հեճուկս Կառավարության՝ թիրախավորման համակարգը բարելավելու հանձնառության:

Դրա հետ մեկտեղ, թեև կենսափուլային մոտեցմամբ տրամադրվող մյուս նպաստները (ինչպիսիք են հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստները և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը) կարծես արդյունավետորեն հասանելի են դրանց համար դիմող անձանց (և հաշմանդամության նպաստների դեպքում՝ հաշմանդամ ճանաչված անձանց), հաշմանդամություն ունեցող երեխաների կամ կերակրողին կորցրած երեխաների իրական թվի մասին տեղեկությունների բացակայությունը թույլ չի տալիս մեզ պարզել, թե այդ նպաստներից օգտվելու իրավունք ունեցող քանի երեխա ընդգրկված չէ համակարգում իրենց իրավունքների չիմացության կամ դրանցից օգտվելու այլ խոչընդոտների պատճառով:

Ժամանակի ընթացքում ԸՆ-ին հավելման արժեքը գնահատելիս պարզվել է, որ նպաստը 1998 թվականին ներդրվելու պահից կտրուկ արժեզրկվել է: Սա կասկածի տակ է առնում նպաստի սկզբնական նպատակի իրագործելիությունը: Կարելի է եզրակացնել, որ չնայած Կառավարության կողմից պարբերաբար իրականացվող ճշգրտումներին՝ դրամական հատկացումների արժեքը համընթաց չէ Հայաստանի տնտեսության աճի տեմպին, ինչը վկայում է համապատասխան ինդեքսավորման մեխանիզմներ կիրառելու կարևորության մասին:

5.5 ադյուսակում ամփոփված է Հայաստանում կենսափուլային մոտեցմամբ տրամադրվող նպաստների միջոցով երեխաների իրավական և փաստացի ապահովումը: Հաջորդ գլխում անդրադարձ է արվում Հայաստանում աշխատունակ տարիքի անձանց սոցիալական պաշտպանության ծածկույթին:

Աղյուսակ 5.5.

Հայաստանում երեխաների իրավական և փաստացի ապահովումը՝ ամփոփ

Ապահովման բնույթը		Ընտանեկան նպաստ (ԸՆ)	Երեխայի ծննդյան (միանվագ) նպաստ	Հաշմանդամության (սոցիալական) նպաստ	Կերակրողին կորցնելու դեպքում (աշխատանքային և սոցիալական) նպաստներ
Իրավական ապահովում	Թիրախային խումբ	Մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքները, որոնք հաշվառված են ԸՆ-ի համակարգում, և որոնց տրված անապահովության միավորը 30 սահմանային միավորից բարձր է	Բոլոր նորա-ծինները	Հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաները	Բոլոր երեխաները, որոնց ծնողներից մեկը կամ երկուսը մահացել են
	Բոլոր երեխաների մասնաբաժինը	Ընտանիքների/ երեխաների իրական մասնաբաժինը անհայտ է, սակայն՝ • Բոլոր երեխաների 11.6%-ը (աղքատության պարենային գծից վերև և աղքատության ստորին գծից ներքև գտնվող երեխաներ)	Երեխաների 100%-ը	Մանկահասակ բնակչության շրջանում հաշմանդամություն ունեցող երեխաների իրական մասնաբաժինն անհայտ է, միջազգային գնահատումներով այն կազմում է մոտ 5%	Բնակչության լայն շերտերում ծնողազուրկ երեխաների իրական մասնաբաժինն անհայտ է
Փաստացի ապահովում	Հորիզոնական (բնակչության թիվը)	Երեխա ունեցող 61,400 ընտանիք Բոլոր երեխաների 23.8%-ը, սակայն՝ • Սպառման ազրեգատի ստորին դեցիլային խմբում ընդգրկված երեխաների միայն 49.2%-ը • Սպառման ազրեգատի երկրորդ ստորին դեցիլային խմբում ընդգրկված երեխաների միայն 30.8%-ը	Երեխաների անհայտ մասնա-բաժինը	Բոլոր երեխաների 0.5%-ը, սակայն՝ • Հաշմանդամ ճանաչված երեխաների 60.4%-ը • Անհայտ թվով երեխաներ, որոնց հաշմանդամությունը ճանաչված չէ	Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային նպաստ՝ բոլոր երեխաների 0.1%-ը Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստ՝ բոլոր երեխաների 0.2%-ը Անհայտ թվով երեխաներ, որոնք կորցրել են ծնողներից մեկին կամ երկուսին, սակայն չեմ դիմել նպաստներ ստանալու համար
	Ուղղահայաց (համարժեքություն/ նպաստի չափը)	Միջին	Առկա չէ	Գնահատված չէ	Գնահատված չէ

6

ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ԲԱԶԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ԾԱԾԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշխատունակ տարիքի անձինք զարգացող տնտեսության հենքն են: Սակայն նրանք կարող են ցանկացած պահի հիվանդանալ, դառնալ հաշմանդամ, կորցնել աշխատանքը կամ ընտանիք կազմելու որոշում կայացնել: Սոցիալական պաշտպանության գործուն համակարգը, որը կարող է երաշխավորել կյանքի տարբեր փուլերում ի հայտ եկող ռիսկերի նկատմամբ ապահովություն, կարող է ապահովել, որ աշխատողները ոչ միայն զերծ մնան աղքատությունից, այլև շարունակեն կենսունակ լինել: Բազմաստիճան համակարգում դա վերաբերում է հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներին՝ նախատեսված այն աշխատողների համար, որոնք կարող են լինել դրանց մասնակից, ինչպես նաև հատկացումների կատարմամբ չպայմանավորված նպաստների նվազագույն շեմերին՝ նախատեսված յուրաքանչյուր անձի համար: Հայաստանի՝ հատկացումների կատարմամբ պայմանավորված համակարգի շրջանակում իրավական ապահովումը վերաբերում է վարձատրվող աշխատողներին և, զարմանալիորեն, ինքնազբաղված անձանց: Թեև վերջիններիս փաստացի ապահովման շրջանակը սահմանափակված կլինի նրանց իրական եկամուտներով և ԱԵՀ-ի վճարմանը մասնակցության համար սահմանված շեմերով, ապահովման շրջանակն ընդլայնելու և աշխատողների այս խումբը դրանում ներառելու համար հատկացվող պետական միջոցների առկայությունը Հայաստանում գործող համակարգի ուժեղ կողմն է:

Միևնույն ժամանակ, աշխատաշուկայի առումով համակարգը կանանց և տղամարդկանց համար անհավասարաչափ է գործում: Պետական կենսաթոշակները հասանելի են միայն բավարար աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին, իսկ մյուս նպաստները, ինչպիսին է՝ երեխայի խնամքի նպատակով կատարվող դրամական հատկացումները, տրամադրվում են միայն աշխատողներին: Իրավական ապահովմամբ, հետևաբար, կարտացոլվեն աշխատաշուկայում առկա այնպիսի երևույթներ, ինչպիսիք են կանանց մասնակցության ցածր մակարդակը և ինքնազբաղված կամ առանց վարձատրության աշխատողների (մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում), ինչպես նաև տնային աշխատողների կամ խնամքի ոլորտում առանց վարձատրության զբաղվածությամբ անձանց գերակշռությունը, որոնք ընդգրկված չեն գործող օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի գործողությունների շրջանակում:

6.1

ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿԸ

6.1.1
Տնտեսական ցածր ակտիվություն, գենդերային մեծ խզվածք

Հայաստանում 15-64 տարեկան անձանց շրջանում տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմում է 63 տոկոս: Ակտիվ բնակչության շրջանում գործազրկության մակարդակը դեռևս բարձր է՝ 18 տոկոս: Սա նշանակում է, որ Հայաստանում աշխատուժի մոտ չորս հինգերորդն աշխատում է (որից տղամարդիկ՝ 56 տոկոս և կանայք՝ 44 տոկոս): Տղամարդկանց զբաղվածության մակարդակը 2008 թվականի ճգնաժամից հետո լիովին վերականգնվել է, սակայն կանանց դեպքում դա այդպես չէ: 2017 թվականին կանանց զբաղվածությունը կազմել է 52 տոկոս: Նույն միտումը կարելի է ակնկալել կորոնավիրուսի համավարակի հարուցած ճգնաժամից հետո, որն առավելապես ազդել է կանանց վրա:

Տնտեսական ցածր ակտիվություն ամենից շատ արտահայտվում է երիտասարդության շրջանում: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում չաշխատող և չսովորող (ՉՉ) երիտասարդների (15-29 տարեկան) մասնաբաժինը կտրուկ նվազել է վերջին տասնամյակում, այն շարունակում է զգալիորեն բարձր լինել, իսկ ՉՉ երիտասարդ աղջիկների մասնաբաժինը (28.7 տոկոս) շարունակում է բարձր լինել ՉՉ երիտասարդ տղաների համեմատ (28.07 տոկոս)[99]: Այս բացասական միտումն առավել արտահայտված է գյուղական բնակավայրերում և 25-29 տարեկան անձանց շրջանում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ գյուղական բնակավայրերում շատ երիտասարդ կանայք շարունակում են տնտեսապես ոչ ակտիվ լինել, իսկ կրթությունն ավարտելուց հետո երկար ժամանակ աշխատուժից դուրս մնալ[100]: Ընդհանուր առմամբ շատ ավելի մեծ է հավանականությունը, որ տղամարդիկ անցնեն աշխատանքի կամ սկսեն աշխատանքի փնտրտուքը, քան կանայք, որոնք ավելի հավանական է, որ դուրս մնան աշխատաշուկայից, մասնավորապես գյուղական բնակավայրերում, որտեղ ընտանիքի կազմավորման գործընթացն ավելի վաղ է սկսվում:

[99] World Bank (2020c).
[100] Buitrago-Hernandez et al. (2019).

Գծապատկեր 6.1.

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության ցուցանիշները՝ ըստ տարիքի և սեռի. 2019 թ.



Աղբյուրը. 2019 թվականի ԱՀ վերլուծություն։

Բացառությամբ չափահասության և ծեր տարիքի՝ ոչ ակտիվ կանանց մասնաբաժինը գագաթնակետին է հասնում 20-34 տարեկանների շրջանում, որը հիմնական վերարտադրողական տարիքն է, և գերազանցում է 45 տոկոսը։ Թեև աշխատող կանանց մասնաբաժինը սկսում է ավելանալ 45 տարեկանից հետո, երբ երեխաները հավանաբար տեղավորված են դպրոցներում, զբաղվածության գենդերային խզվածքը շարունակում է մեծ լինել՝ ի ցույց դնելով մայրական պարտականություններից աշխատանքային պարտականություններին անցնելու բարդ գործընթացը։ Նույնիսկ 45-49 տարեկանում՝ կանանց ակտիվության պիկ շրջանում, կանանց միայն 68 տոկոսն է ակտիվ։ Այս ուշացած պիկը նշանակում է, որ շատ կանանց համար այնպիսի աշխատանքային արտոնությունների հասանելիությունը, ինչպիսիք են հիվանդություններից և աշխատավայրում առաջացած փասվածքներից ապահովագրությունը, երկարաժամկետ չի լինի, և նրանք դժվարություններ կունենան պետական նպաստների լրիվ գումարը ստանալու նպատակով սահմանված նվազագույն ժամկետը՝ 25 տարվա աշխատանքային ստաժը ապահովելու հարցում։ Ընդ որում՝ այս փաստը ցույց է տալիս աշխատաշուկայի այնպիսի գենդերազգայուն քաղաքականությունների իրականացման անհրաժեշտությունը, որով կապահովվի աշխատաշուկայում կանանց մասնակցությունը։

Կանանց տնտեսական ցածր ակտիվությունը հիմնականում բացատրվում է ընտանիքում խնամատարության և տնային պարտականություններով։ Տնտեսական ցածր ակտիվության ցուցանիշներում առկա գենդերային խզվածքն առավել ցայտուն է 25-34 տարիքային խմբի շրջանում՝ համընկնելով այն տարիքի հետ, երբ կանայք ենթադրաբար ունեն մանկահասակ երեխաներ։ Այս տարիքային խմբում ընդգրկված կանանց գերակշիռ մեծամասնությունը (78.1 տոկոսը) երեխայի խնամքը նշել է որպես աշխատուժից դուրս մնալու հիմնական

պատճառ[101]։ Այս հարաբերակցությունը նվազում է և դառնում է 14.8 տոկոս 40-54 տարեկան կանանց շրջանում, ինչը վկայում է այն մասին, որ երբ երեխաները մեծանում են, որոշ չափով ավելի հեշտ է դառնում աշխատաշուկայում վարձատրվող աշխատանքը առանց վարձատրության խնամքի ձևով աշխատանքի հետ համատեղելը։ Սա նաև ի ցույց է դնում մանկահասակ երեխաների համար նախատեսված՝ երեխայի խնամքի աջակցությանն ուղղված քաղաքականություններում առկա նշանակալի խզվածքը։

Գծապատկեր 6.2.

Խնամքի պատճառաբանությամբ աշխատուժից դուրս բնակչության ցուցանիշները՝ ըստ բնակավայրի տիպի



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019։
Ծանոթագրություն. Թվային տվյալները վերաբերում են երեխաների կամ ընտանիքի հիվանդ անդամների խնամքն իրականացնող անձանց։

Վերոնշյալը հաստատվում է պաշտոնական տվյալներով. ինչպես ակնհայտ է 6.2 գծապատկերից, տղամարդկանց համեմատ կանանց վրա է դրված խնամքի զգալիորեն ծանր բեռը։ Ըստ էության, խնամք իրականացնելու պատճառաբանությամբ աշխատուժից դուրս մնալը թերևս բացառապես կանանց նկատմամբ դրսևորվող խնդիր է։ Հայաստանում Համաշխարհային բանկի իրականացրած բազմաչափ վերլուծությունը ևս ցույց է տվել, որ ամուսնությունն ու մայրությունը և կանանց աշխատուժին մասնակցության ցածր մակարդակը սերտորեն փոխկապված են[102]։ Մասնավորապես քաղաքային բնակավայրերում հավանականությունը, որ կինը աշխատում է կամ աշխատանք է փնտրում, և տնային տնտեսությունում առկա են 0-3 տարեկան երեխաներ, հակադարձ կախվածության մեջ են, ինչը բացակայում է տղամարդկանց շրջանում[103]։ Ըստ ցածր եկամուտ ունեցող և սոցիալապես անապահով կանանց վերաբերյալ անցկացված քանակական հետազոտության՝ մշակութային նորմերը կարևոր դեր ունեն կանանց

[101] ԱՀ 2019։
[102] Honorati et al. (2019)։
[103] Sinha et al. (2016)։

տնտեսապես ոչ ակտիվ լինելու հարցում[104]: Չնայած այս ծանրակշիռ ապացույցին՝ սույն հետազոտության ընթացքում հարցազրույցների մասնակցած՝ Կառավարության և գործատուների ներկայացուցիչները պարբերաբար նշել են, որ գենդերային անհավասարությունը՝ աշխատաշուկայում կամ այլուր, Հայաստանում լուրջ մտահոգության առարկա չէ:

Ներդիր 6.1.

Վարձատրության գենդերային խզվածքը Հայաստանում

Հաշվի առնելով զբաղվածության ոլորտում առկա այս միտումները և աշխատաշուկայում կանանց ներգրավվածության վրա ազդող՝ արմատավորված մշակութային նորմերը՝ Հայաստանը ԵԿԱ-ի տարածաշրջանում վարձատրության ամենամեծ գենդերային խզվածքն ունեցող երկրներից է: ՄԱԿ-Կանայք կազմակերպության և ԱՐՄՍՏԱՏ-ի իրականացրած հետազոտության արդյունքներով խզվածքը կազմել է 28.4 տոկոս: Համաձայն նույն հետազոտության՝ կանանց միջին աշխատավարձը կազմում է գյուղատնտեսության ոլորտում ներգրավված տղամարդկանց աշխատավարձի 84.3 տոկոսը՝ չնայած այն հանգամանքին, որ ոլորտում կանանց ներկայացվածությունը բարձր է: Վերոնշյալով հաստատվում է նրանց՝ որպես առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամների մեծ մասնաբաժինը:

- Առկա է գենդերային մեծ խզվածք: Կանայք ոչ միայն ունեն զբաղվածության ավելի քիչ հասանելիություն, այլև աշխատելու դեպքում է նրանց վարձատրությունն ավելի քիչ: Իսկապես, բոլոր ոլորտներում և կրթական տարբեր մակարդակներում կանայք ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ: Եկամտային խզվածքն ավելի մեծ է բարձր մակարդակներում, ամենաբարձր վարձատրվող ոլորտներում, ինչպիսիք են ՏՀՏ-ն և ֆինանսները: Սրա հետևանքով նվազում են կանանց՝ ակտիվ լինելու շարժառիթները նույնիսկ այն դեպքում, երբ նրանք ունեն բարձր կրթամակարդակ:
- Հայաստանում վարձատրության նախնական (չճշգրտված) գենդերային խզվածքը գնահատվում է 23.1 տոկոս:
- Հայաստանում վարձատրության ճշգրտված գենդերային խզվածքը գնահատվում է 28.4 տոկոս: Այն ավելի մեծ է, քան չճշգրտված գենդերային խզվածքը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ աշխատող կանայք ունեն աշխատաշուկայի ավելի լավ բնութագրեր, քան տղամարդիկ: Սա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատաշուկայում առկա է կանանց առումով դրական ընտրության ավելի մեծ ներուժ, թեև չաշխատող կանայք (գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ) նույնպես ունեն բավականին բարձր կրթական մակարդակ: Հետևաբար որակավորումներով չեն կարող բացատրվել Հայաստանում վարձատրության գենդերային խզվածքը: Ընդհակառակը, խզվածքն ավելի է մեծանում, երբ դրանք հաշվի են առնվում:
- Կանայք աշխատում են ավելի քիչ ժամեր, քան տղամարդիկ, և այս տարբերություններն առկա են տարիքային, մասնագիտական և տնտեսական տարբեր կարգավիճակ ունեցող խմբերում: Տղամարդկանց համեմատ կանայք ավելի շատ ժամանակ են ծախսում տնային գործերի վրա՝ ընտանիքի հիվանդ, տարեց և հաշմանդամություն ունեցող անդամի և երեխաների խնամք:
- Ամուսնական զույգերի շրջանում ավելի քիչ են մայրերի զբաղվածության դեպքերը, հատկապես երիտասարդ, վերարտադրողական տարիքում, և հետևաբար ավելի մեծ է զբաղվածության գենդերային խզվածքը:

[104] ՄԱԿ Կանայք (2018):

- Հայաստանում առկա վարձատրության գենդերային խզվածքը ԵԿԱ-ի երկրների շարքում համարվում է ամենամեծը: Համաշխարհային բանկի՝ երկրի պարբերական գնահատումներում նշվում է, որ դա մեծապես վերաբերում է կրթությունից հատուցումներին, քան բնութագրերի, այդ թվում՝ կրթական մակարդակների տարբերությանը[105]: Բոլոր ոլորտներում և կրթական տարբեր մակարդակներում կանայք, անշուշտ, ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ: Սա հատկապես վերաբերում է բարձր եկամուտ ունեցող անձանց:

Աղբյուրը. ՄԱԿ Կանայք և ԱՐՄՍՏԱՏ (2020):

6.1.2
Աշխատունակ տարիքի անձանց համար նախատեսված սոցիալական պաշտպանության առանցքային սխեմաները

Վերևում նշված՝ աշխատաշուկայում տիրող իրավիճակի համատեքստում հասկանալի է, որ աշխատունակ տարիքի անձանց համար նախատեսված քաղաքականության միջոցառումներում գերակայել է զբաղվածության քաղաքականությունը: Ի հակադրություն դրա՝ համեմատաբար քիչ ուշադրություն է դարձվել աշխատունակ տարիքի անձանց, մասնավորապես կանանց համար սոցիալական պաշտպանության շրջանակի ընդլայնմանը: Ըստ էության, այս ոլորտում սոցիալական պաշտպանության քաղաքականության ամենակարևոր բարեփոխումն իրականում եղել է գործազրկության նպաստների՝ ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայով սահմանված՝ կենսափուլային մոտեցմամբ տրամադրվող առանցքային նպաստի վերացումը 2015 թվականին: Ի տարբերություն երեխաների և ծերության նպաստների՝ աշխատունակ տարիքի անձանց համար նախատեսված՝ սոցիալական պաշտպանության շատ նպաստներ ունեն կարճաժամկետ բնույթ: Հետևաբար հատուկ ուշադրություն է դարձվել եկամտային տատանումների հաղթեցմանը որոշակի ժամանակահատվածներում, ինչպիսիք են մայրությունը, գործազրկությունը և հիվանդությունը: Ուստի հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստները, որոնք կապված են ֆորմալ զբաղվածության և նախկինում ստացված եկամուտների հետ, շատ ավելի տարածված են: Այս առնչությամբ հիմնական եզրակացությունները երկուսն են:

Առաջին՝ կարևոր է հասկանալ, որ հատկացումների կատարմամբ պայմանավորված՝ աշխատունակ տարիքի նպաստների իրավունքը հաճախ պայմանավորված է զբաղվածության կարգավիճակով, աշխատանքային ստաժով, սոցիալական վճարներով և վաստակով: Այս սխեմաները, որպես կանոն, լինում են գենդերային կույր, ինչը նշանակում է, որ դրանց շատ դրույթներում կանանց և տղամարդկանց նկատմամբ մոտեցումները չեն տարբերվում: Այնուամենայնիվ, եթե լրիվ դրույքով, ֆորմալ, ցկյանս զբաղվածությունը համարվում է նորմ, ապա այս ծրագրերն անուղղակիորեն խտրական են այն կանանց նկատմամբ, որոնց դեպքում ավելի հավանական է, որ աշխատանքային գործունեությունը և հատկացումների կատարմամբ պայմանավորված համակարգի մաս կազմող մասնագիտական գործունեությունը կընդհատվեն խնամքի ավելացող բեռի պատճառով (տե՛ս Գծապատկեր 6.2): Հայաստանում, օրինակ, աշխատող մայրերի դեպքում առկա է զբաղվածության ցածր մակարդակի և զբաղվածության մեծ գենդերային խզվածքի միտում, հատկապես երիտասարդ (վերարտադրողական) տարիքում:

[105] Christensen (2017):

Երկրորդ՝ սա ոչ միայն նշանակում է, որ սոցիալական պաշտպանության ստորին շեմը կարող են դեռևս դերակատարում ունենալ կյանքի այս փուլում, այլև առավել մեծ կարևորություն ունեն այն աշխատողների համար, որոնք զրկված են հատկացումների կատարմամբ պայմանավորված համակարգի արտոնություններից օգտվելու հնարավորությունից: Այդպիսի աշխատողների թվին են դասվում ոչ միայն կանայք, այլև այն աշխատողները՝ կին թե տղամարդ, որոնք ի սկզբանե ներգրավված են ստվերային տնտեսությունում: Այնպիսի իրավիճակներում, երբ զբաղվածության հիմքով սխեմաներին աշխատունակ անձանց մասնակցության մասնաբաժինը փոքր է, միանգամայն անհրաժեշտ է ներառել հատկացումների կատարմամբ չպայմանավորված մեխանիզմներ, որոնք բոլորի համար երաշխավորում են սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակ: Բացի եկամտին առնչվող նպաստների կազմը համալրելուց՝ հատկացումների կատարմամբ չպայմանավորված նպաստները չափազանց կարևոր են այն աշխատողներին այլընտրանք առաջարկելու համար, որոնք չեն համապատասխանում գործող կարգի՝ իրավունք ձեռք բերելու պայմաններին:

Մինչ այժմ Հայաստանում այս սկզբունքը կիրառվել է մայրության պաշտպանության շրջանակն ընդլայնելու համար: Թեև դեռևս անհրաժեշտ է իրականացնել բարելավման լայնածավալ աշխատանքներ՝ բոլորի համար համարժեք մայրության պաշտպանություն ապահովելու ուղղությամբ, դրամական օգնության ձևով մայրության նպաստների համընդհանուր իրավական ապահովումը երկրի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում մեծ ձեռքբերում է: Մեկ այլ կարևոր ձեռքբերում է հաշմանդամության համար կանոնավոր, կանխատեսելի դրամական հատկացումների իրականացումը: Աշխատունակ տարիքին առնչվող այլ չնախատեսված իրավիճակներից պաշտպանությունը Հայաստանում ապահովվում է միայն նվազագույն չափով: Հիվանդության դրամական օգնությունը և աշխատավայրում առաջացած փասավածքից պաշտպանությունը սահմանափակ են: Եվ ինչպես նշվել է նախկինում, գործազրկության նպաստները վերացվել են բոլորովին վերջերս (մանրամասների համար տե՛ս 6.6.2 բաժինը):

Հայաստանում աշխատունակ տարիքում անձինք կարող են ակնկալել ստանալ կենսափուլային մոտեցմամբ տրամադրվող հետևյալ նպաստները.

- մայրության նպաստ՝ աշխատող և չաշխատող մայրերի համար,
- երեխայի խնամքի նպաստ՝ աշխատող մայրերի համար,
- հաշմանդամության կենսաթոշակներ և նպաստներ,
- կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակներ և նպաստներ,
- հիվանդության վճարովի արձակուրդ,
- աշխատավայրում առաջացած փասավածքի համար:

Հայաստանում աշխատունակ տարիքի բնակչության իրավական ապահովումը կա՛մ տրամադրվում է համընդհանուր հիմունքով՝ բազմաստիճան համակարգի միջոցով (օրինակ՝ հաշմանդամության և մայրության նպաստներ), կա՛մ սահմանափակված է ֆորմալ զբաղվածություն ունեցող բնակչության շրջանակով (օրինակ՝ հիվանդության և աշխատավայրում առաջացած փասավածքի համար նպաստներ): Սա նշանակում է, որ ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող (կամ չաշխատող) անձանց մեծ մասը եկամտի առումով պաշտպանված չէ այս ընդհանուր ռիսկերից, և ընտանիքների ու բնակավայրերի վրա է դրվում հետևանքներն ինքնուրույն վերացնելու ծանր բեռը: Հետևյալ բաժիններում գնահատվում է աշխատունակ չափահասների իրավական ապահովման մակարդակը թիվ 102 կոնվենցիայում ներկայացված չնախատեսված իրավիճակների դեպքում, գործող ծրագրերի՝ նշված չափահասներին հասանելիության առումով արդյունավետությունն այդպիսի չնախատեսված իրավիճակներում, և տարբեր ազգային ու միջազգային ստանդարտներին կենսափուլային մոտեցմամբ տրամադրվող նպաստների համապատասխանությունը:

Աղյուսակ 6.1.

Հայաստանում աշխատունակ տարիքի անձանց սոցիալական պաշտպանության՝ կենսափուլային մոտեցմամբ կազմված սխեմաներ

Աշխատունակ տարիքի համար նախատեսված հիմնական սխեմաների՝ օրենքով սահմանված բնութագրիչները							
Սխեմա	Սխեմայի տեսակ	Նորմատիվ իրավական դաշտ	Իրավական ապահովմամբ երաշխավորված բնակչություն	Ֆինանսավորման մեխանիզմ	Իրավունք ձեռք բերելու պայմաններ	Նպաստների նկարագրությունը	Վարչական պատասխանատվություն
Մայրության նպաստ՝ աշխատող կանանց համար	Հատկացումների կատարմամբ պայմանավորված	ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թվական) «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենք (2010 թվական)	Ֆորմալ զբաղվածություն ունեցող և ինքնազբաղված կանայք	Գործատուի միջոցներ (ընդգրկում է հղիության և ծննդաբերության 2-րդ օրվանից մինչև 6-րդ օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը) Պետական բյուջե (ընդգրկում է հղիության և ծննդաբերության 7-րդ օրվանից մինչև 140-րդ օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը)	Ժամանակավոր անաշխատունակություն՝ հղիության և ծննդաբերության պատճառով	Միանվագ նպաստները հաշվարկվում են հետևյալ կերպ՝ միջին ամսական եկամուտ բաժանած 30.4-ի (ամսվա օրերի միջին թիվը)՝ բազմապատկած 140-ով (հղիության և ծննդաբերության արձակուրդի օրացուցային օրերի թիվը): Վարձու և ինքնազբաղված աշխատողների համար տրվող նպաստները հաշվարկվում են համապատասխանաբար նվազագույն աշխատավարձի 15-ապատիկից և 5-ապատիկից[106] Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում	Գործատուները՝ ֆորմալ զբաղվածություն ունեցող կանանց դեպքում ԱԱՀՆ/ՍԱՎ՝ ինքնազբաղված կանանց դեպքում
Մայրության նպաստ՝ չաշխատող կանանց համար	Համընդհանուր (ընտանիքի անապահովության գնահատման համակարգով չտրվող, հատկացումների կատարմամբ չպայմանավորված)	«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենք (2010 թվական) «Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական) և «Պետական նպաստների մասին» օրենքում կատարված փոփոխությունները (2020 թվական)	Կանայք, որոնք չունեն ֆորմալ զբաղվածություն և ինքնազբաղված չեն	Պետական բյուջե	Ժամանակավոր անաշխատունակություն՝ հղիության և ծննդաբերության պատճառով	Միանվագ նպաստը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ 50%-ի չափով նվազագույն աշխատավարձ՝ բաժանած 30.4-ի (ամսվա օրերի միջին թիվը)՝ բազմապատկած 140 օրվան (հղիության և ծննդաբերության արձակուրդի օրացուցային օրերի թիվը) Նպաստի նվազագույն շեմը, այսպիսով, կազմում է 156,579 ՀՀ դրամ (295 ԱՄՆ դոլար) Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում	ԱԱՀՆ/ՍԱԾ

[106] Տե՛ս սույն նպաստի չափի մանրամասն հաշվարկը, այդ թվում՝ միջին դրամական հատկացումների արժեքները, նվազագույն և առավելագույն շեմերը 6.2.2 բաժնում:

Երեխայի խնամքի նպաստ աշխատող կանանց համար	Հատկացումների կատարմամբ պայմանավորված	ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թվական) «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենք (2010 թվական) «Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական)	Ֆորմալ զբաղվածություն ունեցող կանայք (կամ այլ ծնող/խնամակալ, որը հոգ է տանում երեխայի մասին)	Պետական բյուջե	Ժամանակավոր անաշխատունակություն՝ ծննդաբերության պատճառով Երեխան պետք է լինի մինչև 2 տարեկան	Յուրաքանչյուր անձի համար ամսական 18,000 ՀՀ դրամ (35 ԱՄՆ դոլար) Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում	ԱՍՀՆ/ՍԱԾ
Հաշմանդամության (սոցիալական) նպաստ	Համընդհանուր (ընտանիքի անապահովության գնահատման համակարգով չտրվող, հատկացումների կատարմամբ չպայմանավորված)	«Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական) «Սոցիալական աջակցության մասին» օրենք (2014 թվական) «Սոցիալական նպաստների և թաղման նպաստի չափերը սահմանելու մասին» թիվ 1489-Ն որոշում (2013 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	Պետք է պաշտոնապես ճանաչված լինի որպես հաշմանդամ (հաստատված ԲՍՓՀ-ի կողմից) Պետք է չունենա պետական (աշխատանքային) կամ զինվորական կենսաթոշակի իրավունք	Յուրաքանչյուր անձի համար ամսական 26,500 ՀՀ դրամ (50 ԱՄՆ դոլար) Ինդեքսավորման որևէ կանոն չի կիրառվում	ԱՍՀՆ/ՍԱԾ
Հաշմանդամության (պետական) կենսաթոշակ	Հատկացումների կատարմամբ պայմանավորված	ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թվական) «Պետական նպաստների մասին» օրենք (2010 թվական) «Հիմնական կենսաթոշակի, նվազագույն կենսաթոշակի, թաղման նպաստի, մասին» թիվ 1734-Ն որոշում (2011 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	Պետք է պաշտոնապես ճանաչված լինի որպես հաշմանդամ (հաստատված ԲՍՓՀ-ի կողմից) և ունենա համապատասխան աշխատանքային ստաժ (տարիների քանակը, որոնց համար վճարվել է ԱԵՀ)՝ ըստ սահմանված տարիքային խմբի[107]	Յուրաքանչյուր անձի համար ամսական 41,228 ՀՀ դրամ (77 ԱՄՆ դոլար) (միջին արժեք) Հաշվարկվում է հետևյալ կերպ՝ հիմնական կենսաթոշակ՝ գումարած աշխատանքային ստաժի արժեքը՝ բազմապատկած անձնական գործակիցով[108]	ԱՍՀՆ/ՍԱԾ

[107] Տե՛ս իրավունք ձեռք բերելու պայմանների (տարիքային սահմանափակումներ և պահանջվող աշխատանքային ստաժ) մանրամասն նկարագրությունը 6.5.1 բաժնում:
[108] Հիմնական կենսաթոշակը կազմում է 18,000 ՀՀ դրամ (35 ԱՄՆ դոլար): Աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը առաջին 10 տարվա համար կազմում է 950 ՀՀ դրամ (2 ԱՄՆ դոլար) և 500 ՀՀ դրամ (1 ԱՄՆ դոլար)՝ յուրաքանչյուր հաջորդ տարվա համար: Անձնական գործակիցը 0.1 է՝ մինչև 10 տարի (ներառյալ) տևողությամբ զինվորական ծառայության դեպքում, 0.01՝ 11-40 տարի տևողությամբ զինվորական ծառայության դեպքում և 0.02՝ 40 տարվանից ավելի տևողությամբ զինվորական ծառայության դեպքում:

Կերակրողին կորցնելու դեպքում (սոցիալական) նպաստ	Համընդհանուր (ընտանիքի անապահովության գնահատման համակարգով չտրվող, հատկացումների կատարմամբ չպայմանավորված)	«Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական) «Սոցիալական աջակցության մասին» օրենք (2014 թվական) «Սոցիալական նպաստների և թաղման նպաստի մասին» թիվ 1489-Ն որոշում (2013 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	Մինչև 26 տարեկան՝ առկա ուսուցմամբ ուսանողները՝ կերակրողին կորցնելու դեպքում Ամուսինը՝ կերակրողին կորցնելու դեպքում Կերակրողին կորցրած՝ մինչև 14 տ. չլրացած երեխայի ծնողը/խնամակալը Բոլոր դեպքերում կերակրողը պետք է չունենա պետական (աշխատանքային) կամ զինվորական կենսաթոշակի իրավունք	Յուրաքանչյուր երեխայի համար ամսական 26,500 ՀՀ դրամ (50 ԱՄՆ դոլար)	ԱՍՀՆ/ՍԱԾ
Կերակրողին կորցնելու դեպքում (պետական) կենսաթոշակ	Հատկացումների կատարմամբ պայմանավորված	ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թվական) «Պետական նպաստների մասին» օրենք (2010 թվական) «Հիմնական կենսաթոշակի, նվազագույն կենսաթոշակի և թաղման նպաստի մասին» թիվ 1734-Ն որոշում (2011 թվական)	Հայաստանի օրինական ռեզիդենտներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ	Պետական բյուջե	Մահացած անձի քույրը, եղբայրը կամ թոռը (մինչև 18 տարեկան), որի ծնողները/խնամակալները ունեն երրորդ խմբի հաշմանդամություն 18 տարին լրացած անձինք, որոնք ճանաչվել են հաշմանդամ մինչև 18 տարին լրանալը և ունեն երրորդ խմբի հաշմանդամություն Մահացած անձի չաշխատող ծնողները/ամուսինը, որոնց կենսաթոշակի անցնելու տարիքն արդեն իսկ լրացել է մինչև կերակրողին մահվան օրը Մահացած անձի ամուսինը/երեխայի խնամակալը, քույրը, եղբայրը կամ թոռը (մինչև 14 տարեկան)	30,862 ՀՀ դրամ (58 ԱՄՆ դոլար)՝ մեկ կերակրողին կորցնելու դեպքում (միջին արժեք) 102,658 ՀՀ դրամ (193 ԱՄՆ դոլար)՝ երկու կերակրողին կորցնելու դեպքում (միջին արժեք) Հաշվարկվում է հետևյալ կերպ՝ հիմնական կենսաթոշակ՝ գումարած աշխատանքային ստաժի արժեքը՝ բազմապատկած անձնական գործակիցով[109]	ԱՍՀՆ/ՍԱԾ

[109] Հիմնական կենսաթոշակը կազմում է 18,000 ՀՀ դրամ (35 ԱՄՆ դոլար): Աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը առաջին 10 տարվա համար կազմում է 950 ՀՀ դրամ (2 ԱՄՆ դոլար) և 500 ՀՀ դրամ (1 ԱՄՆ դոլար)՝ յուրաքանչյուր հաջորդ տարվա համար: Անձնական գործակիցը 0.1 է՝ մինչև 10 տարի (ներառյալ) տևողությամբ զինվորական ծառայության դեպքում, 0.01՝ 11-ից 40 տարի տևողությամբ զինվորական ծառայության դեպքում և 0.02՝ 40 տարվանից ավելի տևողությամբ զինվորական ծառայության դեպքում:

Հիվանդության (ժամանակավոր անաշխատունակության) նպաստներ	Հատկացումների կատարմամբ պայմանավորված	ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թվական) «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենք (2010 թվական) «Զբաղվածության մասին» օրենք (2013 թվական)	Ֆորմալ զբաղվածություն ունեցող և ինքնազբաղված անձինք (բացառությամբ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավվածների)	Գործատուի միջոցներ (ընդգրկում է 2-րդ օրվանից մինչև 6-րդ օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը) Պետական բյուջե (ընդգրկում է հիվանդության ժամանակահատվածի մնացած մասը)	Պետք է վճարած լինի ԱԵՀ	Յուրաքանչյուր անձի համար ամսական 93,229 ՀՀ դրամ (175 ԱՄՆ դոլար) (միջին արժեք)[110] Հաշվարկվում է որպես միջին ամսական աշխատավարձի 80%	ԱՍՀՆ/ՄԱԾ
	Հատկացումների կատարմամբ պայմանավորված	ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թվական) «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենք (2010 թվական) «Պետական նպաստների մասին» օրենք (2013 թվական) «Զբաղվածության մասին» օրենք (2013 թվական)	18 տարին լրացած ֆորմալ զբաղվածություն ունեցող անձինք	Պետական բյուջե	Բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ կամ վատառողջ ճանաչված անձինք, եթե հաշմանդամությունը սահմանելու կամ կենսաթոշակի համար դիմելու պահին նրանք ունեն սահմանված աշխատանքային ստաժ:	Յուրաքանչյուր անձին ամսական 37,258 ՀՀ դրամ (76 ԱՄՆ դոլար)՝ աշխատավայրում առաջացած վնասվածքի համար (2018 թվականին սահմանված միջին արժեքը) Յուրաքանչյուր անձին ամսական 44,909 ՀՀ դրամ (92 ԱՄՆ դոլար)՝ մասնագիտական հիվանդության համար (2018 թվականին սահմանված միջին արժեքը)[111]	ԱՍՀՆ/ԲՍՓԳ

[110] 2019 թվականին աշխատունակ տարիքի հիմնական կատեգորիային պատկանող աշխատողների (25-54 տարեկան) միջին ամսական եկամուտը եղել է 116,536 ՀՀ դրամ (219 ԱՄՆ դոլար):
[111] Ghukasyan et al. (2020).

6.2

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6.2.1
Իրավական ծածկույթ

Մայրության պաշտպանությունը կարևոր գործիք է՝ ապահովելու համար, որ կանայք կարողանան իրացնել իրենց ամբողջ ներուժը՝ նրանց հնարավորություն ընձեռելով մուտք գործելու և մնալու աշխատաշուկայում՝ անկախ մայրանալու նրանց ընտրությունից: Երեխայի և առողջության պահպանման խթանումը նույնպես կարևոր նշանակություն ունի: Ինչպես պարզաբանվում է ԱՄԿ-ի կոնվենցիայում, «մայրության պաշտպանության վերաբերյալ օրենսդրության նպատակն է կանանց ընձեռել իրենց արտադրողական և վերարտադրողական դերերը հաջողությամբ համատեղելու հնարավորություն, ինչպես նաև խթանել հավասար հնարավորություններն ու վերաբերմունքը աշխատանքի և զբաղվածության ոլորտներում»[112]:

ԱՄԿ-ի թիվ 183 կոնվենցիայի և թիվ 191 հանձնարարականի շրջանակներում սահմանվում են մայրության պաշտպանության մի քանի առանցքային բաղադրիչներ.

- բժշկական ծառայություններ,
- աշխատատեղի պահպանում և խտրականության բացառում,
- աշխատավայրում առողջության պահպանում,
- աշխատավայրում կրծքով կերակրման հնարավորության ապահովում,
- հղիության և ծննդաբերության արձակուրդ,
- եկամտի ապահովություն (դրամական օգնություն):

[112] ILO (2016a):

Ինչպես նշվել է 4-րդ գլխում, Հայաստանում ՀԾՓ-ում ներառված են նախածննդյան, հետծննդյան և ծննդաբերության ծառայությունները, ինչպես նաև բուժօգնությունը և սպասարկումը նորածին երեխաների համար: Աշխատատեղի պահպանման առնչությամբ 2004 թվականի ՀՀ աշխատանքային օրենսգրքում ամրագրված է, որ աշխատողներն ունեն նախածննդյան արձակուրդի իրավունք՝ երեխայի կյանքի առաջին երեք տարիների ընթացքում նրա մասին հոգ տանելու համար: Օրենքով երաշխավորվում է, որ աշխատողները կարող են պահպանել իրենց աշխատատեղերն այս եռամյա ժամկետում: ՀՀ աշխատանքային օրենսգրքում նաև ամփոփ ներկայացվում են մասնագիտական առողջության և անվտանգության պահպանման նվազագույն ստանդարտները, ինչպես նաև նախատեսվում են վճարովի ընդմիջման ժամեր՝ կրծքով կերակրելու համար: Այս դրույթներն առավել մանրամասն սահմանված են «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում (2010 թվական): Սակայն, ինչպես նշվել է, այս դրույթները վերաբերում են միայն վարձու աշխատողներին. հետևաբար մյուս բոլոր աշխատողները, որոնք ունեն ոչ ֆորմալ զբաղվածություն, չեն օգտվում աշխատատեղի պահպանման այս մեխանիզմից և այսպիսի խոցելի ժամանակահատվածում բախվում են աշխատանքը կորցնելու խնդրին:

Հղիության և ծննդաբերության արձակուրդ

Բացի երեխայի խնամքի արձակուրդից, որը ենթադրում է միայն աշխատատեղի պաշտպանություն, ՀՀ աշխատանքային օրենսգրքում նշվում է հատուկ նպատակով տրվող մեկ այլ՝ 140 օր տևողությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդ: Բոլորովին վերջերս այս նույն ժամկետն օգտագործվել է որպես աշխատողների ավելի լայն խմբերին նվազագույն եկամտի ապահովություն տրամադրելու հիմք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքում այս դրույթի գործողության շրջանակը տարածվում է միայն աշխատողների վրա: Թեև աշխատող կանայք կազմում են կանանց աշխատուժի 57.6 տոկոսը, և աշխատունակ տարիքի կանանց միայն 30.3 տոկոսը, դրույթը տարածվում է միայն ֆորմալ զբաղվածություն ունեցող անձանց վրա: Ընդհանուր առմամբ, Հայաստանում ոչ ֆորմալ զբաղվածությունը կազմում է կանանց ընդհանուր զբաղվածության մոտ 37 տոկոսը, և կանանցից շատերը գործազուրկ կամ առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամներ են: Այս ամենը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ աշխատուժում մասնակցություն ունեցող կանանց կեսից պակասն ունի հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք:

Եկամտի ապահովություն

Դրամական օգնության ձևով հղիության և ծննդաբերության նպաստները կարևոր են երեխայի ծննդից առաջ և հետո կնոջ տնտեսական գործունեության դադարեցման հետևանքով նրա եկամտի կորուստը փոխհատուցելու համար: Այն նաև կանանց օգնում է վճարելու հղիության և երեխայի ծննդի հետևանքով ի հայտ եկող լրացուցիչ ծախսերը: «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում ամրագրված է, որ 140 օր տևողությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում անձինք ունեն դրամական օգնության իրավունք: Սա գործում է՝ անկախ այն բանից, թե չնախատեսված հանգամանքն ի հայտ գալու ժամանակ նրանք աշխատանքային հարաբերությունների՞ մեջ են, թե՞ համարվում են ինքնազբաղված անձինք, որոնք վճարել են եկամտային հարկեր: Դրանում ակնհայտորեն ներառված չեն ընտանեկան ձեռնարկատիրության մեջ զբաղվածները: Ֆորմալ զբաղվածության հետ անմիջական կապով պայմանավորված՝ հղիության ընթացքում աշխատանքը կորցրած կանայք ևս չունեն այս դրամական օգնության իրավունքը, նույնիսկ եթե նրանք ունեն երկարաժամկետ աշխատանքային ստաժ: Սա ակնհայտորեն իրավական բաց է: Թեև դրա հիմքում ընկած են զբաղվածության կարգավիճակը և հարկային պահումները, հղիության և ծննդաբերության արձակուրդ գնալու պահանջն ու դրան առնչվող դրամական օգնությունը պետք է կրեն անհատական բնույթ և անկախ լինեն գործատուի ու աշխատողի միջև առկա պայմանագրային հարաբերություններից:

Ի վերջո՝ 2019 թվականին, «Պետական նպաստների մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում դրամական օգնության ձևով հղիության և ծննդաբերության նպաստների ծածկույթն ընդլայնվել է և ներառել բոլոր չաշխատող կանանց՝ փաստացի ապահովելով մայրանալու դեպքում եկամտի պաշտպանության համընդհանուր ընդգրկվածություն: Շահագրգիռ անձանց հետ զրույցի ընթացքում ԱՍՀՆ-ի ներկայացուցիչները ծածկույթի այս ընդլայնումը բնութագրել են որպես մայրության խթանմանն ուղղված միջոցառում՝ մատնանշելով սոցիալական պաշտպանության և ժողովրդագրական քաղաքականության նպատակների հաճախակի համընկնումները:

Չնայած իր անվանմանը՝ «հղիության և ծննդաբերության նպաստ՝ աշխատող կանանց համար» եզրույթը վերաբերում է այն աշխատող կանանց, որոնք ունեն ֆորմալ զբաղվածություն, այդ թվում՝ գրանցված ինքնազբաղված աշխատողներին: Համաձայն 2019 թվականի աշխատուժի հետազոտության (ԱՀ)՝ աշխատող կանանց մոտ 62 տոկոսը ունեցել է ֆորմալ զբաղվածություն, որը կազմում է կանանց աշխատուժի մոտ կեսը և

միայն մոտ 27 տոկոսը աշխատունակ տարիքի այն բնակչության, որը կարող էր ունենալ աշխատող կանանց համար նախատեսված մայրության նպաստի իրավունք (Գծապատկեր 6.3): Ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող աշխատող կանայք տնային տնտեսությունում առանց վարձատրության աշխատանք կատարող բոլոր կանանց, գործազուրկ կանանց և աշխատուժին մասնակցություն չունեցող կանանց հետ հավասարապես ունեն չաշխատող կանանց համար նախատեսված մայրության նպաստի իրավունք: Ընդհանուր առմամբ սա կազմում է աշխատող կանանց 37 տոկոսը՝ աշխատուժի գրեթե կեսը և, հաշվի առնելով կանանց շրջանում առկա տնտեսական ցածր ակտիվությունը, աշխատունակ տարիքի կին բնակչության գրեթե երեք քառորդը:

Գծապատկեր 6.3.

Կանանց շրջանում ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում. 2019 թ.



Աղբյուրը. Կազմվել է՝ հիմք ընդունելով ԱՄԿUSUS-ը և հեղինակի՝ 2019 թվականի ԱՀ –ի արդյունքների վերլուծությունը:

Երեխայի խնամքի նպաստ և դայակի ծրագիր («Դայակ՝ պետության աջակցությամբ»)

«Պետական նպաստների մասին» օրենքով նախատեսվում է ամսական 18,000 ՀՀ դրամի չափով երեխայի խնամքի նպաստների իրավունք մինչև 2 տարեկան երեխաներ ունեցող այն ծնողների համար, որոնք դեռևս երեխայի խնամքի արձակուրդում են: Այս նպաստի նպատակն է մասնակիորեն փոխհատուցել երեխաների դաստիարակմանն առնչվող ծախսերը. հետևաբար սա Հայաստանի համակարգում առկա՝ կենսաափուլային մոտեցմամբ տրամադրվող ավանդական ընտանեկան նպաստին ամենամոտ դրույթն է: Դայակի ծրագիրը ենթադրում է երեխայի խնամքի արձակուրդում գտնվող խնամատարներին տրվող մասնակի սուբսիդիա՝ երեխայի խնամքը ֆինանսապես ապահովելու (դայակ վարձելու) համար՝ ընձեռելով աշխատանքի վերադառնալու հնարավորություն:

6.2.2
Փաստացի ծածկույթ

Հորիզոնական ծածկույթ

2019 թվականից հետո իրավական ապահովումը ձեռք է բերել համընդհանուր բնույթ, ուստի ակնկալում ենք նպաստների ընդհանուր թվի համապատասխանություն ընդհանուր բնակչության կազմում նոր մայրացող կանանց թվին: Միևնույն ժամանակ ՏՏԿԱՀ-ի շրջանակում ներկայացված՝ հղիության և ծննդաբերության նպաստ ստացող անձանց ընտրված թիվը չափազանց փոքր է ծանրակշիռ եզրահանգումներ անելու համար, իսկ զեկույցը կազմելիս առկա չի եղել որևէ վարչական տվյալ, որը թույլ կտար գնահատել հնարավոր հավելումների չափը հաշվարկված բնակչության թվի նկատմամբ: Հետևաբար մայրության նպաստների վերլուծության շրջանակում ուշադրությունը սևեռված է հայեցակարգային մակարդակին՝ հիմք ընդունելով իրավական ծածկույթի, իշխանությունների նախագծի և աշխատաշուկայի ընդհանուր կառուցվածքի նախորդ վերլուծությունը:

Հարկ է նշել, որ առավել ներառական հղիության և ծննդաբերության արձակուրդին անցում կատարելու գործընթացի արագացումը կարող է բավարար չլինել կանանց աշխատուժի մասնակցությունը բարելավելու համար: Խտրական բնույթի սոցիալական արժեքները և գենդերային կարծրատիպերը կարող են դեռևս խոչընդոտել աշխատաշուկայի հասանելիությունը կանանց համար՝ նրանց դարձնելով տնտեսապես էլ ավելի խոցելի: Սոցիալական պաշտպանության քաղաքականությունները պետք է հստակորեն ուղղված լինեն կանանց խոցելիությունը փոխհատուցելուն. միևնույն ժամանակ անհրաժեշտ են խոցելիության աղբյուրին վերաբերող ավելի լայն քաղաքականություններ՝ բարելավելու կանանց աշխատուժի մասնակցության չափն ու որակը: Նաև կարևոր է նշել, որ եթե վճարովի արձակուրդը հասանելի է միայն կանանց, ապա դա կարող է ամրապնդել այն պատկերացումը, որ կանայք են ի սկզբանե պատասխանատու խնամք իրականացնելու համար, իսկ տղամարդիկ հիմնական վաստակողներն են: Թեև Հայաստանում գործող՝ մայրությանն առնչվող կարգավորումներում հստակ չի նշվում, որ, օրինակ, հենց մայրն է վերցնում երեխայի խնամքի արձակուրդ, փորձը ցույց է տալիս, որ դա այդպես է: Եվս մեկ անգամ հարկ է նշել, որ գենդերային սոցիալական նորմերի համատեքստում գենդերային չեզոք նորմերը բավարար չեն, և այս պարագայում կարող է առաջարկվել այնպիսի դրույթի սահմանում, որով պահանջվում է, որ հայրերն օգտվեն երեխայի խնամքի արձակուրդի իրենց մասից՝ երեխայի խնամքի արձակուրդի տրամադրման արդյունքում աշխատաշուկայում կանանց դիրքի ամրապնդումն ապահովելու համար:

Ընդհանուր առմամբ, մայրության պաշտպանությունը Հայաստանում գործող բարդ համակարգ է: Եվ չնայած նրան, որ այժմ առկա է նվազագույն եկամտի համընդհանուր ստորին շեմ, դեռևս կան բացեր՝ մայրության պաշտպանության այլ բաղադրիչներով պայմանավորված, որոնք այժմ նախատեսված են միայն վարձու աշխատանք կատարող կանանց համար (տե՛ս ստորև՝ Գծապատկեր 6.4): Իրավիճակն էլ ավելի է բարդացել՝ այս խմբի շրջանակով սահմանափակված լրացուցիչ դրամական օգնությունների, օրինակ՝ երեխայի խնամքի նպաստի սահմանմամբ և վերջերս դայակի ծրագրի գործարկմամբ:

Գծապատկեր 6.4.

Մայրության պաշտպանության ծածկույթը Հայաստանում



Աղբյուրը. Հեղինակի աշխատանք:

Ուղղահայաց ծածկույթ (համարժեքություն)

Բացի հորիզոնական ծածկույթից՝ պաշտպանության համարժեքությունը որոշվում է արձակուրդի տևողությամբ և աշխատավարձին փոխարինող միջոցի դրամական արժեքով: Սրանց տատանումների հետևանքները տարբեր են լինում, այնպես, ինչպես մայրության վճարովի արձակուրդը կանանց ընձեռում է տնտեսական հնարավորություններ[113]: Օրինակ, երբ արձակուրդը կարճատև է, կանայք կարող են աշխատավայր վերադառնալուն պատրաստ չլինել և, ի վերջո, բացարձակապես դուրս մնալ աշխատուժից: Իսկ երբ արձակուրդը երկարաժամկետ է, և այն վերցնում են հիմնականում կանայք, դա ևս կարող է նվազեցնել վարձու աշխատանքում կանանց առաջխաղացման հնարավորությունը[114]: ԱՄԿ-ի իրականացրած միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 12 ամիսը լրանալուց հետո արձակուրդի յուրաքանչյուր տարին բացասաբար է ազդում աշխատավարձի հետագա չափի վրա[115]:

Հայաստանում, որքան էլ տարօրինակ է, մայրության պաշտպանության համակարգում այս երկու հատուկ արձակուրդների առկայությունը նշանակում է, որ երկրի առջև ծառանում են այս երկու մարտահրավերներն էլ: Մի կողմից՝ հղիության և ծննդաբերության արձակուրդը երաշխավորված է բոլորի համար՝ եկամտի պաշտպանության նվազագույն մակարդակով, սակայն պարզ չէ՝ այս պաշտպանությունը համապատասխանում է արդյոք ԱՄԿ-ի՝ տևողության վերաբերյալ նվազագույն ստանդարտներին: Ամեն դեպքում այս առումով այնքան էլ շռայլություն չի ցուցաբերվել, որքան կարող է թվալ առաջին հայացքից: Մյուս կողմից՝ երեխայի խնամքի արձակուրդի

[113] Heymann et al. (2017):
[114] ԱՄԿ (2011):
[115] Grimshaw and Rubery (2015):

առկայությամբ մոր աշխատատեղը պահպանվում է ընդհանուր առմամբ երեք տարի ժամկետով: Քանի որ գոյություն չունեն երեխայի խնամքի՝ լայնորեն հասանելի և մատչելի ծառայություններ 3-ից ցածր տարիքի երեխաների համար, մայրերը կարող են այլ ընտրություն չունենալ, քան իրենց յուրաքանչյուր երեխայի դեպքում արձակուրդի ամբողջ ժամանակահատվածն օգտագործել և դուրս մնալ աշխատաշուկայից: Այս առումով արձակուրդի տևողությունը բավականաչափ երկար է, որպեսզի կանխատեսենք այս կանանց մասնագիտական զարգացման դադար՝ ի տարբերություն արական սեռի նրանց գործընկերների: Այս խնդիրները մանրամասն քննարկվում են 6.2 ներդիրում:

Ներդիր 6.2.

Նախածննդյան և հետծննդյան արձակուրդների միջև հավասարակշռությունը

ԱՄԿ-ի «Մայրության պաշտպանության մասին» 2000 թվականի կոնվենցիայով (թիվ 183) սահմանվում է 14 շաբաթ նվազագույն տևողությամբ արձակուրդ, ընդ որում՝ 6 շաբաթը՝ հետծննդյան շրջանում: Դրանում չի նշվում մինչծննդյան արձակուրդի նվազագույն ժամկետ, սակայն արձանագրվում է, որ այս ժամկետը երկարաձգվում է ցանկացած ժամանակահատվածով, որը ձգվում է ծննդաբերության ենթադրյալ օրվանից մինչև ծննդաբերության իրական օրը՝ առանց որևէ կերպ կրճատելու հետծննդյան արձակուրդի որևէ պարտադիր մաս: Կոնվենցիայում նաև նշվում է, որ դրամական օգնությունները պետք է տրվեն այս արձակուրդի ամբողջ ընթացքում: «Մայրության պաշտպանության մասին» 2000 թվականի հանձնարարականով (թիվ 191) այս ժամկետը երկարաձգվում է մինչև 18 շաբաթ, և պահանջվում է միջոցառումների ձեռնարկում՝ ապահովելու համար, որ կանայք իրավունք ունենան առանց խոչընդոտների ընտրելու, թե երբ վերցնեն հղիության և ծննդաբերության իրենց արձակուրդի՝ պարտադիր չհամարվող մասը՝ երեխայի ծննդից առաջ թե հետո:

Մինչև երեխայի ծնունդը վերցված արձակուրդը հղի կանանց տալիս է հանգստանալու հնարավորություն, ինչը կարևոր է, որպեսզի մայրերը ֆիզիկապես և հոգեբանորեն պատրաստ լինեն ծննդաբերությանը: Նախածննդյան արձակուրդի պարտադիր տևողությունը պայմանավորված է մոր և մանկան առողջական վիճակով, ինչպես նաև այն մասնագիտական ռիսկերով, որոնց նա կարող է բախվել աշխատավայրում: Բժշկական փորձագետներն առաջարկում են 2-6 շաբաթ տևողությամբ ժամանակահատված մինչև երեխայի ծնունդը: Հայաստանում հղիության և ծննդաբերության արձակուրդի ընդհանուր տևողությունը կազմում է 140 օր և հստակ բաժանված է հետևյալ ժամանակահատվածների՝ 70 օր մինչև երեխայի ծնունդը և 70 օր երեխայի ծննդից հետո՝ կանանց հնարավորություն չտալով պլանավորելու իրենց արձակուրդն ըստ իրենց անձնական և ընտանեկան կարիքների և նախապատվության: Արձակուրդի՝ 140 օր ընդհանուր տևողությամբ ժամկետը կազմում է 10 շաբաթ մինչև ծննդաբերությունը և 10 շաբաթ ծննդաբերությունից հետո:

Պարզ չէ, թե ինչու է նախածննդյան շրջանի համար հատկացվել արձակուրդի այսպիսի մեծ մաս, սակայն այն կարծես թե չի համապատասխանում դրամական օգնության ձևով մայրության նպաստների սկզբնական նպատակին, որն է՝ փոխհատուցել կանանց տնտեսական գործունեության ընդհատման հետևանքով եկամտի կորուստը, ինչը պարտադիր չէ, որ տեղի ունենա ծննդաբերության օրվանից 10 շաբաթ առաջ: Նախածննդյան շրջանի մեծ մասի ընթացքում շատ կանայք դեռևս կարող են աշխատել և հետևաբար հղիության և ծննդաբերության իրենց արձակուրդը սպառելու փոխարեն կարող են եկամուտ ստանալ ուղղակիորեն իրենց աշխատանքը կատարելով: Կարելի է ասել, որ դրամական օգնության կեսը մինչև երեխայի ծնունդը վճարելով՝ գործող քաղաքականությունը փաստացի սահմանափակում

է մայրության վճարովի արձակուրդի ժամկետը (10 շաբաթ), ինչը չի համապատասխանում ԱՄԿ-ի նվազագույն ստանդարտներին: Ծննդաբերությունից հետո մայրության արձակուրդը կարևոր է ֆիզիկապես վերականգնվելու, երեխայի հետ ամուր կապ հաստատելու, կրծքով կերակրելու, ինչպես նաև բժշկական հետազոտություններին և նորածնի պատվաստումներին ներկայանալու համար:

Ավելին՝ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 12 շաբաթից պակաս տևողությամբ արձակուրդը կարող է բացասական հետևանքներ ունենալ կանանց՝ արձակուրդից վերադառնալու որոշման վրա: Սա հաստատվել է Հայաստանի դեպքում՝ հաշվի առնելով մշտապես առկա աշխատաշուկայում մասնակցության գենդերային խզվածքը, ինչն ակնհայտ է դարձնում այն հանգամանքը, որ մայրերը դեռևս ստիպված են կրել այն ծախսերը, որոնք պայմանավորված են հետծննդյան արձակուրդի վերաբերյալ դրույթներով, ինչպես նաև բախվել աշխատումից հեռանալու ռիսկին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրամական օգնությունները պետք է նաև դյուրացնեն նորածին երեխայի խնամքը՝ հասկանալի է, թե ինչու աշխարհի շատ երկրներ արձակուրդի ժամկետի մեծ մասը հատկացնում են երեխայի ծննդից հետո ընկած ժամանակահատվածին: Առաջարկվում է կանանց հնարավորություն տալ պլանավորելու իրենց արձակուրդն ըստ իրենց անհատական և ընտանեկան կարիքների ու նախապատվությունների: Կանայք, որոնք ցանկանում են պահպանել նախածննդյան արձակուրդի համարժեք ժամկետը, կարող են այդպես վարվել, իսկ մյուսները կարող են ընտրել աշխատանքը շարունակելու տարբերակը՝ իրենց հետծննդյան արձակուրդի ժամկետը երկարաձգելու համար: Գործող քաղաքականության մեջ այսպիսի ճկունություն ապահովելը պետական բյուջեի համար լրացուցիչ ծախս չի լինի, և սա հավանաբար կարող է օգտակար լինել նաև գործատուների համար այն պատճառով, որ կանանցից չի պահանջվի արձակուրդ գնալ այն ժամանակ, երբ նրանք դեռևս ունակ և պատրաստակամ են աշխատելու:

Աշխատավարձին փոխարինող միջոցների չափը ազդում է նաև այն բանի վրա, թե վճարովի արձակուրդը որքանով կնպաստի գենդերային հավասարության ապահովմանը: Դրամական նպաստներն ապահովում են աշխատող մայրերի եկամուտը (ամրագրված դրույքաչափը կամ աշխատավարձի չափը տոկոսային հարաբերությամբ) երեխայի ծննդից առաջ կամ հետո: ԱՄԿ-ի թիվ 183 կոնվենցիայում սահմանվում է, որ մայրության արձակուրդի ընթացքում վճարվող դրամական նպաստը պետք է կազմի կնոջ՝ նախկին եկամուտների առնվազն երկու երրորդը, կամ առնվազն 14 շաբաթվա համար դրամական նպաստի չափը որոշելու նպատակով պետք է այլ՝ համադրելի մեթոդներ օգտագործվեն: Թիվ 191 հանձնարարականով այս ցուցանիշը բարձրացվել է մինչև նախկին եկամուտների 100 տոկոսը՝ նվազագույնը 18 շաբաթվա համար: Դրամական նպաստների չափը ամփոփ ներկայացված է ստորև.

- Վարձու աշխատող կամ ինքնազբաղված կանանց համար նախատեսված դրամական նպաստները հաշվարկվում են արձակուրդի ժամանակահատվածին նախորդող 12 ամիսների միջին ամսական աշխատավարձից: Այս դեպքում «եկամուտ» նշանակում է աշխատավարձ, որի նկատմամբ հաշվարկվում է եկամտային հարկ: Նպաստի չափը կազմում է միջին ամսական աշխատավարձ՝ բաժանած 30.4-ի (ամսվա օրերի միջին թիվը) և բազմապատկած 140-ով (հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամկետի օրացուցային օրերի թիվը): Վարձու աշխատողների կամ ինքնազբաղվածների համար նախատեսված նպաստի համար գործում է առավելագույն շեմ նվազագույն աշխատավարձի՝ համապատասխանաբար 15-ապատիկի և 5-ապատիկի չափով:
- Աշխատողների այս երկու խմբերի համար նաև գործում է նվազագույն շեմ՝ նվազագույն

աշխատավարձի 50 տոկոսի չափով: Եթե աշխատողը նախորդ 12 ամիսների ընթացքում արդեն եղել է խնամքի արձակուրդում, ապա նպաստի չափը հաշվարկվում է արձակուրդի ժամանակահատվածից առաջ ստացած նրա վերջին աշխատավարձի հիման վրա: Սա խնդրահարույց է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նպաստները հստակ ինդեքսավորված չեն, ինչը նշանակում է, որ եթե կինը երկու անգամ անընդմեջ վերցնում է երեք տարի ժամկետով արձակուրդ, ապա նրան տրամադրվող օգնությունն արժեզրկվում է վեց տարվա ընթացքում:

- Չաշխատող մայրերի համար նախատեսված մայրության նպաստը միանվագ դրամական աջակցություն է, որը տրամադրվում է բժշկական հաստատության կողմից տրված ժամանակավոր անաշխատունակության թեր-թիկի հիման վրա: Նպաստի չափը սահման-ված է նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով՝ բաժանած 30.4-ի և բազմապատկած հղիության և ծննդաբերության արձակուրդի 140 օրով: Սա նշանակում է, որ, ըստ էության, մայրության սոցիալական պաշտպանության նվազագույն շեմ է սահ-մանված նվազագույն աշխատավարձի 50 տոկոսը, և 140 օրվա համար այն այժմ կազմում է 156,579 ՀՀ դրամ:

6.2 աղյուսակում ամփոփ ներկայացված է կանանց տարբեր խմբերի համար նախատեսված մայրության նպաստների համարժեքությունը թիվ 183 կոնվենցիայով և թիվ 191 հանձնարարականով պահանջվող ամսական արժեքների նկատմամբ՝ որպես ելակետային աշխատավարձ օգտագործելով 2019 թվականի ԱՄԿՄՏՏՏ–ում արձանագրված՝ 25-54 տարեկան կին աշխատողների միջին ամսական աշխատավարձը՝ 100,644 ՀՀ դրամ (190 ԱՄՆ դոլար) և 72,083 ՀՀ դրամ (135 ԱՄՆ դոլար)՝ համապատասխանաբար քաղաքային և գյուղական բնակավայրերի համար: Չաշխատող կանանց համար որպես նախկին եկամուտների ելակետային աշխատավարձ օգտագործել ենք նվազագույն աշխատավարձը:

Աղյուսակ 6.2.

Հայաստանում մայրության նպաստի նվազագույն համարժեք չափերը (ՀՀ դրամ՝ ամսական)՝ ըստ զբաղվածության տեսակի. 2019 թ.

Ազգային մակարդակով սահմանված նպաստ	Բնակավայր	Ազգային մակարդակով սահմանված նպաստի արժեքը (առավելագույն շեմ), ՀՀ դրամ	Հիմնական տարիքի (25-54 տարեկան) աշխատող կանանց միջին ամսական աշխատավարձը, ՀՀ դրամ	Թիվ 183 կոնվենցիայում սահմանված՝ նախկին եկամուտների երկու երրորդը կազմող նպաստի չափը, ՀՀ դրամ	Թիվ 191 հանձնարարականում սահմանված՝ նախկին եկամուտների 100%-ը կազմող նպաստի չափը, ՀՀ դրամ
Վարձու աշխատող կանայք	Urban	825,000	100,644	67,096	100,644
	Rural	825,000	72,084	48,056	72,084
	Total	825,000	91,742	61,162	91,742
Ինքնազբաղված կանայք	Urban	275,000	100,644	67,096	100,644
	Rural	275,000	72,084	48,056	72,084
	Total	275,000	91,742	61,162	91,742
Չաշխատող կանայք	-	27,500	55,000	36,667	55,000

Աղբյուրը. ԱՄԿՄՏՏՏ-ի արձանագրած միջին ամսական եկամուտը:
Ծանոթագրություն. 2019 թվականին ԱՐՄՍՏԱՏ-ի հաղորդած միջին եկամուտը (145,198 ՀՀ դրամ) զգալիորեն շատ ավելի բարձր է, քան ԱՄԿՄՏՏՏ-ի արձանագրած և այստեղ օգտագործված միջին եկամուտը: ԱՐՄՍՏԱՏ-ը, սակայն, չի ներկայացնում ըստ սեռերի տարբերակված տվյալներ:

Պարզ վերլուծությունը ցույց է տալիս, որ առավելագույն շեմերը բավական բարձր են՝ վարձու աշխատող կամ ինքնազբաղված միջին կնոջ վրա չազդելու համար՝ թե՛ գյուղական և թե՛ քաղաքային բնակավայրերում (տե՛ս ստորև՝ Գծապատկեր 6.5)։ Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ մենք համեմատում ենք նպաստի առավելագույն շեմը միջին աշխատավարձի հետ, և հետևաբար այս աղյուսակը վկայում է այն մասին, որ սխեմայում միջին կին աշխատողի փոխհատուցման առավելագույն արժեքը սահմանվել է բավականին բարձր։ Սա չի նշանակում, որ նպաստն ինքնին բավարար է։ Խորհուրդ է տրվում իրականացնել ակտուարական գնահատում՝ գրանցված իրական եկամուտների նկատմամբ վճարվող իրական նպաստների համարժեքությունը գնահատելու, ինչպես նաև թիվ 183 կոնվենցիայում սահմանված ԱՄԿ-ի ստանդարտների իրագործման վրա այս առավելագույն շեմերի ազդեցության ամբողջ ծավալը որոշելու համար։

Գծապատկեր 6.5.

Մայրության նպաստի առավելագույն և նվազագույն շեմերը՝ միջին զուտ և անվանական աշխատավարձերի համեմատ. 2019 թ.



Աղբյուրը. ԱՐՄՍՏԱՏ (2019)։

Ըստ գործող մոդելի՝ քաղաքային բնակավայրերում բարձր վարձատրվող կանայք կարող են տեսականորեն հայտնվել անբարենպաստ իրավիճակում՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները։ Սա, բարձր վարձատրվող աշխատողների շրջանում վարձատրության գենդերային խզվածքի նկատելի մեծացման հետ միաժամանակ, կարող է անդրադառնալ այն հանգամանքի վրա, երբ կանայք, ունենալով ընտանիք, ընտրում են մասնագիտական առաջխաղացումը, և նրանց ընձեռվում է այդպիսի հնարավորություն։ Առավելագույն շեմի սահմանումը իրականում հակասում է թիվ 191 հանձնարարականում ներկայացված եկամտի ամբողջական փոխհատուցման գաղափարին։ Սակայն ամենամեծ ռիսկը, որին կանայք բախվում

են մայրության պաշտպանության շրջանակում, շարունակում է լինել նպաստների տրամադրման կարճ տևողությունը՝ ի տարբերություն այն ժամանակահատվածի, որի ընթացքում դրանք դեռևս անհրաժեշտ են, ինչպես նաև այն փաստը, որ վարձու աշխատող կանայք կարող են կորցնել նպաստ ստանալու իրավունքը, եթե չունեն զբաղվածություն ծննդաբերության ժամանակահատվածում՝ անկախ նախկինում աշխատանքային ստաժից: Այս ռիսկերն էլ ավելի են մեծանում՝ պայմանավորված այն փաստով, որ Հայաստանում գործող համակարգով գործազրկության ժամանակահատվածում եկամուտ չի ապահովվում:

Գալով չաշխատող մայրերի համար նախատեսված մայրության նպաստին՝ պետք է նշել, որ թեև նվազագույն եկամտի պաշտպանության շրջանակի ընդլայնումը ընդհանուր առմամբ բավականին դրական քայլ է, միանվագ նպաստները, որպես կանոն, շատ սահմանումներում չեն դիտարկվում որպես սոցիալական ապահովություն, քանի որ դրանցով չի ապահովվում կանոնավոր, կանխատեսելի եկամուտ ռիսկի առկայության ամբողջ ժամկետի ընթացքում: Խորհուրդ է տրվում այս նպաստը վերաձևակերպել որպես ամսական վճարումներ, ինչը հեշտիրագործելի է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն վճարվում է բացառապես բանկային գործառնությունների միջոցով: Ավելին, քանի որ դրամական նպաստների չափը պետք է բավարար լինի մոր և մանկան համար պատշաճ կենսամակարդակ ապահովելու համար, պատկան մարմինները պետք է դիտարկեն նվազագույն աշխատավարձին համապատասխանեցնելու նպատակով այս նվազագույն շեմը աստիճանաբար բարձրացնելու հարցը՝ որպես նվազագույն եկամտի՝ ազգային մակարդակով սահմանված սահմանաչափ:
Մայրերի եկամտին փոխարինող դրամական օգնության չափը տարբեր է աշխատող, ինքնազբաղված և չաշխատող կանանց համար, սակայն նրանց բոլորի դեպքում նպաստի տրամադրումը դադարեցվում է երեխայի ծննդից 70 օր հետո՝ մայրության արձակուրդի պաշտոնական ժամկետի հետ մեկտեղ: Սակայն գործնականում սա երեխայի խնամքի եռամյա ժամկետով արձակուրդի միայն սկիզբն է, երբ երեխային դեռևս անհրաժեշտ է խնամք, իսկ երեխայի խնամքի ծառայությունները թե՛ լայնորեն հասանելի չեն և թե՛ մատչելի չեն: Այսպիսով, թեև տեսականորեն Հայաստանը եկամտի ապահովություն է տրամադրում մայրության արձակուրդի ամբողջ ժամկետի ընթացքում, սակայն մայրության ու երեխայի խնամքի արձակուրդների իրավական տարբերակմամբ քողարկվել է այն փաստը, որ եկամտի այս ապահովությունն ընդգրկում է այն ժամանակահատվածը, երբ երեխայի խնամքի պարտականություններն անհամատեղելի են աշխատաշուկայում լրիվ դրույքով մասնակցության հետ՝ թողնելով ընտանիքներին այնպիսի իրավիճակում, երբ նրանք երեք տարվա ընթացքում բախվում են ընտանեկան եկամտի զգալի կրճատման խնդրին, կամ քանի դեռ երեխան չի կարող հաճախել ցերեկային խնամքի կենտրոններ: Հնարավորության դեպքում սոցիալական պաշտպանության համակարգերն այս բացը լրացնում են՝ դրամական օգնության ձևով մայրության արձակուրդի նպաստների տրամադրումը ժամանակային առումով համապատասխանեցնելով ցերեկային կենտրոններ հաճախելու տարիքի հետ: Ի վերջո կարևոր է ընդունել, որ մայրության նպաստները բավականին կարճաժամկետ բնույթ ունեն, և դրանցով երբեք չեն փոխհատուցվելու նս մեկ երեխայի դաստիարակման ծախսերը: Սոցիալական պաշտպանության համապարփակ համակարգում այս դերը վերապահված է ընտանեկան նպաստներին:

Հայաստանում «Պետական նպաստների մասին» օրենքով նախատեսվում է ամսական 18,000 ՀՀ դրամի (կամ 2020 թվականին նվազագույն ամսական աշխատավարձի 26 տոկոսի) չափով երեխայի խնամքի նպաստի իրավունք 2 տարեկանը չլրացած երեխաներ ունեցող այն ծնողների համար, որոնք դեռևս երեխայի խնամքի արձակուրդում են: Այս նպաստի նպատակն է մասամբ փոխհատուցել երեխայի դաստիարակման ծախսերը. հետևաբար սա Հայաստանի համակարգում առկա այն դրույթն է, որն ամենամոտն է կենսափուլային մոտեցմամբ

տրամադրվող ավանդական ընտանեկան նպաստին: Սակայն սահմանափակ տևողության պատճառով, որը հստակ համընկնում է երեխայի խնամքի արձակուրդի ժամկետին, նպաստը չի համարվում նշանակալի ընտանեկան նպաստ և ոչ էլ բավարարում է երեխայի խնամքի արձակուրդի ընթացքում եկամտի շարունակական հատուցման պահանջը:

Ինչպես ներկայացված է ստորև՝ 6.6 գծապատկերում, պատշաճ եկամտի պաշտպանությունը, ինչպես սահմանված է ԱՄԿ-ի ստանդարտներում, տրամադրվում է ընդհանուր եռամյա տևողությամբ ժամկետի միայն կարճ հատվածի համար, երբ ընտանիքներին հասանելի չեն երեխայի խնամքի ծառայությունները՝ բացառությամբ այն խնամքի, որը կարող են տրամադրել իրենք: Այս առումով կարևոր է հասկանալ, որ թեպետ Հայաստանի իրավական դաշտում տարբերակվում են մայրության արձակուրդն ու երեխայի խնամքի արձակուրդը՝ որպես հստուկ արձակուրդի երկու տարբեր տեսակներ, գործնականում երեխայի խնամքի արձակուրդի իրավունքը չի կարող իրացվել առանց համաչափ եկամտի պաշտպանության, որը հասանելի է միայն հղիության և ծննդաբերության արձակուրդի շրջանակում: Գծապատկերից նաև ակնհայտ է դառնում վարձու աշխատող կանանց և մյուսների միջև բաշխվող միջոցների անհավասարությունը:

Գծապատկեր 6.6.

Հայաստանում երեխայի խնամքի արձակուրդի ամբողջ ընթացքում եկամտի պաշտպանությունը



Աղբյուրը. Գծապատկերը՝ հեղինակի:
Ծանոթագրություն. Այստեղ ներկայացված մասնաբաժինները համամասնական չեն, այլ կրում են պայմանական բնույթ՝ խմբերի միջև առկա խզվածքը պատկերելու համար:

Ի վերջո, երեխայի խնամքի արձակուրդի առաջին 70 օրը լրանալուց հետո եկամտին փոխարինող միջոցների բացակայությունը հանգեցնում է այնպիսի իրավիճակի, երբ կանանց համար անհրաժեշտ է դառնում իրենց կենսամակարդակն ապահովելու համար կրկին միանալ աշխատուժին: Սակայն երեխայի խնամքի լայնորեն հասանելի և մատչելի ծառայությունների բացակայությունը բարդացնում է դա. վերջինս մեղմելուն է ուղղվել երեխայի խնամքի արձակուրդը, սակայն դա չի հաջողվել, քանի որ չի ուղեկցվել եկամտին փոխարինող նպաստներով: Որպես արձագանք այն ճնշումների, որոնց կանայք ենթարկվում են իրենց եկամուտը պահպանելու համար, Կառավարությունը ներդրել է, այսպես կոչված, զբաղվածության խթանման միջոցառում՝ «դայակների ծրագիր»:

Այս ծրագիրը ենթադրում է մասնակի սուբսիդավորման տրամադրում երեխայի խնամքի արձակուրդում գտնվող խնամատարներին՝ երեխայի խնամքը ֆինանսավորելու համար (կամ դայակ վարձելու համար), որպեսզի նրանց հնարավորություն ընձեռեն վերադառնալու աշխատանքի: Ըստ էության, սուբսիդավորումը երեխայի խնամքի արձակուրդից ավելի շուտ աշխատանքի վերադառնալու հնարավորություն է տալիս, ինչը նախ և առաջ երեխայի խնամքի բավականաչափ հնարավորությունների բացակայությունը մեղմելուն ուղղված միջոցառում է: Կրկին, սա վկայում է մայրության պաշտպանության գործող համակարգում եկամտին փոխարինող միջոցների անբավարարության, ինչպես նաև սոցիալական պաշտպանության և քաղաքականության այլ ոլորտների միջև առկա համընկնումների մասին: Սա օրինակ է այն բանի, թե ինչպես կարող են սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքում առկա թույլ կողմերն առաջ բերել զբաղվածության խթանման ծրագրերի ներդրման անհրաժեշտություն: Մասնավոր դայակներ վարձելու համար սուբսիդավորում տրամադրելու փոխարեն մայրության համակարգում առկա բացերին առավել համակարգված և հստակ արձագանք կլիներ երեխայի խնամքի առավել լայն երաշխիքների ապահովումը՝ երեխայի խնամքի վճարովի արձակուրդի կամ հանրային ծառայությունների ձևով:

Համաձայն վերջերս Համաշխարհային բանկի առաջարկության՝ առանցքային քայլերից մեկը, որ Հայաստանը կարող է ձեռնարկել աշխատուժին մասնակցությունը խթանելու ուղղությամբ, երեխայի խնամքի որակյալ ծառայությունների ինստիտուտի ստեղծումն է[116]: Դա միաժամանակ մի քանի խնդիր կլուծեր. երեխա ունենալու արժեքը և դրա ազդեցությունը ծնելիության վրա, ինչպես նաև կանանց վրա բեռը՝ չվճարվող խնամքը աշխատանքի հետ համատեղելու համար: Այսպիսի նախաձեռնության շնորհիվ կարող է նաև ձևավորվել երեխայի ֆորմալ խնամքի ճյուղը, որը կարող է թե՛ օգնել ժողովրդագրական ծանրաբեռնվածությունը նվազեցնելու և թե՛ քաղաքային ու գյուղական բնակավայրերում կանանց՝ ցածր որակավորում ունեցող հատվածի համար աշխատանքի հնարավորություններ ապահովելու հարցերում: Ինչպես նշվել է զեկույցում, վաղ տարիքում երեխաների զարգացման բարձրորակ միջոցառումները կարող են հիմք դառնալ հմտությունների զարգացման և բարձր արտադրողականության համար: Մայրության պաշտպանության համակարգը կատարելագործելուն ուղղված այս և մյուս քաղաքականությունները կծառայեն որպես կարճաժամկետ միջոցառումներ՝ ի լրումն երկրի՝ բնակչությանն առնչվող երկարաժամկետ նպատակների:

Ընդհանուր առմամբ Հայաստանի մայրության պաշտպանության համակարգը զգալի թերություններ ունի: Իր այժմյան կառուցվածքով այն նվազագույն եկամտի պաշտպանություն է ապահովում բոլորի համար, սակայն դրա շրջանակը չափազանց սահմանափակ է՝ ապահովելու այլ ռազմավարական նպատակների իրագործումը, այդ թվում՝ կանանց տնտեսական հնարավորությունների ապահովումը և խնամքի ու աշխատանքի միջև հավասարակշռության սահմանումը, ինչը կարող է նպաստել ծնելիության մակարդակի բարձրացմանը: Դրա համար կպահանջվի զգալի տնտեսությամբ ավելի բարձր նպաստների տրամադրում, ինչպես ներկայացված է ՏՀԶԿ-ի՝ բնակչության ծերացման դեմ պայքարող երկրների մասին զեկույցում:

116 Honorati et al. (2019):

6.3

ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՎԱԾՔ

Աշխատավայրում առաջացող փասավածք-ներից և մասնագիտական հիվանդություններից պաշտպանությունը ցանկացած սոցիալական պաշտպանության համակարգի առանցքային մասն է: Աշխատավայրում առաջացած փասավածքների համար նպաստները շատ երկրներում ներառում են փասավածք ստացած աշխատողների համար բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև եկամտին առնչվող դրամական օգնության ձևով նպաստների պարբերական տրամադրում հաշմանդամություն ունեցող աշխատողներին (կամ մահացած աշխատողի ընտանիքի անդամներին, այդ թվում՝ թաղման նպաստ): Աշխատանքային փասավածքների ու հիվանդությունների ռիսկին առնչվող խնդիրներին լուծում տալու համար շատ երկրներ կիրառում են սոցիալական ապահովագրության համակարգերը: Այդ համակարգերը գործում են հետևյալ սկզբունքներով[117].

1. «Առանց մեղավորության», այսինքն՝ փասավածք ստացած աշխատողը կամ մահացած աշխատողի ընտանիքի անդամը պետք է ձեռք բերի նպաստների իրավունք առանց գործատուի «մեղավորությունը» ապացուցելու անհրաժեշտության:
2. Գործատուների շրջանում պատասխա-նատվության կոլեկտիվ կրում:
3. Սխեմայի գործողության չեզոք կառավարում, այսինքն՝ նպաստի իրավունքը սահմանվում է աշխատողի և գործատուի միջև առկա պայմանագրային հարաբերությունների շրջանակից դուրս:

Աշխատավայրում առաջացած փասավածքների առնչությամբ շատ ազգային սխեմաների նպատակներն ավելի ընդգրկուն են, օրինակ՝ փասավածք կամ հիվանդություն ձեռք բերած աշխատողի վերականգնում և կրկին աշխատանքի տեղավորում, ինչպես նաև աշխատավայրում առաջխաղացում և առողջության ու անվտանգության ապահովում: Այս նպատակների իրագործումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա է մասնագիտական անվտանգության և առողջության պահպանման համալիր միջոցառումների, ստուգման և վերահսկողության միջոցառումների ինտեգրված շրջանակ, ինչպես նաև դրամական օգնության և բժշկական սպասարկման համարժեք նպաստներ աշխատանքային փասավածքների և հիվանդությունների դեպքում՝ զուգորդված ֆիզիկական և մասնագիտական վերականգնման պատշաճ ծառայությունների տրամադրմամբ:

Աշխատավայրում առաջացած փասավածքների համար նախատեսված՝ ֆինանսապես կայուն և կառավարման առումով արդյունավետ սխեման փասավածք ստացած աշխատողներին և փասավածք ստացած ու մահացած աշխատողների ընտանիքներին աղքատության մեջ հայտնվելուց պաշտպանելուն ուղղված կարևոր քայլ է:

[117] ԱՄԿ (2017):

6.3.1
Իրավական ծածկույթ

Հայաստանում «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով նախատեսվում է հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական մարմնի կողմից[118] հաշմանդամ ճանաչված աշխատողի համար, եթե հաշմանդամություն սահմանելու կամ կենսաթոշակ նշանակելու համար դիմելիս նա ունեցել է սահմանված աշխատանքային ստաժ (տե՛ս Աղյուսակ 6.3): Ուստի իրականում աշխատուժի կեսից պակասն է իրավասու ստանալու այս նպաստները՝ տարիքային և աշխատանքային ստաժի պահանջներին համապատասխան:

Աղյուսակ 6.3.

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի համար տարիքային և աշխատանքային ստաժի պահանջները

Տարիքային խումբ (տարեկան)	Աշխատանքային ստաժ (տարի)
Մինչև 23	2
23–26	3
26–29	4
29–32	5
32–35	6
35–38	7
38–41	8
41–44	9
44+	10

Աղբյուրը. Հայաստան (2010):

Սակայն բժշկական ծախսերը փոխհատուցելու վերաբերյալ որևէ որոշակի դրույթ չկա, ինչն առավել մտահոգիչ է՝ հաշվի առնելով Հայաստանում գործող ՀԾՓ-ի սահմանափակ ծածկույթը, որում ընդգրկված չեն թանկարժեք ծառայությունները: Սա կարևոր բաց է Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգում, մասնավորապես կորոնավիրուսային հիվանդության համավարակի համատեքստում, ինչն ակնհայտ է դարձրել արդյունավետորեն գործող՝ աշխատավայրում առաջացած փասվածքներից ապահովագրության սխեմաներ ունենալու կարողությունը՝ վարակակիր անձանց և նրանց ընտանիքները պաշտպանելու համար:

Թեպետ շատ երկրներում աշխատողին և կերակրողին կորցրած ընտանիքի անդամներին փոխհատուցում տրամադրելը գործատուների պարտավորությունն է, Հայաստանում գոյություն չունի տվյալ ոլորտում աշխատողների կյանքի և առողջության ապահովագրության համակարգ: Թեև Կառավարությունը նախկինում քննարկել

[118] ԲՍՓԳ-ն ԱՍՀՆ-ին կից գործող մարմին է, որը ծառայություններ է մատուցում բժշկասոցիալական ոլորտում, իրականացնում է աշխատունակության կորստի բժշկասոցիալական փորձաքննություն և քննություն, վերլուծություն ցանկացած պատահարի կամ հիվանդության դեպքում՝ սահմանելով հաշմանդամության աստիճանը տոկոսներով:

է «Արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» օրենքի նախագիծը, որի հիման վրա ստեղծվելու էր արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության լիազորված մարմին, սա երբեք էլ կյանքի չի կոչվել[119]: Դա հավանաբար պայմանավորված է ընդհանուր համակարգում տիրող հակընթաց միտումով, որի հետևանքով հրաժարվել են ապահովագրության մեխանիզմներից՝ հօգուտ ուղղակի պետական ֆինանսավորման (տե՛ս Հավելված 2): Այս մոտեցման սահմանափակումները լավագույնս ակնհայտ են դառնում այնպիսի սխեմաներում, ինչպիսին է աշխատավայրում առաջացած վնասվածքի սխեման, ստորև ներկայացված պատճառներով:

Մինչ օրս գոյություն չունի մասնագիտական անվտանգության և առողջության (ՄԱԱ) պահպանման ոլորտի համար հատուկ նախատեսված օրենսդրություն, հետևաբար գոյություն չունի համակարգային մոտեցում մասնագիտական անվտանգության խնդիրներին, այդ թվում՝ վնասվածքներից ապահովագրությանը: Արհմիությունների և ԱՄՀՆ-ի հետ անցկացված խորհրդակցությունների արդյունքում հաստատվել է, որ ներկայումս գոյություն չունեն աշխատավայրում առաջացած վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների համար պետական երաշխիքներ: Այս զեկույցի շրջանակում ուսումնասիրված որևէ օրենսդրության մեջ ևս որոշակի անդրադարձ չի արվում այս ոլորտին: Մակերեսային ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՄԱԱ-ի վերաբերյալ հիմնական կարգավորումները կենտրոնացված բնույթ չունեն. դրանք ընդգրկված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Աշխատանքի պետական տեսչության մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» (2005 թվական) և «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքների կազմում և այլ օրենսդրական ակտերում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվում է, որ աշխատավայրում դժբախտ դեպքերի կամ մասնագիտական հիվանդությունների դեպքում աշխատողը պետք է անմիջապես այդ մասին հայտնի իր գործատուին: Գործատուն այնուհետև անցկացնում է ծառայողական քննություն դժբախտ պատահարի կամ հիվանդության պատճառը պարզելու համար, սակայն օրենսգրքում առկա չէ որևէ այլ դրույթ այդ պատահարների հատուցման վերաբերյալ: Կառավարության 1992 թվականի թիվ 579 որոշման մեջ ամրագրված է, որ գործատուն պետք է փոխհատուցում վճարի այն դեպքում, երբ վնասվածքը պատճառվել է գործատուի մեղքով, սակայն գոյություն չունի որևէ համապարփակ ուղեցույց այն մասին, թե ինչպես է որոշվելու դա: Ամենայն հավանականությամբ սա նշանակում է, որ ապացուցման բեռը կրում են աշխատողները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նույնպես առկա են որոշակի ընդհանուր դրույթներ վնասվածքների դեպքում փոխհատուցման վերաբերյալ, որոնք միայն աշխատանքային չեն:

Արտադրությունում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների գրանցամատյանի բացակայության հետևանքով դժվար է գնահատել այս դեպքերի հաճախականությունը և դրանց վերաբերյալ հաղորդում ներկայացնելու և փոխհատուցում տրամադրելու պարբերականությունը: Սա դժվարացնում է նորմատիվ իրավական դաշտի՝ երկրի տնտեսական զարգացման տեմպին համընթաց լինելու գործընթացը: Համաձայն ԱՄԿՍՏԱՏ-ի՝ 2019 թվականին աշխատավայրում մահվան ելքով դժբախտ պատահարների և աշխատավայրում կյանքի համար ոչ վտանգավոր վնասվածքներ ստանալու դեպքերը (100,000-ի հաշվարկով) Հայաստանում կազմել են համապատասխանաբար 4.4 և 35.1:

[119] ԱՄԿ (2008):

Համեմատության համար՝ հարևան Վրաստանի ցուցանիշները կազմել են 2.2 և 9.7:

Հետևաբար խորհուրդ է տրվում համապարփակ ձևով վերանայել ՄԱԱ-ին և աշխատավայրում առաջացած փասվածքից պաշտպանության առնչվող ազգային օրենսդրությունը՝ միջազգային ստանդարտներին, մասնավորապես ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիային համապատասխանության տեսանկյունից պատշաճ գնահատելու, ինչպես նաև աշխատանքային փասվածքների և հիվանդությունների դեպքում աշխատողներին պաշտպանելու անհրաժեշտությունը սահմանելու համար: Սրա կարևոր մասն է համարվում հաշվառման համակարգի մշակումը, որը կընձեռի միտումների, այդ թվում՝ այն ոլորտների վերլուծության ավելի մեծ հնարավորություն, որոնցում նկատվում են դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների ավելի բարձր ցուցանիշներ:

Գործատուները պարտավոր են ապահովել աշխատանքի անվտանգությունը և իրենց աշխատողների առողջության պահպանումը, ինչպես նաև տրամադրել բավարար, համաչափ և արդյունավետ փոխհատուցում փասվածք ստացած աշխատողներին և մահացած աշխատողների ընտանիքներին: Եթե փոխհատուցման մեխանիզմները չեն գործում, ապա փասվածք ստացած աշխատողի կամ նրա ընտանիքի անդամների՝ հատուցում ստանալու միակ հույսը նրա գործատուի կողմից տրվող ուղղակի փոխհատուցումներն են: Քանի որ որոշ գործատուներ կարող են օգտագործել մասնավոր ապահովագրությունը՝ պատասխանատվությունից իրենց ազատելու համար, այս մոտեցումն ունի լուրջ թերություններ (օրինակ՝ կոնկրետ ապահովագրողի հետ կնքված պայմանագրի լուծարում, երկարատև վարչական ընթացակարգերի հետևանքով պահանջվող գումարի վճարման ձգձգումներ, գործատուների՝ պահանջ ներկայացնելու դժկամություն իրենց հավելավճարները բարձրացնելու դեպքում և այլն):

Ներդիր 6.3.

Հայաստանի վերաբերյալ ԿՀԿՓՀ-ի դիտարկումները (2021)[120]

ԱՄԿ-ի կոնվենցիաների և հանձնարարականների կիրառման հարցերով զբաղվող փորձագետների կոմիտեն (ԿՀԿՓՀ) վերջերս Հայաստանի համար հրապարակել է «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի (թիվ 17) կոնվենցիայի՝ երկրի կողմից 2004 թվականին վավերացվելու վերաբերյալ դիտարկումները: Կոմիտեն նշել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) դիտարկումները գործատուի կամ ապահովագրողի անվճարունակության դեպքում արտադրական պատահարների համար փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ: Կոմիտեն նախկինում Կառավարությունից պահանջել է անհապաղ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ 2004 թվականից հետո լուծարված ընկերությունների՝ փասվածք ստացած 800 աշխատող (որոնց Կառավարության 2004 թվականի թիվ 1094 որոշման ընդունումից հետո չի վճարվել փոխհատուցում) ստանա պատշաճ փոխհատուցում: Կոմիտեն Կառավարությանը կոչ է արել փոխհատուցում տրամադրելու վերոնշյալ աշխատողներին, ինչպես նաև հետայսու այդպիսի կարգավիճակում հայտնված աշխատողներին: Այսպիսով՝ Կոմիտեն ակնկալում է, որ Կառավարությունը հնարավորինս շուտ զեկուցի այնպիսի միջոցառումներ ձեռնարկելու մասին, որոնք անհրաժեշտ են գործատուի կամ ապահովագրող անվճարունակության դեպքում փասվածք ստացած աշխատողներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց պատշաճ և արդյունավետ փոխհատուցում տրամադրելու համար:

[120] ԱՄԿ (2021):

Կոմիտեն, հետևաբար, իր 328-րդ նստաշրջանում (2016 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր) կոչ է արել Կառավարությանը հետևողականորեն կատարելու Կառավարող մարմնի որոշումը, համաձայն որի՝ անդամ պետությունները, որոնց համար գործում է Կոնվենցիան, պետք է վավերացնեն առավել արդիական՝ «Աշխատավայրում առաջացած փասվածքների հետ կապված նպաստների մասին» 1964 թվականի (թիվ 121) կոնվենցիան կամ «Սոցիալական ապահովության (նվազագույն ստանդարտներ) մասին» 1952 թվականի (թիվ 102) կոնվենցիան՝ աշխատավայրում առաջացած փասվածքներին առնչվող նպաստների նկատմամբ առավել ժամանակակից մոտեցում ցուցաբերելու համար:

6.3.2
Փաստացի ծածկույթ

Ըստ վարչական տվյալների՝ 2019 թվականին 1,590 անձ կամ աշխատունակ տարիքի բնակչության 0.8 տոկոսը ստացել է հաշմանդամության (պետական) կենսաթոշակ՝ աշխատանքային պարտականությունների կատարմանն առնչվող փասվածքների կամ մասնագիտական հիվանդությունների համար: Այս դիմումներից 86 տոկոսը վերաբերել է աշխատանքային պարտականությունների կատարմանն առնչվող փասվածքներին՝ մասնագիտական հիվանդությունների վերաբերող դիմումների միայն 14 տոկոսի համեմատ: Ընդհանուր առմամբ, կանայք կազմել են աշխատավայրում առաջացած փասվածքի համար կենսաթոշակ ստացողների մեկ երրորդը (521), իսկ տղամարդիկ՝ երկու երրորդը (1,069): Սակայն, ինչպես ներկայացված է 6.7 գծապատկերում, մասնագիտական հիվանդությունների կենսաթոշակների համար դիմածների թվում մեծամասնություն են կազմել կանայք (54.4 տոկոս), իսկ աշխատանքային պարտականությունների կատարմանն առնչվող փասվածքների համար նախատեսված կենսաթոշակների համար դիմածների թվում (54 տոկոս)՝ տղամարդիկ:

Գծապատկեր 6.7.

Աշխատավայրում առաջացած փասվածքների/մասնագիտական հիվանդությունների համար նախատեսված նպաստներ ստացողներ՝ ըստ սեռի. 2019 թ.



Աղբյուրը. Վարչական տվյալներ:

Գենդերով պայմանավորված այս տարբերությունները, ըստ էության, արտացոլում են աշխատաշուկայում առկա սեգրեգացիան, ինչպես նաև այն հանգամանքը, որ տղամարդկանց հետ առավել հաճախ են տեղի ունենում աշխատանքային պարտականություններին առնչվող դժբախտ պատահարներ, սակայն կանանց շրջանում դիմումների ընդհանուր առմամբ փոքրաթիվ լինելը կարող է նաև նշանակել աշխատավայրում այնպիսի մասնագիտական

ռիսկերի և պայմանների առավել սահմանափակ տեսանելիություն, որոնց ներգործությանը կարող են ենթարկվել կանայք աշխատավայրում[121]: Մասնագիտական հիվանդությունների և աշխատանքային փասավածքների՝ գենդերային հիմքով տարբերակված բնույթի համապարփակ վերլուծությունն այս առաջադրանքի շրջանակից դուրս է, սակայն կարևոր է, որպեսզի պատկերացում կազմենք այն որոշակի և տարբերակված ռիսկերի մասին, որոնց Հայաստանում կանայք և տղամարդիկ, ըստ էության, բախվում են, պատկերացում կազմենք այն մասին, թե որքանով են կանանց վրա ազդող պայմաններն արտացոլված գնահատման գործընթացում, և որքանով են կանայք իրազեկված սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակում իրենց համար առկա տարբերակների մասին:

Ի վերջո, ինչպես նշվել է վերևում, Հայաստանում շատ աշխատող կանայք և տղամարդիկ՝ շուրջ 46 տոկոսը, չունեն ապահովված զբաղվածություն և, հետևաբար, չեն կարող օգտվել «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով աշխատավայրում փասավածքների առաջացման ռիսկերի համար նախատեսված պաշտպանությունից: Աշխատանքային պարտականությունների կատարմանն առնչվող դժբախտ պատահարների, հիվանդությունների կամ մահվան դեպքում այս աշխատողները և նրանց ընտանիքները բացարձակապես անպաշտպան են:

6.4
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Հիվանդության նպաստների նպատակն է տրամադրել եկամտի ապահովություն հիվանդության, կարանտինի կամ խնամքի տակ գտնվող հարազատի հիվանդության դեպքում: Ըստ էության՝ այն սոցիալական պաշտպանության գործիք է, որի նպատակը հանրային առողջությունն է: Հիվանդության նպաստները հնարավորություն են տալիս աշխատողներին վերականգնվելու նպատակով տանը մնալու այնքան ժամանակ, քանի դեռ լիովին չեն առողջացել՝ այդպիսով պաշտպանելով իրենց առողջությունը, իսկ վարակիչ հիվանդությունների դեպքում՝ այլոց առողջությունը: Համաձայն Մարդու իրավունքների պաշտպանության շրջանակի և աշխատանքի միջազգային ստանդարտների՝ հիվանդության նպաստները համարվում են առողջության սոցիալական պաշտպանության կարևոր տարր, որի նպատակն է ապահովել առողջապահական ծառայությունների անարգել և արդյունավետ հասանելիություն, ինչպես նաև տրամադրել եկամտի ապահովություն՝ պետական կամ պետական մակարդակով կազմակերպված միջոցառումների իրականացմամբ հիվանդության հետևանքով եկամտի կորուստը փոխհատուցելու համար[122]: Կորոնավիրուսային հիվանդության ճգնաժամն ապացուցել է վատառողջ լինելու, այդ թվում՝ կարանտինի ընթացքում եկամտի ապահովության կարևորությունը: Հիվանդության նպաստները և վճարովի հիվանդության արձակուրդը առանցքային նշանակություն ունեն առողջության վատթարացման, առողջության վատթարացմամբ պայմանավորված աղքատության և արտադրողականության կորստի դեմ պայքարելու համար:

[121] (EU-OSHA, n.d.):
[122] ԱՄԿ (2020թ):

6.4.1
Իրավական ծածկույթ

Համաձայն «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (2010)՝ հիվանդության կամ «ժամանակավոր անաշխատունակության» նպաստները տրվում են հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման և ընտանիքի անդամի հիվանդության պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտության, ինչպես նաև հղիության և ծննդաբերության արձակուրդի դեպքերում։ Ժամանակավոր անաշխատունակության նպաստները տրվում են, եթե չնախատեսված իրավիճակն առաջացել է աշխատանքային հարաբերություններում գտնվելու ժամանակահատվածում, ինչպես սովորաբար լինում է այդպիսի նպաստների դեպքում։ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով սահմանվում է գործողության շրջանակը՝ ներառելով ֆորմալ զբաղվածություն ունեցող աշխատողներին (բացառությամբ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված անձանց) և ինքնազբաղված աշխատողներին, որոնք վճարել են եկամտային հարկ։ Այս առումով հիվանդության նպաստները նման են պետական կենսաթոշակներին։ Սակայն հիվանդության դեպքում գոյություն չունի հատկացումների կատարմամբ չպայմանավորված դրամական օգնություն՝ վերոնշյալ օրենքի գործողության շրջանակից դուրս գտնվող անձանց ապահովելու համար։

Սա նշանակում է, որ աշխատող անձանց միայն 56 տոկոսը, աշխատուժի կեսից պակասը (45 տոկոսը) և աշխատունակ բնակչության (15-64 տարեկան) մեկ երրորդից պակասն ունեն այս ռիսկի նկատմամբ իրավական ապահովում (Գծապատկեր 6.8)։ Այս թվային տվյալները համաշխարհային համավարակի պայմաններում ձեռք են բերում բոլորովին նոր նշանակություն, քանի որ դրանք վկայում են, որ մեծ թվով աշխատողներ կարանտինի կամ հիվանդության դեպքում չունեն եկամտի ապահովություն։

Գծապատկեր 6.8.

Ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում. 2019 թ.



Աղբյուրը. Հիմք են ընդունվել ԱՄԿՍՏՏՏ-ը և հեղինակի՝ 2019 թվականի ԱՀ-ի արդյունքների վերլուծությունը։

Բացի վճարովի արձակուրդից՝ ԱՄԿ-ի թիվ 134 կոնվենցիայով նաև կոչ է արվում սահմանելու պատշաճ դրույթներ՝ իրենց խնամքի տակ գտնվող հիվանդ ընտանիքի անդամի մասին հոգ տանելու հարցում տնտեսապես ակտիվ անձանց օգնելու նպատակով: Հայաստանի համակարգը հատկապես շռայլ է այս առումով: Վարձու աշխատողներին բացակայության երկրորդ օրվանից տրվում է վճարովի արձակուրդ հետևյալ դեպքերում.

- Տնային պայմաններում ընտանիքի հիվանդ չափահաս անդամի խնամք մինչև յոթ օր ժամկետով:
- Տնային պայմաններում հիվանդ երեխայի խնամք մինչև 24 օր կամ մինչև 28 օր՝ վարակիչ հիվանդությունների դեպքում:
- Հիվանդանոցում գտնվող հիվանդ երեխայի խնամք՝ այնտեղ գտնվելու ամբողջ ժամանակահատվածում:
- Մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի ստացիոնար բուժման ընթացքում նրա խնամքի իրականացում՝ ուղեգրում նշված բուժման ամբողջ ժամանակահատվածում՝ տարին մեկ անգամ:
- Մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի խնամք: Եթե մայրը (կամ խնամակալը/ հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մեկ այլ հիվանդ անդամի խնամքն իրականացնելու պարտականության պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնելու, նպաստը տրվում է մեկ այլ աշխատող վարձելու համար՝ երեխայի խնամքը հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում իրականացնելու համար:

Այս համակարգը համարվում է շռայլ ոչ միայն այն պատճառով, որ դրանում ներառված է խնամքի պարտականություններն իրականացնելու համար վճարովի արձակուրդ, այլև այն պատճառով, որ սահմանված են խնամքի պարտականությունների այն բոլոր տարատեսակները, որոնք կարող են կրել աշխատողները: Սա, անշուշտ, հատկապես կարևոր է կանանց դեպքում, որոնք, ինչպես նկատել ենք, Հայաստանում իրենց ուսերին են կրում խնամքի բեռի հիմնական մասը՝ ի փաս աշխատաշուկայում իրենց մասնակցության (տե՛ս Գծապատկեր 6.2): Այսպիսի դրույթները կարևոր են այդ հետևանքները մեղմելու համար: Սակայն այդ նպատակը կարող էր ավելի հեշտությամբ իրագործվել, եթե խնամքի բեռն ի սկզբանե ավելի հավասարաչափ բաշխված լիներ: Օրենսդրության մեջ առկա կոնկրետ հղումը «մայրերի»՝ հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու կարողությանը, անշուշտ, հանգեցնում է գործատուների շրջանում այն պատկերացման ձևավորմանը, որ կանայք սակավ վստահելի և ավելի թանկարժեք աշխատողներ են, իսկ լայն հասարակության շրջանում՝ որ ընտանիքի հիվանդ անդամի խնամքն իրականացնելը մոր (և ոչ թե հոր) պարտականությունն է:

Հիվանդության նպաստների տրամադրման վերաբերյալ վարչական տվյալներ հասանելի չեն, սակայն հետաքրքիր կլիներ վերլուծել դրանք գենդերային տեսանկյունից: Գենդերային հիմքով սոցիալական նորմերի մշակույթում իմանալը, թե ինչ պայմաններում են տղամարդկանց և կանանց տրվում հիվանդության նպաստներ և արձակուրդ, կարող է լույս սփռել այն բանի վրա, թե ինչպես է սոցիալական ապահովության համակարգը գործում այդ անհավասարակշռության դրսևորումներին արձագանքելու ուղղությամբ, և որքանով է դա իրականում ապահովվում:

6.4.2
Փաստացի ծածկույթ

Հորիզոնական ծածկույթ

Իրավական և փաստացի ապահովման միջև առկա բացերն ամենայն հավանականությամբ պայմանավորված են հարկային վճարումների կատարմամբ, մասնավորապես ինքնազբաղված անձանց շրջանում: Հիվանդության նպաստների փաստացի ապահովումը կարող են խաթարել շատ այլ խոչընդոտներ, օրինակ՝ վարչական կամ աշխարհագրական խոչընդոտները, հաշվառման ընթացակարգը չկատարելը կամ իրազեկվածության բացակայությունը[123]:

Հիվանդության նպաստներին վերաբերող միջազգային ստանդարտներով[124] պահանջվում է հիվանդության նպաստների տրամադրման գործընթացը կազմակերպել ամենաարդյունավետ և կենսունակ եղանակով՝ ապահովելով նպաստների հասանելիություն բոլորի համար: ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայում սահմանվում է, որ այդպիսի նպաստներին առնչվող ծախսերը և դրանց կառավարումը պետք է կատարվեն միասնաբար: Հայաստանի դեպքում ժամանակավոր անաշխատունակության բոլոր նպաստները ֆինանսավորվում են հիմնականում պետական բյուջեից՝ կարևոր վերապահմամբ: Մասնավորապես, հիվանդության դեպքում գործում է նպաստները ստանալու մեկօրյա սպասման ժամկետ: Սա համապատասխանում է միջազգային ստանդարտներին, որոնցով սահմանվում է առավելագույնը եռօրյա ժամկետ: Հաջորդ հինգ աշխատանքային օրերի համար վճարում է անմիջապես գործատուն, և դրանք չեն փոխհատուցվում, իսկ նպաստի մնացած մասը տրամադրվում է պետական բյուջեից: Ի տարբերություն ապահովագրության մեխանիզմի՝ ֆինանսավորման այս մեխանիզմը, որի հիմքում մասամբ ընկած է գործատուի պարտավորությունը, կարող է բացասական ազդեցություն ունենալ աշխատաշուկայի վրա:

Օրինակ՝ աշխատանքի ընդունելիս գործատուները կարող են խտրական վերաբերմունք ցուցաբերել կանանց այն կատեգորիաների նկատմամբ, որոնք ենթադրաբար առավել հաճախ կվերցնեն հիվանդության արձակուրդ, ինչպես, օրինակ՝ մանկահասակ երեխաներ ունեցող կանայք: Որպես արդյունք՝ այս կանայք կարող են ստիպված լինել չվերցնել հիվանդության արձակուրդ, երբ դա անհրաժեշտ է: Գործատուի պարտավորությունը ևս անհամաչափ է հանրային առողջապահական ճգնաժամի կամ համավարակների դեպքում. ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված ճգնաժամը նման օրինակ է, երբ ամբողջ աշխարհում անսպասելիորեն մեծ ֆինանսական բեռ դրվեց այնպիսի ձեռնարկությունների ուսերին, որոնք փորձում էին պահպանել իրենց գոյությունը:

Միևնույն ժամանակ, Հայաստանի համակարգի դրական հատկանիշն այն է, որ ֆինանսավորման խառը համակարգը թույլ է տալիս Կառավարությանը պաշտպանություն տրամադրել ինքնազբաղված անձանց՝ առնվազն նրանց, որոնք վճարում են եկամտային հարկ: Այս առումով, հիվանդության նպաստների հորիզոնական ծածկույթը սահմանափակված է հարկային համակարգի շրջանակով (տե՛ս Բաժին 2.2.2): Համապատասխանաբար, համակարգում ընդգրկված չեն աշխատողների առանձին կատեգորիաներ, որոնք չեն համապատասխանում ԱԵՀ վճարելու իրավունք ձեռք բերելու պահանջներին՝ անկախ այն հանգամանքից՝ դա պայմանավորված է նրանց զբաղվածության կարգավիճակով, թե եկամտի մակարդակով:

---

[123] Scheil-Adlung and Bonnet (2011):

[124]«Եկամտի ապահովության մասին» 1944 թվականի (թիվ 67) հանձնարարական, «Սոցիալական ապահովության մասին (նվազագույն ստանդարտներ)» 1952 թվականի (թիվ 102) կոնվենցիա, «Բժշկական օգնության և սպասարկման և հիվանդության նպաստների մասին» 1969 թվականի (թիվ 130) կոնվենցիա և «Բժշկական օգնության և սպասարկման և հիվանդության նպաստների մասին» 1969 թվականի (թիվ 134) հանձնարարական: Սույն փաստաթղթերում արտացոլվում է կառավարությունների և գործատուների ու աշխատողների կազմակերպությունների միջև միջազգային մակարդակով ձեռք բերված համաձայնությունը:

Ուղղահայաց ծածկույթ

Հիվանդության նպաստների համարժեքությունը պայմանավորված է դրանց չափով, տևողությամբ և սպասման ժամկետով, այդպիսին նախատեսված լինելու դեպքում: Եթե սկսենք նպաստի չափերից, ապա դրանք պետք է բավարար լինեն՝ եկամտի կորուստը փաստացի հատուցելու համար: Նպաստը պետք է լինի պարբերական վճարում, որը տրվում է նախկին եկամտի առնվազն 45 տոկոսն ապահովելու համար՝ համաձայն թիվ 102 կոնվենցիայի, և աշխատավարձի առնվազն 60 տոկոսն ապահովելու համար՝ համաձայն թիվ 103 կոնվենցիայի: Հայաստանում վարձու աշխատողների և ինքնազբաղվածների ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի 80 տոկոսից և հետևաբար համապատասխանում է ԱՄԿ-ի ստանդարտներին[125]: Հատուցման այս համեմատաբար բարձր մակարդակն ապահովում է, որ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողները կարողանան ստանալ աշխատաշուկայում միջին զուտ եկամտին համարժեք նպաստ (տե՛ս Աղյուսակ 6.4):

Աղյուսակ 6.4.

Հայաստանում հիվանդության նպաստների համարժեքությունը՝ ըստ ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայի և թիվ 103 կոնվենցիայի

Պետական նպաստ	Նվազագույն ամսական աշխա-տավարձ (2019 թվական)	Նվազագույն աշխատավարձի 80 տոկոսը կազմող ամսական պետական նպաստի արժեքը	Միջին ամսական զուտ եկամուտը (2019 թվական)	Նախկին եկամտի 80 տոկոսը կազմող ամսական պետական նպաստի արժեքը	Թիվ 102 կոնվենցիային համարժեք եկամտի (ամսական) 45 տոկոսը կազմող հիվանդության նպաստը	Թիվ 103 կոնվենցիային համարժեք եկամտի (ամսական) 60 տոկոսը կազմող հիվանդության նպաստը
Բոլոր աշխա-տողները	55,000 ՀՀ դրամ (112 ԱՄՆ դոլար)	44,000 ՀՀ դրամ (90 ԱՄՆ դոլար)	108,976 ՀՀ դրամ (222 ԱՄՆ դոլար)	87,181 ՀՀ դրամ (178 ԱՄՆ դոլար)	49,039 ՀՀ դրամ (96 ԱՄՆ դոլար)	65,385 ՀՀ դրամ (128 ԱՄՆ դոլար)

Եթե վարձու աշխատողների համար նախատեսված բազային գումարի չափը գերազանցում է նվազագույն ամսական աշխատավարձը, ապա նպաստի վերին շեմ է համարվում նվազագույն աշխատավարձի տասնապատիկը: Ինքնազբաղված անձանց համար առավելագույն շեմ է սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը: Երկուսի դեպքում էլ նվազագույն շեմ է սահմանված նվազագույն աշխատավարձի 50 տոկոսը: Ինչպես մյուս նպաստների դեպքում, այս առավելագույն շեմերը սահմանված են բավականին բարձր, ինչը հավանաբար չի անդրադառնա միջին աշխատողի վրա՝ հաշվի առնելով նրանց միջին եկամտի վերաբերյալ տվյալները: Այնուամենայնիվ, սա կարող է միայն հստակ սահմանվել ակտուարային գնահատման միջոցով: Համակարգում նվազագույն շեմի առկայությունը՝ նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով, ցածր եկամուտ ունեցող աշխատողների համար կարևորագույն առավելությունն է:

[125] Միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է՝ նախորդ 12 հաջորդական օրացուցային ամիսներին ստացված ընդհանուր եկամուտը բաժանելով 12-ի: Ինքնազբաղված անձանց ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկելու համար միջին ամսական եկամուտը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և բազմապատկվում է ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով:

6.5

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող անձինք կյանքի տարբեր փուլերում բախվում են բազմաթիվ մարտահրավերների, որոնք չափազանց դժվարացնում են հասարակական կյանքին նրանց լիարժեք մասնակցությունը, ինչի հետևանքով նվազում է կրթության, աշխատանքի և բժշկական սպասարկման հասանելիությունը, ինչպես նաև շատ ավելի սահմանափակվում է սոցիալական, տնտեսական և քաղաքական ցանցերին ներգրավվածությունը[126]: Բացի դրանից՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ դրսևորվող խտրական նորմերն ու մոտեցումները հաշմանդամների ինտեգրման լրջագույն խնդիրներից են և հաճախ ամփոփված են քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման, ծառայությունների մատուցման գործընթացներում և առօրյա կյանքում: Մեծ է հավանականությունը, որ հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ընտանիքները կապրեն աղքատության պայմաններում (տե՛ս Ներդիր 6.4): Ավելին՝ հաշմանդամություն ունեցող անձանց աղքատության իրական ցուցանիշները հաճախ թերագնահատվում են հաշմանդամությանն առնչվող այլ ուղղակի և անուղղակի ծախսերի առումով[127]: Միանգամայն հասկանալի է, որ ծախսերի միևնույն մակարդակն ունեցող երկու տնային տնտեսությունից լրացուցիչ ծախսերի պատճառով ավելի ցածր կենսամակարդակ ունի այն տնային տնտեսությունը, որտեղ հաշմանդամություն ունեցող անձ կա[128]:

Ներդիր 6.4.

Հաշմանդամության և աղքատության միջև կապը

Հաշմանդամությունը և աղքատությունը փոխկապված պայմաններ են. մեծ է հավանականությունը, որ աղքատության պայմաններում ապրող անձինք ձեռք կբերեն հաշմանդամություն, մինչդեռ շատ ավելի մեծ է հավանականությունը, որ հաշմանդամություն ունեցող անձինք կապրեն աղքատության պայմաններում: Աղքատության պայմաններում ապրող անձինք բախվում են տարբեր ռիսկերի, որոնք մեծացնում են հավանականությունը, որ նրանք կհիվանդանան, կամ նրանց հետ դժբախտություն կպատահի, կամ նրանք կստանան այնպիսի փասվածք, որը կդառնա նրանց ֆունկցիոնալության սահմանափակման պատճառ: Այս ռիսկերի թվին են դասվում հիմնական առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիությունը, թերսնուցման և կառավարելի հիվանդությունների նկատմամբ բարձր խոցելիությունը, վտանգավոր կամ աղտոտված միջավայրում և ոչ պատշաճ բնակարանային պայմաններում բնակվելու մեծ հավանականությունը, ինչպես նաև

[126] Groce et al. (2011); Trani and Loeb (2012); WHO and World Bank (2011); Yeo and Moore (2003):
[127] Հաշմանդամությունը կարող է լինել անձի ֆունկցիոնալության թեթև սահմանափակումից, որը կարող է դառնալ լրացուցիչ ծախսերի պատճառ, մինչև միջին և ծանր սահմանափակումներ, ինչը կարող է նշանակել կեցության ծախսերի նշանակալի ավելացում:
[128] Mont & Cote (2020):

խմելու մաքուր ջրի և սանիտարական պայմանների սահմանափակ հասանելիությունը և այնպիսի բնակավայրերում բնակվելու մեծ հավանականությունը, որոնց բնորոշ են բնական աղետները, վտանգավոր երթևեկությունը և բռնության բարձր մակարդակը: Այսպիսով՝ աղքատությունը և հաշմանդամությունը փոխլրացնում են միմյանց՝ նպաստելով սոցիալական անապահովության և մեկուսացման մակարդակի բարձրացմանը, որոնց համաշխարհային մակարդակով բախվում են հաշմանդամություն ունեցող անձինք:

Աղբյուրը. ԱՄԿ և ՄԱԿ Կանայք (2020), հիմքը՝ Banks & Polack (2014):

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացած մարտահրավերները մասամբ պայմանավորված են համապատասխան ծառայությունների բացակայությամբ, որոնք ուղղված կլինեն նրանց կարիքների բավարարմանը և հնարավորություն կընձեռեն նրանց լիարժեք մասնակցություն ունենալու տնտեսական և սոցիալական միջոցառումներին[129]: Նրանք նաև բախվում են այնպիսի խնդրի, ինչպիսին է մասնագիտացված ծառայությունների և հաշմանդամների վերականգնման տեխնիկական միջոցների բարձր արժեքը: Քանի որ Կառավարության՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկում նրանք համարվում են «խոցելի խումբ», հաշմանդամություն ունեցող անձինք ՀԾՓ-ի շրջանակում իրավունք ունեն ազատվելու բժշկական օգնության և սպասարկման համար նախատեսված համավճարից և ստանալու հիվանդանոցային բժշկական օգնություն: Վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների համար Կառավարությունը տրամադրում է նաև սուբսիդիաներ արժեթղթի ձևով, թեև նշված ծառայությունների տրամադրման համար մեծապես պատասխանատու են ՀԿ-ները: ՀԿ-ների ներկայացուցիչների հետ զրույցի ընթացքում ընդգծվել են ծառայությունների արդյունավետ տրամադրման խոչընդոտները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական ֆինանսավորումը, որպես կանոն, լինում է սահմանափակ, իսկ բյուջետային ֆինանսավորում ստանալու համար մրցույթը խիստ մրցակցային է[130]: ՀԿ-ները, որպես կանոն, համարվում են միջնորդներ հաշմանդամություն ունեցող անձանց և Կառավարության միջև՝ ի ցույց դնելով այն հանգամանքը, որ պետությունը չի դիտարկում այս անձանց բարդ և հատուկ կարիքները: Որպես արդյունք՝ Կառավարության կողմից ծառայությունների և օժանդակ միջոցների համար տրամադրվող ֆինանսական միջոցները սովորաբար չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցողների կարիքներին, ինչի պատճառով սեփական միջոցների հաշվին համավճարները կարող են կազմել դրանց արժեքի մինչև 90 տոկոսը[131]:

[129] Հաշմանդամների հարցերով կազմակերպությունների հետ զրույցներից պարզ է դարձել, որ զգալի բացեր կան նաև մասնագիտացված ծառայությունների և օժանդակ միջոցների մարզային ապահովման առումով:
[130] Տեղեկություն տրամադրող հիմնական անձի հետ հարցազրույց, 2021 թվականի մարտի 22:
[131] Տեղեկություն տրամադրող հիմնական անձի հետ հարցազրույց, 2021 թվականի մարտի 22:

6.5.1
Իրավական ծածկույթ

Բացի վերականգնման ծառայությունների և օժանդակ միջոցների համար տրամադրվող արժեթղթերից՝ ՀՀ Կառավարությունը համընդհանուր հիմունքով դրամական օգնություն է տրամադրում Հայաստանում բոլոր այն անձանց, որոնք պաշտոնապես ճանաչվել են I, II կամ III խմբի հաշմանդամ (բացառությամբ պետական հաստատություններում գտնվողների): Սա իրագործվում է ֆորմալ զբաղվածություն ունեցող անձանց համար նախատեսված հաշմանդամության (պետական) «աշխատանքային» կենսաթոշակի և բոլոր անձանց համար նախատեսված հաշմանդամության (սոցիալական) նպաստի բազմաստիճան համադրմամբ:

Ինչպես հիվանդության նպաստների դեպքում, հաշմանդամության (պետական) կենսաթոշակային իրավունքի ապահովում ունեցող բնակչությունը կազմում է աշխատունակ բնակչության շուրջ 28 տոկոսը, իսկ աշխատուժի՝ շուրջ 45 տոկոսը (Գծապատկեր 6.8): Բացի դրանից՝ ֆորմալ զբաղվածություն ունեցողները պետք է ունենան նվազագույն աշխատանքային ստաժ, ինչպես ներկայացված է 6.5 աղյուսակում:

Աղյուսակ 6.5.

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի համար սահմանված տարիքը և աշխատանքային փորձը

Տարիքային խումբ (տարեկան)	Աշխատանքային փորձ (ԱԵՀ-ի վճարման տարի)
Up to 23	2
23–25	3
26–28	4
29–31	5
32–34	6
35–37	7
38–40	8
41–43	9
44+	10

Որևէ տեսակի նպաստ ստանալու համար պահանջվում է պաշտոնական գնահատում: Ըստ 2019 թվականի ՏՏՀԱԿ-ի տվյալների՝ աշխատունակ տարիքի շուրջ 82,400 անձ կամ աշխատունակ բնակչության շուրջ 4.1 տոկոսը ճանաչվել է հաշմանդամ: Թեև հաստատապես կարելի է պնդել, որ իրավական ապահովում ունեցող բնակչության թվին պետք է դասվեն Հայաստանում հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք, գրեթե վստահ ենք, որ ոմանք (ամենայն հավանականությամբ թեթև աստիճանի հաշմանդամություն ունեցող) հաշմանդամության գնահատում չեն անցնում բազում պատճառներով (օրինակ՝ նպաստ ստանալու իրենց իրավունքի մասին իրազեկվածության բացակայություն, բժշկական օգնություն և սպասարկում/գնահատում իրականացնող հաստատությունների անհասանելիություն կամ խտրականության ենթարկվելու վախ):

6.5.2
Փաստացի ծածկույթ

Հորիզոնական ծածկույթ

Թեև հաշմանդամ ճանաչված երեխաների ապահովման մակարդակը համեմատաբար ցածր է Հայաստանում (2019 թվականի տվյալներով՝ հաշմանդամության նպաստ է ստանում 0-15 տարեկան երեխաների 60.4 տոկոսը), առավել մեծ է հավանականությունը, որ հաշմանդամության նպաստ կստանան հաշմանդամ ճանաչված աշխատունակ տարիքի չափահասները և ոչ թե հաշմանդամություն ունեցող ավելի ցածր տարիքի անձինք։ Սա մասամբ պայմանավորված է հաշմանդամության նպաստի բազմաստիճան համակարգի շրջանակում տրվող նպաստների համադրմամբ, որի դեպքում աշխատունակ տարիքի անձինք կարող են ձեռք բերել հատկացումներով պայմանավորված հաշմանդամության պետական կենսաթոշակ կամ հատկացումներով չպայմանավորված հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք։ Բացի դրանից՝ մոտենալով կենսաթոշակային տարիքին՝ հաշմանդամություն ունեցող որոշ անձանց դեպքում կարող է սկսվել ծերության կենսաթոշակի տրամադրման գործընթացը։ 6.9 գծապատկերում ներկայացված է Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց փաստացի ապահովումը՝ ըստ սոցիալական պաշտպանության նպատակով տրվող տարբեր նպաստների։

Գծապատկեր 6.9.

Հաշմանդամ ճանաչված՝ սոցիալական պաշտպանության նպատակով տարբեր նպաստներ ստացող աշխատունակ տարիքի անձանց մասնաբաժինը՝ ըստ տարիքային խմբերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019։

Համաձայն 2019 թվականի ՏՏԿԱՀ-ի տվյալների՝ հաշմանդամ ճանաչված անձանց գրեթե 65 տոկոսից (20-24 տարեկան) մինչև 82 տոկոսը (35-39 տարեկան) կարող է ստանալ չորս նպաստներից մեկը, սակայն սոցիալական աջակցության նպատակով տրվող հաշմանդամության նպաստը աշխատունակ տարիքի՝ հաշմանդամություն ունեցող անձանց փաստացի հորիզոնական ապահովման միջոց ուժն է: Սա վկայում է այն նպաստների կենսական կարևորության մասին, որոնք կապված չեն զբաղվածության հետ՝ ապահովելու համար պաշտպանության հիմնական նվազագույն շեմը հաշմանդամություն ունեցող անձանց համար, որոնց առջև ծառանում են լրացուցիչ խոչընդոտներ՝ կապված ապահովված զբաղվածության միջոցով հատկացումների կատարմամբ պայմանավորված նպաստներին հասանելիություն ստանալու հետ: Գծապատկերը նաև ցույց է տալիս, որ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հավանականությունը մեծանում է ըստ տարիքի. 20-39 տարեկան անձանց դեպքում՝ 10 տոկոսից բավականին ցածր, իսկ 60-64 տարեկան անձանց դեպքում՝ մինչև 34 տոկոս: Սա արտացոլում է այն փաստը, որ ծերանալուն զուգահեռ ավելի ու ավելի շատ մարդիկ են կատարելու նվազագույն սոցիալական վճարումների պահանջները՝ հատկացումների կատարմամբ պայմանավորված հաշմանդամության նպաստ ստանալու համար:

Գծապատկեր 6.10.

Հաշմանդամության (սոցիալական) նպաստ կամ հաշմանդամության (պետական) նպաստ ստացող աշխատունակ տարիքի չափահասների ցուցանիշները՝ ըստ սեռի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Համաձայն վարչական տվյալների՝ 2019 թվականին 110,424 անձ ստացել է հիմնական հաշմանդամության (պետական) կենսաթոշակ (բացառությամբ այն անձանց, որոնք ստացել են հիվանդության կամ «ժամանակավոր անաշխատունակության» նպաստ, և այն անձանց, որոնք ստացել են աշխատավայրում առաջացած փասվածքների կամ «մասնագիտական հիվանդության դեպքում» նպաստ): Հաշմանդամության (պետական) կենսաթոշակը տարբերակված է ըստ հաշմանդամության խմբերի: Ինչպես ներկայացված է 6.11 գծապատկերում, հաշմանդամության (պետական) կենսաթոշակ նշանակելու համար II խմբի (աշխատունակության լրիվ կորուստ, սակայն առկա չէ մշտական խնամքի անհրաժեշտություն) և III խմբի (աշխատունակության մասնակի

կորուստ) դիմումները միասին գերակշիռ մեծամասնություն են կազմում, մինչդեռ I խմբի համար (աշխատունակության լրիվ կորուստ և մշտական խնամքի անհրաժեշտություն) դիմումները հազվադեպ են։

Գծապատկեր 6.11.

Հաշմանդամության (պետական) կենսաթոշակ ստացողների թիվը՝ ըստ հաշմանդամության ծանրության աստիճանի



Աղբյուրը. Վարչական տվյալներ։

Ավելին՝ 6.11 գծապատկերում նաև արտացոլվում է հաշմանդամության կենսաթոշակ նշանակելու դիմումներում առկա գենդերային տարբերությունը, որոնց դեպքում կանայք կազմում են մասնակի/թեթև հաշմանդամության համար դիմումների 56 տոկոսը և ընդհանուր դիմումների 54 տոկոսը, ինչը համապատասխանում է համաշխարհային միտումներին[132]։

Ուղղահայաց ծածկույթ

Մինչև 2019 թվականը հաշմանդամության (սոցիալական) նպաստի չափը տարբերակված է եղել ըստ խմբերի՝ կախված հաշմանդամության ծանրության աստիճանից։ 2019 թվականից սկսած՝ տարբերակումը վերացվել է, և բոլոր անձինք, այդ թվում՝ հաշմանդամ ճանաչված երեխաները, ամսական ստանում են յուրաքանչյուր անձի համար 26,500 ՀՀ դրամ (50 ԱՄՆ դոլար) ամրագրված դրույքաչափով նպաստ։ Չի կիրառվում ինդեքսավորման որևէ կանոն։ 2020 թվականի դրությամբ հաշմանդամության (պետական) կենսաթոշակի միջին չափը եղել է ամսական 41,228 ՀՀ դրամ (77 ԱՄՆ դոլար)՝ յուրաքանչյուր անձի համար։

Հաշմանդամության նպաստները գնահատելիս անհրաժեշտ է պարզել, թե արդյոք նպաստները բավարար են եկամուտը փոխարինելու (անհրաժեշտության դեպքում) և հաշմանդամության լրացուցիչ ծախսերն ապահովելու համար։ Թեև Հայաստանում հաշմանդամությունը պայմանավորված չէ անաշխատունակությամբ, հաշմանդամություն ունեցող շատ անձինք տնտեսապես ակտիվ չեն։ Ըստ

[132] ԱՀԿ և Համաշխարհային բանկ (2011 թ., էջ 24)։

2019 թվականի ԱՀ-ի տվյալների՝ աշխատուժում մասնակցություն չունեցող ոչ երիտասարդ տարիքի անձանց 34 տոկոսը եղել է «հաշմանդամ, կենսաթոշակառու, փխասվածք ունեցող կամ հիվանդ»: Հետևաբար կարևոր է գնահատել այն հանգամանքը, թե արդյոք հաշմանդամության նպաստը և կենսաթոշակը եկամտի փոխարինման պատշաճ ձևեր են: 6.6 աղյուսակում թե՛ հաշմանդամության (սոցիալական) նպաստի և թե՛ հաշմանդամության (պետական) կենսաթոշակի չափը ներկայացվում են որպես որոշ հիմնական բազային արժեքների, այդ թվում՝ նվազագույն աշխատավարձի, միջին աշխատավարձի և աղքատության գծի հարաբերակցություն: Ամրագրված դրույքաչափով հաշմանդամության սոցիալական նպաստի գումարը կազմում է նվազագույն աշխատավարձի միայն 39 տոկոսը, ինչը բավարար չէ վարձատրվող աշխատանք կատարելու սահմանափակ կարողությամբ անձի եկամուտը փոխարինելու համար:

Աղյուսակ 6.6.

Հաշմանդամության (սոցիալական) նպաստը և հաշմանդամության պետական (աշխատանքային) միջին կենսաթոշակը՝ որպես հիմնական բազային արժեքների հարաբերակցություն

	Ամսական գումարի չափը	Հաշմանդամության (սոցիալական) նպաստը՝ ամսական գումարի չափի նկատմամբ	Հաշմանդամության (պետական) միջին կենսաթոշակը՝ ամսական գումարի չափի նկատմամբ
Նվազագույն ամսական աշխատավարձ (2020)	68,000 ՀՀ դրամ (141 ԱՄՆ դոլար)	39.0%	60.6%
Ամբողջ տնտեսության մակարդակով միջին անվանական աշխատավարձը (2019)	182,673 ՀՀ դրամ (372 ԱՄՆ դոլար)	14.5%	22.6%
Տղամարդ	222,510 ՀՀ դրամ (453 ԱՄՆ դոլար)	11.9%	18.5%
Կին	145,198 ՀՀ դրամ (296 ԱՄՆ դոլար)	18.3%	28.4%
Միջին զուտ աշխատավարձ (2019)	108,976 ՀՀ դրամ (222 ԱՄՆ դոլար)	24.3%	37.8%
Տղամարդ	127,327 ՀՀ դրամ (259 ԱՄՆ դոլար)	20.8%	32.4%
Կին	88,374 ՀՀ դրամ (180 ԱՄՆ դոլար)	30.0%	46.7%
Նվազագույն կենսաթոշակ (2020)	18,000 ՀՀ դրամ (37 ԱՄՆ դոլար)	147.2%	229.0%
Միջին աշխատանքային կենսաթոշակ (2020)	43,590 ՀՀ դրամ (90 ԱՄՆ դոլար)	60.8%	94.6%
Տղամարդ	44,866 ՀՀ դրամ (91 ԱՄՆ դոլար)	59.1%	91.9%
Կին	42,722 ՀՀ դրամ (87 ԱՄՆ դոլար)	62.0%	96.6%
Աղքատության ազգային գիծ (2019)			
Վերին	53,043 ՀՀ դրամ (108 ԱՄՆ դոլար)	50.0%	77.7%
Ստորին	35,054 ՀՀ դրամ (71 ԱՄՆ դոլար)	75.6%	117.6%
Պարենային	23,763 ՀՀ դրամ (48 ԱՄՆ դոլար)	111.5%	173.5%

Թեև հաշմանդամության լրացուցիչ ծախսերը հստակ չեն գնահատվել Հայաստանում, ընդհանուր ցուցանիշները թույլ են տալիս ենթադրել, որ դրանք կազմում են միջին եկամտի՝ լրացուցիչ 30-40 տոկոսը[133]: Քանի որ Հայաստանում հաշմանդամությունը պայմանավորված չէ անաշխատունակությամբ, ինչը նշանակում է, որ նպաստը նախատեսված է հաշմանդամության լրացուցիչ ծախսերը ծածկելու, այլ ոչ թե եկամուտը փոխարինելու համար, Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձինք կարող են թե՛ աշխատել և թե՛ միաժամանակ ստանալ հաշմանդամության նպաստ: Հետևաբար հաշմանդամության նպաստի և միջին կենսաթոշակի չափի արժեքը հաշմանդամությանն առնչվող լրացուցիչ ծախսի ձևով գնահատելն օգտակար է: 6.7 գծապատկերում այդ արժեքները ներկայացված են որպես լրացուցիչ ծախսերի բաժին, որն, ըստ գնահատականների, կազմում է միջին եկամտի 35 տոկոսը: Այս դեպքում սոցիալական նպաստի ցուցանիշները համեմատաբար ավելի բարվոք են՝ կազմելով միջին զուտ աշխատավարձի չափի 69.5 տոկոսը և գերազանցելով նվազագույն աշխատավարձի բազային արժեքը: Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի միջին արժեքը ևս գերազանցում է թե՛ միջին զուտ աշխատավարձի և թե՛ նվազագույն աշխատավարձի բազային արժեքները:

Աղյուսակ 6.7.

Հաշմանդամության (սոցիալական) նպաստի և հաշմանդամության միջին պետական (աշխատանքային) կենսաթոշակի դրամական հատկացումների արժեքների և հաշմանդամությանն առնչվող՝ գնահատված լրացուցիչ ծախսերի հարաբերակցությունը

	Ամսական գումարի չափը	Հաշմանդամության հետ կապված գնահատված լրացուցիչ ծախսերը (ամսական գումարի չափի 35%-ը)	Հաշմանդամության (սոցիալական) նպաստը արտահայտված գնահատված լրացուցիչ ծախսի մասնաբաժնի ձևով	Հաշմանդամության միջին պետական (աշխատանքային) կենսաթոշակը արտահայտված գնահատված լրացուցիչ ծախսի մասնաբաժնի ձևով
Նվազագույն ամսական աշխատավարձ (2020)	68,000 ՀՀ դրամ (141 ԱՄՆ դոլար)	23,800 ՀՀ դրամ (49 ԱՄՆ դոլար)	111.3%	173.2%
Ամբողջ տնտեսության մակարդակով միջին անվանական աշխատավարձը (2019)	182,673 ՀՀ դրամ (372 ԱՄՆ դոլար)	63,936 ՀՀ դրամ (130 ԱՄՆ դոլար)	41.4%	64.5%
Տղամարդ	222,510 ՀՀ դրամ (453 ԱՄՆ դոլար)	77,879 ՀՀ դրամ (159 ԱՄՆ դոլար)	34.0%	52.9%
Կին	145,198 ՀՀ դրամ (296 ԱՄՆ դոլար)	50,819 ՀՀ դրամ (104 ԱՄՆ դոլար)	52.1%	81.1%
Միջին զուտ աշխատավարձը (2019)	108,976 ՀՀ դրամ (222 ԱՄՆ դոլար)	38,141 ՀՀ դրամ (78 ԱՄՆ դոլար)	69.5%	108.1%
Տղամարդ	127,327 ՀՀ դրամ (259 ԱՄՆ դոլար)	44,564 ՀՀ դրամ (91 ԱՄՆ դոլար)	59.5%	92.5%
Կին	88,374 ՀՀ դրամ (180 ԱՄՆ դոլար)	30,931 ՀՀ դրամ (63 ԱՄՆ դոլար)	85.7%	133.3%

133 ՄԱԿ ՏՍՎ (2019բ): Տե՛ս Ջեյմս և ՄքՔլենեհեն (2019) [James and McClanahan (2019)]՝ լրացուցիչ ծախսերի վերջին էմպիրիկ ցուցանիշներին առնչվող կոնվենցիայի ստանդարտները քննարկելու համար:

6.6

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6.6.1
Կառուցվածքային գործազրկությունը

Աշխատատեղերի հասանելիությունն անհավասարաչափ է բաշխված բնակչության միջև և զգալիորեն տարբերվում է ըստ տարիքի, սեռի, կրթական մակարդակի և տարածաշրջանի: Կանայք, ինչպես նաև կրթական ցածր մակարդակ ունեցող անձինք, քաղաքաբնակները և հատկապես երիտասարդները զբաղվածություն ունենալու շատ ավելի ցածր հավանականություն ունեն: Աշխատանքի հասանելիությունը հատկապես ցածր է երիտասարդների և կանանց համար. 2019 թվականին զբաղված էին երիտասարդության (15-24 տարեկան) ընդամենը 65,9 տոկոսը և կանանց 82,5 տոկոսը: Աշխատուժի մեջ չներգրավվածների 30 տոկոսը երիտասարդներ էին, իսկ 68 տոկոսը՝ կանայք[134]:

Հայաստանի համար ավելի շատ թվով մարդկանց աշխատանքի տեղավորելը հրամայական է՝ հատկապես հաշվի առնելով բնակչության ծերացումը: Այս իմաստով կարևոր է հասկանալ, թե ում վրա են ազդում ցածր ակտիվությունը և գործազրկությունը: Թեև Հայաստանի՝ աշխատուժում ներգրավվածության ընդհանուր մակարդակը տարածաշրջանի միջին ցուցանիշին մոտ է (59.8 տոկոս), կանանց մասնակցությունը (49.6 տոկոս) ամենացածրերից է ԵԿԱ երկրների մեջ, ուստի այստեղ է, որ առկա է այդ անհամապատասխանությունը վերացնելու առավել հրատապ անհրաժեշտություն: Մյուս կողմից՝ Հայաստանում գործազրկության մակարդակը ևս բարձր է՝ 19 տոկոս: Սա եղել է մշտական խնդիր, անգամ մինչև Քովիդ-19-ի և ֆինանսական ճգնաժամերը:

Ավելին՝ գործազուրկների կեսից ավելին երկարաժամկետ գործազուրկ է, այսինքն՝ նրանք աշխատանք են փնտրում ավելի քան մեկ տարի: Ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար գործազրկության մակարդակը մոտ է երկրում միջին՝ 18 տոկոսին: Այնուամենայնիվ, այդ ցուցանիշները զգալիորեն տարբերվում են ըստ տարիքային խմբերի. 15–19 տարեկան երիտասարդների համար այն հատկապես բարձր է՝ 39,9 տոկոս, իսկ 20–24 տարեկանների համար՝ 29,6 տոկոս: Երիտասարդների գործազրկությունը հատկապես վերաբերում է կանանց:

[134] Աղբյուրը. LFS 2019:

6.6.2
Գործազրկության պաշտպանությունը

Վերոնշյալ իրավիճակը խնդրահարույց է և պահանջում է լավ մշակված ու նպատակաուղղված զբաղվածության քաղաքականություններ, հատկապես այն պատճառով, որ Հայաստանում այն բնութագրվում է կառուցվածքային գործազրկությամբ, որն առաջանում է հմտությունների և պահանջարկի անհամապատասխանության հետևանքով: Ընդհանուր առմամբ, տվյալները մատնանշում են զբաղվածության ավելի շատ հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտությունը: Առանց լրացուցիչ աշխատատեղերի առաջարկն ու պահանջարկը համապատասխանեցնելու բոլոր ջանքերն անխուսափելիորեն անհաջողության կմատնվեն: Այսպիսով՝ կարճաժամկետ հեռանկարում գործազրկությունը կշարունակի ազդել մեծ թվով աշխատողների վրա: Այն հատկապես կազդի կանանց և երիտասարդների վրա, որոնց դեպքում անհրաժեշտ կլինի իրականացնել նպատակային միջամտություններ՝ նրանց կասեցնող մարտահրավերներին դիմակայելու համար:

Թեև ԱԱՔ-ների գնահատումը դուրս է այս զեկույցի շրջանակից, գործազրկության պաշտպանությունը սոցիալական պաշտպանության ցանկացած համապարփակ համակարգի հիմնական մասն է: Կառուցվածքային գործազրկության համատեքստում, մասնավորապես, գործազրկության նպաստներն առանցքային նշանակություն ունեն կարճաժամկետ հեռանկարում աշխատողներին նվազագույն եկամտով ապահովելու համար, մինչդեռ երկարաժամկետ հեռանկարում ԱԱՔ-ները հավասարակշռում են աշխատանքի առաջարկն ու պահանջարկը:

Ներդիր 6.5.

Հայաստանի ԱԱՔ-ները

ՀՀ զբաղվածության ռազմավարությունը և «Զբաղվածության մասին» օրենքը համարվում են զբաղվածության տարեկան պետական ծրագրի մշակման և իրականացման հիմքը: 2018 թվականի տարեկան պետական ծրագրի շրջանակում իրականացվել են հետևյալ 10 ծրագրերը.

- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում:
- Աշխատանքային փորձ չունեցողների համար պրակտիկայի կազմակերպում:
- Գործազուրկների, աշխատանքից ազատման վտանգ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում:
- Աշխատանքի տոնավաճառների կազմակերպում:
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման տրամադրում:
- Աշխատանք փնտրողներին դրամական օգնության տրամադրում՝ գործատուներին այցելության համար:
- Աշխատաշուկայում աշխարհագրական շարժունակության համար ֆինանսական աջակցության տրամադրում:

Բացի այդ՝ 2018 թվականին ներդրվեց երկու նոր ծրագիր՝ ուղղված կանանց շրջանում գործազրկության նվազեցմանը.

- Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում:
- Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի կողմից մասնագիտական ուսուցման կազմակերպում:

Հայաստանում աշխատանք փնտրողների կողմից նշված՝ աշխատանք գտնելու հիմնական խոչընդոտն աշխատանքի բացակայությունն է: Սա նշանակում է, որ գործազրկության նպաստները պետք է կապված լինեն ոչ թե աշխատանքի ընդունման պայմանների, այլ աշխատաշուկայի այնպիսի քաղաքականության հետ, որը կենտրոնացած է հմտությունների ուսուցման վրա, ինչպես նաև այն քաղաքականությունների, որոնք հակազդում են կանանց աշխատանքի ընդունմանը խոչընդոտող սոցիալական նորմերին: Սա, սակայն, չի նշանակում, որ նշված քաղաքականությունները և գործազրկության դրամական նպաստները բացառում են միմյանց: Ցավոք, այժմ այսպիսին է իրավիճակը Հայաստանում. 2015 թվականին իշխանությունները գնացին գործազրկության առկա նպաստները վերացնելու ուղղությամբ՝ հօգուտ զբաղվածության խթանման միջոցառումների ծախսերի ավելացման:

Այս քայլը 2010 թվականի «Եկամտային հարկի մասին» օրենքի կիրառման համատեքստում էր, որի արդյունքում սոցիալական վճարները դադարեցին պետական նպաստների ֆինանսավորման աղբյուր լինելուց: Մինչ այս բարեփոխումը հիվանդության, մայրության, աշխատավայրում առաջացած վնասվածքների և գործազրկության նպաստները ֆինանսավորվում էին ինչպես աշխատողների, այնպես էլ ինքնազբաղված աշխատողների սոցիալական վճարների միջոցով: Գործազրկության նպաստները համարժեք էին սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի 60 տոկոսին և վճարվում էին վեց ամիս՝ գումարած լրացուցիչ մեկ ամիս յուրաքանչյուր երեք տարվա աշխատանքի համար՝ առավելագույնը 12 ամիս[135]: Այնուհանդերձ, 2013 թվականի թիվ ՀՕ-152-Ն օրենքի ընդունմամբ ուժը կորցրեց 2005 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՀՕ-206-Ն օրենքը, որով սահմանվում էր վերոնշյալ նպաստը: Սրա հետևանքով գործազրկության նպաստները 2015 թվականին դադարեցվեցին և փոխարինվեցին զբաղվածության խթանման միջոցառումներով[136]: Սա ուղղակիորեն հակասում է համընդհանուր միտումին, համաձայն որի՝ միջին եկամուտ ունեցող տարբեր երկրներ ուժեղացնում են գործազրկության պաշտպանության իրենց քաղաքականությունը՝ գործազրկության դեպքում սոցիալական ապահովության սխեմաներ ներդնելով և ընդլայնելով դրանց շրջանակները, ինչպես նաև համատեղելով դրանք զբաղվածության խթանման միջոցառումների հետ՝ որպես ինտեգրված փաթեթի մաս:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով (2004) ուղղակի կարգավորվող՝ աշխատանքից ազատման նպաստը ներկայումս եկամտի փոխհատուցման միակ ձևն է, որը հասանելի է այն աշխատողներին, որոնց զբաղվածությունը դադարեցվել է գործատուի նախաձեռնությամբ: Աշխատանքից ազատման նպաստը հաճախ սահմանափակվում է միայն նույն գործատուի մոտ երկար տարիներ աշխատած անձանց շրջանակով և վճարվում

[135] ISSA (2014):
[136] ISSA (2016):

է տարաժամկետված: Սակայն նույնիսկ այդ շրջանակի մեջ մտնող՝ փոքրամասնություն կազմող աշխատողների պաշտպանությունը սահմանափակ է: Եթե աշխատանքից ազատումը պայմանավորված է ընկերության փակման կամ չափերի կրճատման հետ, ապա նպաստի չափը հավասար է միջին ամսական մեկ աշխատավարձին: Եթե աշխատանքից ազատումը պայմանավորված է այլ պատճառներով, գումարը կախված է աշխատողի աշխատանքային ստաժից. 15 տարուց ավելի աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների համար նպաստի գումարը հավասար է 44 աշխատանքային օրվա [միջին օրական] աշխատավարձի չափին[137]: Ավելին, ի տարբերություն գործազրկության դեպքում ապահովվածության, աշխատանքից ազատման նպաստը կապված չէ զբաղվածության խթանման նպատակի հետ և մեծացնում է ձեռնարկությունների ֆինանսական բեռը, հատկապես տնտեսական ճգնաժամի ժամանակ, ինչպիսին էին Քովիդ-19 համավարակի վերջին հետևանքները, ինչը հաճախ հանգեցնում է այդ վճարումները չկատարելուն:

Ըստ միջազգային ստանդարտների՝ զբաղվածության պաշտպանությունն ունի երկու հիմնական նպատակ: Առաջինը աշխատանքի մասնակի կամ լրիվ կորստի դեպքում եկամտի ապահովություն երաշխավորելն է: Երկրորդը զբաղվածության խթանումն է՝ զբաղվածության խթանման միջոցառումների և ԱԱՔ-ների միջև ռազմավարական կապեր ստեղծելու միջոցով: Այս երկու նպատակները փոխլրացնում են միմյանց, սակայն Հայաստանի դեպքում, կարծես, հստակ քաղաքական նախապատվություն կա վերջինի նկատմամբ: Սա հանգեցրել է գործազրկության դեպքում աջակցության առաջին գործառույթի կորստին: Մեղմելով կորցրած եկամուտը՝ գործազրկության նպաստները աշխատողների գործազուրկ դառնալու դեպքում հիմնարար դեր են խաղում՝ կանխելով անհատների և տնային տնտեսությունների գահավիժումը դեպի աղքատություն և խոցելիություն: Գործազուրկ աշխատողներին տրամադրելով ժամանակավոր ֆինանսական աջակցություն՝ հնարավոր է կանխել նրանց ոչ ֆորմալ և ոչ ակտիվ կարգավիճակներում հայտնվելը, հատկապես, երբ աջակցությունը զուգակցվում է զբաղվածության ապահովման այնպիսի ծառայությունների հետ, որոնք հարմարեցված են որոշակի խմբերի կարիքներին, ինչպիսիք են երիտասարդները, տարեց աշխատողները և երկարաժամկետ գործազուրկները:

Գործազրկության պաշտպանության արդյունավետությունը չի սահմանափակվում եկամուտների պաշտպանությամբ և զբաղվածության խթանմամբ: Գործազրկության պաշտպանության լավ մշակված սխեմաներն ու քաղաքականությունները կարող են նաև նպաստել գենդերային հավասարությանն ու կանանց հզորացմանը՝ հակազդելով մի շարք խոչընդոտների, որոնց բախվում են կանայք. իրենց աշխատանքի խիստ ոչ ֆորմալ բնույթը և, հետևաբար, ժամանակավոր անաշխատունակության նպաստներից օգտվելու բացառումը, ավելի ցածր պետական կենսաթոշակները՝ կապված սոցիալական վճարների ընդհատված պատմությունների հետ, և հանրային քաղաքականությունները, որոնք արտացոլում են ավանդական սոցիալական նորմերն ու կարծրատիպերը: Ապացուցված է, որ գործազրկության պաշտպանության քաղաքականությունները բարձրացնում են կանանց մասնակցությունն աշխատաշուկայում[138]: Մյուս կողմից՝ կանանց շրջանում գործազրկությունը նվազեցնելուն ուղղված 2018 թվականին ներդրված հատուկ ԱԱՔ-ները հազիվ թե էական ազդեցություն ունենան, քանի որ, ըստ կառուցվածքի, դրանցում թիրախավորվել

---

[137] Մինչև մեկ տարի աշխատելու դեպքում՝ 10, մեկից մինչև հինգ տարի աշխատելու դեպքում՝ 25, հինգից մինչև տասը տարի աշխատելու դեպքում՝ 30, տասից մինչև տասնհինգ տարի աշխատելու դեպքում՝ 35, և տասնհինգ տարի և ավելի աշխատելու դեպքում՝ 44 աշխատանքային օրվա [միջին օրական] աշխատավարձի չափով:
[138] ILO (2016b):

են բնակչության փոքր շրջանակներ: Ավելին՝ դրանցում չեն հաացեագրվում այն սոցիալական նորմերը, որոնք կանանց խանգարում են աշխատանքի անցնելու:

Դայակ ներգրավելու ծրագիրը հասանելի է միայն մինչև 2 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողներին, ինչպես վերը ներկայացվել է (տե՛ս Բաժին 6.2.1): Երիտասարդ մայրերի մասնագիտական ուսուցման ծրագիրը հասանելի է մինչև 30 տարեկան մայրերին, որոնք չունեն մասնագիտական կրթություն և առաջին անգամ են մտնում աշխատաշուկա: Նախապատվությունը տրվում է միայնակ, ԸՆ ստացող և երեք ու ավելի երեխա ունեցող մայրերին: Ծրագիրն ուսուցման ընթացքում տրամադրում է նվազագույն աշխատավարձին հավասար կրթաթոշակ, սակայն չի ներառում լրացուցիչ աջակցություն երեխաների խնամքի կազմակերպման համար: Այդ առումով դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող են փոքր երեխաների մայրերը (մինչև 3 տարեկան երեխաների) մասնակցել մի ծրագրի, որը հիմնարար թերություն ունի հենց այն հիմնական մարտահրավերը հասցեագրելու հարցում, ինչի համար իրականացվում է: Այս բացն արտացոլվել է ծրագրին ցածր մասնակցությամբ՝ 2018 թվականին ամբողջ երկրում կազմելով ընդամենը 112 շահառու[139]:

Գործազրկությունից պաշտպանությունը սոցիալական ապահովության իրավունքի անքակտելի մասն է, որն ամրագրված է մարդու իրավունքների միջազգային տարբեր փաստաթղթերում: Գործազրկության նպաստների վերացումը Հայաստանում չի համապատասխանում երկրում զբաղվածության մարտահրավերների բնույթին, և դա առավելագույն ազդեցություն կունենա կանանց և երիտասարդների վրա՝ էլ ավելի սրելով նրանց առկա խոցելի վիճակը: Ինչպես սոցիալական պաշտպանության, այնպես էլ զբաղվածության խթանման տեսանկյունից նպատակահարմար է, որ քաղաքականություն մշակողները վերանայեն այն մտայնությունը, թե գործազրկության պաշտպանության ու զբաղվածության խթանման միջոցառումները բացառում են միմյանց: Դրանք, ըստ էության, պետք է փոխլրացնեն իրար՝ կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներին հասնելու նպատակով:

6.7

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանում աշխատունակ տարիքի անձանց շրջանում առկա են տնտեսական ցածր ակտիվություն և գենդերային լուրջ բացեր: 2019 թվականին աշխատունակ տարիքի բնակչության կեսից պակասն ուներ զբաղվածություն, և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության երկու երրորդից ավելին կանայք էին: Կանանց ցածր ակտիվության ցուցանիշները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ նրանց վրա դրված են երեխաների, ծերերի խնամքի և տնային տնտեսության վարման պարտականությունները: Այս երևույթն առավել տարածված է 25-39 տարիքային խմբի շրջանում, երբ կանայք առավել հավանական է, որ ունենան փոքր երեխաներ: Խնամքի պարտականությունների կատարման պատճառով աշխատուժից դուրս գալը, կարծես, մի խնդիր է, որը բացառապես ազդում է կանանց վրա՝ մատնանշելով սոցիալական և

[139] Ghukasyan et al. (2020):

մշակութային այն նորմերը, որոնք ձևավորում են գենդերային դերերը:

Հայաստանում հատկացումների կատարմամբ պայմանավորված՝ աշխատունակ տարիքի անձանց համար նախատեսված նպաստի իրավունքը հաճախ պայմանավորված է զբաղվածության կարգավիճակով, աշխատանքային հետագծով, կատարած վճարումներով և եկամուտներով: Սա նշանակում է, որ սոցիալական պաշտպանության ստորին շեմերը ոչ միայն կարող են դեռևս դերակատարություն ունենալ կյանքի այս փուլում, այլև դրանք առավել կարևոր են հատկացումներով պայմանավորված համակարգից չօգտվող աշխատողների համար: Նրանք ներառում են ոչ միայն կանանց, այլև ոչ ֆորմալ տնտեսության մեջ ներգրավված ցանկացած աշխատողի՝ կին, թե տղամարդ: Պարզ է, որ ընդգրկվածության տեսանկյունից ամենահաջողված ոլորտներում (օրինակ՝ մայրության դրամական նպաստ, հաշմանդամության սոցիալական նպաստներ և աշխատանքային կենսաթոշակներ, ինչպես նաև կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ և աշխատանքային կենսաթոշակներ) առկա է բազմաստիճան համակարգ:

Հայաստանում մայրության պաշտպանությունն ունի բարդ կառուցվածք: Թեև կարելի է ասել, որ առկա է մայրության նպաստների առումով համընդհանուր իրավական ապահովում, սակայն ակնհայտ է, որ դրույթները գործում են հօգուտ աշխատող կանանց (տե՛ս Գծապատկեր 6.6): Թեև տեսականորեն Հայաստանում դրամական աջակցություն տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, այնուամենայնիվ, մայրական և հայրական խնամքի արձակուրդների միջև իրավական տարանջատումը քողարկում է այն փաստը, որ դրամական աջակցությունը տրվում է այդ ժամանակի մի փոքր հատվածի համար, որի ընթացքում երեխայի խնամքի պարտականություններն անհամատեղելի են աշխատանքային շուկայում լրիվ դրույքով մասնակցության հետ: Ինչպես արձակուրդի տնողությունը, այնպես էլ աշխատավարձի փոխարինման դրամական արժեքը փոփոխվում են Հայաստանում աշխատող, ինքնազբաղված և չաշխատող կանանց շրջանում` կրկին հօգուտ աշխատող կանանց: Թեև դժվար է գնահատել չաշխատող կանանց նպաստների համարժեքության աստիճանը, քանի որ, ըստ էության, նրանք նախկինում եկամուտ չեն ունեցել, սակայն նվազագույն աշխատավարձի 50 տոկոսին համարժեք միանվագ վճարի տրամադրումը դրական քայլ է` ցույց տալու, որ իրականում Հայաստանում գոյություն ունի մայրության սոցիալական պաշտպանության ստորին շեմ: Այնուամենայնիվ, այն չափազանց քիչ է՝ Հայաստանի ռազմավարական նպատակներին հասնելու համար, այն է՝ խթանել կանանց տնտեսական հնարավորությունները և ստեղծել ընտանիք/աշխատանք այնպիսի հավասարակշռություն, որը կարող է նպաստել ծնելիության բարձրացմանը:

Առանց աշխատանքի անվտանգության և առողջության ոլորտի հատուկ օրենսդրության այս հարցերին համակարգված մոտեցում ցուցաբերել հնարավոր չի լինի: Թեև «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով (2010) նախատեսվում է մասնագիտական հաշմանդամության կենսաթոշակ, որը կապված է ֆորմալ զբաղվածության և աշխատանքային ստաժի տարիների հետ, այնուամենայնիվ, դրանով Հայաստանի աշխատաշուկայի մոտավորապես կեսը դուրս է մնում համակարգից: Թույլ իրավական դաշտը դժվարացնում է որոշել համակարգից օգտվելու իրավասություն ունեցող բնակչության թվաքանակը և փոխհատուցման համարժեքությունը: Ավելին՝ աշխատավայրում առաջացած վնասվածքների կամ մասնագիտական հիվանդությունների համար գրանցամատյան չունենալը դժվարացնում է ինչպես այդ դեպքերի հաճախության գնահատումը, այնպես էլ կարգավորող շրջանակի` երկրի տնտեսական զարգացման տեմպին համընթաց լինելը:

Հիվանդության կամ «ժամանակավոր անաշխատունակության» նպաստներից օգտվում են միայն

գրանցված աշխատողները (բացառությամբ այն անձանց, որոնք աշխատում են ընտանեկան բիզնեսներում) և ինքնազբաղվածները, որոնք վճարել են եկամտային հարկ: Գոյություն չունի հատկացումների կատարմամբ չպայմանավորված նպաստ՝ այս իրավական դաշտից դուրս մնացած անձանց տրամադրելու համար, ինչը նշանակում է, որ զբաղված բնակչության կեսից մի փոքր ավելին կարող է այդ նպաստներից օգտվել: Նպաստների համակարգում ընդգրկվածության առկա բացը նոր իմաստ է ստանում համավարակի պայմաններում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գործող համակարգը կարելի է համարել բավականին շռայլ այն իմաստով, որ այն ծածկում է ոչ միայն հիվանդության դեպքում տրամադրվող վճարովի արձակուրդը, այլև ընտանիքի հիվանդ անդամի խնամքի համար տրամադրվող վճարովի արձակուրդը: Միջին ամսական աշխատավարձի 80 տոկոսով փոխարինման չափը, որը համապատասխանում է ԱՄԿ-ի ստանդարտներին, նույնպես կարելի է համարել համեմատաբար բարձր:

Ինչ վերաբերում է հաշմանդամության նպաստներին, այստեղ իրավիճակը համեմատաբար բարվոք է: Բազմաստիճան համակարգն ապահովում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց գերակշիռ մեծամասնությունը կարողանա ունենալ երաշխավորված եկամուտ՝ իր կյանքի որակը բարելավելու համար: Նպաստների համակարգում ընդգրկվածությունն ավելանում է տարիքին զուգընթաց, ինչն ամենայն հավանականությամբ արտացոլում է այն հանգամանքը, որ մեծահասակները կարող են հավակնել թե՛ հատկացումների կատարմամբ պայմանավորված՝ հաշմանդամության պետական կենսաթոշակի, թե՛ հատկացումների կատարմամբ չպայմանավորված համակարգի մաս կազմող՝ հաշմանդամության նպաստի: Աշխատանքային հաշմանդամության կենսաթոշակի հավակնելու հավանականությունը նույնպես ավելանում է տարիքին զուգընթաց, ինչն արտացոլում է այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում ավելի շատ թվով մարդիկ բավարարած կլինեն աշխատանքային ստաժի տարիների նվազագույն պահանջները: Համարժեքության տեսանկյունից հաշմանդամության՝ ամրագրված դրույքաչափով սոցիալական նպաստի չափը կազմում է նվազագույն աշխատավարձի սոսկ 39 տոկոսը, ինչը եկամտի ոչ բավարար փոխարինում է այն անձի համար, ով չունի լավ վարձատրվող աշխատանք ունենալու հնարավորություն: Այնուամենայնիվ, քանի որ Հայաստանում հաշմանդամությունը պայմանավորված չէ անաշխատունակությամբ, լավ կլիներ գնահատել դրամական հատկացումների արժեքը՝ որպես հաշմանդամության լրացուցիչ ծախսերի մասնաբաժին (հաշվարկված միջին եկամտի 35 տոկոսի չափով): Սոցիալական նպաստի դեպքում իրավիճակը մի փոքր բարվոք է. այն հասնում է միջին զուտ աշխատավարձի 69.5 տոկոսին և գերազանցում է նվազագույն աշխատավարձը: Հաշմանդամության աշխատանքային միջին կենսաթոշակի արժեքը նույնպես գերազանցում է ինչպես միջին զուտ աշխատավարձը, այնպես էլ նվազագույն աշխատավարձը:

Գործազուրկների կեսից ավելին երկարատև գործազուրկ է, այսինքն՝ նրանք աշխատանք են փնտրում մեկ տարուց ավելի: Կառուցվածքային գործազրկությունը եղել է մշտական խնդիր դեռևս Քովիդ-19-ի և ֆինանսական ճգնաժամերից առաջ: Հայաստանում աշխատանք փնտրողները նշում են, որ աշխատանք գտնելու հիմնական խոչընդոտը աշխատատեղերի բացակայությունն է: Կառուցվածքային գործազրկությունը Հայաստանում առաջանում է հմտությունների առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունից: Այսպիսով՝ կարճաժամկետ հեռանկարում գործազրկությունը կշարունակի բացասական ազդեցություն թողնել մեծ թվով աշխատողների, մասնավորապես երիտասարդների վրա: Այս հարցերից շատերը պետք է լուծվեն զբաղվածության քաղաքականությունների՝ մասնագիտական ուսուցման և այլ ԱԱՔ-ների միջոցով: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ սոցիալական պաշտպանությունը դերակատարություն չպետք է ունենա: ԱԱՔ-ները և գործազրկության նպաստները փաստացի միմյանց չեն բացառում և ըստ էության լավագույնս

գործում են միմյանց հետ համադրության մեջ: Հայաստանի համատեքստում գործազրկության դրամական նպաստներն ապահովում են, որ կարճաժամկետ հեռանկարում աշխատողներն ունենան երաշխավորված եկամուտ, մինչդեռ երկարաժամկետ հեռանկարում ԱԱՔ-ները հավասարակշռեն աշխատաշուկան:

6.8 աղյուսակն ամփոփում է Հայաստանում աշխատունակ տարիքի բնակչության իրավական և փաստացի ապահովումը: Հաջորդ գլուխը վերաբերում է Հայաստանում տարեցների սոցիալական պաշտպանության ապահովմանը:

Աղյուսակ 6.8.

Հայաստանում աշխատունակ տարիքի բնակչության իրավական և փաստացի ապահովման ամփոփ նկարագիրը

	Իրավական ապահովումը			Փաստացի ապահովումը	
Սխեման	Իրավական առումով ապահովված բնակչությունը	Իրավական առումով ապահովված անձանց թիվը[140]	Իրավական առումով ապահովված բնակչության մասնաբաժինը	Շահառուների թիվը[141]	Փաստացի ապահովված բնակչության մասնաբաժինը
Մայրության նպաստ աշխատող կանանց համար	Պաշտոնապես զբաղված և 15-64 տարեկան՝ գրանցված ինքնազբաղված կանայք (նորածինների մայրեր)	Տեսականորեն 282,231 անձ՝ ծննդաբերության դեպքում (Նշում. 2019 թ. կծննդաբերեր աշխատունակ տարիքի կանանց մոտ 2,9%-ը՝ ըստ 2019 թ. ՏՏԿԱՀ-ի վրա հիմնված արտածման)	• Բոլոր զբաղված կանանց 62,8%-ը • Կանանց աշխատուժի 50.4%-ը • Աշխատունակ տարիքի կին բնակչության 26.5%-ը	Տվյալներ չկան	Աշխատունակ տարիքի կին բնակչության 0.8%-ն է հայտնել, որ դիմել է աշխատող կանանց մայրության նպաստ ստանալու համար (ՏՏԿԱՀ, 2019)
Մայրության նպաստ չաշխատող կանանց համար	Կանայք, որոնք պաշտոնապես չեն աշխատում կամ ինքնազբաղված չեն (նորածինների մայրեր)	Տեսականորեն 781,819 անձ՝ ծննդաբերության դեպքում (Նշում. 2019 թ. ծննդաբերել է աշխատունակ տարիքի կանանց մոտ 2.9%-ը՝ ըստ 2019 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա կատարված արտածման)	Աշխատունակ տարիքի կին բնակչության 73.5%-ը	Տվյալներ չկան	Տվյալներ չկան (Նշում. Ըստ 2019 թ. ՏՏԿԱՀ-ի՝ աշխատունակ տարիքի կանանց բնակչության 0%-ն է հայտնել, որ ստացել է նպաստ)
Մայրության նպաստ, ընդամենը	Բոլոր կանայք	1,064,050	Կանանց 100%-ը	Տվյալներ չկան	Անբավարար տվյալներ

[140] Բնակչության իրավական ապահովման չափի գնահատականները բխում են ոչ պաշտոնական զբաղվածության վերաբերյալ ԱՄԿ Վիճակագրական դեպարտամենտի տվյալներից (2019 թվականի ԱՀ-ի հիման վրա) և հեղինակների՝ 2019 թվականի ԱՀ-ի վերլուծությունից:
[141] Շահառուների թիվը վերցված է ՍԱԾ-ի ներկայացրած՝ առկա վարչական տվյալներից:

Երեխայի խնամքի նպաստ աշխատող կանանց համար	Պաշտոնապես աշխատող կանայք (կամ երեխա խնամող այլ ծնողներ/ խնամակալներ)	Տեսականորեն 282,231 անձ՝ երեխա խնամելու դեպքում	• Բոլոր զբաղված կանանց 62,8%-ը • Կանանց աշխատուժի 50.4%-ը • Աշխատունակ տարիքի կին բնակչության 26.5%-ը	Տվյալներ չկան	Աշխատունակ տարիքի կին բնակչության 0.3%-ն է հայտնել, որ պահանջել է աշխատող կանանց տրամադրվող երեխաների խնամքի նպաստը (ՏՏԿԱՀ, 2019)
Հաշմանդամության (սոցիալական) նպաստ	Հայաստանի բնակիչներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ (հաշմանդամություն ունեցող)	Տեսականորեն 1,435,037 անձ՝ հաշմանդամ դառնալու դեպքում (Նշում. 2019 թ. աշխատունակ տարիքի անձանց մոտ 4,1%-ը համարվել է հաշմանդամություն ունեցող՝ ըստ 2019 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա կատարված արտածման)	Տեսականորեն աշխատունակ տարիքի բնակչության 71,6%-ը հաշմանդամ դառնալու դեպքում	Տվյալներ չկան	Աշխատունակ տարիքի բնակչության 2.6%-ն է հայտնել, որ ստացել է հաշմանդամության (սոցիալական) նպաստ (ՏՏԿԱՀ, 2019) Աշխատունակ տարիքի՝ հաշմանդամություն ունեցող անձանց 51.5%-ն է հայտնել, որ ստացել է հաշմանդամության (սոցիալական) նպաստ (ՏՏԿԱՀ, 2019)
Հաշմանդամության (պետական) կենսաթոշակ	Հայաստանի բնակիչներ, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցողներ (հաշմանդամություն ունեցող)	Տեսականորեն 568.529 անձ՝ հաշմանդամ դառնալու դեպքում (Նշում. 2019 թ. աշխատունակ տարիքի անձանց մոտ 4,1%-ը համարվել է հաշմանդամություն ունեցող՝ ըստ 2019 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա կատարված արտածման)	• Զբաղված բնակչության 55.6%-ը • Աշխատուժի 45.2%-ը • Աշխատունակ տարիքի բնակչության 28,3%-ը	Անբավարար տվյալներ[142]	Աշխատունակ տարիքի բնակչության 1%-ն է հայտնել, որ ստանում է հաշմանդամության (պետական) կենսաթոշակ (ՏՏԿԱՀ, 2019) Աշխատունակ տարիքի՝ հաշմանդամություն ունեցող անձանց 19.6%-ն է հայտնել, որ ստացել է հաշմանդամության (պետական) կենսաթոշակը (ՏՏԿԱՀ, 2019)
Հաշմանդամության նպաստ, ընդամենը	Բոլոր աշխատունակ տարիքի անձինք (հաշմանդամություն ունեցող)	2,003,566 աշխատունակ տարիքի անձինք (որոնցից մոտ 82,480-ը հաշմանդամություն ունեն)	Աշխատունակ տարիքի անձանց 100%-ը	Տվյալներ չկան	Անբավարար տվյալներ
Կերակրողին կորցնելու դեպքում տրվող (սոցիալական) նպաստ	Հայաստանի ռեզիդենտ կերակրողին կորցրած անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք և ապաստան հայցող անձինք, որոնք կերակրողին կորցնելու դեպքում (պետական) կենսաթոշակի իրավունք չունեն	Կերակրողին կորցրածների թիվն անհայտ է	Կերակրողին կորցրած իրավասու անձինք՝ աշխատունակ բնակչության 71%-ի մեջ	Տվյալներ չկան	Անբավարար տվյալներ (Նշում. Ըստ 2019 թ. ՏՏԿԱՀ-ի՝ աշխատունակ տարիքի բնակչության 0,1%-ն է հայտնել, որ ստացել է նպաստ)
Կերակրողին կորցնելու դեպքում տրվող (պետական) կենսաթոշակ	ՀՀ-ում պաշտոնապես զբաղված և ինքնազբաղված ռեզիդենտ, քաղաքացիություն չունեցող և ապաստան հայցող անձինք	Կերակրողին կորցրածների թիվն անհայտ է	Կերակրողին կորցրած իրավասու անձինք՝ հետևյալների թվից՝ • Զբաղված բնակչության 55.6%-ը • Աշխատուժի 45.2%-ը • Աշխատունակ տարիքի բնակչության 28,3%-ը	7,685	Անբավարար տվյալներ
Կերակրողին կորցրածներ, ընդամենը	Կերակրողին կորցրած բոլոր իրավասու անձինք	Կերակրողին կորցրածների թիվն անհայտ է	Կերակրողին կորցրածների 100%-ը	Անբավարար տվյալներ	Անբավարար տվյալներ

[142] Ըստ վարչական տվյալների ՝ հաշմանդամության (պետական) կենսաթոշակառուների ընդհանուր թիվը 2019 թվականին եղել է 110.014, սակայն այս թիվը ներառում է տարեցներին:

Հիվանդության («ժամանակավոր անաշխատու-նակության») նպաստներ	Պաշտոնապես զբաղված և ինքնազբաղված անձինք (բացառությամբ ընտանեկան ձեռնարկություններում աշխատողների)	Տեսականորեն շուրջ 568,529 անձ՝ ժամանակավոր անաշխատու-նակության դեպքում	• Զբաղված բնակչության 55.6%-ը • Աշխատուժի 45.2%-ը • Աշխատունակ տարիքի բնակչության 28,3%-ը	Տվյալներ չկան	Աշխատունակ տարիքի բնակչության 0.2%-ն է հայտնել, որ ստացել է հիվանդության (ժամանակավոր անաշխատունակության) նպաստ (ՏՏԿԱՀ, 2019)
Աշխատավայրում առաջացած վնասվածքների համար («աշխատանքային հաշմանդամության») նպաստներ	18 տարեկանից բարձր պաշտոնապես զբաղված անձինք	Տեսականորեն շուրջ 568,529 անձ՝ ժամանակավոր անաշխատու-նակության դեպքում	• Զբաղված բնակչության 55.6%-ը • Աշխատուժի 45.2%-ը • Աշխատունակ տարիքի բնակչության 28,3%-ը		

ՏԱՐԵՑՆԵՐԻ ԲԱԶՄԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը հասել է ծերության պաշտպանության համընդհանուր ապահովմանը բազմաստիճան համակարգի միջոցով: Այն անձինք, որոնք պետական կենսաթոշակ ստանալու համար չեն կուտակում բավականաչափ աշխատանքային ստաժ, կարող են ստանալ ծերության նպաստ, իսկ բազային կենսաթոշակը բոլորի համար, փաստացի, սոցիալական պաշտպանության ստորին շեմն է: Այնուամենայնիվ, կառուցվածքային բարեփոխումների հաջորդականությունը, որի արդյունքում համերաշխության վրա հիմնված համակարգից անցում է կատարվում անհատական հաշիվների և ռիսկերի, ցույց է տալիս, որ կենսաթոշակառուների ապագա սերունդները ծերության շրջանում ավելի խոցելի են լինելու եկամուտների անապահովության տեսանկյունից: Սա հատկապես վերաբերում է կանանց, ինչպես նաև ցանկացած այլ աշխատողի, որը սոցիալական վճարումների կատարման ընդհատված պատմություն ունի: Այս անձանց համար ծերության նպաստը կդառնա ծերության իրենց եկամտի միակ աղբյուրը, ինչը հարց է առաջացնում, թե արդյոք այս սխեման բավարար է պատշաճ կենսապայմաններ ապահովելու կենսաթոշակի երկարատև ժամանակաշրջանի դեպքում: Ծերացման միտումը, որը զուգորդվում է ծնելիության մակարդակի և աշխատունակ տարիքի ոչ ակտիվ անձանց մեծ թվի հետ, նշանակում է, որ պետական բյուջեն ավելի մեծ ճնշման տակ կլինի այս նպաստը ֆինանսավորելու համար:

7.1

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ԱԿՆԱՐԿԸ

7.1.1

Խոցելիության բնութագիրը

Տարիքին զուգահեռ առողջական խնդիրների և աշխատունակության կորստի աճը ծերությունը դարձնում է կյանքի հատկապես խոցելի փուլ[143]: Անկախ եկամտի կորուստը մեծացնում է տարեցների աղքատության հավանականությունը և կարող է հանգեցնել նաև սոցիալական մեկուսացման, անտեսման, նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի և խտրականության: Ավելին՝ շատ տարեցներ, հատկապես կանայք, բախվում են լրացուցիչ ֆինանսական մարտահրավերի, ինչպես, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կամ այլ մեծահասակների խնամքի պարտականությունների ստանձնումը, որը սեփական կարիքները հոգալու համար նրանց շատ փոքր եկամուտ է թողնում:

Հետևաբար կենսական նշանակություն ունի, որ տարեցները կարողանան օգտվել առողջապահական ծառայություններից և սոցիալական պաշտպանությունից: Հայաստանում թեև առողջապահական ոլորտի ծածկույթը սահմանափակ է, համընդհանուր սոցիալական կենսաթոշակը ապահովում է բազային եկամտի ապահովման «շեմը», որն օգնում է կանխել տարեցների՝ աղքատության մեջ հայտնվելը: Իրոք, սոցիալական նպաստների ազդեցության շնորհիվ Հայաստանում աղքատությունն ամենացածրն է տարեցների շրջանում (տե՛ս Գծապատկեր 7.1): Թեև տարեցների ընդամենը 0.8 տոկոսն է (տղամարդկանց 0.9 տոկոսը և կանանց 0.7 տոկոսը) համարվում «ծայրահեղ աղքատ» (աղքատության պարենային գծից ցածր ապրողները), շուրջ 39.5 տոկոսը (տղամարդկանց 40.6 տոկոսը և կանանց 38.7 տոկոսը) համարվում է «աղքատ» (այսինքն՝ ապրում է աղքատության վերին գծից ցածր):

143 Sengupta and Kidd (2018):

Գծապատկեր 7.1.

Աղքատության մեջ ապրող բնակչության ցուցանիշները (աղքատության պարենային և վերին գծերից ցածր)՝ ըստ տարիքային խմբերի և սեռի. 2019 թ.



Աղբյուրը. 2019 թվականի ՏՏԿԱՀ-ի վերլուծություն:

Ինչպես քննարկվել է 2.1 բաժնում, Հայաստանի հասարակությունը ծերացող է. հետևաբար ժամանակի ընթացքում ավելի ու ավելի քիչ կլինեն աշխատունակ տարիքի անձինք, որոնք կկարողանան աջակցել տարեցներին այն ժամանակ, երբ նրանց համար հոգալու տնտեսական բեռը հիմնականում կընկնի աշխատունակ տարիքի անձանց վրա: Սա խոսում է կենսաթոշակային համապարփակ համակարգի կառուցման գործում էական, երկարաժամկետ ջանքերի ներդրման անհրաժեշտության մասին, որը ծեր տարիքում եկամուտների համարժեք ապահովություն ստեղծելու հնարավորություն կընձեռի:

7.1.2
Տարեցների սոցիալական պաշտպանության հիմնական սխեմաները

Ծեր տարիքում Հայաստանում մարդիկ կարող են ակնկալել, որ կստանան կյանքի տարբեր փուլերի համար հետևյալ նպաստները.

- ծերության (սոցիալական) նպաստ,
- ծերության (պետական) կենսաթոշակ,
- հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստ,
- հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ,
- հրատապ օգնություն կյանքի դժվարին իրավիճակում,
- սոցիալական նպաստ (ՍՆ). տրվում է այն ընտանիքներին, որոնց անապահովության միավորը համապատասխանության շեմից բարձր է, և որոնք չունեն 18 տարեկանից ցածր անդամներ:

7.2

ԾԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Հայաստանում բոլոր կանայք և տղամարդիկ կարող են ստանալ կանոնավոր, կանխատեսելի ամսական կենսաթոշակ, երբ լրանում է նրանց աշխատանքային ստաժի 25 տարին, կամ ծերության (սոցիալական) նպաստ՝ 65 տարեկանում: Բոլոր նպաստները ներկայումս ֆինանսավորվում են պետական բյուջեից, և միայն կենսաթոշակները 2019 թվականին կազմել են սոցիալական պաշտպանության ծախսերի 48.5 տոկոսը: Ծերության պաշտպանությունը, որը կազմված է կենսաթոշակներից և նպաստներից, Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի ամենակարևոր առանձնահատկությունն է:

Գծապատկեր 7.2.

Հայաստանի տարիքային կենսաթոշակային համակարգի պատկերը



Աղբյուրը. Հեղինակների կազմած գծապատկեր:

Թերևս այս կարևորության պատճառով ծերության պաշտպանության հայաստանյան համակարգը ենթարկվել է խորքային բարեփոխումների (տե՛ս Հավելված 2): Այս պահին կենսաթոշակների բազմաստիճան համակարգը կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

- **0 աստիճան: Ծերության նպաստը** թեև պաշտոնապես ճանաչված չէ որպես 0 աստիճան, դե ֆակտո սոցիալական պաշտպանության ստորին շեմն է Հայաստանում բոլոր կենսաթոշակառուների համար և ֆինանսավորվում է ինչպես

հատկացումներով պայմանավորված, այնպես էլ հատկացումներով չպայմանավորված համակարգի միջոցով: Ծերության նպաստը հասանելի է 65 և բարձր տարիքի կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար, որոնք չունեն առնվազն 10 տարվա ստաժ: Այս նպաստն ունի հաստատագրված դրույքաչափ, որը ներկայումս ամսական 26,500 ՀՀ դրամ է: Այս գումարը չի ինդեքսավորվում:

- **1-ին աստիճան: Տարիքային կենսաթոշակները** հասանելի են 63 և բարձր տարիքի անձանց համար, որոնք ունեն առնվազն 25 տարվա ստաժ: Ավելի ցածր կենսաթոշակ է վճարվում նաև 10-25 տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձանց: Ստաժի տարիներ են համարվում նաև զինվորական ծառայության, բուհում սովորելու կամ երեխայի խնամքի (մինչև 6 տարեկան) տարիները: Առաջին աստիճանի բոլոր շահառուներին երաշխավորվում է բազային կենսաթոշակ: Ի լրումն, աշխատանքային ստաժի հիման վրա հաշվարկվում է կենսաթոշակառուի անձնական գործակից և ֆինանսավորվում պետական բյուջեի՝ սահմանված նպաստի (ՍՆ) սխեմայի միջոցով: Ծերության կենսաթոշակի միջին չափը 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ եղել է ամսական 45,116 դրամ:
- **2-րդ աստիճան:** 2014 թվականի հունվարի 1-ին ներդրվեց սահմանված վճարների (ՍՎ) սխեման: 1974 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո ծնված բոլոր պետական աշխատողների և աշխատանքի շուկայում նոր ընդգրկվողների համար ներդրվեց պարտադիր կուտակային համակարգ: 2018 թվականի հուլիսի 1-ին պարտադիր կուտակային համակարգը տարածվեց 1974 թվականից հետո ծնված պետական և մասնավոր հատվածի բոլոր աշխատողների վրա: 2-րդ աստիճանի մասնակիցներին տրվում է նաև պետական բյուջեից ֆինանսավորվող հիմնական կենսաթոշակի երաշխիք, սակայն նրանց անձնական գործակիցները հաշվարկվում են իրենց անհատական հաշիվներին ինչպես աշխատողների, այնպես էլ պետության կողմից կատարվող լրացուցիչ վճարների հիման վրա (մանրամասների համար տե՛ս Հավելված 1): 7.1 ներդիրում ներկայացված է Հայաստանում կուտակային կենսաթոշակային սխեմայի վճարումների կառուցվածքը:

Ներդիր 7.1.

Երկրորդ աստիճանի հատկացումների կառուցվածքը

«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում 2014 թվականին կատարված փոփոխությունը որոշակիորեն փոփոխեց կենսաթոշակային համակարգի երկրորդ աստիճանի համար հարկ վճարողների և պետության վճարների հարաբերակցությունը: Այս վճարների ընդհանուր գումարը հավասար է աշխատավարձի և դրան հավասարեցված եկամտի 10 տոկոսին:

Եկամուտ	Պետության կողմից ֆինանսավորվող վճարների մասնաբաժինը	Հարկ վճարողի կողմից կուտակային վճարների մասնաբաժինը
Ամսական մինչև 500,000 դրամ	Մնացած մասը (բազային եկամտի 10%-ը լրացնելու համար)	Հիմնական եկամտի 3,5%-ը
Ամսական ավելի քան 500,000 դրամ	32,500 ՀՀ դրամ (ամսական)	Մնացած մասը (բազային եկամտի 10%-ը լրացնելու համար)

2022 թվականի հունվարից ևս սպասվում է հարկ վճարողների և պետության վճարների հարաբերակցության փոփոխություն.

Եկամուտ	Պետության կողմից ֆինանսավորվող վճարների մասնաբաժինը	Հարկ վճարողի կողմից կուտակային վճարների մասնաբաժինը
Ամսական մինչև 500,000 դրամ	Հիմնական եկամտի 5,5%-ը	Հիմնական եկամտի 4,5%-ը
Ամսական ավելի քան 500,000 դրամ	27,500 ՀՀ դրամ (ամսական)	Մնացած մասը (բազային եկամտի 10%-ը լրացնելու համար)

7.2.1
Իրավական ծածկույթը

Ծերության պաշտպանության ներկայիս համակարգը Հայաստանում կարգավորվում է հինգ հիմնական օրենքների փաթեթով, որը ներդրվել է 2010 թվականին: Դրանք ներառում են հետևյալը՝

- «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքը,
- «Պետական կենսաթոշակների մասին» օրենքը,
- ՀՀ հարկային օրենսգիրքը,
- «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքը,
- «Ներդրումային հիմնադրամների մասին» օրենքը:

«Կուտակային կենսաթոշակների մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքները կարգավորում են համակարգի հատկացումների աստիճանները: Բացի այդ՝ «Պետական նպաստների մասին» 2013 թվականի օրենքը կարգավորում է կենսաթոշակի իրավունք տվող՝ հատկացումներով չպայմանավորված աստիճանը: Իրավական առումով, 65-ից բարձր տարիքի բոլոր անձինք ապահովված են կա՛մ ծերության կենսաթոշակով, կա՛մ նպաստով: Նման բազմաստիճան համակարգ առկա է նաև կերակրողին կորցնելու դեպքում տրվող նպաստների համար: Հատկացումներով պայմանավորված կենսաթոշակների (1-ին և 2-րդ աստիճաններ) իրավական ապահովումը տեսանելի է նաև ակտիվ վճարներ կատարողների թվով, ինչը աշխատաշուկայի նույն դինամիկայի արտացոլումն է, որը պարզում է աշխատունակ տարիքի ընթացքում հատկացումներով պայմանավորված նպաստների ծածկույթը: Պաշտոնապես զբաղված աշխատողների տեսակարար կշիռը, որոնք վճարումներ են կատարում հարկային համակարգին (պետական կենսաթոշակ) և 2-րդ աստիճանի պարտադիր անհատական հաշիվներին, կազմում է աշխատուժի 45%-ը և աշխատունակ տարիքի բնակչության 28%-ը (կանանց աշխատուժի 50%-ի և աշխատունակ տարիքի կին բնակչության 26%-ի դիմաց):

Այստեղ վերաբերելի են ՀՀ հարկային օրենսգիրքը (Գլուխ 7) և «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքը, քանի որ հատկացումներով պայմանավորված պետական կենսաթոշակները Հայաստանում հիմնված են ոչ այնքան սոցիալական ապահովության հիմնադրամին համամասնորեն կատարվող հատկացումների, որքան հարկային համակարգում ներգրավված լինելու տարիների թվի վրա: Ստաժի այս տարիները կազմում են մինչև 1974 թվականը ծնված անձանց՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու և հաշվարկի միակ հիմքը: Այդ թվականից հետո ծնվածների համար վերջերս ներդրվեց անհատական, ամբողջությամբ կուտակային հաշիվների նոր համակարգ:

7.2.2

Փաստացի ծածկույթը

Հորիզոնական ծածկույթը

Ընդհանուր առմամբ, ծերության պաշտպանության փաստացի ապահովումը Հայաստանում շատ բարձր է՝ արտացոլելով իրավունքների համընդհանուր բնույթը: Տվյալները ցույց են տալիս, որ տարեցների մեծ մասը՝ շուրջ 93 տոկոսը, 2019 թվականի դրությամբ ապահովված է, սակայն կան ծածկույթից դուրս մնացածներ: Այս բացը զգալի է մի համակարգի համար, որն ունի համընդհանուր իրավական ապահովում, ուստի պետք է հասցեագրվի վարչական տվյալների և ընթացակարգերի լրացուցիչ վերանայման միջոցով:

Այս բացի առնվազն մի մասը բացատրվում է տարեցների «երիտասարդ» խմբերի ընդգրկվածության ավելի ցածր մակարդակով: Ինչպես ցույց է տրված 7.3 գծապատկերում, 60-64 տարեկան անձանց մոտ 15 տոկոսը դեռևս չի դիմել կենսաթոշակի համար, ինչը, ենթադրաբար, հետևանք է այն բանի, որ նրանք դեռ ակտիվորեն աշխատում և հատկացումներ են կատարում: Ընդգրկվածության չափերը թռիչքային բարձրանում են այս տարիքային խմբից հետո, ինչը սպասելի է՝ հաշվի առնելով, որ կենսաթոշակի անցնելու՝ օրենքով սահմանված տարիքը 63 տարեկանն է: Նման տարբերությունը սպասելի է նաև պարտադիր կուտակային կենսաթոշակի 2-րդ աստիճանի մասնակից սերունդների դեպքում, որոնց համար Կառավարությունը 63 տարեկանից հետո դադարեցնում է հատկացումները՝ նվազեցնելով աշխատանքը շարունակելու խթանը: Ամենաբարձր ծածկույթը 70 տարեկանից հետո է, երբ աշխատողների մեծ մասը վերջնականապես անցնում է կենսաթոշակի:

Գծապատկեր 7.3.

Հայաստանում աշխատանքային կամ սոցիալական աջակցություն, ծերության կամ հաշմանդամության կենսաթոշակ ստացող տարեցներն ըստ տարիքային խմբերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՃ 2019:

Ցածր եկամուտ ունեցող խմբերի շրջանում նույնպես նկատվում է տարեցների համակարգային ընդգրկվածության ավելի ցածր մակարդակ, ինչը մասամբ կարող է բացատրել ծերության ապահովման ընդհանուր բացերը: Ինչպես ցույց է տրված 7.4 գծապատկերում, բարեկեցության ստորին երեք դեցիլներում տարեցների 90 տոկոսից պակասն է ստանում տարիքային որևէ տեսակի կենսաթոշակ: Ավելի աղքատ տարեցները, ամենայն հավանականությամբ, բախվում են առավել բարձր սոցիալական բացառման և մարգինալացման, իսկ բազմաթիվ վարչական խոչընդոտները դժվարացնում են ապահովման հասանելիությունը:

Գծապատկեր 7.4.

Ծերության կենսաթոշակի ստացումն ըստ կենսաթոշակի տեսակի և սպառման դեցիլի



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Ուշագրավ է, թե որքան բարձր է վճարվող պետական կենսաթոշակների ծածկույթը մի աշխատաշուկայում, որը դեռևս բնութագրվում է ինքնազբաղվածության բարձր մակարդակով և աշխատանքի այլ ոչ ստանդարտ ձևերով: Սա, իհարկե, պայմանավորված է նրանով, որ կենսաթոշակային իրավունքները հաշվարկվում են հարկային համակարգում մասնակցության հիման վրա և ուղղակիորեն կապված չեն ֆորմալ աշխատանքային հարաբերությունների հետ: Ծածկույթի այս բարձր թվերը քողարկում են այն փաստը, որ պետական կենսաթոշակի իրավունք կարող են ձեռք բերել ընդամենը 10 տարվա ստաժ ունեցող անձինք, և 10-24 տարվա հատկացումների պատմություն ունեցող աշխատողները ստանում են ավելի ցածր կենսաթոշակ: Հետևաբար կարևոր է գնահատել համակարգի համարժեքությունը՝ հասկանալու համար, թե ծածկույթի բարձր մակարդակը որքանով է խելամիտ և արդյունավետ իրականում ծերության պաշտպանություն ապահովելու գործում: Հատկապես կարևոր է այն վերլուծել գենդերային առումով, քանի որ միտումը ցույց է տալիս, որ սոցիալական նպաստներից և ավելի ցածր պետական կենսաթոշակներից օգտվողների գերակշիռ մասը կանայք են:

Սա հաստատվում է 7.4 գծապատկերով, որը ցույց է տալիս, որ հատկացումներով չպայմանավորված տարիքային նպաստների համեմատաբար ավելի մեծ մասը բաժին է ընկնում սպառման ստորին օղակում գտնվողներին: Այնուամենայնիվ, ՏՏԿԱՀ-ի վերլուծությունը նաև բացահայտում է, որ սպառման հարուստ դեցիլներում տարեցների մի նշանակալի մաս նույնպես ստանում է ծերության սոցիալական կենսաթոշակ, ինչը նշանակում է, որ աշխատանքային կենսաթոշակի իրավունքը (և, հետևաբար, սոցիալական կենսաթոշակի իրավունքը) միշտ չէ, որ փոխկապված է բարեկեցության (օրինակ՝ եկամուտի) ավանդական չափումների հետ: Հայաստանի համատեքստում սա կարող է մատնանշել գենդերային նորմերը, որոնք խոչընդոտում են կանանց մասնակցությունը աշխատաշուկային՝ անկախ նրանից, թե սոցիալ-տնտեսական որ խմբում են:

Ուղղահայաց ծածկույթ

Ինչպես արդեն քննարկվել էր, համարժեք ապահովումը կարելի է հասկանալ մի շարք եղանակներով: Այս բաժնում կներկայացվի Հայաստանում ծերության կենսաթոշակային համակարգի համարժեքությունը երեք աստիճանների տեսանկյունից՝ դրանց համապատասխան գործառույթների համատեքստում: Օրինակ՝ ենթադրվում է, որ 0 աստիճանն ապահովում է այն նվազագույն «ստորին շեմը», որից ներքև որևէ տարեց չպետք է գտնվի՝ անկախ նրա նախկինում աշխատաշուկայում ունեցած դերից: Մյուս կողմից՝ 1-ին և 2-րդ աստիճանների հիմնական գործառույթն է համարժեք պաշտպանության համեմատաբար ավելի բարձր մակարդակի ապահովումը՝ որպես կենսաթոշակային համակարգում աշխատանքային կյանքի ընթացքում աշխատողի կատարած ֆինանսական հատկացումների արտացոլում, լինի այն սոցիալական թե, Հայաստանի դեպքում, անձնական եկամտային հարկի միջոցով: Այս բաժնում կքննարկվի նաև նպաստների համապատասխանությունը միջազգային ստանդարտներին:

Հատկանշական է, որ Հայաստանում շատ կենսաթոշակառուներ, թեև համարվում են տարիքային կենսաթոշակ ստացող, ստիպված են դիմել լրացուցիչ օգնության համար վերջին հնարավորություն ընձեռող ԸԿԲՆ-ի միջոցով: Ինչպես ցույց է տրված 7.5 գծապատկերում, մինչ սպառման ամենաստորին դեցիլում կենսաթոշակային ապահովման բացը (այն է՝ ո՛չ ծերության (պետական) կենսաթոշակ, ո՛չ էլ ծերության (սոցիալական) նպաստ ստացող բնակչության մասնաբաժինը) 11.6 տոկոս է, նույն դեցիլում յուրաքանչյուր հինգ կենսաթոշակառուից գրեթե երկուսը (38.5 տոկոսը) ստանում է նաև ԸԿԲՆ: Սա հստակ խնդիր է ինչպես 0, այնպես էլ 1-ին աստիճանի կենսաթոշակների համարժեքության առումով՝ հաշվի առնելով, որ ամենաաղքատ դեցիլում ընդգրկվածների 84 տոկոսը պնդում է, որ հատկացումների կատարմամբ պայմանավորված կենսաթոշակ է ստանում: Կենսաթոշակային ապահովման բացի և տարեցների՝ ԸԿԲՆ-ի ստացման միջև անհավասարակշռությունը հետևողականորեն կրկնվում է բոլոր դեցիլներում, ինչը նշանակում է, որ անգամ հարուստ դեցիլի կենսաթոշակառուներից շատերը դժվարանում են հոգալ իրենց կարիքները:

Գծապատկեր 7.5.

Տարեցների շրջանում կենսաթոշակային ապահովման բացը՝ ԸԿԲՆ-ի ստացման դիմաց՝ ըստ մեկ շնչին բաժին ընկնող սպառման դեցիլի. 2019 թ.



Աղբյուրը. 2019 ՏՏԿԱՀ վերլուծություն:

0 աստիճան. ծերության նպաստները

Ի տարբերություն աշխատաշուկայի և տնտեսական նման մարտահրավերներ ունեցող այլ երկրների՝ Հայաստանն ունի 1-ին աստիճանի կենսաթոշակի իրավունք տվող սոցիալական կենսաթոշակ: Հայաստանում սա հայտնի է որպես ծերության նպաստ և, «Պետական նպաստների մասին» օրենքի համաձայն, տրվում է այն անձանց, որոնց 65 տարին լրացել է, և որոնք աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք չեն բերել: Այս նպաստը ֆինանսավորվում է անմիջապես ընդհանուր պետական եկամուտներից և հաճախ կարող է շատ տարեցների եկամտի միակ աղբյուրը լինել: Այն կարող է նաև հատկապես վերաբերելի լինել այն կանանց, որոնք, ամենայն հավանականությամբ, ստաժի սահմանափակ տարիների պատճառով իրավասու չեն ստանալու նպաստներ հատկացումներով պայմանավորված համակարգից: Ավելին՝ նպաստը անհատական իրավունք է՝ անկախ ընտանիքում ստացողի դիրքից կամ իր ամուսնու եկամտից կամ ակտիվներից:

0 աստիճանի դեպքում հիմնական կենսաթոշակը սահմանված է Կառավարության որոշմամբ և 2020 թվականի հունվարի դրությամբ եղել է ամսական 26,500 դրամ: Թեև այն ի սկզբանե սահմանվել էր նվազագույն սպառողական զամբյուղի չափով, դրա ինդեքսավորման մեխանիզմ այդպես էլ չգործարկվեց: Քանի որ նվազագույն կենսաթոշակը վճարվում է ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ աստիճաններով նախատեսված կենսաթոշակառուներին, ինչպես նաև ծերության նպաստի հիմքն է, այն փաստացի ծերության

սոցիալական պաշտպանության ստորին շեմն է: Սակայն ինդեքսավորման բացակայությունը վտանգում է նպաստի իրական արժեքը:

7.1 աղյուսակում ներկայացված է, թե ինչպես է ծերության նպաստի ընթացիկ արժեքը համեմատվում ԱՄԿ-ի թիվ 102 և թիվ 128 կոնվենցիաներով առաջարկվող նվազագույն ստանդարտների հետ: Նպաստը զգալիորեն զիջում է կոնվենցիաներով առաջարկվող փոխարինման դրույքաչափերով հաշվարկված նվազագույն համարժեք ամսական նպաստների գումարներին՝ կազմելով համապատասխանաբար դրանց 41 (թիվ 102 կոնվենցիա) և 39 (թիվ 128 կոնվենցիա) տոկոսը:

Աղյուսակ 7.1.

Ծերության նպաստների համարժեքությունը՝ (0 աստիճան) ըստ թիվ 102 և թիվ 128 կոնվենցիաների

Պետական նպաստ	Պետական նպաստի միջին արժեքը (ամսական) (2020 թ.)[144]	Միջին ամսական զուտ եկամուտը (2019)	Թիվ 102 կոնվենցիային համարժեք սոցիալական կենսաթոշակ՝ 40% (ամսական)	Թիվ 128 կոնվենցիային համարժեք սոցիալական կենսաթոշակ՝ 45% (ամսական)
Ծերության նպաստ	26,500 ՀՀ դրամ	108,976 ՀՀ դրամ	43,590 ՀՀ դրամ	49,039 ՀՀ դրամ
Տարիքային կենսաթոշակ (1-ին աստիճան)	45,116 ՀՀ դրամ	108,976 ՀՀ դրամ	43,590 ՀՀ դրամ	49,039 ՀՀ դրամ

Եթե համեմատենք այլ՝ նույնպես հարկերից ֆինանսավորվող ծերության նպաստների մեջ ներդրում կատարող երկրների հետ, ապա Հայաստանի կենսաթոշակը հավասար է Արևմտյան և Կենտրոնական Ասիայի այլ երկրների կենսաթոշակին: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի շուրջ 14.7 տոկոս արժեքով Հայաստանի համընդհանուր ծերության կենսաթոշակը հարկերով ֆինանսավորվող ծերության կենսաթոշակ ապահովող միջին եկամուտ ունեցող երկրներում միջին դիրքերում է: Հայաստանի կենսաթոշակի արժեքն ավելի բարձր է, քան Ռուսաստանի Դաշնությունում տրվող նպաստը (9 տոկոս) և ցածր է Վրաստանի համընդհանուր սոցիալական կենսաթոշակից (20 տոկոս):

1-ին աստիճան. սոցիալական ապահովության կենսաթոշակներ

Հատկացումների համակարգն ավելի համապարփակ է: Առաջին աստիճանը հասանելի է նրանց, ովքեր ունեն առնվազն 10 տարվա հատկացումների պատմություն (2016 թվականի դրությամբ) և բաղկացած է հիմնական կենսաթոշակից և ստաժի տարիներով որոշվող հավելումից: Հետաքրքիր է, որ այս վարձատրությունն ընդհանրապես կախված չէ նախկին եկամուտներից[145]: Ավելի խոր գնահատում անհրաժեշտ կլիներ որոշելու համար, թե ինչպես է այս բարեփոխումն ազդել պետական կենսաթոշակների՝ սպառմանը համապատասխանեցնելու գործառույթի վրա,

[144] Տե՛ս https://www.armstat.am/ le/article/sv_06_20a_550.pdf:

[145] 1992 թվականից պետական կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ է պարտադիր սոցիալական վճարների (ներկայումս եկամտահարկի) վճարման վկայագիր: Մինչև 1996 թվականը կենսաթոշակի արժեքը հաշվարկվում էր կենսաթոշակի անցնելուն նախորդող՝ հատկացումների վերջին երեք տարիների աշխատավարձերի չափերի հիման վրա: Սակայն, 1996 թվականից սկսած, կենսաթոշակի արժեքի և նախկին աշխատավարձերի միջև կապը խզվեց, և ներդրվեց «աշխատանքային ստաժ» հասկացությունը: Մնացած ՍՆ կենսաթոշակներն այժմ հաշվարկվում են բացառապես աշխատանքային ստաժի և անձնական գործակցի հիման վրա, որը կրկին հաշվարկվում է նաև աշխատանքային ստաժի հիման վրա: Մեկ աշխատանքային տարվա արժեքը սահմանում է Կառավարությունը, և այն ինքնաբերաբար չի ինդեքսավորվում ո՛չ աշխատավարձի փոփոխությանը և ո՛չ էլ գնաճին համարժեք:

ինչպես նաև դրա գենդերային ազդեցությունը: Այնուամենայնիվ, տեսականորեն այս համակարգը, հավանաբար, ավելի շատ օգուտ է տվել կանանց և, միջին հաշվով, կարծես համապատասխանում է ԱՄԿ-ի նվազագույն ստանդարտներին (Աղյուսակ 7.1): Սոցիալական ապահովության կենսաթոշակները վաստակին փոխկապակցված նպաստներ են տրամադրում այն աշխատողներին, որոնք որոշակի ժամանակահատվածում հատկացումներ են կատարել: Այս և այլ տեսակի կենսաթոշակային համակարգերում, որտեղ նպաստները պայմանավորված են նախկին աշխատանքով և եկամուտներով, նպաստները կարող են արտացոլել այն թերությունների կուտակումը, որոնց աշխատաշուկայում և տանը բախվում են կանայք:

Ունենալով հատկացումների ավելի սահմանափակ պատմություն՝ շատ կանայք չեն բավարարում կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պահանջները: Հայաստանում «Պետական կենսաթոշակների մասին» օրենքը որպես աշխատանքային ստաժ է ճանաչում երեխայի խնամքի՝ մինչև վեց տարի արձակուրդը (յուրաքանչյուր երեխայի համար՝ երկու տարի, բայց ոչ ավելի, քան 6 տարի): Սա դրական կարգավորում է՝ նվազեցնելու կանանց համար մայրության հետևանքով առաջացած սոցիալական և տնտեսական ռիսկերը, սակայն կարելի է ավելին անել, ինչպես մանրամասն քննարկվել է 6.2 բաժնում:

Ավելին՝ աշխատաշուկայում և սոցիալական ու ընտանեկան հարաբերություններում գենդերային անհավասարության համատեքստում գենդերային չեզոք կանոնները կարող են բավարար չլինել կանանց համար պատշաճ պաշտպանություն երաշխավորելու համար: Գենդերային հավասարությունը խթանող քաղաքականությունները իրավասության կանոնները և նպաստների հաշվարկը պետք է համապատասխանեցնեն կանանց կյանքի փուլերի յուրահատկություններին: Հայաստանի դեպքում այն պետք է առնվազն դիտարկի աշխատանքի ընդհատման դիմաց ամբողջական ապահովում, ինչպես նաև կարող է ներառել լրացուցիչ փոխհատուցում չվճարվող աշխատանքային տարիների և խնամքին հատկացված ժամանակի համար: Խնամքի համար տրվող արտոնությունները նման քաղաքականության օրինակ են, որի հիմնական նպատակն է կանանց փոխհատուցել այն տարբերության դիմաց, որն առաջանում է աշխատանք-կյանք բևեռները համատեղելու արդյունքում նրանց կենսաթոշակի արժեքում՝ մասնավորապես տրամադրելով յուրաքանչյուր երեխայի համար լրացուցիչ ստաժի տարիներ: Ամբողջ աշխարհում այս միջոցն ապացուցել է իր բարձր արդյունավետությունը ծերության կենսաթոշակի նվազագույն իրավունքների ձեռքբերման գործում կանանց օժանդակելու հարցում: Հայաստանում դա կարող է լրացուցիչ ազդեցություն ունենալ մայրությունն ավելի գրավիչ դարձնելու վրա:

Սոցիալական ապահովության կենսաթոշակային համակարգերի մեծ մասում, բոլոր այն դեպքերում, երբ կանայք կենսաթոշակի իրավունք են ստանում, նպաստները նախկին եկամուտների հետ պայմանավորելը հանգեցնում է կանանց ցածր նպաստների նրանց եկամուտների ցածր մակարդակի պատճառով: Սակայն Հայաստանում համակարգի 1-ին աստիճանը վերացրել է այդ կապը, ինչը նշանակում է, որ և՛ տղամարդիկ, և՛ կանայք ստանում են նույն հատուցումը նույն թվով տարիների հատկացումների դիմաց: Սա կարևոր է Հայաստանում գենդերային տեսանկյունից աշխատավարձերի մեծ ճեղքվածքի համատեքստում, քանի որ նշանակում է, որ աշխատաշուկայի այս անհավասարությունը չի արտացոլվում կենսաթոշակի վրա: Նպաստները եկամուտներով չպայմանավորելը և խնամքի համար տրվող արտոնությունները կարող են հանգեցնել եկամուտների վերաբաշխման հզոր փաթեթի, որը կարող է օժանդակել կանանց ծեր տարիքում:

2-րդ աստիճան. պարտադիր կուտակային անհատական հաշիվներ

Վերոնշյալ իրավիճակը լիովին տարբերվում է այն պայմաններից, որոնք կիրառվում են 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված կանանց համար: «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքը (2010) կարգավորում է անհատական, կուտակային կենսաթոշակի 2-րդ (պարտադիր) և 3-րդ (կամավոր) աստիճանները: ՍՎ-ի նոր սխեմայի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող կուտակում է կենսաթոշակային հատկացումներ՝ իր կենսաթոշակը ֆինանսավորելու համար: Կենսաթոշակներն այսուհետ հաշվարկվում են՝ հիմնվելով ոչ թե հատկացումների տարիների, այլ յուրաքանչյուր աշխատողի անհատական հաշվի մնացորդի և կենսաթոշակի անցնելուց հետո նրա կյանքի սպասվող տևողության վրա: Այսպիսով՝ երեխաների խնամքի ժամանակահատվածներն այլևս չեն հաշվվում որպես կենսաթոշակի իրավունք տվող պայմաններ: Վերոնշյալ օրենքի 2014 թվականի փոփոխությունները միայն հետևյալն են նախատեսում. գործատուները երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողի համար կատարում են ամսական 3000 դրամ հատկացում մինչև երկու տարի ժամկետով: Այս առումով պետք է նշել մի քանի խնդիր. 1) այս քաղաքականության և խնամքի՝ երեք տարվա արձակուրդի ընդհանուր ժամանակահատվածի միջև առկա տարբերությունը, 2) այն փաստը, որ այս քաղաքականությունն այլևս չի օժանդակում Հայաստանի բոլոր կանանց, այլ միայն աշխատավարձ ստացողներին՝ այդպիսով մեծացնելով տարեց հասակում սոցիալ-տնտեսական տարբեր կարգավիճակներ ունեցող կանանց միջև անհավասարության ընդլայնման ռիսկը, և 3) այն փաստը, որ ի տարբերություն ծննդաբերության մակարդակը բարձրացնելու Կառավարության հայտարարած մտադրությունների՝ այս քաղաքականությունը մեծացրել է մայրանալու հենց այն ռիսկը, որը երկարաժամկետ եկամուտների ապահովման առումով ներկայացնում է կանանց մեծ մասի համար (այսինքն՝ բոլոր այն կանանց համար, որոնց աշխատավարձ չեն ստանում): Ցանկացած համակարգում մայրության նպաստների հասանելիությունը պետք է լինի անկախ և չազդի այլ նպաստներից օգտվելու կանանց կարողության վրա:

Սահմանված վճարների համակարգերում, ինչպիսին է 2-րդ աստիճանը, յուրաքանչյուր աշխատող կուտակում է կենսաթոշակային հատկացումները՝ իր կենսաթոշակը ֆինանսավորելու համար: Կենսաթոշակներն այլևս չեն հաշվարկվում որպես նախկին հատկացումների փոխարինման դրույքաչափ, ինչպես սոցիալական ապահովության պետական համակարգերում, այլ հիմնված են յուրաքանչյուր աշխատողի անհատական հաշվի մնացորդի և կենսաթոշակի անցնելուց հետո նրա կյանքի սպասվող տևողության վրա: Անհատական կենսաթոշակային հաշիվների ստեղծումն առաջացրել է գենդերային նոր խնդիրներ: Առաջին՝ անհատական հաշիվներով նպաստների մակարդակն ուղղակիորեն հիմնված է անցյալ հատկացումների վրա. հետևաբար այն օգուտը, որ կարող է ստանալ յուրաքանչյուր աշխատող, ավելի սերտորեն է արտացոլում աշխատանքային, վաստակի և վճարումների պատմությունները: Սա կարող է նշանակալիորեն ավելի ցածր կենսաթոշակների հանգեցնել սահմանափակ կամ ընդհատված հատկացումների պատմություն ունեցող անձանց համար՝ ներառյալ շատ կանանց, որոնք պետք է ապավինեն այլ վերաբաշխիչ շերտերի, ինչպիսին է ծերության նպաստը:

Երկրորդ՝ այս համակարգերը նախատեսված են ցկյանս նպաստները կյանքի ընթացքում կատարված հատկացումների հետ համապատասխանեցնելու համար, ուստի նպաստների բանաձևը պետք է հաշվի առնի այն տարիների թիվը, որոնց ընթացքում ակնկալվում է, որ անձը պետք է ստանա նպաստները: Հայաստանում թեև կենսաթոշակի անցնելու սահմանված տարիքը 63 տարեկանն է, կանայք ավելի շուտ են թողնում աշխատաշուկան, ինչը նշանակում է, որ նրանք ունեն ինչպես աշխատանքային ավելի քիչ տարիներ՝ հատկացումներ կուտակելու, այնպես էլ կենսաթոշակային ավելի շատ տարիներ՝ կուտակված միջոցները ստանալու

համար: Կառավարության՝ բարեփոխումից առաջ կատարված ուսումնասիրությունները մատչելի չէին, սակայն գենդերային անհավասարությունները խնդիր են բոլոր այն երկրներում, որոնք անցել են կառուցվածքային բարեփոխումներ և ընդունել պարտադիր կուտակային անհատական հաշիվների համակարգը: Լեհաստանի դեպքում գնահատվել է, որ բարեփոխումից հետո նպաստներն էապես կնվազեն թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար, և որ գենդերային բացը կմեծանա. 65 տարեկանում կանանց նպաստները արժեքային առումով կկազմեն տղամարդկանց նպաստների 74 տոկոսը (ի տարբերություն հին ՍՆ-ի համակարգի 81 տոկոսի): Այս համատեքստում նշվել է նաև երկու բարենպաստ հայեցակետ՝ ամուսնալուծությունից հետո կուտակված կենսաթոշակի բաշխման հնարավորություն ամուսինների միջև (եթե դա ընդհանուր սեփականություն է) և նպաստի իրավունք ստանալու համար պահանջվող պարտադիր աշխատանքային տարիների վերացում: Վերջինս վերաբերում է Հայաստանին: Ավելին՝ ՍՎ սխեմաները չեն կարող երաշխավորել, որ գրանցված հատկացումներից բխող նպաստները համարժեք կլինեն բոլորի համար. հետևաբար դրանք պետք է համատեղել և լրացնել կենսաթոշակային համակարգի արդյունավետ, բաշխիչ աստիճաններով: Հայաստանում հիմնական կենսաթոշակն այս գործառույթն իրականացնում է, ուստի այս կարևոր քաղաքականությունը պետք է պահպանել: Միևնույն ժամանակ, պետական միջոցների շարունակական հատկացումն ավելի բարձր եկամուտ ունեցողներին այն խնդիրն էր, որը պետք է լուծեր այս կառուցվածքային բարեփոխումը: Ի վերջո, հիմնական կենսաթոշակով հնարավոր չի լինի փոխհատուցել այն կորցրած համարժեք կենսաթոշակը, որը ստանում են նոր ՍՎ սխեմայով կենսաթոշակի անցած կանայք՝ ի տարբերություն իրենց գործընկերների, որոնք կենսաթոշակի են անցել ՍՆ-ի ներքո:

Այն փաստը, որ նման անհատականացված համակարգերը սեղմում են հատկացումների և նպաստների միջև կապը, նշանակում է, որ ընդհանուր առմամբ ավելի ցածր կենսաթոշակ է սահմանվում հատկացումների սահմանափակ պատմություն ունեցող անձանց համար՝ ներառյալ բոլոր կանանց: Ավելին՝ առանց 1-ին աստիճանի վերաբաշխման մեխանիզմների 2-րդ աստիճանը մեծապես կսրի գենդերային անհավասարությունները: Բացի այդ՝ 25 տարվա հատկացումներից հետո 2-րդ աստիճանի ներքո գտնվող անձինք կարող են շարունակել իրենց հատկացումները մինչև 63 տարեկանը, երբ արդեն կարող են ստանալ իրենց գումարները անուիտետային հիմունքով: Նրանք կարող են հետաձգել կենսաթոշակի անցնելը, սակայն Կառավարությունն այլևս չի կատարի իր կողմից հատկացվող համարժեք վճարները: Սա կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ կանանց, քան տղամարդկանց վրա, քանի որ աշխատանքի շուկայում նրանց ընդհատվող մասնակցությունը, որն իր բարձրագույն չափին է հասնում միայն 40 տարեկանին մոտ, կնշանակի, որ նրանց համար ավելի դժվար կլինի կուտակել 25 տարվա ստաժ մինչև 63 տարեկանը լրանալը:

ՍՆ սխեմայի ամբողջական փոխարինումը պահանջում է սխեմայով կուտակված պարտավորությունների գնահատում՝ հաշվի առնելով արդեն իսկ վճարվող կենսաթոշակները և ներկայումս ապահովագրված բնակչության կուտակված իրավունքների արժեքը: Այլ կերպ ասած՝ Կառավարությունը պետք է սահմաներ, թե ինչպես են ֆինանսավորվելու 1974 թվականից առաջ ծնված աշխատողների կենսաթոշակներն այն պարագայում, որ նոր աշխատողներն այլևս մասնակից չեն ընդհանուր հիմնադրամին, այլ վճարումներ են կատարում իրենց անհատական հաշիվներին: Նախկին ՍՆ սխեմայի ներքո այս ֆինանսական պարտավորությունների մեծությունը հաճախ մեծ խոչընդոտ է կառուցվածքային բարեփոխումների համար և որոշ դեպքերում պատճառ է դարձել, որ այդ բարեփոխումները հակադարձվեն: Հաշվարկված պարտավորությունների գնահատումը ցույց է տալիս խոստացված նպաստների իրական արժեքը, որոնք Հայաստանի դեպքում պետք է կրեն բոլոր հարկատուները:

7.3

ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՊԱՍՏՆԵՐԸ

7.3.1
Իրավական ծածկույթը

Հաշմանդամության պաշտպանության սխեմայի նման, կերակրողին կորցրածների պաշտպանության սխեման գործում է բազմաստիճան մոդելով: Չնայած ծերության կենսաթոշակային համակարգի կառուցվածքային բարեփոխումներին՝ կարծես թե ընդհանուր պետական եկամուտներից կերակրողին կորցրածների կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրը փոխելու ծրագիր չկա: Այսպիսով՝ այդ համակարգը ներառում է.

- կերակրողին կորցնելու դեպքում (պետական) կենսաթոշակներ,
- կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ:

Համակարգի իրավական դաշտը ներառում է ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» և «Սոցիալական աջակցության մասին» օրենքները, ինչպես նաև Կառավարության թիվ 1734-Ն, թիվ 670-Ն, թիվ 1489-Ն և թիվ 635-Ն որոշումները: Այսպիսով՝ կերակրողին կորցնողի ապահովման համակարգը ցայտուն օրինակ է այն բանի, թե ինչպես նպաստների համեմատաբար պարզ համակարգը, որն ունի համընդհանուր ծածկույթ ապահովելուն ուղղված՝ հատկացումներով պայմանավորված և հատկացումներով չպայմանավորված նպաստների համակարգման առկա առավելություն, այնուամենայնիվ կարող է տուժել իրավական դաշտի խիստ մասնատվածությունից:
«Պետական կենսաթոշակների մասին» օրենքի համաձայն՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ է նշանակվում մահացած կերակրողին կորցրածների ընտանիքի հետևյալ անդամներին.

- կերակրողի մահվան օրվա դրությամբ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանաչված ծնողներին, եթե չեն աշխատում,
- կերակրողի մահվան օրվա դրությամբ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանաչված ամուսնուն, եթե չի աշխատում,
- ամուսնուն կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձին՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով,
- 18 տարին չլրացած եղբորը, քրոջը և թոռանը, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում,
- 18 տարին չլրացած՝ հաշմանդամություն ունեցող երեխա:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը կենսաթոշակի իրավունք տվող սոցիալական պաշտպանության ստորին շեմ է ապահովում կերակրողին կորցրածների համար՝ նպաստ երաշխավորելով կերակրողին կորցրած բոլոր այն անձանց, որոնք պետական կենսաթոշակի իրավունք չունեն: Սա ներառում է.

- 18 տարին չլրացած երեխաներին,

- ուսումնական հաստատությունում առկա ուսուցմամբ մինչև 26 տարեկան սովորողներին[146],
- մահացած կերակրողի ամուսնուն կամ խնամակալին, որը խնամում է մինչև 14 տարեկան երեխայի:

Բացի այդ՝ Սոցիալական ապահովության միջազգային ասոցիացիայի (ՍԱՄԱ) կողմից Հայաստանի մասով ներկայացված սոցիալական ապահովության համակարգի համառոտ նկարագրում նշվում է, որ և՛ կերակրողին կորցնելու դեպքում (պետական) կենսաթոշակի, և՛ կերակրողին կորցնելու դեպքում (սոցիալական) նպաստների իրավունք ունեցող անձինք չպետք է «այլ կենսաթոշակ ստանան»[147]: ՍԱՄԱ-ի տեղեկատվությունը հիմնված է ՍԱԾ-ի ուղղակի հաշվետվության վրա և կարող է արտացոլել ինչպես կանոնակարգերի, այնպես էլ օրենքների պահանջները, որն էլ կարող է բացատրել վերը նշված՝ նպաստի իրավունք ստանալու պայմանների անհամապատասխանությունը: Եթե դա այդպես է, և եթե հաշվի առնենք, որ այրիների (ամուրիների) ճնշող մեծամասնությունը տարեցներ են, որոնցից շատերը ստանում են ծերության կենսաթոշակ, կերակրողին կորցրածների կենսաթոշակ ստացողների թիվը Հայաստանում, ամենայն հավանականությամբ, համեմատաբար փոքր կլինի:

Ամեն դեպքում, կերակրողին կորցրածների նպաստների իրավական ծածկույթը կազմում է բնակչության 100 տոկոսը՝ ներառյալ երեխաները և մեծահասակները: Փաստորեն, խնամառուների չաշխատող ծնողների և խնամակալների և ոչ թե միայն ուղղակի երեխաների ներառումը այս բաղադրիչում Հայաստանի՝ կերակրողին կորցնելու դեպքում գործող կենսաթոշակային համակարգը դարձնում է ավելի շռայլ, քան պահանջում են նվազագույն ստանդարտները: ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիան կոչ է անում աջակցելու միայն այրիներին կամ երեխաներին: Նմանապես այն փաստը, որ հատկացումներով չպայմանավորված նպաստները վերջերս ընդլայնվել են՝ ներառելով մինչև 26 տարեկան ուսանողներին, նույնպես շատ շռայլ մոտեցում է:

Այնուամենայնիվ, կա նախազգուշանալու մեկ հանգամանք 15–18 տարեկան երեխաների խնամողներին կենսաթոշակ և նպաստ ստացողների շարքից դուրս թողնելու առնչությամբ: Անհասկանալի է, թե ինչու է կանոնակարգումը բացառում այս որոշակի խումբը. միևնույն ժամանակ հազիվ թե դրա ազդեցությունը չափազանց փաստակար լինի նպաստներ ստանալու հնարավորության տեսանկյունից, քանի որ երեխաները կարող են ընդգրկվել ուսումնական հաստատությունում սովորողի կարգավիճակով նպաստառուների խմբում: Իհարկե, սա կարող է լինել հենց այն հատկանիշը, որն ուժեղացնում է խոցելիությունը ամենաաղքատների շրջանում, որոնք կերակրողին կորցնելուց հետո կարող են եկամուտ չունենալ երեխաներին դպրոցում պահելու համար, հատկապես հասուն տարիքում, երբ նրանք կարող են եկամուտ վաստակել աշխատաշուկայում: Խորհուրդ է տրվում հետագա ուսումնասիրություն կատարել՝ տեսնելու, թե այդ ռիսկերը գործնականում որքան հաճախ են դրսևորվում:

Երկրորդ՝ գենդերային տեսանկյունից ուշագրավ է, որ կերակրողին կորցրած ամուսինների համար համապատասխան կենսաթոշակներից և նպաստներից օգտվելու իրավունքը պայմանավորված է նրանց՝ խնամակալի դերով: Այրիներին տրվող նպաստներին առնչվող հարցերն ուսումնասիրված են 7.2 ներդիրում: Համընդհանուր բազմաստիճան կենսաթոշակային համակարգի առկայությունը նշանակում է, որ կենսաթոշակային տարիքից հետո կերակրողին կորցրածների եկամուտների ռիսկերը հիմնականում բավարարվում են ծերության ապահովման

---

146 Այս տարիքային շեմը մինչև 2020 թվականի հուլիսը եղել է 23-ը:
147 ՍԱՄԱ/ՍԱԾ (տարբեր տարիներ):

համակարգով, այլ ոչ թե կերակրողին կորցրածների նպաստներով: Այս համատեքստում կերակրողին կորցրածների պաշտպանության վերաբերելիությունն ավելի բարձր է աշխատունակ տարիքի անձանց համար, հատկապես նրանց, որոնք աշխատաշուկայում եկամուտ ստանալու հնարավորություն չունեն: Հայաստանի՝ աշխատաշուկայում ցածր մասնակցության պարագայում այս համակարգը կշարունակի պատշաճ օժանդակություն լինել երկարաժամկետ գործազրկությունից տուժած բոլոր ամուսինների համար, մասնավորապես բոլոր այն կանանց, որոնք լքել են աշխատաշուկան երեխայի խնամքի նպատակով: Այս դեպքում կասկածելի է դառնում 15-18 տարեկան երեխաներին խնամողների շրջանում կերակրողին կորցրածների կենսաթոշակները սահմանափակելու քաղաքականության համապատասխանությունը: Ընդհանուր առմամբ, իրավական ապահովումը համապարփակ է և ամենայն հավանականությամբ կարող է հստակ դեր ունենալ մահվան ելքով աշխատավայրում ստացված փասվածքների նպաստների սահմանափակ ծածկույթի բացերը լրացնելու գործում:

Ներդիր 7.2.

Ստացված օգուտներն այրիների համար

Կերակրողին կորցնելու դեպքում տրվող կենսաթոշակները տղամարդու՝ որպես կերակրողի մոդելի վառ օրինակ են: Ավանդական ընտանեկան օրինաչափություններով և գենդերային դերերով պայմանավորված՝ այս նպաստները նպատակ ունեին զուգընկերոջ մահից հետո տնտեսական աջակցություն ցուցաբերելու ընտանիքի անդամներին (հիմնականում՝ կանանց): Շատ դեպքերում կերակրողին կորցրածների նպաստները, որոնք նաև հայտնի են որպես այրիների նպաստներ, նպատակ ունեն մեղմելու եկամտի անբավարարությունը, իսկ նպաստները հաշվարկվում են որպես մահացած զուգընկերոջ նպաստի կամ վաստակի տոկոս: Ընդհանուր առմամբ, կերակրողին կորցրածների նպաստներն ավելի ցածր են, քան ծերության կենսաթոշակները: Ի հակադրություն՝ որոշ երկրներ (օրինակ՝ Իռլանդիան, Լիտվան և Միացյալ Թագավորությունը) կերակրողին կորցրածներին տրամադրում են միայն հաստատագրված նպաստ, իսկ մյուսները (օրինակ՝ Դանիան և Շվեդիան) ընտանեկան տեսանկյունից չեն մոտենում ծերության պաշտպանությանը՝ նպաստ չվճարելով կերակրողին կորցրածներին՝ փոխարենը բոլորին տրամադրելով համընդհանուր հիմնական կենսաթոշակ (Saraceno and Keck, 2011, p. 392 [in Arza, 2015]): Ստացվելիք նպաստների հարցը խորքային քննարկման առարկա է դարձել անցած տասնամյակներին: Քանի որ կերակրողին կորցրածների կենսաթոշակների իրավունքի հիմքում ավանդաբար եղել է տնտեսական կախվածությունը, այդ նպաստները քննադատության են ենթարկվել ավանդական գենդերային նորմերն ամրապնդելու և կանանց՝ խնամքի մատակարարի դերը և ամուսիններից տնտեսապես կախված լինելը որպես նորմ ներկայացնելու համար: Կերակրողին կորցրածների կենսաթոշակները նույնպես կորցնում են տարեց կանանց պաշտպանության արդյունավետությունը, քանի որ ընտանիքները փոխվում են: Ամուսնալուծությունների ավելի բարձր մակարդակը և աշխատաշուկայում կանանց ավելի մեծ մասնակցությունը մարտահրավեր են նետել ավանդական ընտանիքներին և կախյալ կնոջ վերաբերյալ կարծիքին:

Որոշ երկրներ վերջերս ձեռնամուխ են եղել կերակրողին կորցրածների կենսաթոշակների էական փոփոխությունների: Նպաստները կրճատվում կամ զգալիորեն նվազեցվում կամ աստիճանաբար հանվում են, դրանց տևողությունը սահմանափակվում է, իսկ դրանց ձեռքբերման իրավունքը

պայմանավորվում է ֆինանսական միջոցների ստուգմամբ (Saraceno and Keck, 2011 [in Arza, 2015]): ՍՎՊՀ կենսաթոշակային համակարգեր որդեգրած երկրները շարունակում են ապահովել այրիներին առանձին՝ բաշխողական համակարգով սահմանված նպաստների սխեմայով կամ ընդհանրապես վերացրել են կերակրողին կորցրածների նպաստները: Հայաստանի նման որոշ երկրներում սահմանված նպաստներից անցումն ամբողջությամբ կուտակային սահմանված վճարներով անհատական հաշիվների հանգեցրեց նաև ստացված նպաստների փոփոխության: Ամբողջությամբ կուտակային սահմանված վճարներով սխեմաներն ապահովում են անհատականացված կենսաթոշակներ, որոնք վերաբաշխելու նպատակ չկա: Այս համակարգերում ստացված նպաստները կարող են փոխարինվել համատեղ անուիտետներով, որոնք կերակրողի մահվան դեպքում ներառում են կերակրողին կորցնելու նպաստը: Լատինաամերիկյան մի շարք երկրներում, որտեղ սահմանված է կենսաթոշակ, պահանջվում է համատեղ անուիտետ: Հիմնադրամների հավասար արժեքների դեպքում ամուսնացած տղամարդիկ, որոնք ձեռք են բերում համատեղ անուիտետ, ստանում են ավելի ցածր անհատական նպաստ, քան միայնակ տղամարդիկ, քանի որ լրացուցիչ նպաստի (այրիների կենսաթոշակ) իրավունքը կցված է նույն հիմնադրամին (James, 2012 [in Arza, 2015]): Այնուամենայնիվ, այլ երկրներում համատեղ անուիտետները պարտադիր չեն. Միացյալ Թագավորության տվյալները ցույց են տալիս, որ երբ համատեղ անուիտետները կամավոր են, տղամարդկանց մեծամասնությունն ընտրում է անհատական անուիտետներ (James, 2012 [in Arza, 2015]):

Արդյո՞ք այրիների կենսաթոշակները պետք է վերացվեն ի շահ կենսաթոշակների ամբողջական անհատականացման: Սա վերաբերելի հարց է Հայաստանի նման կառուցվածքային անցում կատարող երկրի համար: Տղամարդու՝ որպես կերակրողի մոդելից անցումը ոչ ընտանիքահենք կենսաթոշակային համակարգի քաղաքականության բարդ երկընտրանք է առաջացնում գենդերային հավասարության տեսանկյունից: Թեև կա ընտանեկան յուրահատկությունների և գենդերային դերերի ավելի մեծ ինքնավարության և ընտրության միտում, կանայք և տղամարդիկ լիովին անհատականացված չեն: Վարձատրվող և չվարձատրվող աշխատանքների բաշխման հարցում գենդերային անհավասարությունները լուրջ ծավալների են հասնում Հայաստանի նման երկրներում: Ուստի թեև աշխատանքային և ընտանեկան դերերում գենդերային հավասարությանը հետամուտ լինելով կարևոր է կենսաթոշակային համակարգերը վերաուղղորդել ավանդական ընտանեկան մոդելից, այնուհանդերձ դեռևս հնարավոր չէ պարզապես որդեգրել կյանքի ուղու հավասար մոդելների կամ ամբողջական անհատականացման մոտեցումը, եթե ցանկանում ենք երաշխավորել կանանց պաշտպանությունը: Ի վերջո, կենսաթոշակային նպաստների առումով կանանց ինքնուրույնության բարձրացմանն ուղղված քաղաքականություններն են, որ պետք է լուծեն այս խնդիրները (տե՛ս Բաժին 7.2.2):

Աղբյուրը. Ըստ Արզայի (2015):

7.3.2
Փաստացի ծածկույթը

Հորիզոնական և ուղղահայաց ծածկույթը

ՏՀԶԿ 25 երկրներում, միջին հաշվով, կանայք կազմում են այրիների շրջանում կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացողների ավելի քան 85 տոկոսը: Դա պայմանավորված է նրանով, որ նրանք ավելի երկար են ապրում, զույգի երիտասարդ զուգընկեր են և ավելի քիչ են ստանում անհատական կենսաթոշակի իրավունք: Հայաստանում գերակայում է այս միտումը: Ինչպես ցույց է տրված 7.6 գծապատկերում, կանայք կազմել են կերակրողին կորցնելու դեպքում (պետական) կենսաթոշակի գրանցված շահառուների 71 տոկոսը: Հատկացումներով չպայմանավորված կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի վերաբերյալ տվյալները բացակայում են, սակայն բաշխումը, ամենայն հավանականությամբ, համանման է:

Գծապատկեր 7.6.

Կերակրողին կորցնելու դեպքում (պետական) կենսաթոշակ ստացողները՝ ըստ սեռի. 2020 թ.



Աղբյուրը. Վարչական տվյալներ:

Տվյալների սղությունը կասեցնում է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակների իրական հասանելիության, այսինքն՝ այն կերակրողին կորցրածների թվի գնահատումը, որոնք, իրավասու լինելով, գուցե չեն ստանում կենսաթոշակ կամ նպաստ: Այնուամենայնիվ, կերակրողին կորցրած (պետական) կենսաթոշակառուների ընդհանուր թիվը, ըստ վարչական տվյալների, համեմատաբար փոքր է: 2020 թվականին ընդամենը 7,135 անձ էր պահանջել նպաստը, ինչը կարելի է բացատրել կերակրողին կորցրածների նպաստների արդյունավետ վարչական կառավարմամբ (բացահայտելով նրանց, որոնք իրենց իրավունքով այլ կենսաթոշակ են ստանում և կերակրողին կորցրածի նպաստի իրավունք չունեն): Վճարումների տվյալների դինամիկան հաստատում է վերոնշյալ դրույթը. կերակրողին կորցրած (պետական) կենսաթոշակառուների թիվը վերջին տարիներին անշեղորեն նվազում է, ինչպես ցույց է տրված 7.7 գծապատկերում: Այս միտումը կարող է արտացոլել մի շարք գործոններ՝ ներառյալ աշխատանքային այլ կենսաթոշակ ստացողների անհատական իրավունքի ընդլայնումը:

Գծապատկեր 7.7.

Կերակրողին կորցրած (պետական) կենսաթոշակառուների թվի դինամիկան. 2010-2020 թթ.



Աղբյուրը. Վարչական տվյալներ:

Համարժեքության առումով կերակրողին կորցրածների կենսաթոշակի չափը հաշվարկվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված բանաձևի հիման վրա: Հաշվարկը ներառում է հիմնական կենսաթոշակը (ներկայումս սահմանված է 18,000 դրամ)՝ գումարած աշխատած տարիների արժեքի[148] և աշխատանքային ստաժի տարիների անձնական գործակցի արտադրյալը[149]: 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կերակրողին կորցրածների (պետական) կենսաթոշակի միջին չափը կազմում էր 31,998 դրամ: Մյուս կողմից՝ կերակրողին կորցրածների (սոցիալական) նպաստների համակարգով վճարվում է հաստատագրված նպաստ, որը ներկայումս հավասար է 26,500 դրամի: ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայով առաջարկվում է, որ Հայաստանի նման՝ հարկերից ֆինանսավորվող համակարգի դեպքում կերակրողին կորցրածների նպաստի նվազագույն մակարդակը պետք է լինի բանվորի աշխատավարձի 40 տոկոսը: 7.2 աղյուսակում ներկայացված են համարժեքության վերլուծության արդյունքները:

[148] Ծառայության տարիների արժեքը տարբերակված է: Այն 950 դրամ է աշխատանքային առաջին 10 տարվա ստաժի յուրաքանչյուր տարվա համար, իսկ դրանից հետո տարեկան 500 դրամ է:

[149] Անձնական գործակիցը սահմանվում է 0.1՝ մինչև 10 տարվա, 0.01՝ 11-40 տարվա և 0.02՝ դրանից ավելի տարիների համար:

Աղյուսակ 7.2.

Կերակրողին կորցրածների նպաստների համապատասխանությունը թիվ 102 և թիվ 128 կոնվենցիաների նվազագույն ստանդարտներին

Պետական նպաստ	Ազգային ամսական նպաստի արժեքը (2020)	Միջին ամսական զուտ եկամուտը, ընդհանուր (2019)	Թիվ 102 կոնվենցիային համարժեք սոցիալական կենսաթոշակ՝ 40% (ամսական)	Թիվ 128 կոնվենցիային համարժեք սոցիալական կենսաթոշակ՝ 45% (ամսական)
Կերակրողին կորցրածների (պետական) կենսաթոշակներ (1-ին աստիճան)	31.998 ՀՀ դրամ	108.976 ՀՀ դրամ	43.590 դրամ	49 039 դրամ
Կերակրողին կորցրածների (սոցիալական) նպաստները	26.500 ՀՀ դրամ	108.976 ՀՀ դրամ	43.590 դրամ	49 039 դրամ

Թե՛ կերակրողին կորցրածների պետական կենսաթոշակների և թե՛ կերակրողին կորցրածների սոցիալական նպաստների դեպքում ցուցանիշները, կարծես թե, պակաս են ԱՄԿ-ի նվազագույն ստանդարտներից, թեև վերջնական վերլուծության համար պահանջվում է աշխատավարձի տվյալների մանրամասն վերլուծություն: Ավելին, քանի որ սա եկամտի փոխարինման նպաստ է, այն նվազագույն աշխատավարձի հետ համեմատելը (ամսական 55.000 դրամ՝ 2019 թվականին և ամսական 68.000 դրամ՝ 2020 թվականին) հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու նվազագույն կենսամակարդակն ապահովելուն ուղղված նպաստի կարողության մասին, մասնավորապես կերակրողին կորցրած ամուսինների մասով:

7.4

ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդհանուր առմամբ, ծերության պաշտպանության ապահովումը հաջողված է: Բազմաստիճան համակարգը երաշխավորում է, որ տարեցները Հայաստանում կարող են ակնկալել առնվազն նվազագույն եկամտի ապահովություն: Հայաստանում հատկացումների կատարմամբ պայմանավորված կենսաթոշակները հիմնված են ոչ թե սոցիալական ապահովագրության հիմնադրամին համամասնորեն կատարվող վճարումների, այլ ավելի շուտ հարկային համակարգում մասնակցության տարիների վրա: Նշված աշխատանքային ստաժի տարիները միակ հիմքն են 1974 թվականից առաջ ծնված անձանց կենսաթոշակները հաշվարկելու համար: 1974 թվականից հետո ծնվածների համար վերջերս ներդրվեց վճարումների նոր համակարգ, այն է՝ անհատական, ամբողջությամբ ֆինանսավորվող հաշիվներ (տե՛ս Գծապատկեր 7.2):

Կենսաթոշակային համակարգի 0 աստիճանից վճարվում են այն անձինք, որոնց 65 տարեկանը լրացել է, և որոնք չունեն աշխատանքային կենսաթոշակի իրավունք, այս աստիճանը փաստացի տարեցների համար ծառայում

է որպես սոցիալական պաշտպանության ստորին շեմ: Համարժեքության տեսանկյունից ծերության (սոցիալական) նպաստը չի համապատասխանում ԱՄԿ-ի ստանդարտներին: Ավելին՝ չինդեքսավորելը արժեզրկում է նպաստի իրական չափը: Հարկերով ֆինանսավորվող ծերության նպաստների համակարգ ունեցող այլ երկրների հետ համեմատելիս տեսնում ենք, որ Հայաստանում կենսաթոշակի չափը նույնն է, ինչ ԵԿԱ երկրներում է: Ծերության կենսաթոշակի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հարաբերակցությունը՝ մոտ 12 տոկոս, ավելի բարձր է, քան Ռուսաստանի Դաշնությունում (9 տոկոս), և ավելի ցածր է, քան Վրաստանում (20 տոկոս):

Հատկացումների կատարմամբ պայմանավորված համակարգն առավել բարդ է: Կենսաթոշակային համակարգի 1-ին աստիճանով վճարվում են մինչև 1974 թվականը ծնվածները, որոնք ունեն առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ. այն բաղկացած է բազային կենսաթոշակից ու աշխատանքային ստաժի համար տրվող հավելումից: Այդ հավելումն ընդհանրապես առնչություն չունի նախկին եկամուտների հետ, ուստի կենսաթոշակային համակարգի 1-ին աստիճանի ներքո դասակարգվող ծերության կենսաթոշակները չեն վերարտադրում աշխատաշուկայում նկատվող՝ վարձատրության գենդերային մեծ խզվածքը: Սա այս աստիճանին հատկապես բնորոշ և դրական հատկություն է: Այնուամենայնիվ, հավանական է, որ կանայք կունենան ավելի քիչ աշխատանքային ստաժ, քան տղամարդիկ: Հայաստանում «Պետական նպաստների մասին» օրենքով երեխայի խնամքի մինչև վեց տարի արձակուրդը դիտարկվում է որպես աշխատանքային ստաժ: Սա համակարգի մեկ այլ դրական հատկությունն է, որը հնարավորություն է տալիս ծեր տարիքում նվազագույնի հասցնելու նրանց՝ կյանքի ավելի վաղ շրջանում մայրանալու հետևանք հանդիսացող տնտեսական ռիսկերը: Ընդհանուր առմամբ եկամտից նպաստներն առանձնացնելը և խնամքի ժամանակահատվածներն աշխատանքային ստաժ համարելը ծեր տարիքում տղամարդկանց և կանանց միջև եկամտի վերաբաշխման հզոր փաթեթ է ստեղծում:

Կենսաթոշակային համակարգի 2-րդ աստիճանը պարտադիր է և ներառում է անհատական հաշիվներ 1974 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո ծնվածների համար: Դրամական փոխանցումների արժեքները ձևավորվում են նախկինում կատարված վճարումների հիման վրա, ինչը նշանակում է, որ կանանց կենսաթոշակների չափի մեջ կարտացոլվեն ոչ միայն նրանց աշխատանքային ստաժի քիչ տարիները, այլև ցածր եկամուտները: Ավելին, քանի որ կանայք ավելի շուտ են կենսաթոշակի անցնում, սակայն ավելի երկար են ապրում, քան տղամարդիկ, սա նշանակում է, որ նրանք կենսաթոշակի ավելի երկար ժամանակահատվածներ ֆինանսավորելու համար ավելի քիչ խնայողություններ են ունենալու, ինչը սպառնալիք է անուիտետների և ամսական վճարումների բազային համարժեքության համար: Սա իրականում նման համակարգի առանցքային հատկություններից է, երբ որոշում են անհատական վճարումների, այլ ոչ թե վերջնական նպաստների չափը: Այս համատեքստում կենսաթոշակի համարժեքությունը կդառնա շատ ավելի կարևոր:

7.3 աղյուսակում ամփոփված է Հայաստանում տարեցների իրավական և փաստացի ծածկույթը:

Աղյուսակ 7.3.

Հայաստանում տարեցների իրավական և փաստացի ծածկույթի ամփոփ նկարագիրը

Ապահովման չափականությունը		Ծերության (սոցիալական) նպաստը և ծերության աշխատանքային (պետական) կենսաթոշակը	Հաշմանդամության (սոցիալական) նպաստը և աշխատանքային (պետական) կենսաթոշակը	Կերակրողին կորցրածի դեպքում (սոցիալական) նպաստը և աշխատանքային (պետական) կենսաթոշակը	ԸԿԲՆ (ՄՆ և ՀՕ)
Իրավական ծածկույթը	Թիրախային խումբը	Սոցիալական նպաստ. 65-ից բարձր տարիքի բոլոր անձինք, որոնք իրավունք չունեն տարիքային աշխատանքային կենսաթոշակի (ունեն 10 տարուց պակաս ստաժ) Աշխատանքային կենսաթոշակ. 63-ից բարձր տարիքի բոլոր անձինք՝ առնվազն 10 տարվա ստաժով	Սոցիալական նպաստ. բոլոր տարեցները (հաշմանդամություն ունեցող անձինք), որոնք աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեն Աշխատանքային կենսաթոշակ. բոլոր տարեցները (հաշմանդամություն ունեցող), որոնք ունեն առնվազն 10 տարվա ստաժ	Սոցիալական նպաստ. բոլոր տարեցները (կերակրողին կորցրած), որոնք աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեն Աշխատանքային կենսաթոշակ. բոլոր տարեցները (կերակրողին կորցրած), որոնք վճարել են եկամտահարկ	ՄՆ. ԸՍԳՀ-ում գրանցված տնային տնտեսությունում (առանց երեխաների) ապրող բոլոր տարեցները, որոնք ստացել են 30 միավորի շեմից բարձր խոցելիության գնահատական ՀՕ. ԸՍԳՀ-ում գրանցված տնային տնտեսությունում ապրող բոլոր տարեցները, որոնք ԸՆ-ի կամ ՄՆ-ի իրավունք չունեն և ստացել են 0 միավորի շեմից բարձր խոցելիության գնահատական (և գտնվում են կյանքի դժվարին իրավիճակում, որը պահանջում է հրատապ օգնություն)
	Շահառուների ծածկույթի հարաբե-րակցությունը. 63-ից կամ 65-ից բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը	65-ից բարձր տարիքի անձանց 100%-ը	65-ից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող բնակչության 100%-ը	Կերակրողին կորցրած՝ 65-ից բարձր տարիքի բնակչության 100%-ը	Անհայտ է
Փաստացի ծածկույթը	Հորիզոնական (տարեց բնակչության չափը)	Սոցիալական նպաստ՝ 1.3% Աշխատանքային կենսաթոշակ՝ 91.6%	Սոցիալական նպաստ՝ 0.3% Աշխատանքային կենսաթոշակ՝ 2.3%	Անբավարար տվյալներ (Նշում. ըստ 2019 թվականի ՏՏԿԱՀ–ի՝ տարեց բնակչության 0%-ն է ստանում որևէ նպաստ)	11.3%
	Ուղղահայաց (համար-ժեքություն/ նպաստի մակարդակ)	Սոցիալական նպաստ. ցածր Աշխատանքային կենսաթոշակ. միջին	Սոցիալական նպաստ. ցածր Աշխատանքային կենսաթոշակ՝ միջին	Սոցիալական նպաստ. ցածր Աշխատանքային կենսաթոշակ. ցածր	Գնահատված չէ (տե՛ս Բաժին 6.2.2)

8

ԱՆՑՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը էական և դրական ազդեցություն ունի իր բնակչության բարեկեցության վրա: Կյանքի հիմնական փուլերի նպաստները, հատկապես ծերության կենսաթոշակային համակարգը, ակնհայտորեն կանխում են շատ անձանց՝ աղքատության մեջ հայտնվելը կամ խոցելի դառնալը: Թեև Հայաստանը որոշ չափով լավ վիճակում էր՝ հաղթահարելու Քովիդ-19-ի ճգնաժամը սկզբնական շրջանում (հարկ է նշել, որ Կառավարությունը կարողացավ արագ ընդլայնել ԸՆ-ի գործող ծրագիրը՝ աղքատներին և այլ անապահով խավերին լրացուցիչ աջակցություն ցուցաբերելու համար), ճգնաժամն անկասկած բացահայտեց սոցիալական պաշտպանության համակարգի խորքային որոշ ճեղքեր: Ավելին՝ իրականացվող արտակարգ միջոցառումները հնարավորություն տվեցին վերհանելու այդ թույլ կողմերը, որոնցից ամենաակնառուն գործազրկության պաշտպանության բացերն էին:

Ստորև բերված բաժիններում ներկայացվում են այն ազդեցությունները, որոնք ընթացիկ համակարգն ունեցել է Հայաստանում տնային տնտեսությունների բարեկեցության վրա, և տրվում են սոցիալական պաշտպանության համակարգում հայտնաբերված բացերը լրացնելու առաջարկություններ:

8.1

ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Հայաստանում սոցիալական պաշտպանության դրամական հատկացումներից ստացված եկամուտը կազմում է տնային տնտեսությունների ընդհանուր եկամտի զգալի մասնաբաժինը: Ամբողջ բնակչության շրջանում տնային տնտեսությունների եկամուտների մոտ 21.2 տոկոսը միջինում ստացվում է սոցիալական հատկացումներից: Սա վերաբերում է նաև եկամուտների բաշխմանը և ցույց է տալիս համընդհանուր նպաստների կարևորությունը: 8.1 գծապատկերը ցույց է տալիս ընտանիքի եկամուտներում սոցիալական պաշտպանության փոխանցումների միջին մասնաբաժինը՝ ըստ բնակչության բարեկեցության դեցիլների: Բնակչության ստորին դեցիլում ընդգրկվածներն իրենց կարիքները բավարարելու համար ավելի շատ են ապավինում սոցիալական պաշտպանության փոխանցումներին. այս խումբը տնային տնտեսությունների ընդհանուր եկամտի ավելի քան մեկ քառորդը (26,3 տոկոսը) ստանում է սոցիալական փոխանցումներից, սակայն նույնիսկ ամենաբարձր դեցիլի բնակչության տնային տնտեսությունների եկամտի զգալի մասնաբաժինը՝16,3 տոկոսը, ապահովվում են այդ փոխանցումները:

Գծապատկեր 8.1.

Սոցիալական պաշտպանության փոխանցումներից ստացված միջին եկամտի մասնաբաժինը տնային տնտեսությունների ընդհանուր եկամուտներում՝ ըստ բնակչության դեցիլային խմբերի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019։

Երեխաներին, աշխատունակ տարիքի անձանց և տարեցներին ուղղված սոցիալական պաշտպանության քաղաքականությունների ծածկույթի և ծավալների միջև տարբերությունը արտացոլված է ըստ նրա, թե որքանով են այս տարիքային խմբերի անձինք ապավինում սոցիալական պաշտպանության եկամուտներին։ Ինչպես ներկայացված է 8.2 գծապատկերում, տարեցները շատ ավելի են կախված սոցիալական հատկացումներից, քան այլ տարիքային խմբերի անձինք։ Դրամական հատկացումները միջինում կազմում են 65 և բարձր տարիքի անձանց անհատական եկամտի 41 տոկոսը, մինչդեռ երեխաների (0-14 տարեկան) շրջանում՝ միջինում 14 տոկոսը, իսկ աշխատունակ տարիքի մեծահասակների շրջանում՝ միջինում 11 տոկոսը։ Սա արտացոլում է ինչպես նպաստների համեմատաբար բարձր արժեքը, այնպես էլ տարիքային կենսաթոշակների գրեթե համընդհանուր ծածկույթը, ինչպես նաև տարեցների շրջանում եկամուտների ընդհանուր ցածր մակարդակը։

Գծապատկեր 8.2.

Սոցիալական պաշտպանության փոխանցումներից ստացված միջին եկամտի մասնաբաժինը ֆիզիկական անձանց բոլոր եկամուտներում՝ ըստ տարիքի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Ընդհանուր առմամբ, սոցիալական պաշտպանության համակարգը կարևոր դեր ունի Հայաստանում աղքատության մակարդակի նվազեցման գործում: 8.3 գծապատկերում ներկայացված է տարիքային բոլոր խմբերում աղքատության մակարդակը (օգտագործելով աղքատության ազգային վերին գիծը)՝ առանց սոցիալական պաշտպանության սխեմաներից դրամական հատկացումների, և համեմատված է ներկայիս աղքատության մակարդակի հետ: Գնահատված է, որ 2019 թվականին սոցիալական փոխանցումները նվազեցրել են աղքատության մակարդակը գրեթե մեկ երրորդով՝ 60.5%-ից հասցնելով 43.8%-ի: Աղքատության ամենամեծ չափով նվազեցումը տարեցների խմբում է եղել: Առանց ծերության թոշակների և այլ դրամական հատկացումների կենսաթոշակառուների շուրջ 79.8 տոկոսը կապրեր աղքատության ազգային վերին գծից ցածր, մինչդեռ այդ հատկացումներից հետո գծից ցածր է հայտնվել միայն 39.5 տոկոսը: Սա հավասարազոր է ծերության աղքատության 50 տոկոսով նվազեցմանը: Մանկական աղքատության մակարդակը նույնպես նվազեցվել է մոտավորապես 12 տոկոսային կետով, իսկ աշխատունակ տարիքի անձանց շրջանում՝ 11 տոկոսային կետով: Ավելի մեծ տարիքային և ավելի երիտասարդ տարիքային խմբերի միջև ազդեցությունների մեծ անհամապատասխանությունը բացատրվում է ծերության կենսաթոշակների գրեթե համընդհանուր ծածկույթով՝ զուգորդված փոխանցման համեմատաբար ավելի բարձր արժեքներով՝ ընտանեկան նպաստների և աշխատունակ տարիքի անձանց նպաստների ցածր ծածկույթի (ներառյալ բացառման սխալանքի ծավալները) և փոխանցումների ավելի ցածր արժեքների համեմատ:

Գծապատկեր 8.3.

Աղքատության վերին գծից ցածր ապրող բնակչության մասնաբաժինը՝ սոցիալական պաշտպանության փոխանցումներից եկամուտ ստանալուց առաջ և հետո՝ ըստ տարիքի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

Նմանապես, նույն տարվա համար սոցիալական պաշտպանության փոխանցումները նվազեցրել են կանանց աղքատության մակարդակը մոտ 17,7 տոկոսային կետով, իսկ տղամարդկանցը՝ 15,5 տոկոսային կետով, ինչպես ցույց է տրված 8.4 գծապատկերում: Առհասարակ, սոցիալական պաշտպանության փոխանցումների ծածկույթը կանանց համար փոքր-ինչ ավելի ցածր է, քան տղամարդկանց համար, ինչը, հավանաբար, արտացոլում է աշխատանքի շուկայում անհավասարակշռությունը: Միջին հաշվով, կանանց եկամուտը կազմում է տղամարդկանց եկամտի մոտ 71,6 տոկոսը. հետևաբար սոցիալական պաշտպանության փոխանցումների միջին մասնաբաժինը կազմում է կանանց եկամտի ավելի մեծ մասը (տնային տնտեսության եկամուտների 17,3 տոկոսը՝ կանանց և 15,4 տոկոսը՝ տղամարդկանց մասով):

Գծապատկեր 8.4.

Աղքատության վերին գծից ցածր ապրող բնակչության մասնաբաժինը՝ սոցիալական պաշտպանության փոխանցումներից եկամուտ ստանալուց առաջ և հետո՝ ըստ սեռի. 2019 թ.



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019:

8.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԻՆ ՇԵՄԻ ԲԱՑԵՐԻ ՇՏԿՈՒՄԸ

Համեմատական առումով, Հայաստանում առկա է սոցիալական պաշտպանության համեմատաբար համապարփակ համակարգ՝ ապահովելով փաստացի եկամուտ և առողջապահական ապահովություն բնակչության հիմնական խմբերի, մասնավորապես տարեցների համար: Այնուամենայնիվ, այս վերլուծությամբ նախանշվել են որոշ բացեր, մասնավորապես գենդերային տեսանկյունից.

- **Երեխայի և բոլորի համար ընտանեկան նպաստի անհամապատասխան համակարգ,** որը ԸԿԲՆ-ի ԸՆ բաղադրիչի ներքո ապահովում է բոլոր երեխաների շատ ցածր ընդգրկվածություն (23.8 տոկոս) և սպառման ամենացածր դեցիլի երեխաների կեսից պակասի ընդգրկվածություն: Իսկ լրացուցիչ նպաստները խառնաշփոթ են առաջացնում սոցիալական պաշտպանության և ժողովրդագրական նպատակների միջև: Սա արտացոլվում է, օրինակ, ծննդաբերության միանվագ գումարի և կառուցվածքի, ինչպես նաև հետագայում երեխա մեծացնելու համար անհամարժեք եկամտային աջակցության մեջ:

- **Մայրության պաշտպանության բարդ և անհամարժեք համակարգ,** որը, չնայած իր լայն ծածկույթին, չի բավարարում կանանց՝ աշխատանքի և ընտանեկան կյանքի հավասարակշռման հիմնարար նպատակը և չի նպաստում երեխաների խնամքը հավասար բաժանելուն:
- **Գործազրկության ապահովագրության սխեմայի** և գործազրկության պաշտպանության հարակից քաղաքականության **բացակայություն՝** աշխատողներին գործազրկության ժամանակ եկամուտների աղետալի կորուստներից պաշտպանելու համար, որը հիմնականում ազդում է կանանց և երիտասարդների վրա:
- **Աշխատավայրում առաջացած փասվածքների պարտադիր ապահովագրության բացակայություն՝** աշխատողներին և նրանց ընտանիքներին աշխատավայրում դժբախտ պատահարների կամ աշխատանքին առնչվող հիվանդությունների կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքներից պաշտպանելու համար:
- **Անորոշություն** ապագայում պարտադիր կուտակային ծերության կենսաթոշակների համարժեքության վերաբերյալ, մասնավորապես կանանց համար:

Քովիդ-19-ի ճգնաժամը առաջին պլան մղեց այս բացերը, որից ամենաակնհայտը գործազրկության պաշտպանության լիակատար բացակայությունն է՝ որպես կարևոր բաղադրիչ: Հատկապես մտահոգիչ է կանանց և երիտասարդների վիճակը, որոնց տնտեսական ակտիվության մակարդակն արդեն իսկ համեմատաբար ցածր էր: Քովիդ-19-ը ազդել է աշխատաշուկայում կանանց մասնակցության առանց այն էլ ցածր ցուցանիշների վրա, ընդլայնել աշխատավարձերի միջև առկա ճեղքվածքը և մեծացրել խնամքի բեռը[150]:

Վերջին տարիներին սոցիալական պաշտպանության ոլորտում կատարվող կայուն ներդրումների շնորհիվ Կառավարությունը կարողացավ մի շարք արտակարգ միջոցառումներ ձեռնարկել՝ Հայաստանում Քովիդ-19-ի ճգնաժամի տնտեսական և սոցիալական բացասական հետևանքներին դիմակայելու համար: Այս միջոցառումները սկսվեցին 2020 թվականի մարտին գործողությունների համապարփակ ծրագրի ներդրմամբ, որը ներառել է ուղղակի ծախսերը, պետության կողմից տրամադրվող վարկերը և ավելացված ներդրումները, ինչպես նաև 145 միլիարդ դրամի (300 միլիոն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 2 տոկոսին համարժեք ծախսերի նոր փաթեթը[151]: Քաղաքականության հիմնական ուղղությունները բաշխվել են չորս լայն կատեգորիաների. (1) երկուսից երեք տարի ժամկետով վարկերի սուբսիդավորում՝ տուժած բիզնեսներին ու փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) կարճաժամկետ աջակցություն ցուցաբերելու նպատակով, (2) ուղղակի սուբսիդիաներ ՓՄՁ-ներին և ձեռնարկություններին՝ իրենց մարդկային ռեսուրսները պահպանելու համար, (3) դրամաշնորհներ ձեռնարկատերերին և ձեռնարկություններին և (4) միանվագ դրամական հատկացումներ խոցելի խմբերին՝ ներառյալ այն անձանց, որոնք գործազուրկ են դարձել Քովիդ-19-ի բռնկումից հետո, երեխաներ ունեցող կամ սպասող ընտանիքներին, միկրոձեռնարկություններին, կոմունալ ծառայությունների մասով օժանդակության կարիք ունեցողներին և ժամանակավորապես մասնակի դրույքով աշխատող անձանց:

Կառավարության՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման սոցիալական պաշտպանության միջոցառումների (մասնավորապես պայմանական և անվերապահ սոցիալական աջակցության կանխիկ փոխանցումների) պարամետրերը նկարագրված են 8.1 ներդիրում:

[150] ILO (2020a); Madureira Lima et al. (2020):
[151] IMF (n.d.-a):

Ներդիր 8.1.

Պետության՝ ՔՈՎԻԴ-19-ի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումները

2020 թվականի հոկտեմբերի վերջի դրությամբ Կառավարությունն ընդունել էր աջակցության 24 փաթեթ և ֆինանսական հաստատությունների աջակցությամբ ընդհանուր առմամբ հատկացրել էր մոտավորապես 192,3 մլրդ դրամ (367 մլն դոլար): Սոցիալական պաշտպանության հիմնական փաթեթները (այսինքն՝ սոցիալական աջակցության կանխիկ փոխանցումները) ներառում էին հետևյալը.

Աջակցության 4-րդ փաթեթ. աջակցություն (մինչև 14 տարեկան) երեխաներ ունեցող ընտանիքներին, որոնցում գրանցված աշխատող ծնողները գործազուրկ են դարձել Քովիդ-19-ից հետո: Միանվագ վճարը մեկ երեխայի համար կազմել է 100,000 դրամ (201 ԱՄՆ դոլար) և չի կիրառվել պետական ծառայողների կամ նրանց նկատմամբ, որոնք գործազուրկ դառնալուն նախորդող երկու ամիսների ընթացքում ստացել են ամսական 500,000 դրամից բարձր աշխատավարձ: Այս փաթեթը մեկնարկեց և ավարտվեց 2020 թվականի ապրիլին:

Աջակցության 6-րդ փաթեթ. աջակցություն գրանցված աշխատող անձանց, որոնք գործազուրկ են դարձել 2020 թվականի մարտի 13-30-ն ընկած ժամանակահատվածում, և որոնք գործազուրկ դառնալուն նախորդող երկու ամիսների ընթացքում ստացել են ամսական 500,000 դրամից պակաս աշխատավարձ: Այս նպաստը, որն առաջին անգամ վճարվել է 2020 թվականի ապրիլի 2-ին, հավասար էր ամսական նվազագույն աշխատավարձին: Աջակցության թիվ 6 փաթեթն այլևս ուժի մեջ չէ:

Աջակցության 7-րդ փաթեթ. աջակցություն հղի կանանց, որոնք մինչև 2020 թվականի մարտի 30-ը չեն աշխատել, և որոնց ամուսինը գործազուրկ է դարձել 2020 թվականի մարտի 13-30-ն ընկած ժամանակահատվածում: Միանվագ վճարը կազմել է 100,000 դրամ (201 ԱՄՆ դոլար): Վճարումները կատարվել են 2020 թվականի ապրիլի 2-ից: Այս փաթեթով աջակցությունն այժմ ավարտված է:

Աջակցության 8-րդ փաթեթ. աջակցություն կորոնավիրուսի տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին, մասնավորապես՝ հյուրանոցային և հյուրատնային ծառայությունների, հանրային սննդի ծառայությունների, զբոսաշրջային ծառայությունների, վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայությունների, մանրածախ առևտրի ծառայությունների, այդ թվում՝ առևտրի կենտրոնում կամ առևտրի իրականացման վայրում առք ու վաճառքի գործունեության: Շահառուների շրջանակը հաջորդիվ ընդլայնվեց՝ ընդգրկելով վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին հետևյալ ոլորտներից՝ նախադպրոցական հաստատություններ (մասնավոր մանկապարտեզներ), սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ), ժամանցի և հանգստի կազմակերպման այլ գործունեություն: Վճարումները տատանվել են 68,000-ից մինչև 136,000 դրամի (137 ԱՄՆ դոլար - 274 ԱՄՆ դոլար) միջակայքում:

Աջակցության 9-րդ փաթեթ. աջակցություն (մինչև 18 տարեկան) երեխաներ ունեցող ընտանիքներին, որտեղ ծնողներից ոչ մեկը գրանցված աշխատանք չի ունեցել (կես դրույքով կամ լրիվ դրույքով): Միջոցառումը այնուհետև ընդլայնվեց՝ ներառելով մինչև 3 տարեկան երեխաների խնամքի արձակուրդում գտնվող ծնողներին: Աջակցությունը տրամադրվել է միանվագ դրամական վճարի ձևով՝ յուրաքանչյուր երեխայի համար 26 500 դրամ (55 ԱՄՆ դոլար) գումարի չափով:

Աջակցության 13-րդ փաթեթ. աջակցություն 2020 թվականի ապրիլի դրությամբ սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես անապահով ընտանիքներին: Միանվագ վճարները կազմել են ԸՆ կամ ՄՆ գումարի 50 տոկոսը: Մասնավորապես, օժանդակության 70%-ը ընտանիքին տրամադրվել է կանխիկ վճարման ձևով՝ ապրիլի նպաստի վճարման հետ, իսկ 30%-ը փոխանցվել է որպես բաժանորդի կողմից սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճար:

Աջակցության 22-րդ փաթեթ. աջակցություն այն անձանց, որոնք աշխատանքի են ընդունվել 2020 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը և կորոնավիրուսի պատճառով դարձել են գործազուրկ: Միանվագ վճարները տրվել են նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ 68,000 ՀՀ դրամ (140 ԱՄՆ դոլար): Այս միջոցառումը չի ընդգրկել նրանց, որոնք աշխատում էին ֆինանսական ոլորտում (վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և այլն), և նրանց, որոնց միջին ամսական աշխատավարձը (հաշվարկված գործազուրկ դառնալուն նախորդող երկու ամիսների միջինով) եղել է ավելի քան 500,000 դրամ (մոտ 1030 ԱՄՆ դոլար): Հայտնի է, որ 2020 թվականի ապրիլին մոտ 71,000 քաղաքացի գործազուրկ է դարձել, իսկ 2020 թվականի մայիսին շուրջ 50,000-ը վերադարձել է աշխատաշուկա: Այս փաթեթը ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 25-ին:

Աղբյուրը. Gentillini et al. (2021):

Թեև այս կարճաժամկետ միջոցառումները դրականորեն խթանում են Հայաստանում աշխատունակ տարիքի մի խումբ անձանց (ժողովրդագրական տարիքային այն խմբի, որն ամենից շատ է տուժել կորոնավիրուսին առնչվող սահմանափակումներից) եկամուտների աճը, հազիվ թե դրանք բավարար լինեն թիրախային խմբերին Քովիդ-19-ի հետևանքով եկամուտների և աշխատանքի կորստի մասշտաբից պաշտպանելու համար: Բացի այդ՝ Կառավարության տրամադրած գործիքները չեն հասնի բոլոր տուժածներին: Օրինակ՝ նրանք, ովքեր մինչև ճգնաժամը չեն աշխատել և եկամտահարկ չեն վճարել (որոնցից շատերը գործազրկության հրատապ նպաստների իրավունք չունեն), ամենայն հավանականությամբ կորցրել են եկամուտը և աջակցության կարիք ունեն: Սա վերաբերում է նաև Հայաստանի «բացակայող միջինին»՝ նրանց, ովքեր խոցելի են աղքատության առումով և, ամենայն հավանականությամբ, կորցրել են եկամուտը, սակայն չեն համապատասխանում ԸԿԲՆ–ի պահանջներին:

Այս պատճառներով ռազմավարական մոտեցում կլինի սոցիալական պաշտպանության ստորին շեմի բացերը մշտապես ծածկելու գործում ներդրում կատարելը՝ ներկա և ապագա ճգնաժամերի հետևանքները չեզոքացնելու՝ Հայաստանի կարողությունը բարելավելու նպատակով: Մենք կարծում ենք, որ կյանքի հետևյալ երկու հիմնական փուլերի նպաստների վրա կենտրոնանալով՝ հնարավոր կլինի երկարաժամկետ կտրվածքով Հայաստանում ստեղծել ավելի ներառական սոցիալական պաշտպանության համակարգ.

- **Երեխայի համընդհանուր նպաստ,** որն անմիջապես կընդգրկի Հայաստանում մինչև 18 տարեկան բոլոր երեխաներին: Այն կարող է ռացիոնալացնել սոցիալական պաշտպանության և ժողովրդագրական քաղաքականության միջև առկա բացերն ու համընկնումները՝ ընտանիքներին առաջարկելով պարբերական, երկարաժամկետ եկամուտների ապահովություն, եթե նրանք ցանկանում են մեծացնել իրենց ընտանիքները:
- **Գործազրկության պաշտպանության մշտական սխեմա,** որը կծածկի գործազրկության նվազագույն համարժեք ժամանակահատվածը՝ ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայի նվազագույն ստանդարտների համաձայն: Գործազրկության նպաստներն աշխատողներին և նրանց ընտա-

նիքներին կտան ապահովություն այն ժամանակահատվածի համար, քանի դեռ նրանք աշխատանք են փնտրում: Այս օժանդակությունը կկանխի գործազրկության հետևանքով տնտեսական խնդիրների վատթարացումը, ինչպես նաև երիտասարդ աշխատողների արտագաղթի հավանականությունը:

Նպաստները կարող են ֆինանսավորվել պետական եկամուտների, սոցիալական ապահովագրության կամ երկուսի համադրման միջոցով, օրինակ՝ տարեցների, կերակրողին կորցրածների, հաշմանդամության և մայրության պաշտպանության համակարգերի նման բազմաստիճան փաթեթի տեսքով: Հարկերից ֆինանսավորվող «ստորին շեմը» սոցիալական ապահովագրությամբ լրացնելն ավելի մեծ հնարավորություններ կբացի սոցիալական պաշտպանության համար հատուկ միջոցներ հայթայթելու տեսանկյունից՝ միևնույն ժամանակ երաշխավորելով հիմնական պաշտպանությունը, ապահովելով համարժեքություն և, լավ մշակված լինելու դեպքում, պահպանելով գրանցված աշխատանքի գրավչությունը:

Երեխաների համընդհանուր նպաստները կլինեն պարզ, բայց հզոր միջոց՝ սոցիալական պաշտպանության ամուր շեմ կառուցելու համար, որը կպաշտպանի երեխաներին՝ ներառյալ և հատկապես ամենախոցելիներին, միևնույն ժամանակ կաջակցի Հայաստանի տնտեսական աճի և զարգացման երկարաժամկետ նպատակներին: Համաշխարհային տվյալները վկայում են, որ ընտանիքների և երեխաների սոցիալական պաշտպանվածությունը նվազեցնում է աղքատությունը, բարելավում է սնուցումը և առողջությունը, նպաստում է կրթական հաստատություն հաճախելուն և առաջադիմությանը, նվազեցնում է բռնության, վատ վերաբերմունքի և երեխաների աշխատանքի ռիսկերը, և, ընդհանուր առմամբ, նպաստում է երեխաների ընդհանուր բարեկեցությանը:

Երեխաների նպաստները համընդհանուր նորմ են ոչ միայն Եվրոպայում, այլև ավելի ու ավելի մեծ տարածում են ստանում ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում և զարգացման միջազգային գործընկերների շրջանում[152]: Սա արտացոլում է երեխաների սոցիալական ապահովության բնական իրավունքի աճող ճանաչման միտումը, սակայն կան նաև գործնական պատճառներ: Երեխաների համընդհանուր նպաստները հնարավորություն են տալիս օժանդակելու մեծ թվով տնային տնտեսությունների. որպես այդպիսին՝ դրանք հատկապես օգտակար են ճգնաժամերի ժամանակ՝ ապահովելով ցնցումներին արձագանքող քաղաքականության ենթակառուցվածք, որը կարող է մեծացվել՝ բարելավելով բնակչության մեծ հատվածների կյանքը, և միաժամանակ խթանել տնտեսությունը՝ ազդելով համախառն պահանջարկի վրա[153]: Այսպիսով, թեև երեխաների նպաստները նախատեսված են երեխաների համար, դրանք նաև անուղղակի եկամուտ են ապահովում աշխատունակ տարիքի անձանց (ծնողներին) համար (մի տարիքային խումբ, որը խորապես տուժել է Քովիդ-19-ի ճգնաժամից), ինչպես նաև տարեցների համար, որոնք ապրում են տարբեր տարիքի անձանցից բաղկացած և երեխաներ ունեցող տնային տնտեսություններում: Ավելին՝ մակրո մակարդակում ընտանեկան նպաստների լավ մշակված համակարգը կարող է օգնել Հայաստանի նման երկրներին դիմակայելու ծնելիության մակարդակի նվազմանը, ինչը վճռորոշ նշանակություն ունի ապագա աճի կայունության ապահովման համար:

Երեխայի նպաստները, ինչպես կյանքի տարբեր փուլերի այլ նպաստները, պարտադիր չէ, որ տեխնիկապես համընդհանուր լինեն՝

[152] ILO and UNICEF 2019:
[153] Kidd et al. (2021):

համընդհանուր ծածկույթի հասնելու համար: Օրինակ՝ Վիետնամում ԱՄԿ-ի համար կատարված թարմ հետազոտությունները ցույց են տվել երեխայի բազմաստիճան նպաստների ներուժը, որոնք ֆինանսավորումը բաշխում են հարկերով ֆինանսավորվող և հատկացումներով պայմանավորված աստիճանների միջև՝ մի շարք նպատակների հասնելու համար՝ ներառյալ առաջնահերթություն համարվող սոցիալական ապահովության (և, թափանիվի էֆեկտով, գրանցված զբաղվածության) բարձրացումը[154]: Հայաստանում գրանցված զբաղվածության խրախուսումը, հատկապես կանանց համար, նույնպես պետք է գերակա առաջնահերթություն լինի: Հայաստանում ծերության նպաստների կառուցվածքի նման, հարկային համակարգին հատկացումներ չկատարող ընտանիքների համար հիմնական, երեխայի համարժեք նպաստի ապահովումը (1-ին աստիճան) կերաշխավորի բոլոր երեխաների պաշտպանվածությունը, իսկ ավելի բարձր չափով՝ հատկացումների վրա հիմնված նպաստները նրանց համար, ովքեր աշխատանքային ստաժ են կուտակում աշխատանքի միջոցով (2-րդ աստիճան), կարող են շոշափելի և անմիջական օժանդակություն դառնալ երեխաներ ունեցող և աշխատող մեծ թվով ընտանիքների համար՝ պահպանելով հատկացումներ կատարելու գրավչությունը: Որպես այդպիսին՝ սոցիալական ապահովության մեխանիզմով ֆինանսավորվող՝ հատկացումներով պայմանավորված երեխայի նպաստը կարող է փոխհատուցման միջոցներ տրամադրել այն անձանց, որոնք այլ կերպ կարող էին դժվարանալ վճարումներ կատարել և դրանով իսկ ընդլայնել հարկային բազան:

Երեխայի համընդհանուր նպաստի ներդրմանը զուգահեռ Կառավարությունը կարող է դիտարկել առկա նպաստների վերանայման խնդիրը: Օրինակ՝ նպատակահարմար կլիներ խստորեն գնահատել, թե արդյոք ծննդաբերության միանվագ գումարը բավարարում է իր նպատակը, այն է՝ ծնողներին փոխհատուցել երեխա ունենալու ծախսերը: Կարելի է հասնել ծախսերի խնայողության՝ այս քաղաքականությունը վերածելով պարբերական նպաստի, որը գործում է որպես երեխայի նպաստ կենսափուլային մեթոդի շրջանակում և համապատասխանում է միջազգային ստանդարտներին:

Նմանապես, մշտական գործազրկության սխեման կարող է ընդլայնել, ամրապնդել և պահպանել այն ԱԱՔ-ները, որոնց վրա հենվում է Կառավարությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ԱԱՔ-ները լավագույնս են աշխատում, երբ կիրառվում են եկամուտների աջակցության քաղաքականություններին զուգահեռ[155], և դա հատկապես այդպես է շարունակական կառուցվածքային գործազրկության համատեքստում, ինչպես Հայաստանում է: Գործազրկությունը Հայաստանում երկարաժամկետ լինելու միտում ունի, ինչը նշանակում է, որ գործազուրկների մեծ մասը աշխատանք է փնտրում ավելի քան մեկ տարի: Քանի որ գործազրկությունը կառուցվածքային խնդիր է, որը ծագում է աշխատանքի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունից, գործազրկության նպաստները պետք է փոխկապված լինեն ոչ թե աշխատանքի ընդունման պայմանների, այլ հմտությունների ուսուցման վրա կենտրոնացող աշխատաշուկայի քաղաքականությունների հետ, ինչպես նաև այն քաղաքականությունների, որոնք դիմագրավում են կանանց՝ աշխատանքի ընդունվելուն խոչընդոտող սոցիալական նորմերին:

Հետևաբար, թերևս առավել, քան որևէ այլ նպաստ Հայաստանում, կարևոր է վերականգնել գործազրկության պաշտպանությունը՝ սոցիալական ապահովության սկզբունքների վրա հիմնված գործազրկության պաշտպանության սխեմա ներդնելով: Գործատուների և աշխատողների հատկացումներով հասարակությունը կարող է ավելի արդյունավետորեն վերաբաշխել

[154] McClanahan and Gelders (2019):
[155] Escudero and Liepmann (2020):

Հայաստանում գործազրկության ձգձգվող ճգնաժամի մեղմման ծախսերը: Գործատուները շահագրգռված են խուսափելու հմտությունների կորստի իրավիճակից, որը կարող է առաջանալ, երբ մարդիկ հեռանում են աշխատաշուկայից կամ, ինչն ավելի վատ է, արտագաղթում են՝ այլուր աշխատանք փնտրելու համար: Եվ, հակառակ ավանդական ընկալումների, սոցիալական հատկացումները պայմանավորված չեն գործազրկության համընդհանուր բարձր մակարդակով և կարող են իրականում բարձրացնել օրենքի կիրառմանը խստիվ հետևող ընկերությունների եկամուտներն ու եկամտաբերությունը[156]: Սակայն գործազրկության նպաստները կարող են նաև բազմաստիճան կառուցվածք ունենալ՝ երաշխավորելով, որ հատկացումներ կատարելու կարողություն չունեցողները գործազրկության ժամանակաշրջանում այնուամենայնիվ ապահոված լինեն բազային եկամտի պաշտպանության «ստորին շեմով»՝ նրանց աշխատանք փնտրելու կամ ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար անհրաժեշտ բազային պաշտպանություն ապահովելու միջոցով: Այնուամենայնիվ, ինչպես բոլոր բազմաստիճան նախագծերի դեպքում, այնպես էլ այստեղ անհրաժեշտ է հոգ տանել, որպեսզի հարկերից ֆինանսավորմամբ և հատկացումներով պայմանավորված աստիճաններում կիրառվող համապատասխան արտոնությունների մակարդակներն աշխատաշուկայում աղավաղումներ չառաջացնեն[157]:

Երեխայի և գործազրկության ընդլայնված նպաստները, անկախ այն բանից, թե ինչպես են դրանք կառուցված կամ ֆինանսավորվում, լավ ելակետ են ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիայով նախատեսված և սոցիալական պաշտպանության նվազագույն շեմերի վերաբերյալ թիվ 202 հանձնարարականով ընդգծված՝ բոլոր անձանց կյանքի հիմնական փուլերի հիմնական ռիսկերը ծածկելու համար: Սկզբնական ծախսերի հաշվարկը հուշում է, որ նպաստների այս փաթեթը չի կարող չափազանց թանկ արժենալ:

8.5 և 8.6 գծապատկերներն ամփոփում են, թե այդ ծախսերը ՀՆԱ-ի (մինչև 2035 թվականի գնաճով ճշգրտված) որ տոկոսը կկազմեն երեխայի համընդհանուր նպաստների և գործազրկության նպաստների ներդրման համար՝ հիմնվելով հետևյալ պարամետրերի վրա.

- Երեխայի նպաստ, որը հավասար է ամսական 8,676 դրամի (մոտավորապես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 5 տոկոս) մինչև 17 տարեկանների (տարբերակ 1) կամ մինչև 3 տարեկանների համար (տարբերակ 2):
- Գործազրկության պաշտպանության նվազագույն շեմ.
  - o 30,600 դրամ (2020 թվականի նվազագույն աշխատավարձի 45 տոկոսը՝ ԱՄԿ նվազագույն ստանդարտների համապատասխան)) 13 շաբաթվա համար (տարբերակ 1), կամ
  - o 26,500 դրամ (Հայաստանում եկամուտների փոխարինման այլ նպաստների հիմք) 13 շաբաթվա համար (տարբերակ 2), կամ
  - o 18,000 դրամ (ԸԿԲՆ բազային նպաստի արժեք) 13 շաբաթվա համար (տարբերակ 3)[158]:

---

[156] Lee and Torm (2017):

[157] McClanahan and Gelders (2019):

[158] ԱՄԿ-ի թիվ 102 կոնվենցիան կոչ է անում նպաստ վճարելու ապահովագրվածի նախկին աշխատավարձի 45 տոկոսի չափով գործազրկության ընթացքում մինչև առնվազն 13 շաբաթ՝ 12 ամսվա ընթացքում: Այստեղ առաջարկվող սցենարը պարզ համընդհանուր նվազագույն շեմի ներդրումն է այս մակարդակում, սակայն նաև ստանդարտ մակարդակում (26,500 դրամ), որը նախատեսված է եկամտի փոխարինման այլ նպաստների համար, ինչպիսիք են ծերությունը, հաշմանդամությունը և կերակրողին կորցրածի նպաստները՝ մակարդակ, որն ավելի ցածր է և համարժեք է 2020 թվականի նվազագույն աշխատավարձի (68,000 դրամ) մոտ 39 տոկոսին: Այնուամենայնիվ, ֆինանսավորման ավելի համապատասխան մոդելը հիմված կլինի բազմաստիճան համակարգի վրա, որը ներառում է համընդհանուր կամ կենսաթոշակի իրավունքի հիմքով նվազագույն շեմ (ինչպես վերը նշված նպաստների դեպքում), իսկ սոցիալական ապահովության երկրորդ աստիճանը հիմված կլինի հատկացումների և փաստացի վաստակի վրա: Ակտուարային մանրամասն մոդել կպահանջվի՝ գնահատելու համար հատկացումների հնարավոր դրույքաչափերը (ընդհանուր միջին հավելավճարի հիման վրա), որոնք անհրաժեշտ են նպաստները ներկայումս և ապագայում ֆինանսավորելու համար: Այս հարցը դուրս է զեկույցի շրջանակից:

Գծապատկեր 8.5.

Երեխաների համընդհանուր նպաստների կանխատեսվող արժեքը՝ ճշգրտված գնաճով (2021 թ. գներ)



Աղբյուրը. Բնակչության կանխատեսումները մինչև 2035 թ. (ըստ տարիքի) բխում են ՄԱԿ ՏՍՀԴ-ի՝ համաշխարհային բնակչությանը վերաբերող 2019 թ. կանխատեսումներից: Մինչև 2025 թ. տնտեսական ցուցանիշների կանխատեսումները վերցված են ԱՄՀ-ի Համաշխարհային տնտեսական կանխատեսման տվյալների շտեմարանից:
Նշում. ՀՆԱ-ի իրական աճի տեմպը կազմում է 3,5 տոկոս 2021 թվականին, 5 տոկոս՝ 2022 թվականին, 4,8 տոկոս՝ 2023 թվականին, 4,7 տոկոս՝ 2024 թվականին և 4,5 տոկոս՝ 2025 թվականին: 2025-2035 թվականների ժամանակահատվածի համար ենթադրվում է, որ գնաճի և ՀՆԱ-ի աճի տեմպերը կպահպանվեն 2025 թ. մակարդակի վրա:

Ինչպես ցույց է տրված 8.5 գծապատկերում, մինչև 17 տարեկան բոլոր երեխաների համար նախատեսված համընդհանուր երեխայի նպաստը կարժենա ՀՆԱ-ի 1.94 տոկոսը առաջին տարում, սակայն հաշվի առնելով տնտեսական և բնակչության կանխատեսումները, նույնիսկ եթե ճշգրտվի գնաճով, երեխայի համընդհանուր նպաստի արժեքը ժամանակի ընթացքում կնվազի՝ 2035 թվականին արժենալով ՀՆԱ-ի շուրջ 0.83 տոկոսը: Ի տարբերություն վերոնշյալի՝ միայն մինչև 3 տարեկան երեխաների ընդգրկվածությունը կարժենա զգալիորեն ավելի քիչ՝ ՀՆԱ-ի ընդամենը 0,41 տոկոսը առաջին տարում, իսկ 2035 թվականին կնվազի մինչև ՀՆԱ-ի 0,16 տոկոսը: Այս երկու տարբերակների շրջանակում Կառավարությունը կարող է դիտարկել կենսաթոշակի իրավունքի ձեռքբերման մի շարք հնարավոր սցենարներ: Օրինակ՝ Կառավարությունը կարող է 2021 թվականին մեկնարկել երեխաների համընդհանուր նպաստի ներդրումը 0–3 տարեկան երեխաների համար, այնուհետև ամեն տարի աստիճանաբար բարձրացնել համապատասխանության տարիքը մեկ տարով՝ ի վերջո ընդգրկելով մինչև 17 տարեկան բոլոր երեխաներին: Այս սցենարով բոլոր երեխաների ընդգրկվածության ընդհանուր արժեքը գագաթնակետին կհասնի 2035 թվականին՝ հասնելով ՀՆԱ-ի 0,83 տոկոսի, սակայն այնուհետև կսկսի նվազել ժողովրդագրական կանխատեսումներին համապատասխան:

Գծապատկեր 8.6.

Գործազրկության նպաստների կանխատեսվող արժեքը՝ ճշգրտված գնաճով (2021 թ. գներ)



Աղբյուրը. Բնակչության կանխատեսումները մինչև 2035 թ. (ըստ տարիքի) բխում են ՄԱԿ ՏՍՀԴ-ի՝ համաշխարհային բնակչությանը վերաբերող 2019 թ. կանխատեսումներից: Մինչև 2025 թ. տնտեսական ցուցանիշների կանխատեսումները վերցված են ԱՄՀ-ի Համաշխարհային տնտեսական կանխատեսման տվյալների շտեմարանից:
Նշում. ՀՆԱ-ի իրական աճի տեմպը կազմում է 3,5 տոկոս 2021 թվականին, 5 տոկոս՝ 2022 թվականին, 4,8 տոկոս՝ 2023 թվականին, 4,7 տոկոս՝ 2024 թվականին և 4,5 տոկոս՝ 2025 թվականին: 2025-2035 թվականների միջև ընկած ժամանակահատվածի համար ենթադրվում է, որ գնաճի և ՀՆԱ-ի աճի տեմպերը կպահպանվեն 2025 թվականի մակարդակի վրա: Գործազուրկների թվերը ներկայումս հաշվարկվել են հետևյալ կերպ. (1) աշխատունակ տարիքի մեծահասակների (15-64 տարեկան) ընդհանուր թիվը բազմապատկվել է աշխատուժի մասնակցության տոկոսով՝ ընդհանուր աշխատուժը հաշվարկելու համար (այսինքն՝ զբաղվածների և գործազուրկների ընդհանուր թիվը), և (2) ընդհանուր աշխատուժը բազմապատկվել է գործազրկության տոկոսով՝ գործազուրկների ընդհանուր թիվը հաշվարկելու համար: Կարևոր է նշել, որ այս թվերը դեռ հաշվի չեն առնում գլոբալ ՔՈՎԻԴ-19 համավարակի ազդեցությունը, ուստի գործազրկության ծախսերը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս, ամենայն հավանականությամբ, թերագնահատված կլինեն:

Գործազրկության նպաստի արժեքը նույնպես ժամանակի ընթացքում կնվազի՝ տնտեսական և ժողովրդագրական կանխատեսումներին համահունչ: Ինչպես ցույց է տրված 8.6 գծապատկերում, գործազրկության նվազագույն ամսական նպաստը, որը սահմանվում է նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով կամ 30,600 ՀՀ դրամ 2020 թվականին (տարբերակ 1), կհամապատասխանի ԱՄԿ-ի նվազագույն ստանդարտներին, ինչպես նշված է թիվ 102 կոնվենցիայում, և կարժենար ՀՆԱ-ի 2,52 տոկոսը 2021 թվականին՝ նվազելով մինչև ՀՆԱ-ի 1,28 տոկոսը 2035 թվականին: Ներկայացված այլ տարբերակները ավելի ցածր ծախսեր կպահանջեն, քանի որ դրանք արտացոլում են այլ ավելի ցածր ազգային շեմեր՝ ներառյալ արդեն իսկ տրամադրված նպաստների բազային արժեքները: Օրինակ՝ 2-րդ տարբերակը (ամսական 26,500 դրամ կամ Հայաստանում եկամտի փոխարինման այլ նպաստների բազային արժեքը) կարժենար համեմատաբար ավելի քիչ՝ ՀՆԱ-ի շուրջ 2,18 տոկոսը 2021 թվականին՝ նվազելով մինչև ՀՆԱ-ի 1,11 տոկոսը 2035 թվականին՝ միաժամանակ գործազրկության նվազագույն նպաստը համապատասխանեցնելով ԸԿԲՆ-ի բազային արժեքին (ամսական 18,000 դրամ): Ենթադրվում է, որ բոլոր արժեքները ճշգրտված են գնաճով, սակայն հարկ է նշել, որ Հայաստանում ներկայումս բացակայում է ինդեքսավորման մեխանիզմը, որը լրացման ենթակա հիմնական բաց է:

Հարկ է նշել, որ ծախսերի հաշվարկումը ներկայացնում է նման սխեմաների հնարավոր ծախսերի սոսկ համախառն գնահատականներ (տվյալների սահմանափակ առկայության պայմաններում պարզեցված ենթադրությունների կիրառմամբ)՝ այս զեկույցում ներկայացված սոցիալական պաշտպանության համակարգի գնահատման շրջանակում Կառավարության հետագա քննարկումներն ու առաջնահեր- թությունները դյուրացնելու նպատակով: Ան- հրաժեշտ կլինի իրականացնել ծախսերի մանրամասն ուսումնասիրություն, որը հաշվի կառնի նրբերանգային պարամետրերը, նախա- պատվությունները և առաջ շարժվելուն ուղղված ակտուարային ենթադրությունները:

Մասնավորապես, եթե գործազրկության նպաստները պետք է ներառեն հատկացումներով պայմանավորված շերտ, այն պետք է փոխկապված լինի աշխատողի նախկին աշխատավարձերի հետ, եթե նպատակն այն է, որ նպաստները համապատասխանեն ԱՄԿ-ի կոնվենցիաներով սահմանված նվազագույն ստանդարտներին: Առկա նպաստների համարժեքության, ինչպես նաև առաջարկվող նոր քաղաքականությունների ընկալումը պահանջում է գնահատում՝ հիմնված այս էական սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնութագրերի վրա ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց առումով: Ավելին, եթե Կառավարությունը լրջորեն ուսումնասիրի այս ռիսկը (և հավանական մյուսները) հարթելուն ուղղված սոցիալական ապահովագրության սխեմայի ներդրումը, անհրաժեշտ կլինի մշակել մանրամասն ակտուարային մոդել՝ գնահատելու համար նպաստները ֆինանսավորելու նպատակով կատարվող հատկացումների տոկոսադրույքները, որոնք անհրաժեշտ են ներկայում և ապագայում: Այս խնդիրը դուրս է զեկույցի շրջանակից:

Աղյուսակ 8.1.

Հայաստանում երեխաների և գործազրկության նպաստներով սոցիալական պաշտպանության ստորին շեմի ծախսերի ամփոփում. 2021 և 2035 թթ.

Տարի	Ստորին գծի գնահատականներ			Վերին գծի գնահատականներ		
	Երեխայի նպաստներ	Գործազրկության նպաստներ	Ընդամենը	Երեխայի նպաստներ	Գործազրկության նպաստներ	Ընդամենը
2021	0.41%	1.48%	1.89%	1.94%	2.52%	4.46%
2035	0.16%	0.75%	0.91%	0.88%	1.28%	2.16%

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց է տրված 8.1 աղյուսակում, Հայաստանի սոցիալական պաշտպանության ստորին շեմի այս երկու բացերը լրացնելը կարժենար ՀՆԱ-ի 1,89-ից 4,46 տոկոսը՝ 2021 թվականին և ՀՆԱ-ի 0,91-ից 2,16 տոկոսը՝ 2035 թվականին: Կախված սխեմաների կառուցվածքից՝ ծախսերը կարող են բաշխվել սոցիալական գործընկերների միջև, եթե անհատների, հասարակության, ձեռնարկությունների և ընդհանրապես տնտեսության կողմից կյանքի տարբեր փուլերի ներառական սոցիալական ապահովության մեջ ներդրումներ կատարելու առավելությունների մասին իրազեկությունը բարձրացվի:

Ի հավելումն այս երկու նպաստների՝ Կառավարությանն արվող մեկ այլ գերակա առաջարկություն է՝ դիտարկել **առողջապահական ՀԾՓ-ի հորիզոնական և ուղղահայաց ծածկույթի ընդլայնումը:** Այս ուսումնասիրությունն ընդ- գծեց ՀԾՓ-ի շրջանակում որոշ առանցքային ծառայությունների, այդ թվում՝ կանանց առողջության պահպանման համար ծածկույթի բացակայությունը որպես համակարգի հիմ- նական թերություն, որը անհատների և նրանց ընտանիքների համար զգալի ֆինանսական բեռ է առողջապահության բարձր ծախսերի առումով: Օրինակ՝ «բարձր տեխնոլոգիական և թանկարժեք ծառայությունների» բացառումը նշանակալի

բաց է ընդհանուր բնակչության համար, և զգալիորեն անապահով է դարձնում խոցելի և ցածր եկամուտ ունեցող անձանց հասանելի ծառայությունների որակը և մակարդակը: Ավելին՝ հակաբեղմնավորիչների, արգանդի վզիկի և կրծքագեղձի քաղցկեղի լիարժեք բուժման և պտղաբերության ծառայությունների բացակայության պայմաններում կանայք զգալի ռիսկի են ենթարկվում:

Հայաստանի բոլոր բնակիչներին ՀԾՓ-ով ընդգրկելը նվազագույնը կապահովի, որ կյանքի տարբեր փուլերում բոլոր կարիքավորները կկարողանան օգտվել հիմնական առողջապահական ծառայություններից: ՀԾՓ-ի ընդլայնումը կարևոր քայլ կլինի սոցիալական առողջության պաշտպանության բացերը լրացնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, երկարաժամկետ հեռանկարում ավելի շատ ներդրումներ են անհրաժեշտ բոլորի համար առողջապահական ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը, ընդունելիությունն ու որակը բարձրացնելու համար: Առկախված խնդիրը մնում է այն, որ ՀԾՓ-ով պետք է առաջնահերթ ապահովվեն հակաբեղմնավորիչների տրամադրումը, արգանդի վզիկի և կրծքի քաղցկեղի ամբողջական բուժումը և բոլորի համար պտղաբերությանն առնչվող ծառայությունները: Այս առումով կարելի է դիտարկել բազմաստիճան համակարգի ներդրում: Այս ուսումնասիրության շրջանակում ընդլայնված ՀԾՓ-ի ծախսերի հաշվարկման սցենարներ ընդգրկված չեն, սակայն խորհուրդ է տրվում առկա տարբերակների իրատեսականության վերաբերյալ մանրազնին տեղեկություններ տրամադրել քաղաքականություն մշակողներին:

8.3

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ԱՎԵԼԻ ԱՐԴԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ

Մինչ վերը նշված հիմնական նպաստների վրա կենտրոնանալը կօգնի լրացնելու Հայաստանի սոցիալական պաշտպանության հիմնական ստորին շեմի անհետաձգելի բացերը, այս զեկույցում նաև ընդգծվում են մի շարք բացեր և կատարելագործման ենթակա ոլորտներ, մասնավորապես գենդերային հավասարության վրա բացասական ազդեցություն ունեցող դրույթների վերաբերյալ: Այս բացթողումների լուծումը Կառավարությունում սոցիալական պաշտպանության ընդհանուր համակարգի՝ գենդերային արձագանքման առումով ավելի լայնածավալ քննարկման մաս պետք է կազմի: Մասնավորապես վերլուծության ընթացքում բացահայտվել են հետևյալ բացերը.

- **Մայրության պաշտպանության բարդ և անհետևողական համակարգ,** որը, եկամուտների պաշտպանության և ծնողական արձակուրդի ժամանակահատվածների միջև էական բացից սկսած, չի ապահովում այն գործառույթը, որ կանանց վերարտադրողական

դերը բացասաբար չազդի աշխատանքի շուկայում նրանց մասնակցության վրա: Այնպիսի փոքր ծրագրերի չպլանավորված ներմուծումը, ինչպիսիք են երեխայի խնամքի և դայակի նպաստները, քիչ բան են անում այս բացը վերացնելու համար և անգամ կարող են գործել մայրության արձակուրդի սկզբնական նպատակի դեմ, այն է՝ աշխատանքը որոշ ժամանակով լքելը՝ երեխայի կյանքի վաղ շրջանում նրա խնամքով զբաղվելու համար: Ավելին՝ ծնողական համատեղ նպաստների բացակայությունը ուղերձ է, որ կանայք միանձնյա են պատասխանատու երեխաների խնամքի և բարեկեցության համար՝ այդպիսով խորացնելով գենդերային վնասակար նորմերը:

- **Աշխատավայրում ստացված վնասվածքի դեպքում համարժեք սխեմայի բացակայություն.** գործատուները պատասխանատու են աշխատավայրում աշխատանքային անվտանգության ու առողջության ապահովման, ինչպես նաև տուժած աշխատողներին ու վնասվածքի հետևանքով մահացած աշխատողների ընտանիքներին արդար, հավասար և փաստացի փոխհատուցում տրամադրելու համար: Հայաստանում այս բացը պայմանավորված է աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության իրավական դաշտի ավելի լայն խնդիրներով և պետք է լրացուցիչ վերլուծվի այդ համատեքստում:
- **Ծերության պաշտպանության համակարգի ընդհանուր համարժեքության մոտալուտ անկում,** որը մասնավորապես կխորացնի գենդերային անհավասարությունը. ընթացող կառուցվածքային բարեփոխումները կսահմանափակեն ներկայումս 1-ին աստիճանում առկա վերաբաշխման մեխանիզմները, ինչպես, օրինակ՝ կենսաթոշակի իրավունքի հաշվարկում երեխաների խնամքին հատկացված ժամանակաշրջանների ճանաչումը: Ամբողջությամբ կուտակային ֆինանսավորման մոդելը նաև վերականգնում է նախկին եկամուտների և նպաստների միջև կապը, մի քայլ, որը հատկապես կանդրադառնա կանանց վրա նրանց աշխատանքային ստաժում բացերի պատճառով, ինչպես նաև ցանկացած այլ ցածր եկամուտ ունեցող աշխատողի վրա:
- **Ապացույցների վրա հիմնված, գենդերային առումով զգայուն քաղաքականության մշակման և կառուցվածքի բացակայություն.** չնայած վերջին տասնամյակների բազմաթիվ մանր և խոշոր բարեփոխումներին, ինչպես նաև Հայաստանի աշխատաշուկայում գենդերային անհավասարակշռությանը՝ որոշումները կայացվել են առանց ստատուս քվոյի (հանրությանն ուղղված) պատշաճ հիմնավորման կամ բարեփոխումների ազդեցությունների հստակ կանխատեսման: Այս գործընթացներից ոչ մեկում գենդերային հավասարությունը որպես սկզբունք ներառված չէ. հետևաբար հատուկ դրույթներ չեն ընդունվել անհավասարության բացերը վերացնելու համար, օրինակ՝ ծերության կենսաթոշակի մասով:
- **Ժամանակի ընթացքում սոցիալական պաշտպանության նպաստների իրական արժեքը պահպանելուն ուղղված ինդեքսավորման մեխանիզմի բացակայություն.** ներկայիս սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական բացը բոլոր նպաստների ճշգրտման մեխանիզմի բացակայությունն է, որը նվազեցնում է դրանց արժեքը և դրանք դարձնում խոցելի քաղաքական և հարկաբյուջետային անկումների և բացթողումների առումով: Թեև սոցիալական պաշտպանության նպաստների և համակարգերի համարժեքությունը գնահատելը բարդ և որոշակի չափով սուբյեկտիվ է, արդարացի կլինի ասել, որ նպաստների հարաբերական մակարդակի պահպանումը էական նշանակություն ունի՝ ապահովելու համար նպաստների քաղաքականության գերակա նպատակի պահպանումը: Հայաստանում հրնթացս ճշգրտումներից կախվածությունը, ի տարբերություն հաստատված ճշգրտման մեխանիզմի, ունի մի քանի բացասական կողմեր: Նպաստների արժեքը պաշտ-

պանող ինդեքսավորման մեխանիզմի բացակայությունը երկարաժամկետ հեռանկարում նպաստառուների մասով խաթարում է համարժեքության երաշխիքը: Իր հերթին դա կարող է սահմանափակել նպաստառուների՝ ապագան պլանավորելու և այնպիսի ռիսկերի դիմելու կարողությունները, որոնք կարող են բարձրացնել նրանց արտադրողականությունն ու եկամուտը:

Ներդիր 8.2.

Քաղաքականության մշակման գործընթացում համաձայնեցվածության բարձրացումը

Չնայած Հայաստանին ներհատուկ վարչական և քաղաքական ավանդույթներին՝ առկա են որոշակի կառույցներ, գործընթացներ և աշխատանքային մեթոդներ, որոնք կարող են նպաստել քաղաքականության համաձայնեցվածության բարելավմանը: Որպես առաջին քայլ՝ Հայաստանն ունի սոցիալական ծառայությունների ինտեգրման քաղաքական հանձնառություն ստանձնելու մեծ առավելություն: Այնուամենայնիվ, ավելի մեծ ուշադրություն է պահանջվում՝ ապահովելու համար, որ քաղաքականության յուրաքանչյուր ոլորտ պահպանի իր հատուկ նպատակներին հասնելու կարողությունը: Այս դեպքում հնարավոր կլինի խուսափել այնպիսի իրավիճակից, երբ ամբողջ սոցիալական համակարգը կենտրոնացած է կարիքների նեղ տեսլականի վրա: Մասնավորապես, Հայաստանում սոցիալական պաշտպանության քաղաքականությունները, ըստ երևույթին, կենտրոնացել են ժողովրդագրական նպատակների վրա, ինչը երբեմն վեր է եկամուտների անվտանգության երկարաժամկետ ապահովման հիմնական նպատակներից:

Սույն զեկույցի շրջանակից դուրս է պարզել, թե ինչպես են ժողովրդագրական նման քաղաքականությունները նպաստում ավելի մեծ սոցիալական նպատակներին, ինչպիսիք են կանանց աշխատուժի մասնակցությունը և երեխաների համար խնամքի ծառայությունների հասանելիությունը: Այնուամենայնիվ, սոցիալական պաշտպանության համակարգի տեսանկյունից տեսանելի է, որ սոցիալական պաշտպանության քաղաքականությունների նկատմամբ այդ ուղղությամբ ռազմավարական լծակներ չեն կիրառվում: Իր ներկայիս կառուցվածքով այդ քաղաքականությունների մի մասը կարող է իրականում ոչ արդյունավետ լինել այդ նպատակներին հասնելու համար: Օրինակ՝ մայրության եկամուտների աջակցության կարճ տևողությունը, համեմատած երեխաների խնամքի համար անհրաժեշտ ժամանակահատվածի հետ, կարող է իրականում բացասաբար ազդել ծնողների՝ իրենց ընտանիքները մեծացնելու որոշումների կայացման վրա: Ծննդաբերության ժամանակ միանվագ վճարումը չի կարող փոխհատուցել այն շարունակական ծախսերը, որոնք երեխա ունենալու դեպքում կրելու են ծնողները միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, հատկապես, երբ այդ միանվագ գումարի հասանելիությունը հետագայում սահմանափակվում է: Այս առումով կանխատեսելի, կանոնավոր նպաստի երաշխիքը շատ ավելի արդյունավետ կլիներ՝ լուծելու փաստացի կարիքներն ու հաղթահարելու այն գործոնները, որոնք խանգարում են ընտանիքներին ավելի շատ երեխաներ ունենալու: Նույնիսկ գործազրկության նպաստների բացակայությունը մեծացնում է եկամուտների վերաբերյալ անորոշությունը և կարող է խոչընդոտ լինել ընտանիք կազմելու համար:

Կառավարության հանձնառությունը քաղաքականության ինտեգրմանը կարող է ավելի լավ արդյունքներ տալ քաղաքականության մշակման այնպիսի գործընթացի դեպքում, որն առավելապես հիմնված է ապացույցների վրա: Այս զեկույցի առանցքային դիտարկումներից է եղել վերջին մի քանի տասնամյակների ընթացքում սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական կառուցվածքային բարեփոխումներին նախորդող ակտուարային գնահատումների բացակայությունը:

Խորհուրդ է տրվում կատարել սոցիալական պաշտպանության ֆինանսական համակարգի համապարփակ ակտուարային «ախտորոշում»՝ երկարաժամկետ կտրվածքով ազգային ֆինանսների և բնակչության բարեկեցության վրա այդ բարեփոխումների ազդեցություններն ավելի լավ հասկանալու և կանխատեսելու նպատակով:

Լավագույն տարբերակում հատկացումներով պայմանավորված սխեմաները կարգավորող օրենսդրությունը պետք է պարունակի պարբերական ակտուարային ուսումնասիրության պահանջ, և ցանկացած օրենսդրական փոփոխություն պետք է ուղեկցվի հատուկ ակտուարային զեկույցով: Սա անհրաժեշտ է որոշում կայացնողներին համակարգի կատարողականը, քաղաքականության թույլ կողմերը և առաջարկվող օրենսդրական փոփոխության ֆինանսական ազդեցությունը ցույց տալու համար: Ակտուարային զեկույցում պետք է ներկայացվեն ժողովրդագրական և ֆինանսական զարգացման երկարաժամկետ հեռանկարները՝ հավաստիանալու, որ համակարգը պատրաստ է դիմակայելու առաջիկա ռիսկերին, օրինակ՝ Հայաստանում բնակչության կրճատման դեպքում: Պարբերաբար ակտուարային գնահատումներ անցկացնելը և արդյունքները հանրությանը փոխանցելն էական նշանակություն ունեն նաև միջսերնդային արդարության առումով հաշվետվողականության ապահովման տեսանկյունից: Սա կնշանակի նպաստների քաղաքականությանն առնչվող որոշումների երկարաժամկետ ազդեցության վերաբերյալ իրազեկ ընտրության համաժողովրդական բանավեճի խթանում՝ գալիք սերունդների բարեկեցության ապահովման նպատակով: Հատկապես արդիական է այնպիսի նշանակալի կառուցվածքային բարեփոխումից հետո, ինչպիսին է ՍՎ-ի կենսաթոշակային համակարգին անցումը:

Կարճաժամկետ հեռանկարում պետք է ամրապնդվի քաղաքականության հնարավոր հետևանքները վերլուծելու և գնահատելու գործելակերպը: Իդեալական կլինի, որ քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացների մշտադիտարկմանը և հաշվետվողականությանը տրվի պաշտոնական կարգավիճակ: Սա էական է՝ ավելի լավ հասկանալու համար, թե որտեղ է առաջընթաց եղել, կամ որտեղ է այն բացակայել և ինչու, և թե որտեղ են անհրաժեշտ հետագա գործողություններ:

Այս թերությունները լրացնելու հնարավոր միջոցառումները ներառում են հետևյալը.

- **Մայրության և ընտանիքի եկամուտների աջակցության ամբողջ համակարգի կոնֆիգուրացիայի վերանայում՝** նպատակ ունենալով երաշխավորելու, որ առաջին հերթին, համակարգը կատարում է եկամուտների պաշտպանություն ապահովելու իր հիմնական գործառույթները, և երկրորդ, որ դրա կառուցվածքը նպաստում է քաղաքականությանն առնչվող նպատակների մասով դրական արդյունքներ ստանալուն, ինչպիսիք են՝ աշխատաշուկայում կանանց մասնակցությունը և պտղաբերության ցուցանիշների բարձրացումը: Այս աշխատանքը կարող է իրականացվել որպես Կառավարության՝ ընտանիքին առնչվող քաղաքականությունների և դրանց կատարման ընթացքում սոցիալական պաշտպանության ծրագրերի դերի ավելի ընդգրկուն ուսումնասիրության բաղադրիչ: Դրական կգնահատվի քաղաքական այն հանձնառությունը, որը թույլ կտա նման ուսումնասիրության արդյունքները օգտագործել այս քաղաքականությունների կառուցվածքը վերանայելու նպատակով:
- **Համակարգի, մասնավորապես ծերության կենսաթոշակային սխեմայի ամբողջական ակտուարային վերանայում՝** բարեփոխումների ներկա և ապագա կայունությունը հաստատելու, ինչպես նաև դրանց ակնկալվող ազդեցությունները

տարբեր խոցելի խմբերի բարեկեցության վրա գնահատելու համար:

- **ՄԳ գործընթացների ամրապնդում և պաշտոնականացում**՝ ապահովելու համար ապացույցների վրա հիմնված և համահունչ քաղաքականության մշակման գործընթացը (տե՛ս Ներդիր 8.2):
- **Ներդնել ինդեքսավորման մեխանիզմ, որն առնվազն հաշվի է առնում գների և, լավագույն դեպքում, աշխատավարձերի փոփոխությունները:** Ավելին՝ համակարգի մակարդակում կարևոր է, որ ինդեքսավորման մեխանիզմը համաձայնեցված լինի աստիճանների միջև՝ կանխելու հետագա նպաստների իրական արժեքի հարաբերական շեղումը: Հայաստանում նպաստների համարժեքության պարզ գնահատականը ներառված է նախորդ գլուխներում, սակայն նպատակահարմար կլինի իրականացնել ավելի խոր գնահատում, որը կներառի նաև ինդեքսավորման կոնկրետ տարբերակներ:

8.4

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը կարևոր դեր է կատարում աղքատության մակարդակը նվազեցնելու համար (տե՛ս Գծապատկեր 8.3): Հաշվարկված է, որ 2019 թվականին սոցիալական պաշտպանության փոխանցումները նվազեցրել են մանկական աղքատության մակարդակը 12 տոկոսային կետով, աշխատունակ տարիքի անձանց աղքատության մակարդակը՝ 11,3 կետով, իսկ տարեցներինը՝ 17 տոկոսային կետով: Նմանապես, սոցիալական պաշտպանության փոխանցումները նվազեցրել են կանանց աղքատության մակարդակը մոտավորապես 18 տոկոսային կետով, իսկ տղամարդկանցը՝ շուրջ 16 տոկոսային կետով:

Համակարգն ունի բազմաթիվ ուժեղ կողմեր: Հատկապես ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցրածների և այժմ մայրության նպաստների համար բազմաստիճան մոդելի օգտագործումը կարող է օրինակ դառնալ նման տնտեսություններ ունեցող այլ երկրների համար: Այնուամենայնիվ, այս մոդելը դեռևս չի կիրառվել համակարգի բոլոր ճյուղերի համար, և, անկասկած, Հայաստանի սոցիալական պաշտպանության ստորին շեմն ունի որոշակի բացեր.

- երեխայի և ընտանեկան նպաստի ոչ բավարար համակարգ բոլորի համար,
- մայրության պաշտպանության բարդ և ոչ համարժեք համակարգ,
- գործազրկության ապահովագրության սխեմայի բացակայություն,
- աշխատավայրում ստացված վնասվածքների պարտադիր ապահովագրության բացակայություն,
- ծերության պարտադիր կուտակային կենսաթոշակների ապագա համարժեքության վերաբերյալ հստակության պակաս, հատկապես կանանց համար:

Այս թերությունները վերացնելու ամենապարզ միջոցը կլինի կենտրոնանալ կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված երեք նպաստների վրա, որոնք կա՛մ բացակայում են, կա՛մ մեծապես անբավարար են. (1) ՀԾՓ ամբողջական ծածկույթ Հայաստանի բոլոր բնակիչների համար՝ ապահովելու առողջապահական ծառայությունների համընդհանուր հասանելիություն ամբողջ կյանքի ընթացքում, (2) երեխայի համընդհանուր նպաստ՝ մինչև 18 տարեկան բոլոր երեխաներին անմիջապես ընդգրկելու համար, և

(3) գործազրկության պաշտպանության մշտական սխեմա, որն ընդգրկում է գործազրկության նվազագույն համարժեք ժամանակահատվածը՝ համաձայն 102-րդ կոնվենցիայի նվազագույն ստանդարտների։

Ավելի արդար համակարգի համար իրականացվելիք լրացուցիչ միջոցառումները կարող են ներառել. (1) մայրության և ընտանիքի եկամուտների աջակցության ամբողջ համակարգի կոնֆիգուրացիայի վերանայումը, (2) սոցիալական պաշտպանության համակարգի, մասնավորապես ծերության կենսաթոշակային համակարգի ամբողջական ակտուարային վերանայումը և (3) ՄԳ գործընթացների հզորացումը և պաշտոնականացումը։

9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի սոցիալական ապահովության համակարգն արդեն իսկ բավականին լավ զարգացած է՝ համեմատած աշխարհի նման եկամուտներով երկրների հետ: Համակարգի շատ տարրեր ներառական են և կազմակերպված կյանքի տարբեր փուլերին առնչվող չնախատեսված իրադարձությունների շուրջ: Այս առումով համակարգն առանձնանում է տարեցների գրեթե համընդհանուր ծածկույթով՝ ծերության, կերակրողին կորցրածների և հաշմանդամության բազմաստիճան նպաստների միջոցով: Պետական կենսաթոշակների հետ մեկտեղ կյանքի տարբեր փուլերի համար նախատեսված նպաստների կիրառումն ապահովում է սոցիալական պաշտպանության փաստացի ստորին շեմեր: Դրանք հատկապես կարևոր են բնակչության այնպիսի խմբերի համար, ինչպիսիք են կանայք, որոնց համար բավականաչափ աշխատանքային ստաժ կուտակելն ավելի դժվար է: Հայաստանում սեռերի միջև աշխատավարձերի մեծ ճեղքվածքի պատճառով միանվագ նպաստները կանանց, նրանց եկամուտների համեմատ, ավելի մեծ աջակցություն են ցուցաբերում:

Մայրության համընդհանուր նպաստների առումով վերջին առաջընթացը ևս մեկ ձեռքբերում է: Այնուամենայնիվ, մայրության քաղաքականության չհամաձայնեցված զարգացումը ստեղծել է բարդ և ոչ հետևողական համակարգ: Տեսականորեն, Հայաստանը դրամական աջակցություն է տրամադրում երեխայի խնամքի արձակուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Սակայն մայրության և երեխայի հետագա խնամքի արձակուրդի միջև իրավական բաժանումը քողարկում է այն փաստը, որ մայրության եկամտի աջակցությունը ներառում է երեխայի խնամքի ժամանակահատվածի միայն մի մասը, երբ երեխայի խնամքի պարտականություններն անհամատեղելի են աշխատաշուկայում լրիվ դրույքով մասնակցության հետ: Երեխայի խնամքի հասանելի և ֆինանսապես մատչելի հաստատությունների բացակայությունը այս բացի բանալին է: Մեծ հաշվով, մայրության պաշտպանության ներկայիս համակարգը կանանց հնարավորություն չի տալիս հաջողությամբ համատեղելու իրենց արտադրական և վերարտադրողական դերերը:

Նոր նախաձեռնությունները, ինչպիսին է դայակի ծրագիրը, օրինակ են, թե ինչպես կարող են սոցիալական պաշտպանության համակարգի նախագծման թույլ կողմերը զբաղվածության խթանման ծրագրերի ներդրման անհրաժեշտություն առաջացնել: Այս ծրագիրը նաև մատնանշում է սոցիալական պաշտպանության քաղաքականության և Հայաստանում այլ ոլորտների, մասնավորապես ժողովրդագրական և զբաղվածության քաղաքականությունների միջև պարբերաբար անորոշ դարձող սահմանները: Հստակորեն նախապատվության նժարը թեքվում է դեպի վերջինիս խթանման կողմը, ինչը ո՛չ նպատակահարմար է, ո՛չ էլ արդյունավետ: Օրինակ՝ մասնավոր դայակներ վարձելու համար սուբսիդիա մտցնելու փոխարեն մայրության համակարգում առկա բացերին առավել համահունչ և անմիջական արձագանքը կլինի երեխայի խնամքի ավելի լայն երաշխիքների ապահովումը երեխայի խնամքի վճարովի արձակուրդի կամ հանրային ծառայությունների միջոցով: Ծննդաբերության միանվագ գումարը ծրագրի մեկ այլ օրինակ է, որը կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ ավելի համաձայնեցված նախագծման դեպքում:

Անհրաժեշտ է տարբերակել քաղաքականությունների առաջնային և երկրորդային նպատակները և ամրապնդել ապացույցների և գնահատումների դերը քաղաքականության մշակման գործում: Սոցիալական պաշտպանության ռազմավարության մշակումը կարող է օգնել հստակեցնելու համակարգի հիմնական նպատակներն ու բաղադրիչները, և եթե մշակվի սոցիալական գործընկերների մասնակցությամբ, կարող է ներառական բարեփոխումների ընդհանուր հարթակ դառնալ: Այս ռազմավարական մակարդակում անհետաձգելի անհրաժեշտություն կա նաև դիտարկելու, թե ինչպես սոցիալական պաշտպանության համակարգի բացերը կարող են մշտական դարձնել աշխատանքի շուկայում շարունակվող անհավասարակշռությունները: Անհավասարության բարձր մակարդակի համա-

տեքստում գենդերային չեզոք քաղաքականությունը բավարար չի լինի նպաստների հավասար հասանելիությունն ու մակարդակներն ապահովելու համար:

Սոցիալական պաշտպանության քաղաքականությունները պետք է հաշվի առնեն և հասցեագրեն այն խնդիրը, թե ինչպես են տղամարդիկ և կանայք փոխազդում համակարգի հետ, և համապատասխանաբար փոխհատուցեն թերությունները առավել ակտիվ և բացահայտ: Սակայն հարկ է նշել, որ սոցիալական պաշտպանության ավելի ընդգրկուն համակարգի ուղղությամբ առաջընթացն արագացնելը կարող է բավարար չլինել կանանց աշխատուժի մասնակցությունը բարելավելու համար: Խտրական սոցիալական արժեքներն ու գենդերային կարծրատիպերը կարող են շարունակել խորացնել կանանց տնտեսական խոցելիությունը: Սոցիալական պաշտպանությունը պետք է լինի այն ավելի լայն քաղաքականության մի մասը, որն անդրադառնում է այդ խոցելիության սկզբնաղբյուրներին՝ խելամտորեն բարելավելու աշխատաշուկայում կանանց մասնակցության չափն ու որակը:

Այս ջանքերը գործադրելիս Հայաստանը կարող է ապավինել կառավարման բարենպաստ շրջանակի գոյությանը՝ ունենալով քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու մեկ նախարարություն: Սա լուրջ առավելություն կլինի առավել համահունչ և համապարփակ համակարգի կառուցման համար: Մինչդեռ վերը նկարագրված քաղաքականության ձևավորման և բարեփոխումների հընթացս բնույթը հանգեցրել է մասնատված իրավական դաշտի: Զավեշտալի է, որ հատկացումներով պայմանավորված և չպայմանավորված նպաստներն իրականում նախագծված են միմյանց շուրջը, որպեսզի ապահովեն թիրախային խմբի ամբողջական ընդգրկվածություն, սակայն օրենսդրության մեջ դրանք առանձին են կարգավորված: Սա նպատակահարմար չէ և պետք է վերանայվի, քանի որ իրավական կարգավորման մասնատված դաշտ ունեցող այլ երկրներում հանգեցնում է կարգավորումներում համընկնումների և անհամապատասխանությունների: ԻՍԾԿ-ների զարգացումն այս առումով շատ օգտակար է և կարող է լուծել որոշ վարչական խնդիրներ, որոնք առավելապես ազդում են շահառուների վրա[159]:

Չնայած այս ձեռքբերումներին՝ համակարգում դեռևս առկա է «բնածին» անհավասարություն նպաստի ստացման իրավունքի և եկամտային հարկի վճարումների միջև ամուր կապի պատճառով: Չգրանցված աշխատողները, ցածր եկամուտ ունեցող խմբերն առերեսվում են պետական կենսաթոշակների իրավունք ձեռք բերելու խնդիրներին, թեև նոր կիրառված համահարթ տոկոսադրույքով ԱԵՀ-ը նշանակում է, որ նրանք իրենց եկամուտների ավելի մեծ մասն են ներդնում համակարգի ֆինանսավորման համար: Ինքնաֆինանսավորվող սոցիալական ապահովագրության համակարգից ամբողջովին պետական եկամուտներից ֆինանսավորվող համակարգի անցնելու որոշումը նույնպես կարող է խնդրահարույց լինել, եթե պետության՝ եկամուտները բարձրացնելու կարողությունը մշտապես չբարելավվի: Իշխանությունները պետք է նաև ապահովեն, որ ֆինանսավորման այս մոդելը համահունչ լինի ժողովրդագրական դինամիկայից բխող՝ նպաստների ծախսերի երկարաժամկետ էվոլյուցիային: Կենսաթոշակային համակարգի շարունակական մշտադիտարկումը և կատարելագործումը պետք է մշտապես լինեն գերակայություն: Այս առումով ծերության կենսաթոշակային համակարգի վերջին

[159] ԻՍԾԿ-ների առկայությունը տարածաշրջանի և շրջանների մակարդակներում շատ օգտակար է ծրագրերի իրականացման առումով: Այն առնվազն դյուրացնում է համակարգումը, եթե ոչ ծառայությունների ինտեգրումը: Այնուամենայնիվ, սա միայն այն պայմանով, որ հաճախորդների կարիքների գնահատման վարչական ընթացակարգերը կիրարկվում են համընդգրկուն կերպով: Պետք է ներդնել ուղղորդման մեխանիզմներ, և գործերի կառավարման դերերը պետք է հստակ սահմանվեն և բաշխվեն այնպես, որ կիրառողների տեսանկյունից չլինի քաղաքականության ոլորտների միջև մասնատում՝ իրավական կարգավորման հետևանքով:

կառուցվածքային բարեփոխումը հավասարության և համերաշխության վերաբերյալ մի շարք լուրջ հարցեր է առաջացնում ինչպես սոցիալական, այնպես էլ գենդերային տեսանկյունից:

Ի վերջո, սոցիալական պաշտպանության ոլորտում կան նաև ակնհայտ բացեր, ինչպիսիք են աշխատանքի տեղավորման արդյունավետ համակարգի բացակայությունը և, ամենից շատ, գործազրկության պաշտպանության խնդիրը: Սա Հայաստանի՝ աշխատաշուկայի համատեքստում առկա ճեղքվածք է, որտեղ գործազրկությունը փոխկապված է համապատասխան աշխատատեղերի բացակայության հետ: Շատ կարևոր է դիտարկել գործազրկության ապահովագրման մեխանիզմի վերագործարկումը, որը ԱԱՔ-ների և, հնարավոր է, նվազագույն «ստորին շեմի» հետ կհասցեագրի գործազրկության կառուցվածքային բնույթի խնդիրը: Առկա են նաև նպաստների համարժեքությանն առնչվող հարցեր, ինչի մասին են վկայում միջազգային ստանդարտների հետ համեմատությունները:

Նպաստների ինդեքսավորումը կարևոր քայլ է դրանց առկա արժեքի պահպանման համար, սակայն որոշ նպաստներ պետք է ավելացվեն, սակայն ոչ միայն դրամական արժեքով, ինչպես մայրության նպաստների դեպքում է, այլև մյուս հարթություններում, ինչպիսին է, օրինակ՝ եկամուտների աջակցության իրական տևողությունը:

Ընդհանուր առմամբ, հայաստանյան սոցիալական պաշտպանության համակարգը որոշակի ամուր հիմքեր ունի ընդգրկուն և արձագանքող համակարգի վերածվելու համար: Քաղաքականության նպատակների, ապացույցների և գործողությունների միջև ավելի ամուր կապ հաստատելուն ուղղված աշխատանքը կարևոր նշանակություն կունենա՝ ապահովելու համար, որ այս դրական տարրերն ընդլայնվեն, որպեսզի երկրում յուրաքանչյուրը կյանքի տարբեր փուլերի ցնցումների ընթացքում կարողանա օգտվել աջակցության որևէ ձևից՝ անկախ եկամտից կամ սեռից:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆՈՂ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս հավելվածում թվարկված են այն հիմնական օրենսդրական ակտերը, որոնք սահմանում և կարգավորում են այս ուսումնասիրության շրջանակում ներառված նպաստները: Այն ներառում է այսօր գոյություն ունեցող կուտակային կենսաթոշակային համակարգին վերաբերող օրենքների ակնարկները, ինչպես նաև եկամտահարկի դրույքաչափերը:

- «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք (2003 թ.)
- «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենք (2003 թ.)[160]
- «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենք (2004 թ.)
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004 թ.)
- Հիմնական կենսաթոշակի, նվազագույն կենսաթոշակի և թաղման նպաստի մասին ՀՀ Կառավարության թիվ 1734-Ն որոշում (2011 թ.)
- «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք (2013 թ.)[161]
- «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք (2013 թ.)[162]
- «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2010 թ., ուժի մեջ է մտել 2013 թ.)
- Սոցիալական նպաստների և թաղման նպաստի չափերը սահմանելու մասին ՀՀ Կառավարության թիվ 1489-Ն որոշում (2013 թ.)
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք (2014)
- Երեխայի ծննդյան նպաստի չափը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 275-Ն որոշում (2014 թ.)
- Սոցիալական նպաստները և թաղման նպաստը նշանակելու և վճարելու կարգի մասին ՀՀ Կառավարության թիվ 635-Ն որոշում (2014 թ.)
- «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 1179-Ն որոշում (2015 թ.)
- ՀՀ հարկային օրենսգիրք (2016)
- «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք (2010 թ., փոփոխվել է 2018 թ.)
- Ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության չափերը սահմանելու մասին ՀՀ Կառավարության թիվ 50-ն որոշում (2019 թ.)

[160] Դրա կիրարկման համար իրավական հիմք ապահովող այլ կարգավորումներն են՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին թիվ 1024-Ն ՀՀ Կառավարության որոշումը (2011) և «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթներ կիրարկելու մասին ՀՀ Կառավարության թիվ 144-Ն որոշումը (2013):

[161] Դրա իրականացման համար իրավական հիմք ապահովող այլ կարգավորումները ներառում են սույն օրենքի կիրառման մասին ՀՀ Կառավարության թիվ 145-Ն որոշումը (2014):

[162] Դրա իրականացման համար իրավական հիմք ապահովող այլ կարգավորումները ներառում են սույն օրենքի կիրարկման մասին ՀՀ Կառավարության թիվ 534-Ն որոշումը (2014):

[163] Դրա կիրարկման համար իրավական հիմք ապահովող այլ կարգավորումները ներառում են «Կենսաթոշակների վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 670-Ն որոշումը (2011):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք (2010 թ.)[163]

2003 թվականին «Պետական կենսաթոշակների մասին» օրենքին փոխարինելով՝ այս օրենքը կարգավորում է պետական կենսաթոշակային համակարգը՝ ներառյալ այսպես կոչված կուտակային բաղադրիչը (պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառում) և կամավոր կենսաթոշակը (կարգավորում է 0, 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանները):

Այն կարգավորում է համակարգի կառավարումն ու ֆինանսավորումը՝ ներառյալ նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման պայմաններն ու ընթացակարգերը: Սահմանում է քաղաքացիական և ռազմական զբաղվածության թոշակները: Ներառում է ծերության, արտոնյալ, երկարաժամկետ ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում և մասնակի կենսաթոշակները:

Ծերության (սոցիալական) կենսաթոշակը (0 և 1-ին աստիճաններ) տրվում է այն անձին, ով ունի մինչև 25 տարվա «պահանջվող աշխատանքային փորձ» (այսինքն՝ տարիներ, որոնց ընթացքում եկամտահարկ է վճարվել):

Մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Կ = Հ + (Ս X Ա) X Գ,

որտեղ՝

- Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,
- Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը (սահմանված ՀՀ Կառավարության որոշմամբ, ներկայումս կազմում է 18000 դրամ),
- Ս-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,
- Ա-ն՝ մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը (սահմանված ՀՀ Կառավարության որոշմամբ, ներկայումս կազմում է 950 դրամ),
- Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը: Մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,1:

10 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Կ = Հ + (10 X Ա + (Ս - 10) X Ա1) X Գ,

որտեղ՝

- Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,
- Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը (սահմանված ՀՀ Կառավարության որոշմամբ, ներկայումս կազմում է 18000 դրամ),
- Ա-ն՝ մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը (սահմանված ՀՀ Կառավարության որոշմամբ, ներկայումս կազմում է 950 դրամ),
- Ս-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,
- Ա1-ը՝ 10 տարին գերազանցող աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը (սահմանված ՀՀ Կառավարության որոշմամբ, ներկայումս կազմում է 500 դրամ),
- Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը, որը հաշվարկվում է.
  - 11-ից մինչև 40 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ = 1+ 0,01 X (Ս-10) բանաձևով.
  - 40 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ = 1.3 + 0,02 X (Ս-40) բանաձևով:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2010 թ., ուժի մեջ է մտել 2013 թ., 2016 թ-ից ներառվել է ՀՀ հարկային օրենսգրքում)

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

- Կարգավորում է ՀՀ-ում եկամտային հարկի որոշմանը և վճարմանը առնչվող հարաբերությունները, սահմանում է ՀՀ-ում եկամտային հարկ վճարողների շրջանակը, եկամտային հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը:
- Եկամտային հարկը սահմանում է որպես «հարկ վճարողների կողմից (օրենքով սահմանված դեպքերում հարկային գործակալի) ՀՀ պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ)»:

Գլուխ 2. Հարկ վճարողները և հարկվող օբյեկտը

- **Հոդված 3. Եկամտային հարկ վճարողները:** Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները, ինչպես նաև նրանք, ովքեր ՀՀ-ում ապրել են առնվազն 183 օր և ավելի, կամ որոնց կենսական շահերի կենտրոնը ՀՀ-ում է, ինչպես նաև ՀՀ պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք:
- **Հոդված 4. Հարկվող օբյեկտը:** Հարկվող եկամուտը (հարկ վճարողի համախառն եկամտի և նվազեցվող եկամուտների տարբերությունը):
- **Հոդված 6. Նվազեցվող եկամուտները:** Օրենսդրության համաձայն՝ վճարվող բոլոր նպաստները և կենսաթոշակները համարվում են նվազեցվող եկամուտներ՝ բացառությամբ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքով սահմանված և մայրության նպաստների, ինչպես նաև կենսաթոշակների կամավոր կուտակային համակարգին մասնակցության շրջանակում վճարվող կենսաթոշակների: Նվազեցվող եկամուտներ են համարվում նաև կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարները՝ հարկ վճարողի հարկվող եկամտի 5 տոկոսը չգերազանցող չափով:
- **Հոդված 8. Գյուղատնտեսական արտադրանքից ստացման ենթակա եկամուտների հաշվառումը հարկվող օբյեկտում:** Որոշակի գյուղատնտեսական արտադրանքից ստացված եկամուտը համարվում է նվազեցվող (եթե դրա տեսակարար կշիռը չի գերազանցում գյուղատնտեսական աշխատողի համախառն եկամտի 10 տոկոսը):

Գլուխ 3. Եկամտային հարկի դրույքաչափերը

1. Եկամտային հարկի դրույքաչափերը

Ամսական եկամուտը	Հարկի դրույքաչափը
Մինչև 120.000 դրամ	Հարկվող եկամտի 24.4 տոկոսը
120.000 դրամից ավելի	29.280 դրամին գումարած 120.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը

2. Չհարկված եկամուտներից եկամտային հարկի դրույքաչափերը

Տարեկան եկամուտը	Հարկի դրույքաչափը
մինչև 1.440.000 դրամ	Հարկվող եկամտի 24.4 տոկոսը
1.440.000 դրամից ավելի	351.360 դրամին գումարած 1.440.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը

- Կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով կուտակված միջոցները ֆիզիկական անձի կողմից միանվագ ստացման դեպքում եկամտային հարկը հաշվարկվում է վերոնշյալ 1-ին աղյուսակով սահմանված դրույքաչափերով: Ոչ միանվագ ստացման դեպքերում եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:
- Ռոյալթիների և գույքի վարձակալությունից ստացման ենթակա եկամուտներից (բացառությամբ անհատական բնակելի տներ կառուցապատող՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձի) եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:
- Տոկոսների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:
- Հարկային գործակալը ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու դիմաց վճարման ենթակա եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տոկոս դրույքաչափով:
- Գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիա-

րավական գրավոր պայմանագիրը չկնքելու դեպքերում հարկային գործակալը հարկ վճարողին եկամուտներ հաշվարկելիս եկամտային հարկը հաշվարկում և պահում է վճարման ենթակա եկամուտների նկատմամբ 11 տոկոս դրույքաչափով:

- Հաստատագրված վճար վճարող անհատ ձեռնարկատերի համար եկամտային հարկը հաշվարկվում է 3 տոկոս դրույքաչափով:
- Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց եկամուտներ վճարելիս հարկային գործակալը եկամտային հարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով. 1) ապահովագրությունից ստացման ենթակա ապահովագրական հատուցումներից և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացման ենթակա եկամուտներից՝ 5 տոկոս. 2) ռոյալթիներից, տոկոսներից, գույքի վարձակալությունից ստացման ենթակա եկամուտներից, գույքի արժեքի հավելաճից և այլ պասիվ եկամուտներից՝ 10 տոկոս, իսկ հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա այլ եկամուտներից՝ վերոնշյալ 1-ին աղյուսակի դրույքաչափերով:

Գործատուն հաշվարկում է եկամտային հարկը և պարտադիր կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարը փոխանցում է գանձապետարան: Գործատուն նույնպես հաշվարկում է պետական մասնակցությանը համապատասխանող լրացուցիչ վճարը՝ 10 տոկոսի և 25000 դրամի տարբերության չափով, եթե աշխատավարձի ամսական չափը գերազանցում է 500 000 դրամը:

Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ)՝ «Կուտակային կենսաթոշակների ադմինիստրատոր»-ը, զբաղվում է անհատական հաշվետվություններով և դիմում է ներկայացնում գանձապետարան, որն այնուհետև կուտակված միջոցները փոխանցում է ՀՀ կենտրոնական բանկ, ակտիվների կառավարիչներին, այնուհետև անձի կենսաթոշակային հաշվին:

Նշում. Մինչև 2020 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկի դրույքաչափերը որոշելու համար կիրառվել է երեք հարկային դրույքաչափ.

Ամսական եկամուտը	Հարկի դրույքաչափը
Մինչև 150,000 դրամ	23%
150,001-ից մինչև 2 միլիոն դրամ	28%
2 միլիոն դրամից ավելի	36%

Նշում. 2020 թվականի դրությամբ եկամտային հարկի դրույքաչափերը դարձան համահարթ և աստիճանաբար կնվազեն հետևյալ կերպ.

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թվականի հունվարի 1-ից	23 տոկոս
2021 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս
2022 թվականի հունվարի 1-ից	21 տոկոս
2023 թվականի հունվարի 1-ից	20 տոկոս

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2010 թ., փոփոխություններն ուժի մեջ են մտել 2014 թ.)

- Կանոնակարգում է կուտակային կենսաթոշակային համակարգերի 2-րդ և 3-րդ աստիճանները:
- Սահմանում է կենսաթոշակային համակարգի պարտադիր և կամավոր բաղադրիչների կառուցվածքը, ներգրավված պետական մարմինների կառավարումը, մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, կուտակային կենսաթոշակային հաշիվների կառավարումը և կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրումը, կուտակային կենսաթոշակների տեսակները և դրանց վճարումը, հատկացումների վերադարձի երաշխավորման և սույն օրենքի խախտումների համար պատասխանատվության մեխանիզմները:

Պարտադիր կուտակային բաղադրիչ (2-րդ աստիճան): Պարտադիր՝ 1974 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո ծնված անձանց համար: Կամավոր՝ մինչև 1974 թվականը ծնվածների համար: Բաղադրիչին միանալուց հետո որոշումը հետադարձ ուժ չի կարող ունենալ: Կուտակային վճարները սահմանվում են աշխատավարձի կամ դրան հավասարեցված եկամտի 10 տոկոսի չափով:

Հարկ վճարող	Եկամուտ	Պետության կողմից կատարվող վճարների մասնաբաժինը	Հարկ վճարողի կողմից կատարվող վճարների մասնաբաժինը
Վարձու աշխատող	Ամսական մինչև 500,000 դրամ	Բազային եկամտի 5%-ը	Բազային եկամտի 5%-ը
	Ամսական 500,000 դրամից ավելի	25,000 դրամ (ամսական)	Մնացած մասը (բազային եկամտի 10% կազմելու համար)
Ինքնազբաղված անձ	Տարեկան մինչև 6,000,000 դրամ	Բազային եկամտի 5%-ը	Բազային եկամտի 5%-ը
	Տարեկան 6,000,000 դրամից ավելի	300,000 դրամ (տարեկան)	Մնացած մասը (բազային եկամտի 10% կազմելու համար)

Նշում. Եթե անձը ծնվել է 1974 թվականից առաջ և կամավոր միանում է այս աստիճանին, նա ամրագրված վճարում է իր բազային եկամտի 5 տոկոսը:

- Գործատուները (համարվում են հարկային գործակալներ) պատասխանատու են վճարների հաշվարկման և փոխանցման համար՝ բաղադրիչին ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր միացած անձանց համար: Ինքնազբաղված անձինք հաշվարկն ու փոխանցումները կատարում են ինքնուրույն:
- Հարկային մարմինը մշակում է հարկային գործակալի փոխանցած հաշվետվությունները և պատվերներ է ուղարկում գանձապետարան՝ պետական բյուջեից անձի կենսաթոշակային հաշվին համապատասխան գումարը փոխանցելու համար:
- Ֆոնդերի կառավարիչը ՀՀ կենտրոնական բանկում հատկացումներ կատարողի անունից բացում և վարում է նրանց անհատական կենսաթոշակային հաշիվները:

Կամավոր կուտակային կենսաթոշակի բաղադրիչ (3-րդ աստիճան): Սահմանված կենսաթոշակներ, կամավոր կուտակային կենսաթոշակային սահմանված ավանդ և կամավոր կուտակային կենսաթոշակային սահմանված վճար:

- Միայն կամավոր կենսաթոշակային ֆոնդերը (կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները), բանկերն ու ապահովագրական ընկերու-

թյուններն իրավունք ունեն առաջարկելու կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներ, և իրենք պետք է սահմանեն կանոնները (օրինակ՝ վճարները կատարվում են հարկ վճարողի և այդ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի/բանկի/ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագրի հիման վրա):

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 2014 թվականի փոփոխությունը

2021 թվականի հունվարից կուտակային վճարների տոկոսադրույքը շարունակում է մնալ աշխատավարձի կամ դրան հավասարեցված եկամտի 10 տոկոսին համարժեք, սակայն փոփոխություններ կան հարկ վճարողների և պետության մասնաբաժնի հարաբերակցության մեջ.

Եկամուտը	Պետության կողմից կատարվող վճարների մասնաբաժինը	Հարկ վճարողի կողմից կատարվող վճարների մասնաբաժինը
Ամսական մինչև 500,000 դրամ	Մնացած մասը (բազային եկամտի 10% կազմելու համար)	Բազային եկամտի 3.5%-ը
Ամսական 500,000 դրամից ավելի	32,500 դրամ (ամսական)	Մնացած մասը (բազային եկամտի 10% կազմելու համար)

2022 թվականի հունվարից կուտակային վճարների տոկոսադրույքը շարունակում է մնալ աշխատավարձի կամ դրան հավասարեցված եկամտի 10 տոկոսին համարժեք, սակայն հարկ վճարողների և պետության մասնաբաժնի հարաբերակցությունը կրկին փոփոխվում է.

Եկամուտը	Պետության կողմից կատարվող վճարների մասնաբաժինը	Հարկ վճարողի կողմից կատարվող վճարների մասնաբաժինը
Ամսական մինչև 500,000 դրամ	Բազային եկամտի 5.5%-ը	Բազային եկամտի 4.5%-ը
Ամսական 500,000 դրամից ավելի	27,500 դրամ (ամսական)	Մնացած մասը (բազային եկամտի 10% կազմելու համար)

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 2014 թվականի փոփոխությամբ 2-րդ աստիճանին կատարվող անհատական վճարները պարտադիր են դարձել պետական աշխատողների և աշխատանքի շուկայում նորեկների համար: Մասնավոր հատվածի աշխատակիցներին թույլատրվել էր հետաձգել մասնակցությունը մինչև 2017 թվականի հուլիս: Իշխանություններն իրականացրել են իրազեկման արշավ՝ նոր կենսաթոշակային համակարգի մասին տեղեկացվածությունը բարձրացնելու համար: 2014 թվականի փոփոխությունից հետո առաջին երկու տարվա ընթացքում մոտ 140 հազար աշխատող ընդգրկվեց նոր կենսաթոշակային համակարգում: Չնայած առաջընթացին՝ իշխանությունները որոշեցին այս կարգավորմանը ենթակա բոլոր աշխատողների պարտադիր մասնակցությունը նոր համակարգում հետաձգել մինչև 2018 թվականի հուլիսը՝ հաշվի առնելով տեխնիկական մարտահրավերներն ու բյուջեի վրա ճնշումը, որն առաջանալու էր աշխատողի և պետության կողմից կատարվող հարաբերակցված վճարների ավելացման հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1991-ին Խորհրդային Միությունից անկախանալուց հետո Հայաստանը գնաց հետխորհրդային երկրների մեծամասնության ճանապարհով՝ պետական ծախսերը, ներառյալ սոցիալական ծախսերը կտրուկ նվազեցնելու և հատկացումների վրա հիմնված սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական կառուցվածքը պահպանելու ուղղությամբ: Սոցիալական աջակցության ծրագրերը նույնպես փոխառվեցին նախորդ համակարգից: Երկրում գոյություն ունեին շուրջ 26 փոքր, չհամաձայնեցված դրամական նպաստներ, մինչև 1999 թվականին մեկնարկեց հատկացումներով չպայմանավորված Ընտանեկան նպաստի (ԸՆ) ծրագիրը[164]: Երկրի ընտանիքների մոտ 27 տոկոսն այդ ժամանակ նպաստ էր ստանում: Հետագայում ծրագիրը ենթարկվեց մի շարք բարեփոխումների, որոնք առավել ընդգծեցին աղքատության թիրախավորումը մինչև 2013 թվականը, երբ ուժի մեջ մտավ «Պետական նպաստների մասին» նոր օրենքը, որը հիմնովին փոխեց ԸՆ-ն և 2014 թվականին այն փոխարինեց ԸԿԲՆ-ով:

Համակարգի մնացյալ մասը՝ ներառյալ ավանդաբար հատկացումներով պայմանավորված բաղադրիչները, առաջին անգամ կարգավորվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» օրենքով (1992): 2000 թվականին ստեղծվեց Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը (ՍԱՀ), որը գործում էր որպես կանոնավոր **սահմանված նպաստների (ՍՆ)** սոցիալական ապահովագրության հիմնադրամ, և հավաքում էր գործատուների և աշխատողների պարտադիր վճարները՝ ֆինանսավորելու այն, ինչը հայտնի էր որպես պետական կենսաթոշակ: Պետական կենսաթոշակների արժեքը հաշվարկվում էր՝ հիմնվելով աշխատողների վաստակի և վճարների պատմության վրա, ինչպես աշխարհի սոցիալական ապահովագրության սխեմաների մեծ մասի դեպքում:

Սակայն չորս տարի անց՝ 1996 թվականին, այս օրենքն ուժը կորցրեց «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» օրենքի (1996) ընդունմամբ: Այս օրենքը սահմանեց ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում «աշխատանքային կենսաթոշակները» և ներմուծեց «սոցիալական կենսաթոշակներ» նույն խմբերի համար, որոնք ֆինանսավորվում են անմիջապես պետական բյուջեից: Այս երկու աստիճաններով Հայաստանը գնում էր սոցիալական համակարգի հետևյալ երկու գործառույթներին արձագանքող համակարգ կառուցելու ճանապարհով՝ սոցիալական կենսաթոշակների միջոցով եկամտի նվազագույն ապահովում և ավելի բարձր աշխատանքային կենսաթոշակների միջոցով սպառման խնդիրների մեղմում: Այս բարեփոխման մեկ այլ հիմնական առանձնահատկությունն այն էր, որ մինչ

[164] ՀՀ Կառավարության 1998 թ. նոյեմբերի թիվ 727 որոշում:

ՍԱՀ-ը շարունակում էր գործատուներից և աշխատողներից պարտադիր վճարներ հավաքել, աշխատակիցների հատկացումներն արդեն հավաքվում էին եկամտահարկի միջոցով: Այսպիսով՝ սոցիալական պաշտպանության երկրորդ գործառույթը փոխկապակցվեց հարկային համակարգին մասնակցության հետ: Այս հստակ առանձնահատկությունն այսօր շարունակում է բնութագրել Հայաստանի համակարգը:

Ընդամենը մեկ տարի անց «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքը (1997) սոցիալական ապահովության վճարները վերանվանեց «սոցիալական վճարներ»: Աշխատողները սոցիալական վճարներ էին վճարում իրենց աշխատավարձի և այլ հավասարեցված եկամուտների 3 տոկոսի չափով: Գործատուները սոցիալական վճարներ էին անում՝ համաձայն ստորև բերված աղյուսակում ներկայացված դրույքաչափերի:

Աղյուսակ Ա.1.

Գործատուների սոցիալական վճարները՝ համաձայն «Սոցիալական ապահովագրության վճարների մասին» 1991 թվականի օրենքի

Ամսական աշխատավարձը՝ ենթակա սոցիալական վճարների	Սոցիալական վճարների չափերը
Մինչև 25,000 դրամ	7,000 դրամ
25,001-ից 100,000 դրամ	7,000 դրամ + 25,000 դրամը գերազանցող գումարի 15%-ը [7,000 + 0.15 × (ամսական աշխատավարձ – 25,000)]
100,001 դրամ և ավելի	18,250 դրամ + 100,000 դրամը գերազանցող գումարի 5%-ը [18,250 + 0.05 × (ամսական աշխատավարձ – 100,000)] [18,250 = 7,000 + 0.15 × (100,000 – 25,000) = 7,000 + 11,250]

Սա համակարգում ռեգրեսիայի տարր մտցրեց, քանի որ աշխատավարձերի բարձրացմանը զուգահեռ գործատուների վճարները նվազում էին: Շեմերը պարբերաբար վերանայվում էին Կառավարության կողմից, սակայն օրենքը չէր սահմանում վերանայման կոնկրետ ժամանակաշրջան կամ այդ փոփոխությունների ֆինանսական հետևանքների գնահատման մեթոդ: Թեև ՍԱՀ-ի ակտուարային գնահատումները հրապարակային չեն, շահագրգիռ կողմերի հարցազրույցներից պարզ է դառնում, որ համակարգի ներարկումների մեծ մասը գոյանում էր պետական միջոցներից, ինչը մտահոգիչ էր Կառավարության համար:

Առանց ակտուարային գնահատման հնարավոր չէ պարզել, թե որն է այս իրավիճակի պատճառը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ այդ փուլում հիմնադրամը դեռևս հասուն չէր, հազիվ թե դա պայմանավորված էր ժողովրդագրական, տնտեսական կամ սոցիալական փոփոխականներով: Իրականում երիտասարդ կենսաթոշակային համակարգերը սովորաբար մեծ հավելուրդներ են գոյացնում իրենց վաղ տարիների ընթացքում, քանի որ դա այն ժամանակաշրջանն է, երբ հավաքվում են զգալի վճարներ, սակայն կենսաթոշակներ դեռևս կա՛մ չեն վճարվում, կա՛մ շատ քիչ են վճարվում: Այս հավելուրդները կարող էին պարզապես փոխանցվել ընդհանուր պետական բյուջե ուղղակի փոխանցումների միջոցով, ինչպես դա այն ժամանակ արվում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում: Ուստի հավանական է, որ հարկաբյուջետային անարդյունավետ կառավարման հետևանք էր ՍԱՀ-ին ֆինանսական անկախություն տալը, ինչը խթանեց սուբսիդավորման կարիքների ավելացումը:

Սովորական երևույթ է, երբ սոցիալական ապահովագրության հիմնադրամները շարունակաբար վերափոխվում են՝ կարճաժամկետ հանգամանքները երկարաժամկետ ֆինան-

սավորման նպատակների մեջ «տեղավորելու» նպատակով: Դրանք սովորաբար ձեռք են բերվում այսպես կոչված հարաչափական բարեփոխումների միջոցով, որոնք ներառում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են իրավունքի ձեռքբերման պայմանների կամ նպաստների արժեքը որոշելու բանաձևերի ճշգրտումը, որոնց արդյունքում հնարավոր է գեներացնել զգալի երկարաժամկետ խնայողություններ համեմատաբար մարգինալ ճշգրտումների միջոցով: Հարաչափական բարեփոխումների ճանապարհով գնալու փոխարեն 2003 թվականին «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով մեկնարկեց **կառուցվածքային** բարեփոխում, որի նպատակն էր փոխել սխեմայի էությունը՝ ներառյալ դրա հիմքում ընկած ֆինանսավորման սխեմաներն ու առանցքային նպատակները՝ հիմք ստեղծելով Սահմանված վճարներով պայմանական համակարգի (ՍՎՊՀ) համար: ՍՎՊՀ համակարգերը որոշակիորեն գտնվում են հանրային սոցիալական ապահովագրության և մասնավոր կառավարվող հաշիվների մեջտեղում, սակայն հիմնականում աշխատողների վճարներից ստացված եկամուտները շարունակում են ուղղվել բաշխողական հիմունքով մոդելի նպաստների վճարմանը: Այնուամենայնիվ, ՍՎՊՀ համակարգը կառավարելու համար անհրաժեշտ կառավարման տեղեկատվական համակարգը (ԿՏՀ) պատշաճ կերպով մշակված չէր, և մոդելն այդպես էլ ամբողջությամբ չներդրվեց:

2006 թվականին Կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկի ենթակայության ներքո ստեղծեց միջգերատեսչական՝ Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների աշխատանքային խումբ (ԿՀԲԱԽ), որի առջև խնդիր դրվեց մշակել կենսաթոշակային համակարգի բարեփոխումների առաջարկություն՝ հիմնվելով միջազգային գործելակերպերի և ներկա միտումների ուսումնասիրության վրա: ԿՀԲԱԽ-ին խորհրդատվություն տրամադրեցին Համաշխարհային բանկը և ԱՄՆ ՄԶԳ-ի Սոցիալական պաշտպանության ծառայությունների ամրապնդման (ՍՊԾԱ) ծրագիրը, և խումբը 2008 թվականին ներկայացրեց մի զեկույց, ըստ որի՝ համակարգի ծախսերը շարունակում են աճել՝ ունենալով դեֆիցիտներ, որոնց ֆինանսավորումը պահանջում է պետական բյուջեի միջոցներ: 2008 թվականի կենսաթոշակային ծախսերը պետք է կազմեին ՀՆԱ-ի 4,3 տոկոսը՝ դառնալով համախմբված պետական բյուջեի սոցիալական հատվածի ծախսերի ամենամեծ բաղադրիչը, սակայն նպաստները չկարողացան բավարարել սպառողական նվազագույն զամբյուղը: Զեկույցով առաջարկվեց շարունակել փոփոխությունները՝ անցնելով շուկայական մոդելի: Սոցիալական պաշտպանության համակարգի համար սա նշանակում էր պետական բաշխողական սոցիալական ապահովության կենսաթոշակից ամբողջական անցում մասնավորի կողմից կառավարվող, ամբողջությամբ ֆինանսավորվող պարտադիր կուտակային անհատական հաշիվների կամ սահմանված վճարների (ՍՎ) սխեմայի: Նույն «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքում (1997) փոփոխություն կատարվեց՝ ՍԱՀ-ը վերակազմավորելով Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ), և այդ պահից սոցիալական վճարներն ուղղակիորեն ուղղվեցին պետական բյուջե:

Նման կառուցվածքային բարեփոխումների ժամանակ անցումային փուլի դիտարկումները վճռորոշ նշանակություն ունեն: Այս առումով «Պետական նպաստների մասին» օրենքը (2013) սահմանել է բազմաստիճան կենսաթոշակային համակարգ, որի համաձայն՝ մասնավոր հատվածի աշխատողները, որոնք ծնվել են 1971 թվականին[165] կամ դրանից առաջ, կարող են ընտրել (սահմանափակ ժամկետում) շարունակել մասնակցությունը պետական կենսաթոշակի սխեմայում (1-ին աստիճան), որը ներառում է տարիների հատկացումների հիման վրա կազմված անձնական վարձատրությունը: Մինչդեռ այդ ամսաթվից հետո ծնվածները, ինչպես նաև նախկին խմբերի այն անձինք, որոնք չհրաժարվեցին

[165] Հետագայում այն փոխվեց 1974 թվականի: 2014 թվականին 2-րդ աստիճանը պարտադիր դարձավ բոլոր պետական ծառայողների և աշխատաշուկա նոր մտնողների համար, իսկ մասնավոր հատվածի աշխատակիցներին թույլատրվեց հետաձգել մասնակցությունը մինչև 2018 թվականը:

պարտադիր բաղադրիչին միանալուց, պարտադիր կերպով ընդգրկվեցին նոր ՍՎ սխեմայի մեջ (2-րդ աստիճան), որի դեպքում նպաստները ձևավորվում են անհատական կուտակումներով: Հաշվեգրված պարտավորությունները, այսինքն՝ ներկայումս վճարվող կենսաթոշակները և ներկայիս ապահովագրված բնակչության կուտակված իրավունքների արժեքը, խոստացված նպաստների իրական ծախսերն են: Անհասկանալի է, թե արդյոք նախկին ՄՆ սխեմայով այս ֆինանսական պարտավորության չափն ամբողջությամբ հաշվի է առնվել, քանի որ այս անցումային ծախսերը հստակորեն արտացոլված չեն ո՛չ օրենքներում, ո՛չ էլ պետական բյուջեում: Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները նաև բացահայտեցին այս հարցի մասին իրազեկության ընդհանուր բացակայությունը: Այդուհանդերձ, անցումային ծախսերը կրում են բոլոր հարկատուները, մասնավորապես այն սերունդները, որոնք ծնվել են 1974 թվականին և դրան հաջորդող տարում, որը վերջինն է, երբ վճարվում է 1-ին աստիճանի կենսաթոշակը:

2010 թվականին կենսաթոշակային համակարգը կանոնակարգելու համար ներկայացվեց օրենքների նոր փաթեթ, որը ներառում էր հետևյալը.

- **«Եկամտային հարկի մասին»** 2010 թվականի օրենքը պարտադիր սոցիալական վճարները փոխարինեց հարկերով ֆինանսավորվող համակարգով: Այդ պահին հաստատված հարկերի դրույքաչափի կառուցվածքը համարվում էր միայն նոմինալ առումով պրոգրեսիվ՝ հաշվի առնելով բարձր եկամուտ ունեցող վճարողների շրջանում տարածված թերի հաշվետվությունները: 2020 թվականի դրությամբ եկամտային հարկի դրույքաչափը դարձավ համահարթ և աստիճանաբար կնվազի՝ 2023 թվականին 23-ից դառնալով 20 տոկոս: Այս բարեփոխումը զարմանալի է, քանի որ ընդունված է, որ եկամտային անհավասարությունը նվազեցնելու հարկային քաղաքականության հիմնական միջոցը եկամտի պրոգրեսիվ հարկումն է: Չկա նաև ապացույց, որ հարկերի կրճատումները բարելավում են հաշվետվողականությունը: Սոցիալական պաշտպանության համակարգի նպատակի համար այս բարեփոխումը ենթադրում է, որ ցածր եկամուտ ունեցողները միևնույն նպաստների համար տրամադրում են իրենց տնօրինվող եկամտի ավելի մեծ մասնաբաժինը:
- **«Կուտակային կենսաթոշակների մասին»** օրենքը (2010), որը վերջին անգամ փոփոխվել է 2014 թվականին, սահմանում է կուտակային վճարների 10% դրույքաչափ՝ 2-րդ աստիճանի ֆինանսավորման համար, որը համաֆինանսավորվում է աշխատողների և գործատուների կողմից: Այս վճարը գանձվում է ի լրումն անձնական եկամտային հարկի (ԱԵՀ), որը ֆինանսավորում է 1-ին աստիճանը: Այնուհանդերձ, չնայած փաստացի երկու աստիճաններն էլ ֆինանսավորելուն՝ 1974 թվականից հետո ծնված անձինք չեն ստանում 1-ին աստիճանով նախատեսված նպաստներ: Մինչդեռ և՛ 1-ին, և՛ 2-րդ աստիճանների մասնակից կենսաթոշակառուները ստանում են նաև հիմնական կենսաթոշակ, որը գործում է որպես ստորին շեմ, սակայն համահարթ չճշգրտված նպաստը չի կարող դիտվել որպես հաշվեգրված պարտավորությունների փոխհատուցում:
- Այդ նույն փաթեթում **«Պետական կենսաթոշակների մասին»** օրենքը (2010) կարգավորում է պետական կենսաթոշակների կառավարումը և ֆինանսավորումը: Սա ներառում է ինչպես հիմնական կենսաթոշակը, այնպես էլ 1-ին աստիճանը: Հիմնական կենսաթոշակը սահմանված է Կառավարության որոշմամբ և ներկայումս կազմում է 18,000 դրամ: Թեև այն ի սկզբանե սահմանվել էր նվազագույն սպառողական զամբյուղի մակարդակում, ինդեքսավորման մեխանիզմ այդպես էլ չստեղծվեց: Քանի որ նվազագույն կենսաթոշակը վճարվում է ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ աստիճանի կենսաթոշակառուներին, ինչպես նաև կենսաթոշակի իրավունքով ծերության նպաստի հիմքն է, այն փաստացի գործում է որպես ծերության սոցիալական պաշտպանության ստորին շեմ: Այնուամենայնիվ, ինդեքսավորման բացակայությունը բացասաբար է ազդում է այս նպաստի իրական արժեքի վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԾՓ ԾԱԾԿՈՒՅԹԸ. ԱՂՔԱՏ, ԽՈՑԵԼԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՑԱՆԿ

Այն տնային տնտեսությունները, որոնց խոցելիության միավորը գերազանցել է նպաստների իրավունքի ձեռքբերման շեմը, իրավունք ունեն անվճար ստացիոնար բուժում ստանալու ՀԾՓ-ի ներքո (ինչպես ներկայացված է ստորև բերված աղյուսակում):

Աղյուսակ Ա.2.

Աղքատ, խոցելի և հատուկ կատեգորիաների ցանկը և ստացիոնար խնամքի ծառայությունների ծածկույթը

Կատեգորիա	Ստացիոնար խնամքի իրավունք (Այո/Ոչ)
Աղքատ և համարյա աղքատ	
Բոլոր նրանք, ովքեր իրավասու են ստանալու ԸԿԲՆ-ն	Այո
Խոցելի խմբեր	
Հաշմանդամության I, II և III խմբեր	Այո
Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններ և հարազատներ	Այո
Մինչև 18 տարեկան ծնողազուրկ երեխաներ կամ երեխաներ և նրանց հարազատները	Այո
8-12 տարեկան երեխաներ և 65 տարեկանից բարձր անձինք, որոնք ատամնաբուժական հատուկ ծառայությունների կարիք ունեն	Ոչ
Մինչև 18 տարեկան երեխաներ, որոնք ընտանիքի հաշմանդամ անդամ ունեն	Այո
Մինչև 18 տարեկան երեխաներ չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքներում	Այո
Մանկատների սաներ և ծերանոցներում ապրող մեծահասակներ	Այո
Հատուկ խմբեր	
Վերարտադրողական տարիքի կանայք	Այո
Մինչև 7 տարեկան բոլոր երեխաները	Այո
Մինչև 18 տարեկան երեխաները հատուկ խնամքի դիսպանսերային հաստատություններում	Այո
Միայն մեկ ծնող ունեցող՝ մինչև 18 տարեկան երեխաներ	Այո
Նախազորակոչային տարիքի տղաներ (14-15 տարեկան)	Այո
Զինվորական անձնակազմ և նրանց ընտանիքի անդամները, Հայաստանի պաշտպանության համար զոհվածների և զինվորական կենսաթոշակ ստացող՝ կենսաթոշակի անցած կամ հաշմանդամ զինվորականների ընտանիքի անդամներ	Այո
Փրկարար ծառայության անձնակազմ և նրանց ընտանիքի անդամները, ինչպես նաև թոշակի անցած կամ հաշմանդամ փրկարար ծառայողները և զոհվածների ընտանիքի անդամները	Այո
Անազատության մեջ գտնվող անձինք	Այո
Նրանք, ովքեր ներգրավված են եղել Չեռնոբիլի ատոմակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներում	Այո
Թրաֆիքինգի զոհեր	Այո
Ապաստան հայցողներ	Այո
Սոցիալական փաթեթի շահառուներ	Այո
Զորակոչային տարիքի տղամարդիկ, որոնք կարիք ունեն ստացիոնար ծառայությունների և ախտորոշվել են հիվանդանոցային հետազոտության միջոցով	Այո
Միայնակ մայր ունեցող մինչև 18 տարեկան երեխաներ	Ոչ
Գործազուրկ կենսաթոշակառուներ	Ոչ

ՀՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Abrahamian, N. 2020. "Armenia's missing girls: How a preference for sons fuels gender-biased sex-selection." *UNICEF*. 4 March. Accessed 1 September 2021. https://www.unicef.org/eca/stories/armenias-missing-girls.

Aitken, Z. et al. 2015. "The maternal health outcomes of paid maternity leave: A systematic review." *Social Science & Medicine* 130 (April), pp. 32–41.

Ananyan, A. 2012. *Pension reform in Armenia*. Actuarial Society of Armenia. *http://www.actuaries.org/HongKong2012/Papers/MBR12_Ananyan.pdf.*

Armenia. 2004. *Law on the Minimum Consumer Basket and Minimum Consumer Budget*. *http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1969&lang=arm.*

__________. 2010. *Law on State Pensions*. *http://parliament.am/legislation.php?sel=show&ID=4008&lang=arm.*

__________. 2014. *Armenia Development Strategy for 2014-2025*.

__________. 2019. *Medium-Term Expenditure Framework 2020-2022*.

ARMSTAT (Statistical Committee of the Republic of Armenia). 2019. *Social Snapshot and Poverty in Armenia, 2019*. https://www.armstat.am/en/?nid=82&id=2217.

__________. 2020a. *Armenia: Poverty Snapshot over 2009-2019 – Part I*. *https://www.armstat.am/file/article/poverty_2020_e_2.pdf.*

__________. 2020b. *Demographic Handbook of Armenia, 2020*. https://www.armstat.am/en/?nid=82&id=2347.

__________. 2020c. *Labour Market in Armenia, 2020*. https://www.armstat.am/en/?nid=82&id=2348.

Arza, C. 2015. "The Gender Dimensions of Pension Systems: Policies and Constraints for the Protection of Older Women." Discussion Paper No. 1 for *Progress of the World's Women 2015–2016.* New York: UN Women. *https://socialprotection-humanrights.org/resource/the-gender-dimensions-of-pension-systems-policies-and-constraints-for-the-protection-of-older-women/.*

Asatryan, Z. 2014. "The political economy of pension reform in Armenia." *Caucasus Analytical Digest* 60 (March). *https://www.researchgate.net/publication/265510232_The_political_economy_of_pension_reform_in_Armenia*.

Asian Development Bank. 2015. *Armenia country gender assessment*. *https://www.adb.org/sites/default/files/institutional-document/162152/arm-country-gender-assessment.pdf.*

Avendano, M. et al. 2015. "The long-run effect of maternity leave benefits on mental health: Evidence from European countries." *Social Science & Medicine* 132 (May), pp. 45–53.

Ayliffe, T., G. Aslam and R. Schjødt. 2017. "Social accountability in the delivery of social protection: Literature review." Working Paper (September). Orpington: Development Pathways.

Banks, L. M. and S. Polack. 2014. *The Economic Costs of Exclusion and Gains of Inclusion of People with Disabilities: Evidence from Low and Middle Income Countries.* CBM; International Centre for Evidence in Disability; London School of Hygiene & Tropical Medicine. *https://www.cbm.org/fileadmin/user_upload/Publications/Costs-of-Exclusion-and-Gains-of-Inclusion-Report.pdf.*

Barrantes, A. 2020. "Why are human rights considerations fundamental to inclusive and lifecycle social protection systems?" Pathways' Perspectives on Social Policy in International Development No. 30 (April). Orpington: Development Pathways. *https://www.developmentpathways.co.uk/wp-content/uploads/2020/04/Pathways-Perspectives-Human-Rights-WEBSITE-2.pdf.*

Buitrago-Hernandez, P., A. Fuchs and C. Cancho. 2019. *Exploring the Diversity of Young People Not in Employment, Education or Training (NEET): The Gender Profile of NEETs in Georgia and Armenia.* South Caucasus Gender Program (P160432). World Bank. *http://documents1.worldbank.org/curated/en/591061559766670862/pdf/Exploring-the-diversity-of-young-people-not-in-employment-education-or-training-NEET-the-gender-profile-of-NEETs-in-Georgia-and-Armenia.pdf.*

Christensen, G. 2017. *Sustainable, Inclusive Agriculture Sector Growth in Armenia: Lessons from Recent Experience of Growth and Contraction – Background Report for World Bank Systematic Country Diagnostic for Armenia*. Washington, DC: IBRD/World Bank. *https://documents1.worldbank.org/curated/en/432631523020631578/pdf/125032-SCD-P162052-PUBLIC-Armenia-SCD-publication-of-technical-background-papers-on-agriculture-final-040518.pdf.*

Escudero, V. and H. Liepmann. 2020. "The joint provision of active labour market policies and income support can be a powerful solution for improving workers' perspectives." *VoxEU.org.* 19 September. Accessed 1 September 2021. *https://voxeu.org/article/combined-active-labour-market-policies-and-income-support-can-improve-workers-perspectives.*

EU-OSHA (European Agency for Safety and Health at Work). n.d. "Employment trends and their impact on women's OSH." OSHwiki. Accessed 14 June 2021. https://oshwiki.eu/wiki/Employment_trends_and_their_impact_on_women%E2%80%99s_OSH.

Fallon, K. M., A. Mazar and L. Swiss. 2017. "The Development Benefits of Maternity Leave." *World Development* 96 (C), pp. 102–118.

Gassmann, F., E. Timar and H. Röth. 2018. *Scoping Study on Social Protection and Safety Nets for Enhanced Food Security and Nutrition in Armenia*. World Food Programme; University of Maastricht.

Gentillini, U. et al. 2021. "Social Protection and Jobs Responses to COVID-19: A Real-Time Review of Country Measures." "Living Paper" version 15 (14 May). World Bank Group. *https://documents1.worldbank.org/curated/en/281531621024684216/pdf/Social-Protection-and-Jobs-Responses-to-COVID-19-A-Real-Time-Review-of-Country-Measures-May-14-2021.pdf.*

Ghukasyan, H. et al. 2020. *Core Diagnostic of the Social Protection System in Armenia*. MoLSA; UNICEF; World Bank. *https://www.unicef.org/armenia/media/9286/file/Core%20Diagnostic%20of%20the%20Social%20Protection%20System%20in%20Armenia.pdf.*

Grimshaw, D. and J. Rubery. 2015. *The motherhood pay gap: A review of the issues, theory and international evidence*. Geneva: ILO. *https://www.ilo.org/wcmsp5/groups/public/@dgreports/@dcomm/@publ/documents/publication/wcms_348041.pdf.*

Groce, N. et al. 2011. "Disability and Poverty: The need for a more nuanced understanding of implications for development policy and practice." *Third World Quarterly* 32 (8). *https://doi.org/10.1080/01436597.2011.604520.*

Haeck, C. 2011. "Increased Paid Maternity Leave and Children's Development Measured at Age Four to Five: An Empirical Analysis." *SSRN* (June). *https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1886189.*

Hajizadeh, M. et al. 2015. "Paid maternity leave and childhood vaccination uptake: Longitudinal evidence from 20 low-and-middle-income countries." *Social Science & Medicine* 140 (September), pp. 104–117.

Heymann, J., A. Raub and A. Earle. 2011. "Creating and Using New Data Sources to Analyze the Relationship between Social Policy and Global Health: The Case of Maternal Leave." *Public Health Reports* 126 (3), pp. 127–134.

Heymann, J. et al. 2017. "Paid parental leave and family wellbeing in the sustainable development era." *Public Health Reviews* 38 (September). *https://publichealthreviews.biomedcentral.com/articles/10.1186/s40985-017-0067-2.*

Honorati, M. et al. 2019. *Work for a Better Future in Armenia: An Analysis of Jobs Dynamics*. Washington, DC: World Bank Group.

ILO (International Labour Organization). 2008. *Occupational safety and health in the Republic of Armenia: National profile*. Moscow: ILO. *https://labordoc.ilo.org/permalink/41ILO_INST/1jaulmn/alma994313173402676.*

__________. 2011. *Work-life balance.* Governing Body GB.312/POL/4, 312th Session. Geneva: ILO. *https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_norm/---relconf/documents/meetingdocument/wcms_163642.pdf.*

__________. 2016a. *Maternity and paternity at work: Law and practice across the world*. Geneva: ILO. *https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms_242615.pdf.*

__________. 2016b. *Women at Work: Trends 2016*. Geneva: ILO. *https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms_457317.pdf.*

__________. 2017. *World Social Protection Report 2017–19: Universal social protection to achieve the Sustainable Development Goals*. Geneva: ILO. *http://www.ilo.org/global/publications/books/WCMS_604882/lang--en/index.htm.*

__________. 2020a. "Rapid assessment of the employment impact and policy responses of the COVID-19 pandemic on Armenia." Employment Country Reports Series. ILO Decent Work Team and Country Office for Eastern Europe and Central Asia.

__________. 2020b. *Social Protection Spotlight: Towards Universal Health Coverage – Social Health Protection Principles*. *https://www.social-protection.org/gimi/RessourcePDF.action?id=56009.*

__________. 2021. *Observation (CEACR) - adopted 2020, published 109th ILC session (2021): Workmen's Compensation (Accidents) Convention, 1925 (No. 17) - Armenia*. *https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:13100:0::NO::P13100_COMMENT_ID:4056403.*

ILO (International Labour Organization) and CSDA (Centre for Social Development in Africa). 2019. *Maternity income protection in Southern and Eastern Africa: From concept to practice*. ILO; CSDA at the University of Johannesburg. *https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_protect/---soc_sec/documents/publication/wcms_733996.pdf.*

ILO (International Labour Organization) and UN Women (United Nations Entity for Gender Equality and the Empowerment of Women). 2020. *Assessment of the Social Protection System in Georgia*. ILO. *https://georgia.unwomen.org/en/digital-library/publications/2020/12/assessment-of-the-social-protection-system-in-georgia.*

ILO (International Labour Organization) and UNICEF (United Nations Children's Fund). 2019. *Towards Universal Social Protection for Children: Achieving SDG 1.3 – ILO-UNICEF Joint Report on Social Protection for Children*. Geneva: ILO; New York: UNICEF. *https://www.unicef.org/reports/towards-universal-social-protection-children-achieving-sdg-13.*

IMF (International Monetary Fund). 2020a. "IMF Executive Board Completes Third Review Under the Stand-By Arrangement for the Republic of Armenia and Approves US$36.9 Million Disbursement." 11 December. Press release No. 20/371. Accessed 1 September 2021. *https://www.imf.org/en/News/Articles/2020/12/11/pr20371-armenia-imf-execboard-completes-3rd-review-under-sba-and-approves-us-36-9m-disbursement.*

__________. 2020b. "IMF Executive Board Concludes Second Review Under Armenia's Stand-By Arrangement and Augments Access to Address the Impact of COVID-19." 18 May. Press release No. 20/219. Accessed 1 September 2021. *https://www.imf.org/en/News/Articles/2020/05/18/pr20219-armenia-imf-execboard-concludes-2ndrev-under-sba-augments-access-address-impact-covid19.*

__________. n.d.-a. "Policy Responses to COVID-19: Policy Tracker." Accessed 8 January 2021. *https://www.imf.org/en/Topics/imf-and-covid19/Policy-Responses-to-COVID-19.*

__________. n.d.-b. "World Economic Outlook Database, April 2021." Accessed 21 April 2021. *https://www.imf.org/en/Publications/WEO/weo-database/2021/April.*

ISSA (International Social Security Association). 2014. *Country profile: Armenia – Old age, invalidity and survivors*.

__________. 2016. *Country profile: Armenia – Old age, invalidity and survivors*.

ISSA/SSA. Multiple years. *Social Security Programs Throughout the World*. Geneva: ISSA; Baltimore: Social Security Administration of the United States.

James, P. and S. McClanahan. 2019. *Assessing the Adequacy of Tax-financed Social Protection in Viet Nam*. International Labour Organization. *https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---asia/---ro-bangkok/---ilo-hanoi/documents/publication/wcms_730835.pdf.*

Karapetyan, S. et al. 2011. *Armenia: Social Protection and Social Inclusion*. Yerevan: CRRC-Armenia and Eurasia Partnership Foundation.

Kidd, S. and D. Athias. 2020. "Hit and Miss: An assessment of targeting effectiveness in social protection." Working Paper (June). Orpington: Development Pathways; Uppsala: Act Church of Sweden. *https://www.developmentpathways.co.uk/publications/hit-and-miss-an-assessment-of-targeting-effectiveness-in-social-protection/.*

Kidd, S., D. Athias and A. Tran. 2021. "Universal Child Benefits: transforming the lives of children across South Asia." UNICEF Regional Office for South Asia Working Paper No. 2021-01. Kathmandu: UNICEF South Asia. *https://www.unicef.org/rosa/media/13341/file/Universal%20Child%20Benefits:%20transforming%20the%20lives%20of%20children%20across%20South%20Asia.pdf.*

Kidd, S. and B. Gelders. 2015. *Child Wellbeing and Social Security in Georgia: The case for moving to a more inclusive national social security system*. Tbilisi: UNICEF. *https://www.developmentpathways.co.uk/wp-content/uploads/2018/06/UNICEF_Child_Wellbeing_ENG_.pdf.*

Kidd, S. and A. Tran. 2017. *Social Pensions and their Contribution to Economic Growth.* Prepared for the Expanding Social Protection (ESP) Programme of the Ministry of Gender, Labour and Social Development of the Republic of Uganda. https://*www.developmentpathways.co.uk/wp-content/uploads/2018/06/Social-pensions-and-their-contribution-to-economic-growth-1.pdf.*

Kidd, S. et al. 2020. "Investing in the future: A universal benefit for Sri Lanka's children." UNICEF Sri Lanka Social Policy Working Paper. UNICEF.

Knox-Vydmanov, C. 2014. "Why 'The Poor' Don't Exist (And What This Means for Social Protection Policy)." Pathways' Perspectives on Social Policy in International Development No. 16 (March). Orpington: Development Pathways. *https://www.developmentpathways.co.uk/publications/poor-dont-exist-means-social-protection-policy-pathways-perspective-16/.*

Lavado, R. F., S. Hayrapetyan and S. Kharazyan. 2018. "Expansion of the Benefits Package: The Experience of Armenia." Universal Health Coverage Study Series No. 27. Washington, DC: World Bank Group. *http://documents1.worldbank.org/curated/en/615741516195329170/pdf/Expansion-of-the-benefits-package-the-experience-of-Armenia.pdf.*

Lee, S. and N. Torm. 2017. "Social security and firm performance: The case of Vietnamese SMEs." *International Labour Review* 156 (2), pp. 185–212. *https://doi.org/10.1111/j.1564-913X.2015.00054.x.*

Madureira Lima, J. et al. 2020. *COVID-19 and social protection in Europe and Central Asia: A moment of opportunity to expand and strengthen social protection mechanisms to safeguard health, well-being and livelihoods, leaving no one behind*. United National Regional Coordination Mechanism Europe and Central Asia; United Nations Sustainable Development Group Europe and Central Asia. *https://www.social-protection.org/gimi/RessourcePDF.action?id=56790.*

Mathers, N. and R. Slater. 2014. *Social protection and growth: Research synthesis*. Barton, Australia: Department of Foreign Affairs and Trade. *https://www.social-protection.org/gimi/gess/RessourcePDF.action?ressource.ressourceId=54036.*

McClanahan, S. 2019. "Who contributes? Re-thinking 'Non-contributory' within a citizenship paradigm." Pathways' Perspectives on Social Policy in International Development No. 28 (December). Orpington: Development Pathways. *https://www.developmentpathways.co.uk/publications/who-contributes-re-thinking-non-contributory-within-a-citizenship-paradigm/*.

McClanahan, S. et al. 2021. *Global Research on Governance and Social Protection: Global Overview*. UN DESA; ILO. *https://www.un.org/development/desa/dspd/wp-content/uploads/sites/22/2021/04/Global-overview_SP-Governance.pdf.*

McClanahan, S. and B. Gelders. 2019. *Assessing the potential for multi-tiered child benefits in Viet Nam.* Ha Noi: ILO. *https://www.developmentpathways.co.uk/publications/assessing-the-potential-for-multi- tiered-child-benefits-in-viet-nam/.*

Mkandawire, T. 2005. "Targeting and Universalism in Poverty Reduction." Social Policy and Development Programme Paper No. 23 (December). United Nations Research Institute for Social Development. *https://www.unrisd.org/80256B3C005BCCF9/(httpPublications)/955FB8A594EEA0B0C12570FF00493EAA.*

Mont, D. and A. Cote. 2020. "Considering the Disability related Extra Costs in Social Protection." Inclusive Social Protection for Empowerment of Persons with Disabilities, Background Paper No. 2 (June). UNPRPD; Innovation to Inclusion; Leonard Cheshire; DFID. *https://www.social-protection.org/gimi/RessourcePDF.action?id=56925.*

Nandi, A. et al. 2016. "Increased Duration of Paid Maternity Leave Lowers Infant Mortality in Low- and Middle-Income Countries: A Quasi-Experimental Study." *PLoS Medicine* 13 (3), e1001985. *https://doi.org/10.1371/journal.pmed.1001985.*

OECD (Organisation for Economic Co-operation and Development). 2018. *Policy Coherence for Sustainable Development 2018: Towards Sustainable and Resilient Societies*. Paris: OECD Publishing. *https://www.oecd-ilibrary.org/development/policy-coherence-for-sustainable-development-2018_9789264301061-en.*

OECD (Organisation for Economic Co-operation and Development) and CRRC-Armenia (Caucasus Research Resource Center - Armenia). 2017. "Interrelations between Public Policies, Migration and Development in Armenia." OECD Development Pathways Series. Paris: OECD Publishing. *http://dx.doi.org/%2010.1787/9789264273603-en*.

Ritchie, H. 2019. "How does the sex ratio at birth vary across the world?" *Our World in Data.* 6 August. Accessed 1 September 2021. *https://ourworldindata.org/sex-ratio-at-birth#:~:text=This%20is%20what%20the%20World,107%20boys%20per%20100%20girls.*

Scheil-Adlung, X. and F. Bonnet. 2011. "Beyond Legal Coverage: Assessing the Performance of Social Health Protection." *International Social Security Review* 64 (3), pp. 21–38.

Sengupta, A. and S. Kidd. 2018. *Facing our future: Ageing in a changing Uganda*. Expanding Social Protection (ESP) Programme of the Ministry of Gender, Labour and Social Development of Uganda; UK Aid Direct; Irish Aid; Maxwell Stamp PLC. *https://www.developmentpathways.co.uk/publications/facing-our-future-ageing-in-a-changing-uganda/.*

Sinha, N. et al. 2016. *Armenia Country Gender Assessment: Poverty and Equity Global Practice*. World Bank Group.

Staehelin, K., P. C. Bertea and E. Z. Stutz. 2007. "Length of Maternity Leave and Health of Mother and Child – a Review." *International Journal of Public Health* 52, pp. 202–209. *https://link.springer.com/article/10.1007/s00038-007-5122-1.*

Tanaka, S. 2005. “Parental Leave and Child Health across OECD Countries.” *The Economic Journal* 115 (501), pp. F7–F28.

Trani, J.-F. and M. Loeb. 2012. “Poverty and disability: A vicious circle? Evidence from Afghanistan and Zambia.” *Journal of International Development* 24 (S1), pp. S19–S52. *https://doi.org/10.1002/jid.1709.*

UN DESA (United Nations Department of Economic and Social Affairs). 2018. “World Urbanization Prospects: The 2018 Revision.” Database. UN DESA Population Dynamics. Accessed 1 September 2021. *https://population.un.org/wup/Download/.*

__________. 2019a. “2019 Revision of World Population Prospects.” Data dashboard. UN DESA Population Dynamics. Accessed 1 September 2021. *https://population.un.org/wpp/.*

__________. 2019b. *Disability and Development Report 2018: Realizing the Sustainable Development Goals by, for and with persons with disabilities*. New York: United Nations. *https://www.un.org/development/desa/disabilities/publication-disability-sdgs.html.*

__________. 2019c. “World Population Prospects 2019: Special Aggregates.” Database. UN DESA Population Dynamics. Accessed 1 September 2021. *https://population.un.org/wpp/Download/SpecialAggregates/UNrelated/.*

UN Women (United Nations Entity for Gender Equality and the Empowerment of Women). 2018. *Women’s Economic Inactivity and Engagement in the Informal Sector in Armenia: Causes and Consequences.* Tbilisi: UN Women. *https://georgia.unwomen.org/en/digital-library/publications/2018/12/womens-economic-inactivity-and-engagement-in-the-informal-sector-in-armenia.*

__________. 2019. *Armenia Country Gender Equality Brief*. Istanbul: UN Women. *https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2020/05/armenia-country-gender-equality-brief.*

UN Women (United Nations Entity for Gender Equality and the Empowerment of Women) and ARMSTAT (Statistical Committee of the Republic of Armenia). 2020. *Analysis of the Gender Pay Gap and Gender Inequality in the Labour Market in Armenia*. Tbilisi: UN Women. *https://georgia.unwomen.org/en/digital-library/publications/2020/03/analysis-of-the-gender-pay-gap-and-gender-inequality-in-the-labor-market-in-armenia.*

UNESCO (United Nations Educational, Scientific and Cultural Organization). n.d. “UNESCO Data for the Sustainable Development Goals: Armenia.” Data dashboard. UNESCO Institute of Statistics. Accessed 4 May 2021. *http://uis.unesco.org/country/AM.*

UNFPA (United Nations Population Fund). 2019. “Policy responses to low fertility: How effective are they?” Technical Division Working Paper Series No. 1 (May). *https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Policy_responses_low_fertility_UNFPA_WP_Final_corrections_7Feb2020_CLEAN.pdf*

Wening Handayani, S. and B. Babajanian. 2012. *Social Protection for Older Persons: Social Pensions in Asia*. Asian Development Bank.

WHO (World Health Organization) and World Bank. 2011. World Report on Disability. Geneva: WHO; Washington, DC: World Bank.

World Bank. 2020a. “Annual Remittances Data (updated as of Oct. 2020).” Data dashboard. Migration and Remittances Data. Accessed 1 September 2021. *https://www.worldbank.org/en/topic/migrationremittancesdiasporaissues/brief/migration-remittances-data.*

__________. 2020b. “COVID-19 Crisis: Through a Migration Lens.” Migration and Development Brief No. 32 (April). *https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/33634/COVID-19-Crisis-Through-a-Migration-Lens.pdf.*

__________. 2020c. “World Development Indicators Database.” Accessed 1 September 2021. *https://databank.worldbank.org/source/world-development-indicators.*

__________. n.d. “World Bank Open Data.” Accessed 8 March 2021. *https://data.worldbank.org/.*

World Economic Forum. 2021. Global Gender Gap Report 2021: Insight Report. Geneva: World Economic Forum. *http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2021.pdf.*

Yeo, R. and K. Moore. 2003. “Including Disabled People in Poverty Reduction Work: ‘Nothing About Us, Without Us.’” World Development 31 (3), pp. 571–590. *https://doi.org/10.1016/S0305-750X(02)00218-8.*

United Nations Entity for Gender Equality
and the Empowerment of Women

UN Women Georgia Country Office
87 Paliashvili Str., Office Suite 4
0179, Tbilisi, Georgia
Tel: +995 (32) 2 22 06 04 / 2 22 08 07

unwomen.org
georgia.unwomen.org
facebook.com/unwomen
twitter.com/un_women
youtube.com/unwomen
flickr.com/unwomen